



ՀԱՅԿԱՔՉԱԿ

MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS OF REPUBLIC OF ARMENIA  
SCIENTIFIC RESEARCH CENTER OF HISTORICAL AND  
CULTURAL HERITAGE

# HUSHARDZAN

(Monument)

ANNUAL

3

PUBLISHING-HOUSE "HUSHARDZAN"  
YEREVAN 2005

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА  
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ЦЕНТР  
ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

# УШАРДЗАН

(Памятник)

ЕЖЕГОДНИК

3

ИЗДАТЕЛЬСТВО "УШАРДЗАН"  
ЕРЕВАН 2005

7(47.925)  
7-96

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՐՑԱԳՐ

ՏԻՒՆԻՔ

Գ

4070

«ՀԱՐՑԱԳՐ» ՀՐԱՏԱՆԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2005





ՀՏԴ 941  
(479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)  
Հ 964

**ՏՊԱԳՐՎԱԾ Է ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԽՄԲԱԳՐՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՀԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ** (գլխավոր խմբագիր),  
**ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ,**  
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՄՅԱՆ, ՆԵՐՍԵՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ** (պատասխանատու քարտուղար)

**EDITORIAL BOARD**

**HAKOB SIMONYAN** (editor-in-chief),  
**PARUYR MURADYAN, MURAD HASRATYAN, KORYUN GHAFADARYAN,**  
**HOVHANNES SANAMYAN, NERSES KOSTANYAN** (executive secretary)

Հ 964 «Հուլիարձան», տարեգիրք Գ,  
Երևան, «Հուլիարձան» հրատ., 2005

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-865-2-5

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
© ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Մուտք .....	7
<b>ՏԱՐԵԼԻՑ</b>	
<i>ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ</i> - Արտագի Սք. Թադեի վանքի ճարտարապետությունը .....	11
<i>ԱՐՏԱԿ ՂՈՒՆՅԱՆ</i> - Անիի Մայր տաճարի հազարամյա խորհուրդը (1001-2001 թթ.) .....	26
<b>ՀԱՆՁՆՎԱԾ Է ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ</b>	
Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության 1978 - 2004 թթ. վերականգնած հուշարձանները .....	41
<i>ՀԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ</i> - Վերածված Ծիծեռնավանքը .....	58
<i>ԱՅՐԻՍ ԵՏՅԱՆ</i> - Консервация настенной живописи в церкви Сурб Акоп в Канакере .....	64
<b>ՀԵՏԱԶՈՏՈՒՄ</b>	
<i>ՄԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ</i> - Դովրիի ամրոցը .....	73
<i>ՆՈՐԱ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ</i> - Հայտնագործումներ Նոր Խաչակապում .....	80
<i>ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ</i> - Արամուսի ամրոցը .....	97
<i>ԻԳԻԹ ՂԱՐԻՐՅԱՆ, ՀԱՅԿ ՀԱԿՈՐՅԱՆ</i> - Բջնի հնավայրը .....	103
<i>ՓԵԼԻԿՏ ԹԵՐ-ՄԱՐՏԻՐՕՏՅԱՆ</i> - Раскопки Драсханакерта .....	119
<i>ԱՐԱՍ ԲԱՆԱՆԹԱՐՅԱՆ, ՀԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ</i> - Աղցքի հնագիտական արժեքները (1974-1975 թթ. պեղումների արդյունքները) .....	140
Հայաստանի Հանրապետությունում 1990-2004 թթ. պեղված հնագիտական հուշարձանների ցանկ .....	152
<b>ՆՈՐԱԴԱՅՏ ԱՐԺԵՆԵՐ</b>	
<i>ՀԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՄՅԱՆ</i> - Վանքասարի հուշարձանները .....	159
<b>ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ</b>	
<i>ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆՂՅԱՆ</i> - Արթիկի Փոքր եկեղեցու հորինվածքային առանձնահատկությունները .....	179
<i>ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ</i> - Երևանի Գլխավոր պողոտայի կազմավորման պատմական հիմնավորումը .....	194



**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

*ԺԱՆ ՇԱՐԴԵՆ* - ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ (Ըստ *Լանզլեսի*, 1811 թ., (Փարիզ, հատոր 2, էջ 161-170) հրատարակության) ..... 205

**ՄԵՐ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ**

Ակադեմիկոս Վարազդատ Հարությունյան ..... 217  
 Տարեգրքում օգտագործված հապավումների ցանկ ..... 225

**CONTENTS**

Introduction ..... 7  
*Murad Hasratyan* - The Architecture of St. Tadeh Monastery in Artaz ..... 11  
*Artak Ghulyan* - The 1000 year Mystery of the Cathedral in Ani ..... 26  
 Armenian Association for the Protection of Historical Monuments -  
 restored monuments of 1978 - 2004 ..... 41  
*Hakob Simonyan* - Re-Consecrated Tsitsernavank ..... 58  
*Ayris Esayan* - Conservation of the Frescos  
 in the Church of St. Hakob in Kanaker ..... 64  
*Simon Hmayakyan* - The Fortress of Dovri ..... 73  
*Nora Engibaryan* - Excavations in Nor Khachakap ..... 80  
*Hayk Avetisyan* - The Results of  
 Archaeological Excavations in Aramus (2004) ..... 97  
*Igit Gharibyan, Haik Hakobyan* - Preliminary Results  
 of Bjni 2003-2004 Excavation ..... 103  
*Felix Ter-Martirosyan* - Excavations in Draskhanakert ..... 119  
*Hakob Simonyan, Aram Kalantaryan* - Archaeological Value of Aghtsek  
 (Result of the 1974-1975 excavations) ..... 140  
 List of the Excavated Archaeological Monuments  
 in the Republic of Armenia (1990 - 2004) ..... 152  
*Hakob Simonyan, Hovhannes Sanamyanyan* - An Armenian Early  
 Christian Cult Complex in the Region of Aldam ..... 159  
*Grigor Nalbandyan* - Compositional Peculiarities  
 of the Small Church in Artik ..... 179  
*Lilit Vardanyan* - The Historical Basing  
 of the Main Avenue of Yerevan ..... 194  
*Jan Sharden* - Journey to Persia And Other Countries of the East ..... 205  
 Academician Varazdat Harutunyan ..... 217  
 The List of Abbreviations Used in the Annual ..... 225

**ՄՈՒՏՔ**



ուշարձան» տարեգրքի նախորդ՝ Բ հատորը, լույս է տեսել 1993-ին, որից հետո Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր կացության պատճառով դադարեցվել է գիտական և հասարակական շրջանակներում մեծ պահանջարկ ու հեղինակություն վայելող հայագիտական այս հանդեսի հրատարակումը: Հայաստանի Հանրապետության Կառավարության 23 հուլիսի 2003 թ. N 896 որոշմամբ նորաստեղծ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերապահված գործառույթներից է նաև «Հուշարձան» տարեգրքի պատրաստումն ու հրատարակումը:

Այսպիսով, ավելի քան 10-ամյա ընդմիջումից հետո Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հար-

ցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը ձեռնամուխ եղավ «Հուշարձան» տարեգրքի պարբերական հրատարակման գործին: Հաշվի առնելով 1987 թ. և 1993 թ. հրատարակված Ա և Բ տարեգրքերի կառուցվածքային սկզբունքները, մշակվել է «Հուշարձան» Գ տարեգրքի կառուցվածքը, դրանում առաջադրված խնդիրները, կազմվել է խմբագրական խորհուրդ: Որոշվել է պահպանել տարեգրքի նախորդ հրատարակություններում կիրառված չափը և ծավալը: Առաջադրված հարցերը քննարկվել և հավանության են արժանացել Պատմամշակութային ժառանգության գիտական խորհրդի նիստում: Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայկական պատմամշակութային անշարժ ժառանգության ուսումնասիրման, վերական-



զման և պահպանության խնդիրներին նվիրված Տարեգիրքը, ինչպես և նախկինում, նպատակ է հետապնդում հանրությանը ներկայացնել հայկական հուշարձանների հետ առնչվող էական խնդիրները:

Տարեգիրքն անդրադառնում է ճարտարապետական, հնագիտական, ազգագրական, մոնումենտալ արվեստի և տարաբնույթ այլ հուշարձանների ուսումնասիրման, պահպանության, վերականգնման, վերարժևորման, մասսայականացման և հրատապ այլ խնդիրներին, արժարժույթ է մասնագետ-գիտնականների բարձագրած ոլորտի հրատապ հարցերը: Տարեգիրքն ընդգրկում է հնագետների, ճարտարապետների, ազգագրագետների, արվեստաբանների գիտական աշխատություններն ու հաղորդումները, վերլուծական հոդվածներ նվիրված Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության խնդիրներին, տեղեկություններ հայագիտական արժեքավոր հրատարակությունների ու գիտաժողովների մասին:

Հաշվի առնելով Տարեգիրքի նախորդ հրատարակումից մինչ այժմ տևած երկարատև ընդմիջումը, որի հետևանքով մեկ տասնամյակից ավելի ժամանակահատվածում ըստ հարկի չեն մեկնաբանվել պատմամշակութային անշարժ ժառանգության բնագավառում տեղի ունեցած գործընթացները, Տարեգիրք Գ-ն խնդիր է դրել ներառել Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր հուշարձանների ուսումնասիրման և վերականգնման բնագավառների վերաբերյալ ընդհանրացնող հոդվածներ, նախորդ տարիների հետազոտությունների արդյունքները, նախկինում «Հուշարձան» տարեգրքում հրատարակության հանձնված հոդվածները, որոնց

հեղինակները համբերությամբ ու հավատով սպասում էին Տարեգրքի վերահրատարակությանը: Այս առումով «Հուշարձան» տարեգրքի Գ հատորը մի ինքնատիպ հաշվետու գիրք է, որը փորձում է ի մի բերել հուշարձանների ուսումնասիրման ու պահպանության բնագավառի աշխատանքները, որոնք իրականացվել են Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տասնամյակի տարիներին:

«Հուշարձան» տարեգրքի վերահրատարակումը հնարավոր դարձավ Հայաստանի Հանրապետության Կառավարության ու ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցության, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցների ու հայագիտության բնագավառի մեր գործընկերների ջանքերի շնորհիվ:

«Հուշարձան» Գ տարեգրքում ընդգրկվել են հոդվածներ 1990-2004 թթ. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված հուշարձանների ուսումնասիրման և հաշվառման, հնագիտական պեղումների, վերականգնման ու ամրակայման աշխատանքների վերաբերյալ և այլն, որոնք հնարավորության կտան ընթերցողին ամբողջական պատկերացում կազմել այս ոլորտում երկրի անկախացումից ի վեր կատարված հիմնական գործերի մասին: Հոդվածները, գիտական խորհրդի որոշմամբ, հրատարակվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ էլնելով այն հանգամանքից, թե ինչ լեզվով է հոդվածի բնագիրը: Սակայն բոլոր հոդվածներն էլ ունեն համառոտ ամփոփումներ՝ հայերենը և ռուսերենը՝ անգլերեն, անգլերեն հոդվածները՝ հայերեն: Այս մոտեցումը պայմանավորված է հայկական հուշարձանների ուսումնա-

սիրման, վերականգնման և պահպանության խնդիրները առավելագույնս միջազգայնացնելու նկատառումով:

Հուշարձանների վերականգնման բնագավառում հիմնականում արտացոլվելու են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության (նախկինում՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության), Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կատարած աշխատանքները: Սկսած ունենալով անցած տարիների վերականգնման և ամրակայման գործերի զգալի ծավալները, որոնք հնարավոր չէ ընդգրկել մեկ հոդվածի սահմանում, որոշվեց պարբերաբար անդրադառնալ այս խնդրին և առաջինը՝ ներկա տարեգրքում ներկայացնել Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կատարածը: Սկսած ունենալով այն հանգամանքը, որ Յուլի Թամանյանի «Քարե տարեգրքի վերականգնումը» գրքում արդեն լուսաբանվել են մինչև 1978 թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված հուշարձանների վերականգնման աշխատանքները, այստեղ ներկայացվում է 1979 թ. մինչ մեր օրերը կատարվածը՝ պատկերելով հուշարձանի տեսքը վերականգնումից առաջ և հետո, և համառոտ տեսքով՝ հայերեն և անգլերեն, նշելով հուշարձանի տեղը՝ մարզը, ենթաշրջանը, բնակավայրը, անունը, տիպը, ժամանակը, վերակառուցման

տարեթիվը, նախագծի հեղինակը, վերականգնող շինարարը և դրամական ներդրում կատարող կամ բարերարը:

Առանձին հոդվածով ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված հնագիտական պեղումների ցանկը, որտեղ նշվում են հուշարձանի անվանումը, տիպը, ժամանակը, տեղը՝ մարզը, ենթաշրջանը, բնակավայրը, պեղող հնագետը, պեղումների կատարման թվականը: Սկսած ունենալով վերականգնված հուշարձանների ու պեղումների մասին տեղեկատվության մասսայականացման կարևորությունը, այս երկու ամփոփիչ հոդվածների ցանկերը ներկայացնում ենք հայերեն և անգլերեն:

Հուսով ենք, որ «Հուշարձան» տարեգրքի վերահրատարակումը, որն իր մեջ ներառում է հայագիտական հանդեսների լավագույն ավանդույթները, ջերմորեն կընդունվի գիտական շրջանակներում և կլրացնի հուշարձանների ուսումնասիրման, վերականգնման ու պահպանության մասին ամփոփ տեղեկատվություն ստանալու հասարակության պահանջը: Տարեգրքի լույս ընծայումը կնպաստի Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայկական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանը, գնահատմանն ու վերարժևորմանը, ինչպես նաև՝ Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը:

*Խմբագրական խորհուրդ*



# ՄԲ. ԹԱՂԵԻ ՎԱՆԷ - 1700

ՍՈՒՐԱԴ ԴԱՍՐԱԹՅԱՆ

## ԱՐՏԱԶԻ ՄԲ. ԹԱՂԵԻ ՎԱՆԵԻ ՀԱՐՏԱՆՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Մբ. Թաղեի վանքի տեսքը հարավ-արևմուտքից

դ. անանուն ժամանակագիրը վկայում է. «Թաղեոս Առաքելուն և Սանդղղտայ կուսին մարմինն ի Դայոց թվականին 67 (721)-ին գտվելի հրաշօք և զարմանալի բանիք» (ՄԺ, հ. 1, 1951, էջ 203):

Հայ պատմիչները Սբ. Թաղեի վանքը հիշատակում են X դ. սկսած: Թովմա Արծրունին հաղորդում է, որ Թաղևոս իշխանը նամակ «գրեց Ամաստունյաց տոհմի սուրբ եպիսկոպոսին, որը նստում էր սուրբ Թաղևոս առաքյալի հանգստարանում՝ Արղոզական գավառում» (Թովմա Արծրունի, 1978, էջ 263):

Հետևաբար վանքը IX-X դդ. արդեն եպիսկոպոսանիստ էր:

XIII դ. Կոստանդին Ա Բարձարբերդցի կաթողիկոսը վերահաստատում է Թաղեի վանքի եպիսկոպոսանիստ վիճակը, նվերներ տալիս, նշում թեմի սահմանները, օժանդակում վանահայր Հովսեփ վարդապետին թուրք-սելջուկների և վրացիների ավերածություններից տու-

### ՀԱՍՏՈՒՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

այաստանի հին և հռչակավոր ուխտատեղի Սբ. Թաղեի վանքը, ըստ ավանդության, հիմնվել է Թաղեոս Առաքյալի նշխարների վրա՝ I դ.: XVII

«Մեր աշխարհը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների և հողի տակ, իրենց արժանիքները մոռացության ու անհայտության մեջ»:

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



ժած վանքի նորոգման համար: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ վանահայրը, ստանալով մոնղոլական զորքի հրամանատարի թույլտվությունը, վերակառուցում է գավիթը, նորոգում վանքի շինությունները, վերածում եկեղեցին, միաբանություն հավաքում. «ՈՂՁ (1247) թուականին Հայոց, առաքինի կաթողիկոս Կոստանդինն իր սպասավոր Թեոդոսի միջոցով արևելյան եկեղեցիներին մետաքսե բազմագույն ու թանկագին շուրջառներ է ընծա ուղարկում՝ իբրև սուրբ պատարագի սպասներ պատվավոր վանքերում: Նաև շրջաբերական նամակ է ուղարկում, որպեսզի Թաղեոս առաքյալի շիրմին (վանքին) իբրև թե՛մ տան շրջակա գավառներն ու քաղաքները և շատ ոսկի՝ գավթի շինության համար, որ կառուցում էր Հովսեփ վարդապետը՝ թուրքերի և վրացի ավազակների ձեռքով ավերվելուց հետո, քանի որ երկար ժամանակ մարդուց թափուր էր և ամայի: Հովսեփը գնաց Անագուրակ Նուին անունով մի թաթար զորապետի մոտ, որի ամառային բանակատեղը մոտ էր սուրբ առաքյալ Թաղեոսի գերեզմանին, և նրա հրամանով մաքրեց եկեղեցին, բացման տոնահանդես կատարեց, շինեց վանքը և նրա մեջ բազմաթիվ կրոնավորներ հավաքեց» (Կիրակոս Գանձակեցի, 1982, էջ 222-223):


XIV դ. Սբ. Թաղեի վանքն ամբողջովին ավերվում է երկրաշարժից: Սամուել Անեցու «Պատմության» անանուն շարունակողը գրում է, որ «Ի 24Ը (1319) թվին եղև ահագին շարժ յարեւելս եւ զԹաղեոս առաքելոյն վանքն և զեկեղեցին կործանեաց եւ զտունսն փլոյց եւ 7ե (75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր Զաքարէ» (Սամուել Անեցի, 1893, էջ 157): (1319 թվականին Արևելքում ուժեղ երկրաշարժ եղավ և Թաղեոս առա-

քյալի վանքն ու եկեղեցին կործանվեցին և 75 հոգի զոհվեց: Վանքը և եկեղեցին վերստին շինեց Տեր Զաքարեն):

Ըստ վանքի եկեղեցու հյուսիսային պատի արձանագրության՝ շինարարությունը տևել է 10 տարի և ավարտվել է 1329 թ.:

XVII դ. առաջին կեսում Սբ. Թաղեի վանքը վերստին հիմնովին նորոգման կարիք է ունեցել: Պատմիչ Առաքել Դավրիժեցին գրում է. «Այն ժամանակ Փիլիպոս կաթողիկոսի օրերում վերստին շինվեց սուրբ առաքյալ Թաղեոսի վանքը, որ Արտազ գավառում է, Մակու գյուղում, որովհետև բոլոր շինվածքներն ավերված էին: Այս ժամանակ Մկրտիչ անունով ոմն եպիսկոպոս իր միաբաններով, արեղաներով, սարկավազներով, որոնք բոլորը նույն Մակու գյուղից էին, որ չնայած աղքատ էին և հարստությունից զուրկ... ձեռքերը գործի զարկեցին և սկիզբ դրին վանքի շինության: Նախ սկսեցին տաճարը շինել, որի արևելյան և հյուսիսային կողմերի պատերի մինչև կեսն էր միայն շեն մնացել, էլ ուրիշ ոչինչ: Սրանք ամբողջը միանգամից մինչև գմբեթի ծայրը ներքուստ ու արտաքուստ սրբատաշ քարերով ամուր ու զեղեցիկ շարեցին: Տաճարի կառուցման գործը ավարտվեց 1099 (1650) թվականին: Տաճարի կառուցումից հետո սկսեցին մշակված քարով ու կրով ժամատունը կառուցել, իսկ սա ավարտվեց 1102 (1653) թվականին» (Առաքել Դավրիժեցի, 1988, էջ 275):

Իրադարձությանը ժամանակակից պատմիչի այս տեղեկությունը կարևոր է Սբ. Թաղեի վանքի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունները ճիշտ հասկանալու համար: Պարզվում է, որ եկեղեցու՝ մեզ հասած, ծավալատարածական հորինվածքը գրեթե ամբողջովին, նե-



Սբ. Թաղեի վանքի գլխավոր հատակագիծն ըստ Ա. Հախնազարյանի  
1. Կաթողիկե եկեղեցին, 2. Մեծ եկեղեցին, 3. Զանգակատունը, 4. Սեղանատունը,  
5. Վանահոր բնակարանը, 6. Խցեր, 7. Խոհանոցը, 8. Վանքի բակը, 9. Տնտեսական բակը, 10. Չիբհանը,  
11. Զրադացը, 12. Տնտեսական շինություններ, 13. Դարպասը, 14. Ավերակ շինություն  
(վերատպությունը՝ Documenti di architettura Armena, N 4, S. Thadei vank, Milano, 1971 գրքից)

րառյալ հյուսիսային, արևելյան և հարավային ճակատների լուսամուտների զարդաքանդակները, ինչպես և գմբեթը, XVII դ. վերակառուցման արդյունք են:

1679-1685 թթ. Իսահակ վարդապետը նորոգում է Սբ. Թաղեի վանքի Կաթողիկե եկեղեցին (Մժ, հ. 1, 1951, էջ 310):

XVII դ. վերջին վանքը վերստին վնասվում է երկրաշարժից. «Ի թիվն Ռճևե (1696) ապրիլի ժե (15) սաստիկ շարժ եղև բոլոր Հայաստանս և սուրբ Թաղեոս առաքելոյ պարիսպն հանդերձ նորակերտ խցերոքն բլաւ և Կաթուղիկեն յարևելիաց կուսէ պատա-

ռեցաւ...» (Մժ, հ. 2, 1956, էջ 418) (1696 թվականի ապրիլի 15-ին ողջ Հայաստանում ուժեղ երկրաշարժ եղավ և սուրբ Թաղեոս առաքյալի (վանքի) պարիսպը նորակառուց խցերով հանդերձ փլվեցին և Կաթողիկեն արևելյան կողմից ճեղքվեց):

1787 թ. վերակառուցվում է վանքի գավիթը, Կաթողիկեն՝ ներսից սվաղում (Մժ, հ. 1, 1951, էջ 309):

1810 թ. Սբ. Թաղեի վանքի վանահայր Սիմեոն արքեպիսկոպոսը պարսից իշխանության թույլտվությամբ քանդում է Կաթողիկեի արևմտյան ճակատը և սրան կցում քառամույթ, գմբեթավոր, խաչաձև հորինվածքով նոր եկեղեցին և զանգակատունը: Սպի-



տակ սրբատաշ քարից կառուցված այս եկեղեցու համար որպես խորան ծառայում է Կաթողիկեն (զանգակատունն անավարտ է մնացել): 1988 թ. Սբ. Թադեի վանքը նորոգում է Իրանի Իսլամական Հանրապետության «Միրասե Ֆարհանգի» հաստատությունը՝ իրանահայ համայնքի և Փարիզի «Երկիր և մշակույթ» կազմակերպության մասնակցությամբ:

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սբ. Թադեի վանքի ճարտարապետությունն ուսումնասիրել են է Վ. Կլայսը, Ա. Հախնազարյանը, Ժ. Մ. Թիերին և Յ. Սեյիունը (A. Haghazarian, 1973; W. Kleiss, 1967; M. Thierry, 1988; W. Kleiss, H. Seihoun, 1971): Նրանց մեծագրություններում ներկայացվում են վանքի պատմությունը, կառույցների նկարագրությունը, թվագրությունը, ճարտարապետական առանձնահատկությունները:

### 1. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեն (ժամանակագրական կարգով առաջին եկեղեցին) պատկանում է IV-VII դդ. Հայաստանում ստեղծված «գմբեթավոր դահլիճ» տիպի՝ զարգացած միջնադարի տարբերակին: Նման կառույցներից առաջինը Ջովունու Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին է, որը եռանավ բազիլիկից VI դ. վերակառուցվել է գմբեթավոր դահլիճի: Այս տիպի հատակագծային և ծավալային հորինվածքի բնորոշ գիծն այն է, որ առանձին կանգնած գմբեթակիր մույթերի փոխարեն կիրառված են հյուսիսային և հարավային պատերին կից երկու զույգ որմնամույթեր, որոնց միջև ձգվող կամարները կրում

են գմբեթը: Գմբեթավոր դահլիճի առավելությունը գմբեթակիր բազիլիկից, բացի երկրաշարժային առումով առանձին բույլ հենակետերի բացակայությունից, նաև միասնական ընդարձակ ներքին տարածությունն է:

Վաղ միջնադարի մյուս գմբեթավոր դահլիճներն են Պողոնու, Արուճի Սբ. Գրիգոր և Դոմաշենի Սբ. Թադեոս առաքյալ եկեղեցիները:

Հայ ազգային ճարտարապետության զարգացման հաջորդ փուլում IX-XIV դդ., գմբեթավոր դահլիճը դարձավ եկեղեցական շենքի հիմնական տիպը, որը ժամանակի ընթացքում էական ձևափոխումների ենթարկվեց: Եթե VI-VII դդ. գմբեթավոր դահլիճի լայնության և երկարության հարաբերությունը հավասար է 1:2, ապա X-XI դդ. այն կազմում է 1:1,6 և 1:1,5, իսկ XIII դ.՝ 1:1,4 և 1:1,3: Այսպիսով, զարգացած միջնադարում «գմբեթավոր դահլիճն» իր համաչափություններով մոտենում է կենտրոնագմբեթ կառույցներին: Երկարության պակասեցումը կատարվեց ի հաշիվ արևելյան որմնամույթերից դեպի խորանն ընկած տարածության կրճատման և ապա, այս երկու մույթերի և խորանների անկյունների համատեղման: X-XI դդ. գմբեթավոր դահլիճների զգալի մասն ունի մեկ զույգ որմնամույթ, և գմբեթը բարձրանում է շենքի գրեթե կենտրոնում:

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեն եկեղեցին պատկանում է այս ենթատիպին (նոր եկեղեցին կցելիս նրա արևմտյան հատվածը քանդել են, սակայն համաչափական վերլուծությունը վկայում է, որ հին եկեղեցին ունեցել է լոկ մեկ զույգ որմնամույթ):

Կաթողիկեի սկզբնական հորինվածքի թվագրման համար հարկավոր է նրա հատակագիծը (նախնական ծավալից ոչինչ չի պահպանվել) համեմա-

տական վերլուծության ենթարկել պատմական Վասպուրականի նույնատիպ եկեղեցիների հետ (IX-XI դդ. հյուսիս-արևմտյան Ատրպատականը, ինչպես և Գողթան գավառը գտնվել են Վասպուրականի տիրույթում):

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեի հատակագծային հորինվածքի ամենամոտ զուգահեռները հենց Վասպուրականում են: Դրանք են՝ Վարագավանքի Սբ. Սոֆիա (X դ.), Կռունկի վանքի Սբ. Աստվածածին, Արգելանի վանքի Սբ. Աստվածածին (X-XI դդ.), Պիզդբուզիտի վանքի, Գոմքի վանքի Սբ. Գևորգ (X-XI դդ.), Գանձակի Սբ. Թովմաս (X դդ.), Բարիձորի վանքի Սբ. Աստվածածին (XI դ.) եկեղեցիները:

Դրանք բոլորն էլ մեկ զույգ գմբեթակիր որմնամույթերով են, խորանի երկու կողքին ուղղանկյուն ավանդատներով, առանց ճակատային խորշերի, (որոնք տարածված են Հայաստանի մյուս նահանգների XII-XIII դդ. նմանատիպ եկեղեցիներում): Վասպուրականի վերոհիշյալ եկեղեցիների որմնամույթերը չունեն ջլատումներ (պարզ ուղղանկյուն ծավալներ են): Նշված եկեղեցիները պատկանում են Վասպուրականի ճարտարապետական դպրոցին, թվագրվում են X-XI դդ.: Այս դպրոցին է պատկանում նաև Սբ. Թադեի վանքի Կաթողիկեն՝ նույնպես կառուցված X-XI դդ.: Վասպուրականի այս բոլոր եկեղեցիների գմբեթը դրված է ոչ թե շենքի ճիշտ կենտրոնում, այլ 0,5-1 մ տեղաշարժված է դեպի արևելք: Նույնն, անկասկած, եղել է և Սբ. Թադեի վանքի Կաթողիկեում:

1319 թ. երկրաշարժից հետո վերակառուցված Կաթողիկեն պահպանել է X-XI դդ. հատակագիծը և եկեղեցու հյուսիսային ու հարավային ճակատների ստորին շարքերում դեկորատիվ կամարների հետ-

քերը:

Մյուս՝ 1650 թ. հիմնովին վերակառուցման ժամանակ, երբ, ըստ Առաքել Դավրիժեցու, պահպանվել էին միայն երկու պատերի ստորին մասերը, փաստորեն, կառուցվեց նոր եկեղեցի՝ սրբատաշ բազալտով, որի ճակատների և գմբեթների ձևավորումը բնորոշ է XVII դ. հայկական ճարտարապետությանը:

XVII դ. հայ ճարտարապետներն իրենց ցուցաբերեցին որպես իսկական ստեղծագործողներ: Նրանք վերամշակեցին միջնադարից արդեն ծանոթ հարդարանքի տարրերը և ստեղծեցին նորերը՝ դառաշրջանի գեղագիտական ըմբռումներին ու պատվիրատու սոցիալական նոր խավի՝ հայ վաճառականության պահանջներին ու ճաշակին համապատասխան:

Եկեղեցու արտահայտիչ և անհատական կերպար ստանալու համար, ինչպես ճակատներում, այնպես էլ գմբեթում կիրառվեց բազմագունությունը՝ բազմազան հնարքներով և նկարվածքով:

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեն եկեղեցու 12-նիստանի թմբուկով և բրգածև վեղարով գմբեթը մշակվեց մեկընդմեջ մուգ (բազալտ) և բաց (դեղնավուն ֆելզիտ) գույնի սրբատաշ քարերի հորիզոնական շարքերով (այսպես են շարված նաև Ագուլիսի Սբ. Թովմա վանքի՝ XVII դ., Փառակայի Սբ. Շմավոն և Սբ. Հակոբ Հայրապետ եկեղեցիները):

Բազմագունությունը կիրառվել է նաև Կաթողիկեի հյուսիսային, հարավային և արևելյան ճակատների լուսամուտները ձևավորելիս: XVII դ. ճակատների հարթություններում լուսամուտները շեշտելու միտումը բերեց բավական բարդ դեկորատիվ համակարգերի ստեղծմանը: Լուսամուտների բացվածքները, շրջանակից բացի, ներառվեցին ողջ ճակատի



ձևավորման համար նախատեսված դեկորատիվ գոտիների ճյուղավորումների խաչաձև քանդակների մեջ (Սբ. Ստեփանոս Նախավկա վանքի, Գողթանի և Երնջակի՝ Ցղնայի Սբ. Աստվածածին և Շոռոթի Կուսանաց անապատի եկեղեցիներ): Դրանցից ամենաճոխ մշակումն ունեն Սբ. Թադեի վանքի Կաթողիկեի լուսամուտները: Հյուսիսային և հարավային ճակատներում սրանք ունեն խաչաձև շրջանակ, ներառված եկեղեցու պարագծով ձգվող հորիզոնական գոտու վրա հենվող զույգ կիսասյունիկներով որմնակամարի մեջ: Վերջինիս մակերեսը երեսապատված է բազմագույն քարերի շարվածքով, սպիտակ քարից է հյուսածո քանդակագարդ լայն կամարը: Իսկ արևելյան ճակատի կենտրոնական լուսամուտն, ունենալով խաչաձև շրջանակ և եռաթերթ կամար, բազմագունությունից բացի, հարդարված է նաև ներդրվագունով (ինկրուստացիա)՝ գունավոր, աստղաձև տաշված քարերի խճանկար շարվածքով:

Հարդարանքի այս եղանակը՝ գունավոր քարերով ձևավորումը, տարածված էր XIII դ. հայկական եկեղեցիների ու գավիթների՝ հիմնականում շքամուտքերում ճարտարապետության մեջ (Նոր Վարագավանք, Մակարավանք, Գանձասար, Խորանաշատ, Հառիճավանք):

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեի պատերի բարձրության կեսում, շենքի պարագծով ձգվող պարզ տրամատ ունեցող գոտին բնորոշ է XVII դ. մի շարք այլ՝ Մուղնու Սբ. Գևորգ վանքի, Ագուլիսի Սբ. Հովհաննես, Շոռոթի Կուսանաց անապատի, Ապրակունիսի Սբ. Կարապետ վանքի եկեղեցիների գոտիներին: Կաթողիկեն ունի նաև մեկ այլ՝ թմբուկի վերին մասում, նրա ողջ պարագծով քանդակված շղթա-յաձև գոտի (այսպես կոչված՝ «սելջուկյան շղթա»):

Կաթողիկեի արտաքին հարդարանքում բավական ակտիվ տարրեր են ճակտոնազարդերը (ակրոտեր): Սրանց ծավալները, ուրվագծվելով երկնքի ֆոնի վրա, հարստացնում են եկեղեցու կերպարը: Կաթողիկեի ճակտոնազարդերն ունեն XVII դ. տարածված բազմանիստ թմբուկով և բրգաձև գմբեթով մանրակերտի ձև: Դրանք դրված են ճակտոնի գագաթին, եկեղեցու տանիքին: Նման ակրոտեր-ճակտոնազարդեր ունեն նաև XVII դ. Ռամիսի Սբ. Աստվածածին, Գաղի, Քանաքեռի Սբ. Աստվածածին, Մուղնու Սբ. Գևորգ, Երից մանկանց վանքի եկեղեցիները և այլն:

Կաթողիկեի ներսը գրեթե զուրկ է հարդարանքից: Թմբուկն ունի պարզ տրամատով երկու գոտի, գմբեթը ձևավորված է խաչաձև քանդակով, բեմի առջևի պատը՝ կամարիկներով: Հյուսիսային և հարավային պատերը սվաղված են: Հյուսիսային պատի սպիտակ ֆոնի վրա առանձնանում է 1329 թ. շինարարական արձանագրությունը:

Ինչպես տեսանք, Սբ. Թադեի վանքի Կաթողիկե եկեղեցու արտաքին հարդարանքը սերտ կապեր ունի Ատրպատականին հարևան Գողթան և Երնջակ գավառների XVII դ. եկեղեցիների ճակատների ձևավորման հետ: Եթե Կաթողիկեի հատակագիծը յուրահատուկ է Վասպուրականի X-XI դդ. ճարտարապետական դպրոցին, ապա արտաքին հարդարանքն ընդհանրություն ունի Նախիջևանի (Գողթան և Երնջակ գավառների) XVII դ. հայկական ճարտարապետական դպրոցի հուշարձանների հարդարանքի հետ:

\* \* \*

Սբ. Թադեի վանքի Կաթողիկեն ունեցել է՝ գավիթ կամ ժամատուն, որն, ըստ ընդունված կարգի, պետք

է արևմուտքից կից լինել եկեղեցուն: Ըստ Կիրակոս Գանձակեցու 1247 թ. Հովսեփ վարդապետը Սբ. Թադեի վանքում գավիթ է կառուցել, իսկ 1653 թ. Մկրտիչ եպիսկոպոսն՝ ըստ Առաքել Դավրիժեցու, վանքում շինել է ժամատուն:

1810-19 թթ. կառուցվել է վանքի նոր եկեղեցին: Սբ. Թադեի վանքն, ըստ երևույթին, առանձին զանգակատուն չի ունեցել: X-XVIII դդ. բազմաթիվ մատենագրական աղբյուրներ տեղեկություններ են հաղորդում վանքի եկեղեցու, գավթի, խցերի, պարսպի և այլ շինությունների կառուցման և վերակառուցման մասին, սակայն զանգակատան մասին տեղեկություն չկա: Ինչպես հայկական մյուս վանքերում, այստեղ ևս, զանգերը կախվել են գավթի երդիկին կանգնեցված ռոտոնդայից: Միայն XIX դ. սկսել են նոր եկեղեցու հետ նաև զանգակատան կառուցումը, որը, սակայն, անավարտ է մնացել:

## 2. ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Սբ. Թադեի վանքի երկրորդ՝ Մեծ եկեղեցին, հիմնադրել է արքեպիսկոպոս Սիմեոն Բզնունին 1810 թ.: Նա մինչ այդ եղել էր Սբ. Էջմիածնում Դավիթ Ե կաթողիկոսի աթոռակալը: Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալու անհաջող փորձից հետո, նա լինելով փառասեր և ամենայն գնով իշխանության ձգտող, Ֆաթալի Շահի որդի արքայազն Աբաս Միրզայի օժանդակությամբ դառնում է Սբ. Թադեի վանքի առաջնորդը: Սիմեոն Բզնունին Ատրպատականի և Վասպուրականի (Վան, Բերկրի, Արճեշ) բնակչությունից հանգանակությամբ հավաքած գումարներով 1810-1820 թթ. Էջմիածնի Մայր տաճարի հատակագծով և ընդհանուր ծավալային լուծումով կառուցում է մի

խոշոր եկեղեցի՝ արևմուտքից այն կցելով Սբ. Թադեի վանքի Կաթողիկեին: Վերջինս, զրկված իր արևմտյան հատվածից, փաստորեն դարձել է նոր եկեղեցու խորանը (XVII դ. այսպես վարվեցին նաև Երևանի XIII դ. Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցու հետ):


Պարսկաստանի տարածքում Մայր տաճար կառուցելու գաղափարը առաջին անգամ հղացել էր Շահ Աբասը՝ XVII դ. սկզբում, երբ Արևելյան Հայաստանի բնակչության մեծ մասին տեղահան արեց և տեղափոխեց Պարսկաստան: Շահը, տարագիրներին իրենց բնակության նոր վայրին կապելու նպատակով, մտադրվել էր քանդել Սբ. Էջմիածնի Մայր տաճարը, քարերը տեղափոխել Իսպահան և այնտեղ նույնությամբ վերակառուցել: Սակայն այդ մտադրությունը դատապարտված էր անհաջողության: Շահ Աբասը բավարարվեց Մայր տաճարից միայն 50 քար (հանված շենքի կարևոր հանգույցներից) տեղափոխելով, դրանց հետ նաև Հայոց եկեղեցու ամենամեծ սրբությունը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի Աջը:

Հայոց Հայրապետական Աթոռը Սբ. Թադեի վանքում հաստատելու Սիմեոն Բզնունու հավակնությունը նույնպես չիրագործվեց: Նա 1820 թ. նշանակվեց Ագուլիսի Սբ. Թովմա վանքի առաջնորդ, և նրա մեկնելուց հետո անավարտ մնաց վանքի նոր եկեղեցու խորանների ծածկերի և կից զանգակատան շինարարությունը\*:

Հայոց եկեղեցու խորհրդանիշի՝ Էջմիածնի Մայր տաճարի ծավալա-տարածական կերպարի կրկնության այլ օրինակներ ևս կան, որոնք կառուցվել են Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցուց հետո՝ 1868-1888 թթ.:







Սբ. Թադեի վանքի Կաթողիկե և Մեծ եկեղեցիների աքսոնոմետրիկ կտրվածքը ըստ Ա. Պենսայի (վերատպությունը՝ Documenti di architettura Armena, N 20, Sorbul, Milano, 1988 գրքից)

Արցախի Շուշի քաղաքում ճարտարապետ Ս. Տեր-Չակոբյանի նախագծով կառուցվեց «Էջմիածնատիպ» Սբ. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին (Մ. Հասրաթյան, 1993, էջ 102), իսկ 1910-1912 թթ. Մուղղավիայի Բելցի քաղաքում, հայ համայնքը, Գևորգ Ե կաթողիկոսի օրհնությամբ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որն ընդհանուր գծերով կրկնում

էր Սբ. Էջմիածնի Մայր տաճարի հատակագծային և ծավալային հորինվածքը (Ա. Թորամանյան, 1986, էջ 29):

Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցին կառուցված է սրբատաշ սպիտակ կրաքարով: 12-նիստանի խռոր գմբեթը հենվում է խաչաձև մույթերի միջև ձգվող գմբեթակիր կամարների վրա: Հյուսիսային և հարավա-

յին խորանները դրսից հնգանիստ են: Արևմտյան մուտքի ճակատակալ քարին արքեպիսկոպոս Սիմեոն Բզնունու շինարարական, ներքևում (պարսկերեն) Ֆաթալի Շահի եկեղեցու կառուցման մասին թույլտվության, հյուսիսային և հարավային շքամուտքերին՝ 1811 թ. նվիրատվական արձանագրություններն են: Մույթերից մեկին Դավիթ Ե Էնեգեթցու և Բարսեղ Մելիքյանի 1813 թ. արձանագրությունն է՝ այդ մույթն իրենց միջոցներով կառուցելու մասին (A. Haghnazarian, 1973): Նման օրինակներն ուշ միջնադարում հաճախ են հանդիպում՝ այսպես, Մուղնու վանքի Սբ. Գևորգ եկեղեցու հարավ-արևելյան մույթը կառուցել են «պարոն Վարդանը և նրա եղբայր Դավիթը», տարբեր մեկենասներ կառուցել են Քանաքեռի Սբ. Աստվածածին եկեղեցու առանձին մույթերը (Մ. Հասրաթյան, 1997, էջ 207):

Եթե Սբ. Թադեի վանքի ճարտարապետությունը Սբ. Էջմիածնի Մայր տաճարի կրկնության փորձ է, ապա պատկերաքանդակներով և զարդաքանդակներով հարդարված ճակատների ձևավորումը հանդիսանում է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու (X դ.) հարդարանքի նմանակումը: Դրան նպաստում է երկու եկեղեցիների ծավալային լուծման նմանությունը՝ երկուսի խորաններն էլ արտաքուստ շեշտված են և բազմանիստ, որը լրացուցիչ մակերեսներ է ստեղծում օրվա տարբեր ժամերին հերթով լուսավորվող քանդակների համար:

Ինչպես Աղթամարի եկեղեցին, Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցին ևս շենքի ողջ պարագծով ձգվող հորիզոնական գոտիներով բաժանվում է մի քանի հատվածի: Ստորինը գուրկ է քանդակներից և ճակատների համար պատվանդանի դեր է կատարում: Վերինը նույնպես հարթ է, բացառությամբ երկու՝ ողջ

հասակով պատկերված սրբերի քանդակների: Վերևից երկրորդ գոտում կա 25 քանդակ, որոնց ճնշող մեծամասնությունը հասակով մեկ պատկերված, մորուքավոր, ձեռքներին գավազան կամ գիրք բռնած միանման կերպարանքներ են, որոնք համարվում են աստվածաշնչյան մարգարեներ (ժ. Մ. Թիեռի): Նրանց շարքում կարելի է առանձնացնել Մովսեսին՝ Ուխտի Տապանակը աջ ձեռքին բռնած (հարավային ճակատ), Դավթին՝ թագակիր, ձեռքին քնար (հյուսիսային ճակատ), Հովհաննես Մկրտչին՝ խաչաձև գավազանով (հարավային ճակատ): Երկրորդ գոտում քանդակված են կանգնած Աստվածածինը (հյուսիսային ճակատ), Գրիգոր Լուսավորիչը՝ խույրով, եմփորոնով, հագին՝ շուրջառ, ձեռքին՝ կաթողիկոսական գավազան (հարավային ճակատ):

Ուշագրավ է հյուսիսային ճակատի եկեղեցին կառուցող արքեպիսկոպոս Սիմեոն Բզնունու պատկերաքանդակը՝ կաթողիկոսական հագուստով և թագով, հնգաստղ եմփորոնով, աջ ձեռքին՝ բուրվառ, ձախին՝ եկեղեցու մանրակերտը: Այստեղ պատկերված են նաև խորանների վրայի այն զանգակատները (ինչպես Սբ. Էջմիածնի Մայր տաճարում), որոնք, սակայն, Սիմեոն Բզնունին չի հասցրեց կառուցել: Նրա հագուստից երևում է, որ Սիմեոն Բզնունին Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը գրավելու հույսը դեռևս չէր կորցրել:

Երկրորդ գոտու բոլոր պատկերաքանդակները միմյանցից բաժանվում են կիսասյունիկներով, որոնց վերևի մասի համաչափ ելուստները դրանց խաչի տեսք են տալիս:

Վերևից երրորդ գոտին երկշերտ է, ներքևինը՝ զուտ բուսական զարդաքանդակներով: Ոճավորված սափորից դուրս են գալիս երկու ծաղկազարդ և



տերևներով ցողուններ, որոնք, հյուսվելով հարևան սափորի ծաղիկներին, կազմում են նոր ցողուն՝ առավել խոշոր ծաղիկներով: Այս զարդագոտին կատարման ոճով և նկարվածքով ակնհայտորեն կրում է բարոկոյի զարդարվեստի ազդեցությունը: Նման օրինակներ կան ուշ միջնադարի հայկական մի քանի այլ հուշարձաններում ևս (Սյունիքում՝ Լոր գյուղի եռանավ բազիլիկայում, Գողթնում՝ Ցղնայի Սբ. Աստվածածին եկեղեցում, Սբ. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան վրա): Հայաստանում բարոկոյի դեկորատիվ ձևերի հանդես գալը XVII դ. արևմտաեվրոպական երկրների, առաջին հերթին՝ Իտալիայի հետ հայ վաճառականության սերտ կապերի հետևանք էր: Այնտեղից նրանք նաև ներմուծում էին Եվրոպայում հայերեն լեզվով տպված կրոնական գրքեր: Ընդ որում՝ հայերեն լեզվով հրատարակված մի շարք Աստվածաշնչեր նկարազարդել են արևմտաեվրոպական նկարիչները: Ամստերդամում 1666 թ. տպված հայերեն Աստվածաշունչը, որը նկարազարդել է հոլանդացի նկարիչ Քրիստոֆ Վան Ջիհենը (պահվում է Սանկտ-Պետերբուրգի Էրմիտաժի Արևելքի բաժնում), պատկերում է բազմիցս կրկնվող փարթամ ծաղիկներով սափորներ, որոնք իրենց կատարման ոճով միանգամայն նման են Լորի, Ցղնայի, Սբ. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան, Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցու զարդաքանդակներին: Սբ. Թադեի վանքում այս զարդաքանդակի կիրառումը, հավանաբար, պայմանավորված է Սիմեոն Բզնունու՝ Սբ. Էջմիածնում աթոռակալ լինելու ցանկությամբ և Սբ. Էջմիածնի Մայր տաճարի օրինակով կառուցվող եկեղեցում մայր տաճարի քանդակները կրկնելու ձգտումով:

Ինչ վերաբերվում է Սբ. Թադեի վանքի Մեծ եկե-

ղեցու երրորդ գոտու վերին շերտին, ապա այստեղ ակնհայտ է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու չորրորդ զարդագոտու նմանակումը (Աղթամարում խաղողի չընդհատվող որթագալարի մեջ աշխարհիկ կյանքի տարբեր տեսարաններ են): Այս գոտու գալարագորում կա թեմատիկ 23 պատկերաքանդակ (ժ. Մ. Թիերի, 1988): Թեմաները կրկնվում են երկուսից չորս անգամ՝ հյուսիսային և հարավային ճակատների վրա, և հանդիպում են տարբեր ազգերի ու կրոնների արվեստում:

Չորս անգամ կրկնվող թեմաներից են. ա) փիղ (միայն գլուխն է քանդակված)՝ կնճիթով բռնած մի խոշոր ձուկ, բ) ծնկաչոք Ֆարիադը քլունգով քանդում է լեռը, գ) գրկախառնված Լեյլին և Մեջնունը, դ) նիզակակիր մարտիկը՝ ձիու սանձը բռնած, ե) սիրամարգ, զ) նստած, թամբած ձի (նմանվում է ուղտի), է) որսի տեսարան՝ ծնկաչոք որսորդը հրացանը մեկնել է եղնիկի ուղղությամբ, ը) մարդ՝ մի ձեռքով գավազան բռնած, մյուսը՝ գահին նստածին մեկնած, թ) կատվազգի գազանը խժռում է մի փոքրիկ կենդանու, ժ) հովվերգության տեսարան՝ կինը, կողքին հորթուկ, կով է կթում, ի) թևավոր առյուծ, լ) սաղավարտով, վահանով և սրով զինված քնած մարտիկի վրա հարձակվում է չալմայով, նմանատիպ վահանով, մերկացրած սրով երկրորդ անձը (ըստ Հ. Սեյիունի՝ այս տեսարանը պատկերում է Ռուստամի և Ջոհրաբի մենամարտը), խ) ճակատները և գմբեթը դեկորատիվ կամարաշարով զարդարված եկեղեցի, կից՝ եռահարկ զանգակատուն: Ըստ ժ. Մ. Թիերիի այս քանդակը Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցու և զանգակատան մանրակերտն է՝ 12 նիստով և նույնքան լուսամուտով կամարաշար գմբեթով, որը, սակայն, Սիմեոն Բզնունու հեռանալուց հետո չի իրականաց-

վել: Ինչ վերաբերում է զանգակատանը, ապա ակներև է, որ այն ծրագրվել էր կառուցել երկհարկ, վրան ռոտոնդա՝ Սբ. Էջմիածնի Մայր տաճարի օրինակով (նույն պատճառով անավարտ է մնացել):

Քանդակված թեմաներից կարելի է առանձնացնել՝ ա) հրացանը կողքին քնած զինվորի վրա գաղտագողի հարձակվում է մի արջ (ընդունված է, որ այս տեսարանը ալլեգորիկ ձևով պատկերում է Ռուսաստանի հանկարծակի հարձակումը Պարսկաստանի վրա), բ) հեքիաթային կենդանիների մենամարտը, գ) արևի սկավառակը և նրա ճառագայթների մեջ մարդու պատկերը, դ) երկու թռչուն, ե) վիշապը կիսով չափ կուլ է տվել մի զինվորի, որը թրով փորձում է նրան հարվածել (այս տեսարանը կրկնվում է նաև զանգակատան պատին), զ) քառատրոփ սլացող դիցաբանական միաեղջյուր (արաբական՝ «կարկադան»), որը տարածված է իսլամական արվեստում, է) առագաստանավ և ծովում լող տվող մեկը, ը) երկու վայրի ոչխար, թ) Գաբրիել հրեշտակապետը և թամբած, սիրամարգի պոչով մի կենդանի, որը պատկերում է Մուհամեդի ալ-Բուրակ հեքիաթային ձին (ժ. Մ. Թիերի, 1988):

Մեծ եկեղեցու արտաքին ճակատների զարդաքանդակների չորրորդ գոտին, որը նույնպես ձգվում է շենքի ողջ պարագծով, բաղկացած է դեկորատիվ կամարաշարից, որի մեջ ներգծված պսակաձև կամ կիսաշրջանաձև կամարներով ավարտվող խորշերի մեջ կան հետևյալ քանդակները. ա) բուսական զարդաքանդակներ, Կենաց ծառեր՝ ոճավորված նոճիների (կիպարիսներ) ձևով, բ) վարդակակաչներ, դ) վարդակներ, ե) թևատարած արծիվներ, գ) եղնիկներ, է) արևի սկավառակի առջևում պառկած մի առյուծ: Սա պարսից թագավորության պաշտոնական

զինանշանն էր:

Հայկական դեկորատիվ արվեստում նոճիները պատկերվել են ուշ միջնադարում: 1712-1722 թթ. Նաղաշ Հովնաթանը նկարազարդել է Սբ. Էջմիածնի Մայր տաճարի ներսը (այսօր պահպանվել է միայն գմբեթի որմնանկարը): Նաղաշի զարդանկարներում առկա է այդ ժամանակաշրջանի պարսկական արվեստի ազդեցությունը՝ բուսական մոտիվների արաբեսկային նկարվածքով, նոճիների կիրառումով, գունային համադրման սկզբունքով:

4-րդ գոտու քանդակներից կարևոր են հրեշտակների բազմատիպ քանդակները: Կամարաշարի միացման անկյուններում քանդակված են քերովբեներ և սերովբեներ: Հրեշտակներ են քանդակված նաև շքամուտքերի վրա: Վերջիններս հայկական ճարտարապետության ավանդական հորինվածքով են՝ դռան բացվածքն ունի հյուսածո քանդակազարդ շրջանակ՝ ներառված պսակաձև կամարով ավարտվող խորշի մեջ: Շքամուտքի վերին մասը եզերում է պարզ տրամատով գոտին: Հյուսիսային շքամուտքի ճակատակալ քարին Միքայել հրեշտակապետի քանդակն է՝ վիշապը ոտքերի տակ (սա համապատասխանում է արևմտաեվրոպական պատկերագրությանը): Շքամուտքից ձախ հեծյալ Սբ. Սարգիսն է՝ նիզակը ձեռքին, իսկ աջ կողմում՝ նույնպես ձիավոր, Սբ. Գևորգը, որը տեղով հարվածում է վիշապին: Հարավային շքամուտքի ճակատակալ քարին Միքայել հրեշտակապետն է (ժ. Մ. Թիերի, 1988), որը կշռում է հոգիները: Մուտքի աջ կողմում Սբ. Գևորգն է, ձախ կողմում՝ հեծյալ Սբ. Մինասը:

Մեծ եկեղեցուն արևմուտքից կից քառամույթ, անավարտ զանգակատան առաջին հարկի հարդարանքը փաստորեն հանդիսանում է Մեծ եկեղեցու



չորրորդ գոտու շարունակությունը: Կամարաշարի մեջ, ուղղանկյուն շրջանակներում քանդակված են արքայական շքեղ հանդերձներով և թագով, գահին նստած տասներկու անձնավորություններ, որոնք, հավանաբար, Աստվածաշնչի «Թագավորաց» գրքում հիշատակվող թագավորներն են: Նրանց քանդակները բացարձակորեն նման են միմյանց, կերպարներն անհատականությունից զուրկ են, գերծակագրություններից:

Մույթերի ներքևի մասում՝ հյուսիսային և հարավային ճակատներում, արաբեսկ ոճով կատարված հյուսածո զարդաքանդակներով խոշոր վզնոցազարդեր են, ներսի կողմում՝ առյուծների քանդակներ, որոնք միջնադարյան հայկական արվեստում հանդիսանում են պահպանիչ խորհրդանշաններ (օրինակ՝ Խորանաշատ վանքի գավթի մուտքի երկու կողմի առյուծները):

Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցու հարդարանքը հայկական և իրանական արվեստների ինքնատիպ, կարելի է ասել՝ ներդաշնակ զուգակցում է: Արքեպիսկոպոս Սիմեոն Բզմունին Մեծ եկեղեցու արտաքին ճակատների ձևավորումն ընդօրինակել է Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցուց, սակայն քանդակների թեմաները, հնարավոր է, հենց նրա թելադրանքով, վերցվել են ինչպես Աստվածաշնչից, այնպես էլ իրանական ժողովրդական բանահյուսությունից: Քանդակները, ծաղկազարդերը, նոճիները կրում են XVIII դ. Շիրազի դեկորատիվ արվեստի ազդեցությունը: Առկա է նաև արևմտաեվրոպական արվեստի որոշ ազդեցություն: Այս բոլորը, միահյուսված միջնադարյան հայկական քանդակագործական արվեստի ավանդների և ձևերի հետ, ստեղծել են բացառիկ մի հուշարձան, որի մեջ տարբեր ազգերի և կրոնների պատկե-

րագրական թեմաները, կատարման ոճերը միանգամայն ներդաշնակ են: Չնայած ընդհանուր էկլեկտիկ բնույթին, Սբ. Թադեի վանքի Մեծ եկեղեցու հարդարանքը կարելի է համարել XIX դ. Արևելքի քանդակագործության և դեկորատիվ արվեստի արժեքավոր ստեղծագործություններից մեկը:

### 3. ՍԲ. ԹԱԴԵԻ ՎԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Սբ. Թադեի վանքի համալիրը կազմավորվել է XVII դ., լրացվել՝ XVIII-XIX դդ.: Ժամանակի ընթացքում, բազմաթիվ վերակառուցումներից հետո, այն դարձել է պարսպապատ՝ կիսաշրջանաձև բուրգերով, երկու բակով մի համալիր: Հայաստանում XVII դ. Սբ. Թադեի վանքից բացի, մուտքի առջև օժանդակ բակ ունեն նաև Տաթևի Մեծ անապատը և Ամարասի վանքը: Արևելյան գլխավոր բակի կենտրոնում բարձրանում է զույգ եկեղեցու միասնական զանգվածը, իսկ բակի ողջ պարագծով, պարիսպներին կից, կառուցված են բնակելի և տնտեսական շենքեր: Պարիսպները և բուրգերը կառուցված են բազալտե կոպտատաշ քարերով, ունեն մոտ 5 մ բարձրություն՝ հյուսիսում, հարավում և արևելքում, 8 մ՝ արևմուտքում (տեղանքի թեքության պատճառով): Պատերը և բուրգերն ունեն միևնույն բարձրությունը և կից կառուցված շենքերի հարթ տանիքներից վեր են բարձրանում մոտ 1,5 մ, որը պաշտպանվողներին հնարավորություն է ընձեռում պատսպարվել պարսպի ետևում և սենյակների տանիքից հրազենային կրակով ետ մղել հարձակվողներին:

Իր հատակագծով և պաշտպանական համակարգով Սբ. Թադեի վանքը պատկանում է Հայաստանում XVII դ. ձևավորված վանք-ամրոցների տա-

րածված տիպին: Պարիսպները ծառայում էին ոչ միայն վանքի անվտանգությունն ապահովելու, այլև ելուզակների հաճախակի հարձակումների ժամանակ շրջակա գյուղերի բնակչությանը պատսպարելու համար: XVII դ. որպես վանք-ամրոց կառուցվեցին հայկական այնպիսի մենաստաններ, ինչպիսիք են Խոր Վիրապը, Սբ. Թովմայի վանքն՝ Ագուլիսում, Մաղարդավանքը (Սբ. Ստեփանոս Նախավկա վանքը) և շատ ուրիշներ: Դրանք բոլորն էլ հիմնականում ունեն նույն կազմությունը՝ ուղղանկյուն կամ ուղղանկյան մոտ բակ, շրջապատված անկյուններում շրջանաձև կամ կիսաշրջանաձև բուրգեր ունեցող պարիսպներով, ներսից դրանց կից բնակելի և տնտեսական շենքերով: Բակի կենտրոնում, ազատ կանգնած է վանքի միակ եկեղեցին, որոշ դեպքերում՝ կից զանգակատնով կամ գավթով:

Հայաստանում բուրգերով հզորացված պարիսպներ ունեն XII-XIV դդ. որոշ վանքեր՝ Հաղբաղը, Ախթալան, Հովհաննավանքը: Սակայն վանք-ամրոցի ավարտուն ճարտարապետական կերպարը ձևավորվում է ուշ միջնադարում, երբ համալիրն սկզբից ևեթ կառուցվում էր կրոնական և պաշտպանական տարրերի զուգակցման մտահղացմամբ:

Ուշ միջնադարում վանք-ամրոցներ կառուցվել են ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Բալկաններում (Բուլղարիա, Ռումինիա, Սերբիա), որտեղ վանքերը, լինելով կրոնական և մշակութային կենտրոններ, հաճախ ունեին նաև ամրոցներին բնորոշ պաշտպանական հատկություններ:

Սբ. Թադեի վանքի արևմտյան օժանդակ բակը, որը գլխավորից քիչ փոքր է, նույնպես պարսպապատ է: Դրա հարավային կողմում կառուցված է ձիթհանի մի խոշոր համալիր: Վանքի հարավ-արևմտյան

բուրգի դիրքից և օժանդակ բակի պարսպի միացման ձևից երևում է, որ ձիթհանը հետագայում է ավելացվել: Օժանդակ բակն սկզբում ունեցել է կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ, և դրա պատերը գլխավոր բակի պարսպապատերի շարունակությունն են կազմել: Երկու բակերի դարպասներն էլ զետեղված են արևմտյան պարիսպներում՝ միմյանց դիմաց, եկեղեցու մուտքի առանցքով: Սբ. Թադեի վանքում շեշտված է երկայնական՝ արևելք-արևմուտք առանցքը, որը չի խախտում նաև հարավային՝ երկրորդ մուտքի գոյությունը: Վանքի ներկայիս երկգմբեթ ուրվագիծը XIX դ. արդյունք է: XVII դ., ինչպես նշում է Առաքել Դավրիժեցին, Սբ. Թադեի վանքի եկեղեցուն կից կառուցել են գավիթ, որի շնորհիվ վանքն ստացել է ուշ միջնադարի հայկական ճարտարապետական համալիրներին հատուկ հորինվածք՝ եկեղեցին գավթով, շրջապատված ուղղանկյուն պարսպին կից աշխարհիկ թաղածածկ շինություններով (բնակելի խցեր, սեղանատուն, խոհանոց, տնտեսական սենյակներ և այլն): Վանքն ունեցել է ուղղաձիգ շեշտով (եկեղեցու գմբեթով) ուրվագիծ, իսկ գավիթն իր չափերով համահունչ է եղել կառուցապատմանը:

XIX դ. կառուցված Մեծ եկեղեցին իր մասշտաբով անհամապատասխան է համալիրին՝ հատկապես արևմուտքից կցված զանգակատնով: Դրանք տարածվել են մինչև արևմտյան խցերը, որի պատճառով քանդել են դարպասի կողքի սենյակները: Մեծ եկեղեցին և զանգակատունը կառուցող Սիմեոն Բզմունու ծավալամոլությունը եզակի երևույթ չէ: Կան այլ դեպքեր ևս, երբ մեկենասները նորը կառուցելիս՝ ձգտել են դրանց գերիշխող դիրք տալ արդեն ձևավորված համալիրներում: Այդպես է եղել նաև



Տաթևի վանքում, երբ XIX դ. վերջում Ար. Պողոս-  
Պետրոս տաճարին կցել են հսկայական մի զանգա-  
կատուն, որը գերիշխում է ողջ համալիրում:

1. Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. 1, Երևան, 1951:
2. Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. 2, Երևան, 1956:
3. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978:
4. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
5. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
6. Առաքել Ղալիճեցի, Պատմություն, Երևան, 1988:
7. A. Haghnazarian, Das armenische Thaddaus Kloster der Provinz westazerbaidjan in Iran, Aachen, 1973:
8. W. Kleiss, Le monastere armenien de Saint-Thaddee en Azerbeidjan, "Archeologia", Paris, 1967:

**Murad Hasratyan**

## The Architecture of St. Tadeh Monastery in Artaz

### (Summary)

One of the old and famous monasteries of Armenia the Monastery of St. Tadeh, which was founded on the grave of the first apostle Tadeos (Thadeous) has been mentioned since the X century.

The monastery, which suffered much from the invasion of the Seljuk-Turks, was restored in 1247, but was totally ruined in 1319 from the earthquake. The monastery complex was rebuilt in 1329. The temple of the monastery was again half -ruined in the XVII century and was restored by the Catholicos Phillipos in 1650. In 1810 Archbishop Simeon had the western façade of the temple removed and a new four-column-domed, cross-shaped church and a bell tower added.

The temple of the monastery of St. Tadeh belongs to the "domed hall" type of church buildings in Armenia. In the laying of the walls and 12-based drum multicolor method is used. The façades and window

9. J. M. Thierry, *Monuments armeniens du Vaspurakan*, Paris, 1988.
  10. W. Kleiss, H. Seihoun, S. Thadei vank, Milan, 1971:
  11. Մ. Հասրաթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1993:
  12. Ա. Թորամանյան, Մոլդավիայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1986:
  13. Մ. Հասրաթյան, Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, «Հայկազյան հայագիտակ հանդես», հ. ԺԷ, Բեյրութ, 1997:
  14. Documenti di architettura Armena, N 4, S. Tadei vank, Milano, 1971.
  15. Documenti di architettura Armena, N 20, Sorhul, Milano, 1988.
- \* Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը Ար. Էջմիածնից Թադեի վանք տեղափոխելու մտադրությունը կրկնվեց նաև XX դ: Հայ եկեղեցու հանդեպ խորհրդային իշխանության սկսած հալածանքներից ազատվելու համար Չևորգ Ե կաթողիկոսը 1930 թ. արտա-  
հայտվեց Ար. Աթոռը Ար. Թադեի վանք փոխադրելու մասին, որից  
անմիջապես հետո նա վախճանվեց:

frames are decorated with sculptural belts. The new church of the monastery of St. Tadeh, built in 1810, is an attempt of resemblance to the Holy Site of Echmiadzin in its volumetrically composition.

The decorations of the façades of the church are unique. It is an original and harmonious mixture of Armenian and Iranian arts. The subjects of the embossed ornaments are taken both from the Bible and from Iranian Folk-lore. The ornaments bear the influence of the XVIII century decorative art of Shiraz. Interacting with the traditions of the medieval Armenian sculpture, a unique monument with picturesque subjects from different nations and religions was created.






# ԱՆԻ ՄԵՅՐ ՏԵՃԱՐԻ ՀԼՁԱՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒԿԷ

(1001-2001թթ.)

այլական եկեղեցաշինության պատմության մեջ առանձնանում են այն բացառիկ կոթողները, որոնք, իրենց աննախօրինակ ստեղծագործական թռիչքով՝ չտեղավորվելով դարաշրջանի ճարտարապետության համատեքստում, դարձել են հայոց հնօրյա մշակույթի խորհրդանիշներ, ճարտարվեստի առեղծվածային մեծագործությունների առհավատչյան: Հայկական ճարտարապետության՝ հանրնդիանուր ճանաչմամբ, այդպիսի կոթողներից է Անիի Սբ. Աստվածածին Մեծ Կաթողիկե եկեղեցին՝ հռչակավոր Մայր տաճարը:

Կառուցման ժամանակից ի վեր դառնալով Բագրատունիների հայոց թագավորության մեծանուն մայրաքաղաքի ճարտարապե-



Նկ. 1. Հուշարձանի տեսքը հյուսիս-արևմուտքից (վերակազմությունը Ա. Ղուլանի)

տական պարծանքն ու խորհրդանիշը, Անիի Մայր տաճարը մշտապես գտնվել է թե՛ ժամանակակիցների, թե՛ հետագա դարերի հայ ու օտար տարեգիրների, ճանապարհորդների, պատմաբանների, հնագետների, ճարտարապետների, արվեստաբանների, հոգևոր դասի երևելիների ուշադրության կենտրոնում: Ստեղծված պատկառելի անիագիտական գրականության շնորհիվ պարզված են հուշարձանի պատմության և ճարտարապետության հետ կապված այլևայլ հարցեր, արժեքավորված է նրա առանցքային դերը հայկական միջնադարյան ճատարապետության տարեգրությունում և մնայուն տեղը՝ համաքրիստոնեական եկեղեցաշինության լավագույն կոթողների ընտրանում\*:


Առանձնակի քննության ու բանավեճի առարկա են դարձել տաճարի շինարարական արձանագրության թվականները և արտաքին հարդարանքի նախնականությունը, հորինվածքակազմության ուղիները, նրա տեղը Տրդատ ճարտարապետի ստեղծագործության մեջ, Հայաստանում և նրանից դուրս ունեցած ոճական ազդեցությունը և այլ հարցեր: Ցայսօր էլ շարունակվող բանավեճերի պատճառը մասամբ այն է, որ հուշարձանը տեղում ուսումնասիրողները՝ Ն. Մառը, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, նրա մասին որևէ հանգամանակից և ընդհանրական աշխատություն չեն թողել, իսկ տարբեր առիթներով Մայր տաճարին և մյուս հուշարձաններին տված գնահատականներում անհետևողական են գտնվել, հաճախ՝ իրարամերժ: Ավելին, որակով և ամբողջովին չեն հրատարակել Մայր տաճարի և Անի-Շիրակի մյուս հուշարձանների մեծարժեք չափագրություններն ու լուսանկարները, մենագրությամբ չեն ընդհանրացրել առկա սովորածավալ

նյութերն ու ուսումնասիրությունները: Ի վերջո՝ հուշարձանն այսօր անմատչելի է հայ մասնագետների համար:

Օրախնդիր է փորձել հազար տարվա հեռվից վերստին տեսնել Մայր տաճարը՝ դարաշրջանի պատմաքաղաքական ու հոգևոր կյանքի վերելքներով պայմանավորված բուռն եկեղեցաշինության ավելի քան հարյուրամյա ընթացքի մեջ և, հատկապես, դրանում կիրառված հորինվածքաձևերի և արտահայտչամիջոցների համատեքստում:

Անիի Մեծ Կաթողիկեի կառուցումն առաջին հերթին պայմանավորված էր քաղաքական բարենպաստ իրավիճակով: Դեռևս Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977 թթ.) օրոք՝ 961 թ., Անին վերջնականապես դարձավ մայրաքաղաք և սկսվեց թագավորության բարենորոգումների շրջանը: Այն վերելք է ապրում հոր գահակից ու հաջորդ Սմբատ Բ Տիեզերակալի (977-990 թթ.), ապա վերջինիս եղբոր՝ Գագիկ Ա Շահնշահի օրոք (990-1020 թթ.): Թագավորության հզորացումն ուղեկցվում է մայրաքաղաքի ամրացմամբ ու բարեշինությամբ, նորանոր եկեղեցիների կառուցմամբ: Մյուս կողմից, Բագրատունիների և Պալաուկունիների ծավալած աննախադեպ եկեղեցաշինությունն Անի-Շիրակում և նրանից դուրս, ըստ Ղ. Ալիշանի բնորոշման, պայմանավորված էր «*Քրիստոսի հազարամեայ յոթելեանի*» նշանավորման, և այդ առթիվ աստվածահաճո ձեռնարկումներով ու բարեպաշտությամբ ներկայանալու անսքող մտադրությամբ, ինչն, ի դեպ, բազմիցս շեշտվում է եկեղեցիների կառուցման մասին պահպանված ձեռագիր և վիճակագիր աղբյուրներում: Մայր տաճարի կառուցումը մեծապես պայմանավորված էր նաև Սմբատաշեն պարիսպներով ընդարձակված մայրաքաղաքում





Նկ. 2. Մայր տաճարը, Սբ. Փրկիչը և Սբ. Հռիփսիմյանց մատուռը (վերակազմությունը Ա. Ղուլանի)

տարողունակ եկեղեցի ունենալու և Անին՝ Վաղարշապատի ու Դվինի օրինակով, նաև կաթողիկոսանիստ դարձնելու ցանկությամբ: Դրա իրագործմանն էին ուղղված Վաղարշապատյան նշանավոր սրբավայրերի ճարտարապետության նորովի մեկնաբանություններն Անիում՝ զվարթնոցակերպ Սբ. Գրիգորը, հնգազմբեթ Սբ. Առաքելոցը, Սբ. Հռիփսիմյանց վկայարան-մատուռը: Երեքն էլ կառուցվել են 992 թ. կաթողիկոսարանն Արգինայից Անի տեղափոխելուց անմիջապես կամ մի փոքր հետո:

Իսկ երբ՝ է հիմնադրվել Մայր տաճարը: Ականատես-ժամանակակից Ասողիկի հայտնի տեղեկության համաձայն, ընդհանրացել և լայնորեն շրջանառվում է այն տեսակետը, որ տաճարը հիմնադրվել և շինարարությունն անմիջապես ընդհատվել է Սմբատ Բ-ի գահակալության վերջին տարում՝ 989 թ.: Ասողիկի պատմության ժԱ գլուխը վերնագրված է. «Վասն թագաւորելոյն Սմբատայ ... և շինելոյ զպարիսպն Անույ հանդերձ եկեղեցեան...» (Ասողիկ, 1885, էջ 187), իսկ Կ. Գանձակեցու վկայությամբ՝ «Աս Սմբատը/ հիմնարկեաց և զկաթողիկէն ... և ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա վախճան մահու...», սակայն՝ «եւ ... Կատրամիտէ թագուհի աւարտեաց զկաթողիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն» (Կիրակոս Գանձակեցի, 1961, էջ 88-89):

Ընդսմին, և՛ Ասողիկի հաջորդ վկայությունը (Ասողիկ, 1885, էջ 256), և՛ տաճարի շինարարական արձանագրությունը (ԴԴԿ, պրակ 1, 1966, էջ 35) շեշտում են Կատրամիտի հոգաժողությամբ Կաթողիկեի կառուցումն 1001 թ. ավարտելու և շուրջ նվիրատվություններով բարեզարդելու մասին: Վկայաբերելով այս տեղեկությունները՝ Ս. Մարությանն իրավասիրեն եզրակացնում է, որ Անիի Կաթողիկեի շինա-

րարությունը Տրդատն սկսել է ավելի վաղ՝ մոտ 985 թ., մինչ այդ՝ 972-985 թթ., կառուցելով Արգինայի Կաթողիկեն (Т. Марутян, 1989, с. 250-251): Բացի այդ, Մ. Ուռհայեցու «ժամանակագրությունից» հայտնի է, որ Սմբատ արքան տաճարի համար Հնդկաստանից բերել էր տվել շքեղ ու թանկարժեք բյուրեղյա ջահ, որը 1064 թ., երբ քաղաքը գրավեցին սելջուկ-թուրքերը, վայր է գցվել ու փշրվել (Մատթեոս Ուռհայեցի, 1991, էջ 162): Հնարավոր է ենթադրել, որ թագավորը կծեռնարկեր այդպիսի քայլ, եթե հասցրել էր դնել ապագա տաճարի սոսկ հիմքերը: Ավելին, եկեղեցու հյուսիսային պատի արևելյան եզրասյունների միջև պահպանվել է Սմբատի անվան հիշատակությամբ արձանագրության մնացորդը, որի շարունակությունն, ըստ Հ. Օրբելու, եղել է չարամտորեն տեղահանված քարի վրա /լուսանկարներում քարի տեղն այժմ էլ երևում է հստակորեն/ (ԴԴԿ, պրակ 1, էջ 36):

Նկատի ունենալով նաև Սմբատ Տիեզերակալի ձեռնարկած շինարարության լայն թափը, մնում է կարծել, որ հարյուրավոր մետրեր ձգվող կրկնաշար պարիսպներ կառուցող թագավորն, իրոք, ի զորու էր և հասցրել է պարիսպների ու բուրգերի հետ միաժամանակ՝ հինգ տարում (985-989 թթ.), մոտ հարյուր մետր պարագծով եկեղեցին կանգնեցնել պարիսպներին հավասար՝ մոտ 10-11 մետր բարձրությամբ՝ մինչև ճակատների կամարաշարի վերին նիշը, կամ դրանից մի փոքր վեր՝ մինչև հորիզոնական քիվերը:

Անկախ դրանից, տաճարի շինարարության ընդհատումն, ըստ ամենայնի, պայմանավորված էր ոչ այնքան Սմբատ Բ-ի մահով, որքան՝ նույն կամ հաջորդ տարում (990 թ.) Տրդատի Կոստանդնուպո-



լիս մեկնելով: Այլապես՝ ճարտարապետական ձեռնարկումներով ոչ պակաս հայտնի նոր թագավորն ու թագուհին կարող էին շարունակել Կաթողիկեի կառուցումը և իրագործել Գագիկ արքայի վաղեմի բաղձանքը՝ զվարթնոցակերպ Աբ. Գրիգորի հիմնարկեքը: Սակայն վկայված է, որ շինարարությունն, այնուամենայնիվ, ընդհատվել է և միայն Տրդատի վերադարձից հետո (մոտ 992 թ.) Կատրամիդե թագուհին վերսկսել է Մայր եկեղեցու կառուցումը՝ գմբեթավորումը, իսկ Գագիկ Ա-ն՝ հիմնադրել Աբ. Գրիգորը:

Տաճարի կառուցումն ավարտվել է 1001 թ.: Այս մասին վկայված է շինարարական արձանագրության առաջին երեք համաժամանակյա թվարկումներում: Պատմիչներ Ասողիկը, Կ. Գանձակեցին և Ս. Անեցին միաբերան շեշտում են, որ և՛ Մայր տաճարի, և՛ Գագկաշեն Աբ. Գրիգոր եկեղեցու շինարարությունը «կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», այսինքն՝ նույն 1001 թ. (Ասողիկ; Կ. Գանձակեցի; Սամուել Անեցի; 1893, էջ 104-105):

1004 թ. իր պատմությունն ավարտած Ասողիկը հիացմունքով է նկարագրում «սքանչատես տեսլեամբ գմբեթաւորեալ» և «լոյսանցոյց պատուհանօր» /բոլորածն պատուհաններով/ Գագկաշեն եկեղեցին, ուստի անհիմն է վերջինիս թվագրումը Մայր տաճարի ավարտի և Գագիկի թագավորության վերջին տարվա միջակայքով /1001-1020 թթ./ (Մ. Ա. Օրբելի, 1963, շ. 121, Կ. Հարությունյան, 1992, էջ 233): Լայն տարածված այս թվագրումը վիճարկում է նաև Ստ. Մնացականյանը, հարցը թողնելով առկախ (Ստ. Մնացականյան, 1971, էջ 202-203; նույնի՝ 1982, էջ 130): Ն. Մառն ու Թ. Թորամանյանը ևս Գագ-

կաշենի կառուցման ավարտի տարին 1001 թ. են համարում: Թ. Թորամանյանը նույնիսկ համոզված է, որ դրանից 10-12 տարի անց է ամրացվել վթարված տաճարը, և դա հիմնավորել է 1013 թ. վիճագրով (Թ. Թորամանյան, 1942, էջ 266, 275, նույնի՝ 1984, էջ 94; Հ. Յ. Մաքս, 1939; նույնի՝ 1907):

Պատմական աղբյուրներում վկայված չէ Կատրամիդեի ծախսով Մայր տաճարի շինարարությունը և դրան Տրդատի մասնակցության փաստը: Այդ առումով, կարծում ենք, մեծ հետաքրքրություն է ներկայացնում մինչև այժմ պահպանված շինարարական անեղծ վկայագիրը՝ փորագրված եկեղեցու հարավային ճակատի արևմտյան որմնակամարի տակ\*\*։ Բազմաթիվ վերծանությունների հեղինակները համոզված են, որ արձանագրության վերջում հիշատակված «Բենե»-ն փորագրողի անունն է և տարակուսում են, թե ինչու թագավորական ու կաթողիկոսական անունների կողքին այդքան կարևորված է գրչի անունը: Իրադրությունը միանգամայն փոխվում է, երբ այդ բառը փորձում ենք դիտարկել ոչ թե որպես անձնանուն, այլ՝ մասնագիտական կոչում: Հայտնի է, որ միջնադարում Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում ճարտարապետները, ի շարս այլ ձևերի, հաճախ կոչվել են նաև «բեննա» /«ալբեննա»/, որն արաբերեն ճարտարապետ կամ վարպետ է նշանակում: Մահմեդական Արևելքի ճարտարապետության հմուտ գիտակ Լ. Բրետանիցկին նշում է, որ սովորաբար «բեննա» են կոչել աչքի ընկնող և համբավվոր ճարտարապետներին, այլ խոսքով՝ վարպետաց վարպետ /օրինակ է բերում Աբուբեքրի որդի Աճեմի Նախիջևանցուն, որն անփոփոխ այդպես է կոչվել ու ստորագրել իր գործերը/ (Լ. Շ. Բրետանիսկի, 1966, շ. 439-445, 523-524, նույնի՝ 1988,

Շ. 166): Իսկ այն, որ հայոց արքունի ճարտարապետը կարող էր կոչվել արաբական միջավայրում հայտնի պատվանունով, կարծում ենք, բացատրության կամ հիմնավորման կարիք չունի: Հիշենք նույն վիճագրում փակագիր հիջրայի թվականի գործածությունը, Բագրատունիների «շահնշահ» տիտղոսը, Գագիկ Ա-ի արաբազգեստ արձանը և այլն: Ի դեպ, արդի աղբյուրներում արաբերենից փոխառված «բեննա»-ն դարձյալ նշանակում է քարգործ, որմնադիր: Նույն իմաստով օգտագործվում է նաև Ղարաբաղի բարբառում:

Այսպիսով՝ չափազանց հավանական է ենթադրել, որ տաճարի շինարարական արձանագրության փորագրող-հեղինակը՝ Տրդատ ճարտարապետն է և հենց նրան է իրավունք վերապահվել ոչ առանց հպարտության ընդգծելու. «Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ բենե», ասել է թե՛ տաճարի ճարտարապետի ձեռքով, քանզի ճանաչված վարպետն այդ օրերում մեկն էր՝ Տրդատը:

Դրանով վերջնականապես հերքվում է տաճարի արտաքին հարդարանքը 12-13-րդ դդ. վերակառուցման արդյունք համարելու մասին հայտնի տեսակետը, ինչը չնայած բազմիցս հերքել են Ն. Տոկարսկին, Կ. Հարությունյանը, Ստ. Մնացականյանը, Յ. Մարությանը և այլոք, այնուամենայնիվ, այսօր էլ հետևողներ ունի (Կ. Մաթևոսյան, 1997, էջ 338-339):

Անիի Մայր տաճարը դարաշրջանի եկեղեցիներից առանձնանում է իր բացարձակ չափերով /21.9 X 34.3 մ/ և ամբողջությամբ՝ մոտ 38 մ բարձրություն ունեցող գմբեթով կանգուն է մնացել ավելի քան 900 տարի: 19-րդ դ. կեսերին երկրաշարժից փլված գմբեթի քանդակազարդ բեկորները հավաքվել և պահպանվում էին հյուսիսային շքամուտքի մոտ

(Հ. Յ. Մաքս, 1913, շ. 29), իսկ ավելի վաղ քանդվել էին երեք շքամուտքերը: Հավանաբար այդ փլուզման հետևանքով ճեղքվել է տաճարի հյուսիսարևմտյան անկյունապատը: Հետագայում ճեղքն ընդարձակվել է հյուսիսային ճակատի եզրային որմնակամարների չափով՝ սպառնալով կործանել հուշարձանը: Այժմ մոտ 21 մ բարձրությամբ՝ մինչև գմբեթատակի գոտին, կանգուն տաճարն աստիճանաբար քայքայվում և խարխլվում է:

Տաճարը հորինվածքով քառամույթ գմբեթավոր բազիլիկ է: Չորս հզոր փնջածն մույթերի կամարակապի վրա բարձրացել է ներքուստ բոլորածն, իսկ արտաքուստ 24 նիստավոր թմբկապատը՝ հարդարված որմնակամարաշարով, որի գրեթե բոլոր որմնասյուների խարիսխներն ու պատուհանների հետքերը դեռևս պահպանվում են: Ըստ պահպանված լուսանկարների՝ թմբուկի զույգ որմնասյուներն իրենց տրամատով ու քանդակազարդ խոյակներով եկեղեցու խորանի որմնակամարաշարի սյուների կրկնօրինակներն են, իսկ դրանք կապող զարդակամարներն ունեցել են բոլորակներից կազմված քանդակահյուսք: Կամարներից վեր թմբկապատը վերածվել է գլանի և հարդարվել երկու մաքուր քարաշարքի միջև ձգվող հորիզոնական ոլորազարդերի մեջ առնված ծաղկաթերթ բոլորակաշարով: Գմբեթը պսակվել է կոնաձև վեղարով, որի մանրամասները, բեկորների բացակայության պատճառով, հայտնի չեն:

Ավելորդ համարելով տաճարի կանգուն մասի հատակագծային հանրահայտ հորինվածքի ու ճարտարապետական հարդարանքի նկարագրությունը, համառոտաբար ներկայացնենք դրանց որոշ առանձնահատկություններ՝ դարաշրջանի ճարտար-



վեստի զինանոցից զուգահեռելով այլ օրինակներ:

Ավանդաբար Անիի Մայր տաճարի հատակագծային տիպի նախօրինակներ են համարվում վաղ միջնադարյան քառանույթ գմբեթավոր բազիլիկները (Գայանե, Օձուն, Մրեն): Սրանց հատակագծային նմանությունը, իհարկե, նկատելի է, սակայն մանրամասների մեջ՝ անճանաչելիորեն աղոտ, իսկ մեկնաբանությամբ՝ միանգամայն այլ են:


Ճարտարապետական ստեղծագործությունում հատակագծային կամ ծավալային լուծումները թեև կարևոր են, այնուամենայնիվ՝ ոչ վճռորոշ: Նման կարգի հանգուցային կառույցներում ամենակարևոր գործոնը ճարտարապետական կերպարն է՝ եզրապատների կեցվածքով, ընդհանուրի ու մասնավորի հարաբերությունն ընդգծող ծավալայնությամբ, կառուցվածքաձևերի ու դրվագավորման-զարդավորման միջոցների արտահայտչական լիցքով, գեղարվեստական հնչեղության ու ոճական ուղղվածության միտումներով: Այս ելակետից միանգամայն պարզ է, որ Մայր տաճարի ճարտարապետական դիմագծի հնչերանգներին նախորդում են ինչպես Տրդատաշեն Արգինայի, այնպես էլ կառուցման ժամանակով ու տեղադրությամբ առավել մոտ Օղուզլուի և Շիրակավանի, այնպես էլ ավելի վաղ շրջանի Արուճի և Թալին եկեղեցիները: Հորինվածքակազմության այս ուղղվածությամբ պետք է բացատրել տաճարի ճակատների եռանկյուն խորշերի, վերին մասերում բոլորածն պատուհանների, զարդակամարաշար գմբեթների և վերջիններս հենամույթերի՝ կամարակապից ետ դնելու ակնհայտ ընդհանրությունը, որը նկատելի է հիշյալ եկեղեցիներում:

Հատկանշական է նաև, որ զարդակամարաշարով գմբեթի տիպը նախասիրված էր Բագրատունյաց թագավորական տան բոլոր ճյուղերի տիրույթ-

ներում՝ Շիրակում, Վանանդում, Լոռիում և Տայքում, 9-11-րդ դդ. կառուցված եկեղեցական խոշոր շենքերում, և կասկած չի թողնում, որ սյունազարդ են եղել նաև Արգինայի Կաթողիկեի և դրան խիստ հարագատ ու Տրդատին վերագրվող Հաղբատի Սբ. Նշան եկեղեցու հետագայում վերակառուցված գմբեթները: Ըստ Հ. Խալփաղչյանի համոզիչ վերակազմության Սանահինի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու նախնական՝ կամարազարդ գմբեթն ու ճակատները նույնպես այս ընդհանուր ուղղվածության արդյունքն են: Համանման հարդարում է ունեցել նաև Աշոտ Ողորմածի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու նախածեռնությամբ կառուցված Հաղբատի Սբ. Նշան եկեղեցին:

Ընդհանուր ճարտարապետական կերպարի հանդիսավորությամբ ու գեղազարդ գմբեթով շեշտված այս գմբեթասրահների հատակագծային խմորումների և վերածնավորման ընթացքը, ինչպես նկատում է Ստ. Մնացականյանը, արդեն ցուցաբերում է գմբեթակիր մայր մույթերը երկայնական պատերից անջատելու նախանշանները (Ստ. Մնացականյան, 1992 թ., էջ 120-123): Տրդատ ճարտարապետը, ելնելով Մայր տաճարի հատակագծային խոշոր չափերից և խուսափելով չափազանց մեծաթիչք գմբեթից, տրամաբանական ավարտին է հասցրել Արգինայում և Հաղբատում գմբեթակիր մույթերի շեշտադրման այդ միտումը՝ դրանք փոքր-ինչ անջատելով պատերից: Միայն այս ճանապարհով է հնարավոր դարձել տաճարի ընդհանուր ուրվանկարի և ներքին կառուցվածքաձևերի աննախօրինակ թեթևությունն ու սլացքը, որոնք դուրս են նույնիսկ դարաշրջանի ճարտարապետությանը բնորոշ վերասլացության սկզբունքներից:

Այս առանձնահատկությունը ցայտուն



Նկ. 3. Անիի Մայր տաճարը երեկոյան (վերակազմությունը Ա. Ղուլյանի)





Նկ. 4. Տաճարը հարավ - արևելքից (վերակազմությունը Ա. Դուլյանի)

դրսևորվել է հատկապես հարևան Տայքի կառույցներում: Օչկ վանքի տաճարի գմբեթն իր համաչափություններով ու 24 նիստավոր թմբուկով, ինչպես նաև երկու մույթերով դուրս շեշտված շքամուտքով Մայր տաճարի ժամանակակիցն ու մերձավորներից է (*Տ. Մարության, 1978, էջ 104-108*):

Անիի Կաթողիկեի ճարտարապետական հարդարանքի յուրօրինակ կողմը ճակատների կամարազարդումն է՝ մեկական նրբատաշ որմնասյուների խաղացկուն ռիթմով և եկեղեցու խաչաթևերն ընդգծող լայնաղեղ կամարներով շրջանակված թանձրամույթ շքամուտքերի առանցքային շեշտադրմամբ: ճարտարապետն այստեղ գեղարվեստական ազդու արտահայտչականության է հասել՝ տաճարի ընդհանուր ծավալների կոթողայնության, որմնախորշերում ու շքամուտքերում խտացված լուսաստվերի և հարդարանքի մանրադրվագ անկրկնելի նրբագեղության ու դրանց նույնքան անսպասելի հակադրությամբ (*Գ. Շախկյան, 2001, էջ 27-38, նույնի՝ 2003, էջ 15-22*): Համեմատական դիտարկումները ցույց են տալիս, որ կամարազարդ ճակատների և հատկապես մեկական սյուներով որմնակամարաշարի հնարքը ևս նախապատրաստված էր Մայր տաճարին նախորդած այլ եկեղեցիներում: Արգինայում նկատելի են պատուհանների եզրերը սյունազարդելու և կամարակապելու առաջին փորձերը: Հնարք, որը փոքր-ինչ հետո դառնում է Աբուղամրենց Սբ. Գրիգոր եկեղեցու ճակատների հիմնական զարդամիջոցը՝ զուգորդված որմնաեղևուտների խորշերը եզերող մեկական սյուների և դրանց կամարների հետ, որոնք ապա տեղ են գտնում Մայր տաճարի պատուհանների արտաքին ու ներքին հարդարանքում: Նույնը դիտվում է շքամուտքերի ձևավորման մեջ:

Արգինայում և Աբուղամրենց եկեղեցում դրանք գրեթե նույնական են, իսկ Մայր տաճարում՝ հարստացված բազմախորք փնջավորմամբ ու անջատ մույթերով:

Վերջապես, Մայր տաճարում Տրդատի մեծագործությունը նորարարությունն է՝ շենքի բոլոր ճակատներն ու գմբեթը նրբորեն հարդարելու միջոցով հայ եկեղեցաշինության մեջ քաղաքային ոճի սկզբնավորումը: Սակայն եկեղեցաշինության քաղաքային, իսկ հաջորդ դարերում՝ «գեղատեսիլ» կոչված ոճական ուղղության առաջնեկն, այնուամենայնիվ, Մայր տաճարը չէր: Անիի Մեծ Կաթողիկեի ծնունդը պայմանավորված էր քաղաքի Փոքր Կաթողիկեի գոյությամբ: 1912 թ. պեղումներով միջնաբերդի և Աշոտաշեն պարիսպների միջև հայտնաբերված այս եկեղեցին Ն. Մառը պայմանականորեն անվանում է «Հին քաղաքի Մեծ տաճար» և, ըստ բազմաթիվ ճարտարապետական բեկորների ու քանդակազարդերի՝ թվագրում 10-րդ դ. կեսով (*Ի. Յ. Մաք, с. 180-186; նույնի՝ с. 14-29*): Այժմ այս եկեղեցին գրականության մեջ սակավ է կոչվում «Աշոտի քաղաքի եկեղեցի կամ Քարիմադիմի եկեղեցի» և, առանց հիմնավորման, թվագրվում է 13-րդ դ. (*Գ. Սևուհյան, 1992; Paolo Cuneo, 1988*):

Փոքրաչափ գմբեթասրահի (9.5–14.0 մ, չափ. Պ. Կնյազնիցկի) յուրօրինակ հորինվածքով եկեղեցու ճակատները և գմբեթը հարդարված են եղել երկայուն զարդակամարաշարով, որոնք, հատկապես գմբեթի սյունաձևերն ու զարդագոտին, ըստ Ն. Մառի բնորոշման, «ապշեցուցիչ նմանություն ունեն Մայր տաճարի գմբեթի բեկորների հետ»: Եկեղեցու ներքին որմեզրերի մշակումը՝ վերասլաց տրամատավորմամբ, փնջածև որմնասյուներով շեշտված



միակ՝ հարավային շքամուտքը, ճակատային որմնակամարաղեղների հանգույցի ընդգծումը եռանկյունաձև փորվածքով և այլ մանրամասեր իրենց զուգահեռն ունեն միայն Մայր տաճարում և հնարավոր են դարձնում ենթադրել, որ հենց սա է Ասողիկ պատմիչի հիշատակած Աբասաշեն «Փոքր Կաթողիկեն Անույ» (Ասողիկ, 1885 թ., էջ 172), որտեղ, ըստ ամենայնի, 961 թ. թագադրվել է Աշոտ Գ Ողորմած թագավորը: Եկեղեցին Անիի Փոքր Կաթողիկեն համարելու առաջին ենթադրությունը կատարել է Կ. Մաթևոսյանը (Կ. Մաթևոսյան, 1997 թ., էջ 155-158), ինչը, կարծում ենք, հաստատվում է նաև ճարտարապետական դիտարկմամբ: Հիշարժան է, որ Մայր տաճարի և իր իսկ պեղած եկեղեցու ճարտարապետական հարազատությունը նկատի առնելով, Ն. Մառը դրանից հետո չի վերանայել կամ, որ ավելի հավանական է, առիթ չի ունեցել վերանայելու Մայր տաճարի հարդարանքի նախնականության հարցում ունեցած մոլորությունը:

Ամեն պարագայում ակնհայտ է, և բազմիցս նշվել է, որ 10-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվել է ոճական նոր ուղղության սկզբնավորմամբ, որի կայացման գործում վճռորոշ ավանդ է ունեցել ճարտարապետ Տրդատը և որը հատկապես արտահայտվել է նրա ամենաերևելի ստեղծագործությունում՝ Անիի Մեծ Կաթողիկեում: Հատկանշական է, որ Արգինայի և Հաղբատի կաթողիկեների վանական զուսպ կոթողայնությունը նույն և հաջորդ՝ 11-րդ դարում, հանդես է գալիս առավել համեստ չափերով ու անպաճույճ դիմագծով (Հոռոմոս, Բագնայր, Հայկաձոր և այլն), իսկ Մայր տաճարի ակնհայտ քաղաքային նրբագեղությունն ու պերճանքը ոչ միայն անմիջապես ընդգծվում են Անիի և մերձակայքի բարձ-

րարվեստ կառույցների՝ Գագկաշեն Սբ. Գրիգոր, Սբ. Առաքելոց, Սբ. Փրկչի, Մարմաշենի Կաթողիկե, Խծկոնքի Սբ. Սարգիս տաճարների ներկայությամբ, այլև հաջորդ՝ 12-14-րդ դդ., համեմատաբար փոքր չափերի մեջ արծագանքվող հեռու ու մոտ իշխանական հոգևոր կենտրոն-«մայրաքաղաքներում», դարձյալ բուն մայրաքաղաքում ունենալով անզուգական օրինակներ (Հոռոմոսի Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Ջաքարեի Սբ. Հովհաննես):

Մայր տաճարի ճարտարապետական հարդարանքի մանրամասերի համեմատական դիտարկումը մայրաքաղաքում և մերձակայքում 11-րդ դ. առաջին տասնամյակում կառուցված նշանավոր եկեղեցիների հետ ցույց է տալիս, որ այն (ի դեպ՝ նաև Փոքր Կաթողիկեն) զերծ է Գագկաշենի, Սբ. Առաքելոցի, Սբ. Փրկչի, Մարմաշենի, Խծկոնքի, Միջնաբերդի և այլ եկեղեցիների հարդարանքում նկատված հունաբանության ազդեցությունից (Տ. Իզմայլովա, Վ. Հարությունյան, Ն. Տոկարսկի, Ստ. Մնացականյան) և այստեղ, բացառությամբ մի խորշի զարդապսակի, դժվար է գտնել անտիկ ճարտարապետական զարդարվեստի զինանոցին պատկանող որևէ դրվագ:

ճարտարապետական հունաբան դպրոցին հարող որոշ զարդամիջոցների ի հայտ գալը 10-րդ դ. վերջերին և իսպառ անհետացումը 11-րդի կեսերին, ոմանք զգուշությամբ փորձում են պայմանավորել Տրդատի պոլսյան ուղևորությամբ: Հավանաբար իրոք այդպես է, և դարձյալ պետք է կարծել, որ նրա վերադարձի ժամանակ Մայր տաճարն արդեն կառուցված էր առնվազն շքամուտքերի վերին մակարդակի չափով, քանզի դրանից անմիջապես կամ մի փոքր հետո կառուցվող Գագկաշենում և հիշյալ եկե-

ղեցիներում այդ նորամուծությունները տեղ են գտել հատկապես շքամուտքերում, որոնք ուղղանկյուն երեսակալների թույլ տրամատով ու զարդարուն վերնաքիվերով տրամագծորեն տարբերվում են Մայր տաճարի թանձր ու փարթամ շքամուտքերից: Ուշագրավ է, որ վերջիններս էլ որոշ տարբերակումներով նույն տարիներին արծագանք են գտել Կեչառիսի Սբ. Գրիգոր, Սբ. Նշան, Ամբերդի Վահրամաշեն եկեղեցիներում:

Դրա հետ մեկտեղ 10-11-րդ դդ. Անիական ճարտարապետական դպրոցի արտահայտչաձևերի զինանոցում դիտվում են տրամատավորման և զարդավորման բազմաթիվ, այսպես կոչված՝ «թափառող» միջոցներ ու հնարքներ, որոնք գրեթե նույնությամբ կրկնվում են բազմաթիվ հուշարձաններում և մեծ մասամբ հայտնի են վաղ միջնադարյան նախօրինակներով: Այդպիսիք են քիվերի շեղադիր քառակուսիներից կազմված զարդահյուսվածքները, տարաբնույթ առամնաշարերը, որմնախոյակների բարձիկի ու վերնասալի միջև հավելված մանրադրվագ բոլորակաշարերը, զույգ որմնասյուները անջատող եռանկյունաձև ելուստները, սյունախարիսիսների, խոյակների և որմնագոտիների տրամատավորման հարստացումը միջանկյալ ներճկվածքներով, խաղողի որթի գալարուն երկրաչափական տարբերակները, բոլորածև զարդապսակով պատուհանները, բազմաթերթ վարդակներից կազմված բոլորաշրթանները, պատուհանների շրջանակումը քանդակահյուս, ուղղանկյուն երեսակալներով կամ կամարավարտ զուգասյուներով, սյունախրձերով և այլն: Ընդհանուր հատկանիշ են զարդարվեստի փոքր-ինչ խստությունն ու երկրաչափական հարթապատկերայնությունը:

Միաժամանակ Մայր տաճարում ի հայտ են գալիս նորահնար մոտիվներ, որոնք հետագայում կա'ն լայն կիրառություն չեն գտել, կա'ն օգտագործվել են սակավադեպ: Մասնավորապես արտաքին խորշերի աստիճանավորումը տեսնում ենք Սբ. Առաքելոց, Միջնաբերդի քառախորան և Մարմաշենի երկու եկեղեցիներում: Գագկաշենում խաչաթևերի ընդգծումը՝ թույլ արտահայտված լայն որմնաեկուստով, տեղ է գտել միայն Սբ. Առաքելոց տաճարում: Գմբեթաթմբուկը նույն՝ մոտ 10.5 մ ներքին տրամագծով և կամարաշար ճիստերով, գրեթե կրկնվել է Սբ. Փրկչի տաճարում, իսկ ճակատային որմնախոյակների քանդակազարդումը, արծվակիր զույգ խորշերը և հարավային շքամուտքը դարաշրջանում այդպես էլ մնացել են եզակի:

Ինչ խոսք, եզակի է տաճարի հավաքական արտահայտչականությունը՝ թե' ներքին ոգեշունչ վերասլացության, թե' արտաքին ուրվապատկերի հաղթահասակ ու տիրական կեցվածքում՝ շքեղորեն հանդերձավորված նրբագագ արվեստագետ-ճարտարապետի արարման ներշնչանքի սարսուռը պահած մանրադրվագներով:

Եվ արդյո՞ք նոր քննության կարոտ չէ Տրդատ ճարտարապետի ստեղծագործական կենսագրությունը, քանզի տարբեր հեղինակներ նրան են վերագրում նաև Սբ. Առաքելոց և Սբ. Փրկչի տաճարները, Աբուղամրենց Սբ. Գրիգոր և Հովվի եկեղեցիները, Հաղբատի Սբ. Նշանը, Մարմաշենի Կաթողիկեն, Անիի որոշ պալատական դահլիճներ, պարիսպներ, կամուրջներ, քաղաքաշինական ձեռնարկումներ\*\*\*: Մեկ ճարտարապետի ստեղծագործության մեջ այս ամենն, անշուշտ, անհնար է տեղավորել ոչ միայն գործնականում դրանք իրագործելու առումով, այլև



հակասականության հասնող ճարտարապետական այն բազմազանության պատճառով, որն առկա է դրանց հորինվածքներում և հարդարանքում: Բացի այդ, առաջնորդվելով հուշարձանների մակերեսային նմանության սկզբունքով, ստացվում է, որ Տրդատին պետք է վերագրել նույն ժամանակաշրջանի գրեթե ողջ ճարտարապետական հունձքը Անի-Շիրակում (և ոչ միայն): Թվում է՝ խնդրի լուծումը պետք է գտնել Տրդատի ստեղծագործական դպրոցի և դրա առնվազն մի քանի տաղանդաշատ ներկայացուցիչների՝ առայժմ մեզ անհայտ, գոյությամբ: Հանգամանք, որ նշել են նաև այլոք՝ 10-րդ դ. հայտնի Սամեհան ճարտարապետը, 13-րդ դ. Անեցի Գագանը, Խաչենիկ Անեցին և ուրիշներ:

Հայ ճարտարապետության անիական դպրոցի այդ անանուն վարպետներն, ըստ ամենայնի, օժտված են եղել ստեղծագործական այնպիսի անհատականությամբ, որ դարաշրջանի սահմանափակ ու հաճախակի կրկնվող հորինվածքաձևերի և արտահայտչամիջոցների հնարամիտ զուգորդումներով ստեղծել են միմյանց այնքան նման, սակայն երբեք չկրկնվող կոթողներ՝ կերտելով Տրդատաշեն Մայր տաճարով պսակված Բագրատունյաց մայրաքաղաքի և նրա դուստր-վանքերի ճարտարապետական դեմքը:

Պետք է կարծել, որ Գագկաշենի կառուցման դառը փորձից անմիջապես հետո սկսվել է երկու ինքնատիպ տաճարի՝ Սբ. Առաքելոցի և Սբ. Փրկչի շինարարությունը, որոնցից առաջինն իր հուժկու քառախորանով, երկրորդը՝ կրկնահարկ բոլորածևությամբ, իսկ երկուսն էլ՝ զարդակամարաշար հանդերձանքով ոչ միայն Գագկաշենի յուրօրինակ ճարտարապետական նմուշն են, այլև Մայր տաճա-

րի հետ համահունչ ու ներդաշնակ եռյակ կազմելով, դարձել են խայտաբղետ քաղաքահյուսվածքի հորինվածքային հանգուցակետը՝ տիրականորեն իշխելով «հազար ու մեկ եկեղեցիների» հռչակավոր քաղաքի համայնապատկերում:

Անիի Մայր տաճարը ոչ միայն Տրդատ ճարտարապետի, այլև անիական ստեղծագործական դպրոցի անգերազանցելի նվաճումն է: Այստեղ ճարտարապետն իր առջև դրված խնդիրը լուծել է մեծագույն արվեստագետի հատուկ հմտությամբ. ստեղծել է նախորդ երևելիներին չկրկնող և հետագայում էլ դժվար ընդօրինակվող մի տաճար, որը պիտի լիներ հայոց հզոր պետականության, նրա օրըստօրե փառթամացող մայրաքաղաքի և ծաղկման լավագույն դարերից մեկն ապրող ճարտարապետության խորհրդանիշը:

Այսօր էլ այնքան մոտ ու այնքան հեռու քարափի լռության միջից իր հազարամյա արքայական հանդերձանքով շարունակում է հմայել հայոց տիեզերակալ թագավորի և բարեպաշտ թագուհու տաճարը՝ տաճարների տիեզերակալն ու թագուհին...

1. Գ. Լևոնյան, ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», 2 տարի, հունվար-փետրվար, 1949.
2. Գ. Շախկյան, Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքներ, Երևան, 2001:
3. Գ. Շախկյան, Անիի Մայր տաճարը... Կեռադրաց փափագելի, «Անիի հազարամյա փառքը» ժողովածու, Երևան, 2003:
4. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, 1942:
5. Թ. Թորամանյան, Չվարթնոց-Գագկաշեն, Երևան, 1984:
6. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961:
7. Կ. Մաթևոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997:

8. Մատթեոս Ուտիայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:
9. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վարչապատ, 1893:
10. Ս. Ճեվահիրճեան, Տրդատ ճարտարապետ հայոց, «Անի» ամսագիր, Ե տարի, թիւ 6-7, յունիս-յուլիս, Պէյրուք, 1952:
11. Ս. Ճեվահիրճեան, «Հայ արհեստակցական եւ հայեցողական որմնադրութիւնը», հաւաքեց եւ խմբագրեց Բարզէն վրդ. Թօփճեան, Պէյրուք, 1967:
12. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
13. Ստ. Մնացականյան, Չվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971:
14. Ստ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, Երևան, 1982:
15. Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
16. Տ. Մարության, Խորագույն Հայք, Երևան, 1978:
17. «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Երևան, 1966:
18. И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963:
19. А. С. Бретаницкий, Золчество Азербайджана и его место в архитектуре Переднего Востока, Москва, 1966.
20. А. С. Бретаницкий, Художественное наследие Переднего Востока эпохи Феодализма, Москва, 1988.
21. Н. Я. Марр, Ани, Ереван, 1939.
22. Н. Я. Марр, О раскопках и работах в Ани летом 1906

г., Санкт-Петербург, 1907.

23. Н. Я. Марр, XI-я Анииская археологическая кампания, Санкт-Петербург, 1913.
24. Т. Марутян, Архитектурные памятники, Звартноц, Аван, Собор Анииской Богоматери, Ереван, 1989.
25. G. Uluhogian, Les e'glises d' Ani L' opres le temoignage desinscriptions, " Revue des etudes Armeniennes", vol. 23, Paris, 1992.
26. Paolo Cuneo, Architettura Armena, tomo I, Roma, 1988.

\* Անիի մայր տաճարին նվիրված պատմական աղբյուրները և մասնագիտական գրականությունը հանրահայտ են և հսկայածավալ, ուստի այստեղ հղվում են միայն առաջադրված հարցերին անմիջական առնչություն ունեցող աշխատությունները:

\*\* Արձանագրության վերծանությանը անդրադարձել են Ն. Մառը, Կ. Բասմաջյանը, Ն. Ալիևյանը, Ա. Արրահամյանը, Ա. Մանուչարյանը, Ս. Ավագյանը, Տ. Մարությանը, Ս. Սաղունյանը, Կ. Մաթևոսյանը:

\*\*\* Տրդատ ճարտարապետի գործունեությանը նվիրված Թ. Թորամանյանի, Վ. Հարությունյանի, Կ. Հովհաննիսյանի, Ստ. Մնացականյանի, Տ. Մարությանի և այլոց դիտարկումների և աշխատությունների շարքում ուշագրավ են Գ. Լևոնյանի և Ս. Ճեվահիրճեանի՝ սակավ շրջանառվող հոդվածները: Տես՝ Գ. Լևոնյան, 1949, էջ 55, Ս. Ճեվահիրճեան, 1952, էջ 345, վերահրատարակությունը՝ տես 1967, էջ 37-76, 77-99.



## The 1000 year Mystery of the Cathedral in Ani

### (Summary)

The history and the architecture of the Cathedral of "Mayr Astvatsatsin" in the capital of Armenia Ani (X-XIVcc) has long been the narrative of many authors, and still this unique and magnificent building needs a thorough and full study.

The article touches upon several arbitrary questions. The author particularly tries to demonstrate, that the Cathedral, in the main, was built in 985-989, before the death of king Smbat Bagratuni; later in 992-1001 continued by the architect Tiridad who returned from Constantinople and finished the work under the sponsorship of queen Catranitse by building the dome. In the same 1001 year the building of another remarkable temple Gagikashen of St. Grigor was finished. The two churches like the others of the same period in Armenia were devoted to the 1000 th anniversary of the Birth of Christ.

The word "Bené".... mentioned at the end of the inscription on the Cathedral in 1001 does not denote a person's name but a profession which is the Armenian version of the Arabic word "benna" meaning architect, stone-mason, and is the signature of architect Tiridad.

The general plan of the temple is not a new version of the Early Meadieval domed basilics (Odzun, Mren, Gayane), but the result of a new-developed trend in church building style, like in Aruch, Talin, Shirakavan, Ozuzlu, Arguina.

The direct prototype of the Greater Cathedral is the Smaller Cathedral of Ani, built in the middle of the X c during the reign of Ashot Voghormats. The general plans and the peculiarities of these two churches shaped a new city architectural style. It is traced in variations in a number of churches of that period, such as churches in Ani, Gagikashen St. Grigor, St. Arakelots (Apostoles'), St. Prkitch (The Redeemer), Khitskoniq, St. Sarguis, Marmashen, Vahramaberd and so on. Later in smaller dimentions it was widely used in XII-XIVcc in princely capital-temples.

The Cathedral in Ani together with other churches (Gagikashen St. Grigor, St. Arakelots, St. Prkitch) dominated the panorama of the city of 1001 churches, symbolizing the glory of the Armenian State organization and that of its capital city of Ani.



## ՀԱՆՁՆՎԱԾ Է ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

ՊԱՏՈՒԿԱՆ ՀՈՒՇԱՎՉԱՆՆԵՐԻ ՊԵՏՊԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1978-2004 թթ.

ՎԵՐԱԿԱՆԴՆԱԾ ՀՈՒՇԱՎՉԱՆՆԵՐԸ

Վելի քան 40 տարի առաջ՝ 1964 թվականին, աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանի, ճարտարագիտության ուսուցչապետ, ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարագդատ Հարությունյանի, հանրաճանաչ գրող Սերո Խանգադյանի և հայ մտավորականության մի շարք այլ կարկառուն ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնադրվեց Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը (*այսուհետ՝ ՊՀԴ-ԴԸ*), որն իր առջև խնդիր դրեց դարերի խորքից մեզ ժառանգություն հասած պատմաճարտարապետական հուշար-

ձանների պահպանման, վերականգնման ու դրանց լուսաբանման գործում պետական ջանքերին աջակցել նաև հասարակական միջոցներով:

ՊՀԴԸ գործունեության ողջ ժամանակահատվածում՝ հատկապես առաջին երեք տասնամյակում, իրագործված ազգօգուտ աշխատանքը մեծ ներդրում արձանագրեց, մի հզոր խթան հանդիսացավ, որով գալիք դարերում հարատևելու ուղեգրեր տրվեցին ընկերության ջանքերով ու հասարակական միջոցներով վերականգնված շուրջ հինգ տասնյակ պատմաճարտարապետական արժեքավոր հու-



արձաններին:

1964-1978 թթ. ընթացքում ՊՀՊՀԸ վերականգնած պատմաճարտարապետական հուշարձանների մասին «Քարե տարեգրության վերականգնումը» գրքով սպառիչ տեղեկություններ է հաղորդել ընկերության նախկին իրխնախագահ, տաղանդաշատ ճարտարապետ, արժանահիշատակ Յուլի Ալեքսանդրի Թամանյանը: Գիրքը բացառիկ է նաև նրանով, որ խորությամբ ընդգրկում է վերոհիշյալ բնագավառի ամփոփ պատկերը՝ ինչպես պետական, այնպես էլ հասարակական միջոցներով վերականգնված պատմամշակութային արժեքների մասին:

Ստորև ներկայացնում ենք 1978 թ. ցայսօր ՊՀՊՀ ընկերության միջոցներով վերականգնված ճարտարապետական հուշարձանների հավելվածը:

Այս ցանկում ներկայացված հուշարձաններից ընդամենը չորս են վերականգնվել հանրապետության անկախացումից հետո՝ 1991-2004 թթ. ժամանակահատվածում, սփյուռքի

մեր ազգակից բարերարների՝ Գալուստ Կյուլպենկյանի թոռ Միքայել Եսայանի, Արաբական Միացյալ Եմիրությունների բնակիչ, ճարտարապետ Անդրանիկ Դադլյանի և այլոց մեկենասությամբ: ՊՀՊՀԸ նախաձեռնությամբ և ճարտարագետ շինարարներ Գրիգոր Վարդանյանի և վաղամեռիկ Արտաշես Հովսեփյանի մասնագիտական նվիրումով վերականգնվեցին չորս բացառիկ կարևորության հուշարձան՝ Թալինի ենթաշրջանի Գառնահովիտ գյուղի Սբ. Գևորգ տաճարը (7-րդ դ.), շրջկենտրոնի Սբ. Աստվածածին եկեղեցին (7-րդ դ.), Արբիկի ենթաշրջանի Լեռնակերտի բազիլիկան (5-6-րդ դդ.) և Եղեգնաձորի ենթաշրջանի Արենի գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին (14-րդ դ.): Ի դեպ, Թալինի Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայքի բարեկարգման մեկենասությունն ստանձնեց և պատվախնդրորեն իրականացրեց վերականգնման աշխատանքների ղեկավար Գրիգոր Վարդանյանը:


**ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
ՊՀՊՀԸ նախագահի տեղակալ

*Ներկայացվում են հուշարձանները լուսանկարներով՝ մինչ վերականգնումը և վերականգնումից հետո: Այն հուշարձանները, որոնց լուսանկարները հեղինակը չի տրամադրել՝ ներկայացվում են միայն տեքստով:*




Վայոց Ձորի մարզ. գ. Արենի,  
Սբ. Աստվածածին եկեղեցի (1321 թ.):  
Նախագծի հեղինակ՝ Հրաչյա Գասպարյան,  
շին. ղեկավար՝ Արտաշես Հովսեփյան,  
(վերականգնվել է երկու փուլով՝  
1968-1977 թթ. և 1992-1997 թթ.):

Vayots Dzor marz, vil. Areni, church St. Astvatsastin (1321). Project director – Hrachya Gasparyan, head of the construction – Artashes Hovsepyan (reconstructed in two stages, 1968-1977, 1992-1997).



Տավուշի մարզ. Դիլիջան,  
Ջուխտակ վանք (XIII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Հրաչյա Գասպարյան,  
շին. ղեկավար՝ Ռազմիկ Հակոբյան  
(վերականգնվել է 1980-1985 թթ.):

Tavush marz, Dillijan,  
Monastery Joukhtak (XIII c.).  
Project director – Hrachya Gasparyan,  
head of the construction – Razmik Hakobyan  
(reconstructed in 1980-1985).





Արագածոտնի մարզ, գ. Եղիպատրուշ,  
 Ար. Աստվածածին եկեղեցի (XIII դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Ռազմիկ Դավթյան,  
 շին. ղեկավար՝ Մենուշ Բակոբյան  
 (վերականգնվել է 1980-1985 թթ.):



Aragatsotn marz, Vil. Yeghipatrush, church St.  
 Astvatsatsin (XIII c.). Project director – Razmik Davtyan,  
 head of the construction – Menush Hakobyan  
 (reconstructed in 1980-1985).




Երևան, Քանաքեռ,  
 Ար. Աստվածածին եկեղեցի (1695 թ):  
 Նախագծի հեղինակ՝ Աշոտ Գուսակյան,  
 շին. ղեկավար՝ Բարություն Գասպարյան  
 (վերականգնվել է 1984-1985 թթ.):



Yerevan, Kanaker, church St. Astvatsatsin (1695).  
 Project director – Ashot Hovsepyan,  
 head of the construction – Harutyun Gasparyan  
 (reconstructed in 1984-1985).



Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ, Վանեվանի  
 համալիր (VII-X դդ.):  
 Նախագծի հեղինակ՝ Աշոտ Գուսակյան,  
 շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
 (վերականգնվել է 1982-1985 թթ.):



Gegharkunik marz, vil. Artsvanist, Vanevan  
 Monastery Complex (VII - X cc.).  
 Project director – Ashot Hovsepyan,  
 head of the construction – Vazgen Ispiryan  
 (reconstructed in 1982-1985).




Արագածոտնի մարզ, գ. Դաշտադեմ,  
 Ար. Քրիստափորի վանքի  
 եկեղեցի և զանգակատուն (VII դ.):  
 Նախագծի հեղինակ՝  
 Մերի Դանիելյան,  
 շին. ղեկավար՝ Ռազմիկ Դավթյան  
 (վերականգնվել են 1978-1981 թթ.):

Aragatsotn marz, vil. Dashtadem,  
 church St. Christopher and a belfry  
 (VII c.). Project director–  
 Mery Danielyan, head of the  
 construction – Razmik Davtyan  
 (reconstructed in 1978-1981).





Գեղարքունիքի մարզ, գ. Ջող (Սոթք),  
բազիլիկա (XVII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Մերի Դանիելյան,  
շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
(մասնակի վերականգնվել է 1986 թ.):



Gegharkunik marz, vil. Zod (Sotk), Basilica (XVII c.).  
Project director – Mery Danielyan,  
head of the construction – Vazgen Ispiryan  
(partly reconstructed in 1986).

Շիրակի մարզ, գ. Սառնաղբյուր, Հոգեվանքի  
Սբ. Կարապետ եկեղեցի (1205 թ.):  
Նախագծի հեղինակ՝ Ռազմիկ Դավթյան,  
շին. ղեկավար՝ Ռազմիկ Դավթյան  
(վերականգնվել է 1976-1987 թթ.):



Shirak marz, vil. Sarnaghbyur,  
church St. Karapet of Hoge Hank (1205).  
Project director – Razmik Davtyan,  
head of the construction – Razmik Davtyan  
(reconstructed in 1976-1987).




Արագածոտնի մարզ, Թալին,  
Սբ. Աստվածածին եկեղեցի (VII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Մերի Դանիելյան,  
շին. ղեկավար՝ Գրիգոր Վարդանյան,  
մեկենաս՝ Անդրանիկ Դաղլյան  
(վերականգնվել է 1998 թ.):




Aragatsotn marz, Talin, church St. Astvatsatsin (VII c.).  
Project director – Mery Danielyan,  
head of the construction – Grigor Vardanyan,  
sponsor - Andranik Daglyan  
(reconstructed in 1998).



Գեղարքունիքի մարզ, գ. Հայրավանք,  
եկեղեցի և գավիթ (IX-XII դդ.):  
Նախագծի հեղինակ՝ Ռազմիկ Դավթյան,  
շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
(վերականգնվել է 1977-1980 թթ.):




Gegharkunik marz, vil. Hayravank,  
church and gavit (yard) (IX-XII cc.).  
Project director – Razmik Davtyan,  
head of the construction – Vazgen Ispiryan  
(reconstructed in 1977-1980).





Տավուշի մարզ, գ. Դովեղ,  
 Աբ. Սարգիս եկեղեցի (XVII դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Ռազմիկ Դավթյան  
 (վերականգնվել է 1985-1986 թթ.):



Tavush marz, vil. Dovegh, St. Sarguis (XVII c.).  
 Project director – Razmik Davtyan  
 (reconstructed in 1985-1986).


Կոտայքի մարզ, Գառնի,  
 Աբ. Աստվածածին եկեղեցի (XIV դ.):  
 Նախագծի հեղինակ՝  
 Գագիկ Սողոմոնյան,  
 շին. ղեկավար՝ Սամվել Ստեփանյան  
 (վերականգնվել է 1984-1989 թթ.):



Kotayk marz, Garni, church St.  
 Astvatsatsin, (XIV c.). Project director –  
 Gagik Soghomonyan,  
 head of the construction –  
 Samvel Stepanyan  
 (reconstructed in 1984-1989).

Կոտայքի մարզ, գ. Կապուտան,  
 Աբ. Մինաս եկեղեցի (1349 թ.):  
 Նախագծի հեղինակներ՝  
 Գրիգոր Ղաֆադարյան,  
 Սերգեյ Մարտիրոսյան,  
 շին. ղեկավար՝ Ռազմիկ Հակոբյան  
 (վերականգնվել է 1982-1985 թթ.):

Kotayk marz, vil. Kaputan,  
 church St. Minas (1349).  
 Project directors –  
 Grigor Ghafadaryan,  
 Sergey Martirosyan,  
 head of the construction –  
 Razmik Hakobyan  
 (reconstructed in 1982-1985).



Արագածոտնի մարզ, գ. Արտաշավան,  
 Աբ. Ամենափրկիչ եկեղեցի (VII դ.):  
 Նախագծի հեղինակ՝  
 Աշոտ Մանասյան,  
 շին. ղեկավար՝  
 Հարություն Գասպարյան  
 (վերականգնվել է 1985-1987 թթ.):

Aragatsotn marz, vil. Artashavan,  
 church St. Amenaprkich (VII c.).  
 Project director – Asot Manasyan,  
 head of the construction –  
 Harutyun Gasparyan  
 (reconstructed in 1985-1987).





Արագածոտնի մարզ, գ. Գառնահովիտ,  
 Սբ. Գևորգ եկեղեցի (VII դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Աշոտ Մանասյան,  
 շին. ղեկավար՝ Գրիգոր Վարդանյան,  
 մեկենաս՝ Լոնդոնի Սբ. Սարգիս  
 եկեղեցու հոգեբարձուների խորհուրդ  
 (վերականգնվել է 1991-1997 թթ.):



Aragatsotn marz, vil. Garnahovit, church St. Gevork  
 (VII c.). Project director – Ashot Manassyan, head  
 of the construction – Grigor Vardanyan, sponsor –  
 the sinod of the church of St. Sarguis in London  
 (reconstructed in 1991-1997).



Տավուշի մարզ, գ. Լուսահովիտ,  
 Մորո Զորո (Ծովիզ) վանքի Սբ.  
 Աստվածածին եկեղեցի (X-XI դդ.):  
 Նախագծի հեղինակ՝  
 Աշոտ Մանասյան, շին. ղեկավար՝  
 Վարդան Գասպարյան  
 (վերականգնվել է 1980-1983 թթ.):



Tavush marz, vil. Lusahovit, church  
 St. Astvatsatsin of Moro Dzor  
 (Tsurviz) (X- XI cc.). Project director  
 – Ashot Manassyan,  
 head of the construction –  
 Vardan Gasparyan  
 (reconstructed in 1980-1983).




Կոտայքի մարզ, Եղվարդ,  
 Ջորավոր եկեղեցի (VII դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Աշոտ Մանասյան,  
 շին. ղեկավար՝ Վարդան Գասպարյան  
 (վերականգնվել է 1979 թ.):




Kotayk marz, Yeghvard,  
 church Zoravor (VII c.).  
 Author of the project –  
 Ashot Manassyan,  
 head of the construction –  
 Vardan Gasparyan  
 (reconstructed in 1979).



Արագածոտնի մարզ, գ. Բայսզ, եկեղեցի (X-XI դդ.):  
 Նախագծի հեղինակ՝ Ամիրան Բադիշյան,  
 շին. ղեկավար՝ Հարություն Գասպարյան  
 (վերականգնվել է մասնակի՝ 1986 թ.):




Aragatsotn marz, vil. Baysz, a church (X-XI cc.).  
 Author of the project – Amiran Badishyan,  
 head of the construction – Harutyun Gasparyan  
 (partly reconstructed in 1986).






Շիրակի մարզ, գ. Մայիսյան,  
Տիրանավոր եկեղեցի, ( VII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Սամվել Այվազյան,  
Ամիրան Բաղիշյան,  
շին. ղեկավար՝ Ալիկ Մախսոյան  
(վերականգնվել է 1982-1988 թթ.):



Shirak marz, vil. Mayisyan, church Tiranavor  
(VII c.). Author of the project –  
Samvel Ayvazyan, Amiran Badishyan,  
head of the construction – Alik Makhsoyan  
(reconstructed in 1982-1988).




Լոռու մարզ, գ. Դորբանտ, եկեղեցի,  
(VI-VII դդ.): Նախագծի հեղինակ՝ Սոֆա Բինատյան,  
շին. ղեկավար՝ Հովսեփ Գարուբյունյան  
(վերականգնվել է 1983-1988 թթ.):




Lori marz, church Dorbant (VI-VII cc.).  
Author of the project – Sopha Binatyan,  
head of the construction – Hovsep Harutyunyan  
(reconstructed in 1983-1988).



Գեղարքունիքի մարզ, գ. Ղոմաշեն, եկեղեցի (VII դ.):  
(տանիքի փոփոխություն 1978 թ.)



Gegharkuniqk marz, vil.  
Ddmashen, a church (VII c.);  
(zinc roof from 1978).



Կոտայքի մարզ, Հրազդան,  
Մաքրավանքի Մեծ եկեղեցի (X-XIII դդ.):  
Նախագծի հեղինակ՝ Աշոտ Հովսեփյան,  
շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
(վերականգնվել է 1983-1989 թթ.):



Kotayk marz, Hrazdan,  
the Big Church of Makravank  
(X-XIII cc.).  
Project director – Ashot Hovsepyan,  
head of the construction –  
Vazgen Ispiryan  
(reconstructed in 1983-1989).






Գեղարքունիքի մարզ, գ. Հացառատ  
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (VII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Աշոտ Հովսեփյան,  
շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
(վերականգնվել է 1982-1985 թթ.):



Gegharkunik marz, vil. Hatsarat,  
church St. Grigor Lusavorich (VII c.).  
Project director – Ashot Hovsepyan,  
head of the construction – Vazgen Ispiryan  
(reconstructed in 1982-1985).

Սյունիքի մարզ, Մեղրի,  
Մեծ բաղի եկեղեցի (XVII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Մերի Ղանիբեյան,  
շին. ղեկավար՝ Վիկտոր Աբրահամյան  
(վերականգնվել է 1986-1989 թթ.):



Syunik marz, Meghri, church in Mets Tagh (XVII c.).  
Project director – Mary Danielyan,  
head of the construction – Victor Abrahamyan  
(reconstructed in 1986-1989).

Լոռու մարզ, գ. Հաղպատ,  
Կուսանաց եկեղեցի (XIII դ.):  
Նախագծի հեղինակ՝ Գագիկ Սողոմոնյան,  
շին. ղեկավար՝ Վարդան Գասպարյան  
(վերականգնվել է 1982-1983 թթ.):



Lori marz, vil. Haghpat, church Kusanats  
(Vergins XIII c.).  
Project director –  
Gagik Soghomonyan,  
head of the construction –  
Vardan Gasparyan  
(reconstructed in 1982-1983).


Շիրակի մարզ, գ. Լեռնակերտ, բազիլիկա (IV դ.):  
Նախագծի հեղինակ՝ Թելման Գևորգյան,  
շին. ղեկավար՝ Գրիգոր Վարդանյան  
մեկենաս՝ լիբանահայ Գոհար Խաչատուրյան  
(վերականգնվել է երկու փուլով՝  
1979-1987 թթ., ավարտը՝ 2004 թ.):



Shirak marz, vil. Lernakert, Basilika (IV c.).  
Project director – Telman Gevorkyan,  
head of the construction – Grigor Vardanyan,  
sponsor Gohar Khachaturyan from Lebanon  
(reconstructed in two stages  
in 1979-1987, finished in 2004).



Կոտայքի մարզ, Հանքավան,  
 հունական եկեղեցի (XIX դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Հրաչյա Գասպարյան,  
 շին. ղեկավար՝ Ռ. Միքայելյան  
 (վերականգնվել է 1985-1987 թթ.):



Kotayk marz, Hankavan, a Greek church (XIX c.).  
 Project director – Hrachya Gasparyan,  
 head of the construction – R. Mikaelyan  
 (reconstructed in 1985-1987).

Կոտայքի մարզ, գ. Կոշ,  
 Վարդանի աղբյուր, որմնափակ խաչքար  
 (XIII դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Հրաչյա Գասպարյան,  
 շին. ղեկավար՝ Հարություն Գասպարյան  
 (վերականգնվել են 1987 թ.):



Kotayk marz, vil. Kosh, Vardan's Spring,  
 inwalled khachkar (XIII c.). Project director –  
 Hrachya Gasparyan, head of the construction –  
 Harutyun Gasparyan,  
 (reconstructed in 1987).

Գեղարքունիքի մարզ, գ. Հացառատ,  
 Աբ. Աստվածածին եկեղեցի (VII դ.):  
 Նախագծի հեղինակ՝  
 Աշոտ Հովսեփյան,  
 շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
 (վերականգնվել է 1982-1985 թթ.):



Gegharkunik marz, vil. Hatsarat,  
 church St. Astvatsatsin (VII c.).  
 Project director – Ashot Hovsepyan,  
 head of the construction – Vazgen Ispiryan  
 (reconstructed in 1982-1985).

Syunik marz, vil. Geghanush, a church (IX-X cc.).  
 Project director – Ashot Hovsepyan,  
 head of the construction – Derenik Baghdasaryan  
 (reconstructed in 1986-1988).

Սյունիքի մարզ, գ. Գեղամուշ,  
 եկեղեցի (IX-X դդ.):  
 Նախագծի հեղինակ՝ Աշոտ Հովսեփյան,  
 շին. ղեկավար՝ Դերենիկ Բաղդասարյան  
 (վերականգնվել է 1986-1988 թթ.):

Ararat marz, vil. Burastan,  
 a church (XIX c.).  
 Project director – Razmik Davtyan,  
 head of the construction – Vazgen Ispiryan  
 (reconstructed in 1987-1989).

Արարատի մարզ, գ. Բուրաստան,  
 եկեղեցի (XIX դ.):  
 Նախագծի հեղինակ՝ Ռազմիկ Դավթյան,  
 շին. ղեկավար՝ Վազգեն Իսպիրյան  
 (վերականգնվել է 1987-1989 թթ.):




# ՎԵՐԱՕԾՎԱԾ ԾԻԾԵՒՆԱՎԱՆԲԸ

**2001** թ. հոկտեմբերի 7-ին Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ, հարյուրավոր հավատացյալների ներկայությամբ վերօծվեց Հայաստանի հնագույն և հռչակավոր ուխտավայրերից մեկը՝ վերակա-


ռուցված Ծիծեռնավանքը: Հիրավի համաժողովրդական այս արարողությանը, ի թիվս այլ հյուրերի, ներկա էին նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետները:



Ծիծեռնավանքը վերօծում են Պարզև սրբազանը և հայր Աթանասը: 7. 10. 2001 թ.



Նկ. 1 Ծիծեռնավանքը 1999 թ.: Ընդհանուր տեսքը հյուսիսից (մինչև վերականգնումը)



Նկ. 2 Ծիծեռնավանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից (վերականգնված)

Եկեղեցու վերաբացմանը նախորդել էին շուրջ հինգ տարի՝ 1997-2001 թթ., տևած պեղումները և դաշտային հետազոտությունները (ղեկ. Հակոբ Սիմոնյան), վանական համալիրի չափագրման ու վերականգնման նախագծի կազմման (ղեկ. Հովհաննես Սանամյան) և վերականգնման (աշխղեկ՝ Գևորգ Առաքելյան) աշխատանքները: Այս համալիր ծրագիրը կատարել է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի (նախկինում՝ Հայկական հուշարձանների համահավաքի խմբագրություն) արշավախումբը, որի կազմում ընդգրկված մասնագետների քանակը տարիների համագումարով հասնում է քսանի: Աշխատանքներն իրականացվել են բարերարությամբ Ջորջ և Քերոլայն Նաջարյանների, Հակոբ և Ռուդի Ալթիփարմակյանների, աջակցությամբ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի, Գուրգեն Մելիքյանի և Ալեքսան Հակոբյանի:

Ծիծեռնավանքը վեր է խոյանում մույնանուն գյուղի հյուսիս-արևմտյան եզրին, Հակարիի Աղավնո

վտակի աջ ափին, երկու ձորակով եզերված քարաժայռի գագաթին, պատմական Սյունիքի Աղահեջ գավառում, այժմյան ԼՂՀ Քաշաթաղի շրջանում: Այն Հայաստանի հնագույն և նշանավոր ուխտավայր-եկեղեցիներից է, ուր առանձնակի շուքով տոնվել են Սբ. Համբարձման և Սբ. Խաչի տոները: Եկեղեցին ունեցել է մի քանի հիմնարար վերակառուցումներ, սակայն մեզ է հասել վաղնջական եկեղեցիների բնորոշ կերպարով: Դարերի ու թշնամական ցեղերի հարվածներից վնասված այս հույակերտ կառույցը ուշ միջնադարում և խորհրդային կարգերի ժամանակ կատարված անճաշակ և անհարկի միջամտությունների հետևանքով աղճատվել էր. քերվել-ոչնչացվել էին առանձին հայատառ արձանագրություններ ու խաչաքանդակներ, քանդվել էր ծածկը, որի խոռոչը շարունակաբար ընդարձակվում էր՝ սպառնալով վերջնականապես կործանել եկեղեցին: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի առաջարկով որոշվեց իրականացնել եկեղեցու ուսումնասիրման և վերականգնման համալիր ծրագիր: Ըստ այդ ծրագրի իրականացվեցին եկեղեցու շրջակայքի և ներսի





Նկ. 3 Ծիծեռնավանք,  
վաղ միջնադարյան որմնապատկեր, հրեշտակի գլուխը, IV դ.

պեղումները, չափազրվեցին ինչպես եկեղեցին, այնպես էլ նորահայտ բոլոր կառույցները, կազմվեց վերականգնման և բարեկարգման նախագիծ, որի հիմնական խնդիրն եկեղեցու ամբողջականացումն էր՝ հեռացնել եկեղեցու արտաքինը խաթարող բոլոր անձաշակ հավելումները, հողմնահարված քարերը փոխարինել նորերով և նրան հաղորդել իր նախնական տեսքը:

1999 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվեց Մարկոս պարունտերի (պարոնտերի) տապանաքարը, որը լրացնում է XV-XVII դդ. հայոց վերնախավի մասին մեր ունեցած կցկտուր տեղեկությունները

և շեշտում Ծիծեռնավանքի նշանակությունը, քանզի նրա տարածքում 1671-ին թաղվել է Սյունյաց աշխարհիկ և հոգևոր տերերից մեկը՝ Մարկոսը:

Ուշագրավ է եկեղեցու կենտրոնական և արևելյան մուտքերը միավորող, հարավային ճակատին կից պեղված մատուռը, որի հատակին, ժայռի մեջ փորված էր խաչածև հատակագծով գերեզման, ուր բացվեց մի նահատակի թաղում: Նրան չարչրկել և սպանել էին ինչպես Հիսուս Քրիստոսին՝ գլխին հազցնելով երկաթազամերով փշեպսակ: Նահատակի գերեզմանի շրջակայքում հայտնաբերվեցին վաղնջական կավե սրբապատկերներ և քանդակներ:



Նկ. 4 Ծիծեռնավանք,  
վաղ միջնադարյան խաչքար,  
IV-V դդ.

Փոքր-ինչ հեռու, հարավային ճակատի արևելյան մուտքի առջևում, բացվեց հավատի համար նահատակվածների մեկ այլ գերեզման, որտեղ ամփոփված էին սրատված, քարկոծված և մասնատված 4-5 հավատացյալի մարմնամասեր: Սալարկղային գերեզմաններից մեկի հատակը ձևավորված էր II-III դդ. բնորոշ կղմինդրներով, որոնք բացարձակ կրկնում են պեղումների շնորհիվ հայտնաբերված եկեղեցու առաջին փուլի փայտե ծածկի կղմինդրների ձևերը: Եկեղեցու հարավային ավանդատան առաստաղին հայտնաբերվեց վաղ միջնադարյան մի որմնապատկեր, որի հորինվածքը բաղկացած է թևավոր հրեշ-



Նկ. 5 Ծիծեռնավանք, թրձակավե արձանիկ Աստվածամոր և մանուկ Քրիստոսի հարթաքանդակ դիմապատկերներով (N 3 քառակուսի, նահատակի գերեզմանի մոտից)

տակից (Նկ. 3), շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչից և մեկ այլ՝ անտրոպոմորֆ, պատկերից: Սա վաղ միջնադարյան Հայստանի արվեստի լավագույն նմուշներից է: Ուշագրավ է նաև հնագույն խաչքարերից մեկը, որի հորիզոնական խաչաթևերին պատկերված են մեկական թռչուններ, թերևս աղավնիներ (Նկ. 4).

Եզակի է պաշտամունքային խեցեղենը. ճաճանչող խաչը՝ զարդարված կարմիր և սպիտակ գույնի եզրագծերով, կավակերտ բուրվառները, խնկամանները, մոմակալները՝ առանձին դեպքերում զարդարված Սուրբ հոգին խորհրդանշող թռչնաքան-



դակներով, ձիթաճրագները, հայատառ արծանագրություններով ինքնատիպ կավամանները և այլն, որոնց որոշ օրինակներ ի հայտ են գալիս առաջին անգամ: Բացառիկ են նաև թրծակավե արծանիկները՝ արու և էգ թռչունների սնամեջ քանդակները, մոր և մանկան բարձրաքանդակ գլուխներով զարդարված ձվածև սալիկը: Այն ուղղահայաց դիրքով պատվանդանին ամրացվելու համար ունի գլանածև պոչուկ, իսկ վերևում ավարտվում է թագ հիշեցնող գլխիկով (Նկ.5): Այս սրբաքանդակը, թերևս, պատկերում է «Աստվածամայրը մանկան հետ» թեման: Մեկ այլ արծանիկ պատկերում է հուլանի թևերով գառնուկ գրկած երկարափեշ հագուստով կանացի մարմին: Հավանական է, որ այստեղ ևս պատկերված է Աստվածամայրը, գրկին Աստծո գառը՝ Հիսուս Քրիստոսի այլաբանական կերպարը: Եզակի են նաև քրիստոնեության հնագույն խորհրդանշան ձևան գետաքարե արծանիկ-հմայիլը, աստվածաշնչյան թեմայով՝ կենաց ծառի աջ և ձախ կողմերում մարդկային կերպարանքներով զարդարված կավե բուլլան (կնքադրոշմը) և այլ գտածոներ: Դրանք նախնականորեն թվագրվում են քրիստոնեության վաղագույն, նախապաշտոնական շրջանով, երբ եկեղեցին մերժում էր ամեն տեսակի ճոխություն, և, թերևս, այդ

պատճառով պաշտամունքային իրերը մեծամասամբ կերտվել են ոչ թե ազնիվ մետաղներից, այլ հասարակ կավից:

Հայտնաբերված առանձին ճարտարապետական մանրամասներ և հնագիտական գտածոներ հավաստում են այս եկեղեցու վաղնջականությունը: Դրանք են I-III դդ. թվագրվող խեցեղենի մի քանի տասնյակ բեկորները, փայտե սյուների տորածև խարիսխները, բազալտե տառապանը, աղորիքը, վիշապածև քարակոթողը, եկեղեցու առաջին փուլի պատերի ամրացումը կավաշաղախով:

Շուրջ հարյուր տարի լքված կիսաքանդ եկեղեցին, որն օտարները փարախի էին վերածել, փաստորեն ազատագրված տարածքների առաջին վերականգնված և վերագործարկված հավատի տաճարն է, որի վերակառուցումն իրականացվել է ժամանակակից բոլոր պահանջներին համապատասխան: Պեղումների արդյունքներն ունեն համաքրիստոնեական նշանակություն և վկայում են Հայաստանում քրիստոնեության տարածման, եկեղեցաշինության սկզբնավորման, վաղ քրիստոնեական ծիսակարգի, որմնանկարչության ձևավորման և այլ իրողությունների մասին:

**Hakob Simonyan**

## Re-Consecrated Tsitsernavank

### (Summary)

On October 7, 2001 His Holiness Pargév Martirosyan, Archbishop of the Artsakh flock in the presence of hundreds of believers re-christened one of the oldest and most eminent holy sites – the reconstructed Tsitsernavank.

Excavations of 1997-2001 and the fieldwork directed by Hakob Simonyan lasted 5 years; taking measures of the monastery complex and working out the restoration plan was directed by Hovhanes Sanamyan,

reconstruction work was directed by Gevork Arakelyan, all this preceding the re-opening of the church. The project was fulfilled by the expedition of the Research Center for the Cultural and Historical Heritage under the Ministry of Youth Affairs. The number of the experts in the expedition during those years has been over twenty. The work was carried out under the sponsorship of George and Caroline Najaryan, Hakob and Rudi Altiparmakyan and at the great enthusiasm of Honorable late Archbishop Mesrop Ashchyan, Gurgen Melikyan, and Alexan Hakobyan.

Tsitsernavank towers on the north-west of the village of the same name, on the right bank of the Aghavno tributary of the Hakari River, on top of a cliff surrounded by two little gorges, which is in Aghaheg gavar (region) of historical Syunik, now Kashatagh region of NKR. It was one of the most worshiped and revered pilgrimage sites where the holidays of St. Resurrection and St. Cross were celebrated with great solemnity.

The chapel close to the southern façade that joins the central and eastern entrances is very attracting. On the floor of the chapel was a cross-shaped grave in which a martyr was buried. He had suffered tortures, and was put to death like Jesus Christ with a thorn wreath on his head. Ancient clay icons and statuettes were found near the martyr's grave. A little farther in front of the entrance on the southern façade, another grave of religious martyrs was revealed. There we saw fragments of dismembered bodies of four or five people.

On the ceiling of the southern chapel of the church an early mediaeval fresco was revealed which consisted a winged angel, an encircled cross and another anthropomorphic image. It is one of the best species of art of the Early Mediaeval ages in Armenia.

Ամրոցի արևելյան ծայրամասի հյուսիսային հատվածում, մինչև 1-ին դարավանդը, առանձնացվեց պեղման հրապարակը: Այն հյուսիս-հարավ առանցքով, 40 x 5 մ ուղղանկյուն մակերես ունեցող պեղավայր է: Պեղելու համար կիրառվեց Հարիսի մեթոդը՝ համապատասխան փաստագրումով և վավերացմամբ (Նկ. 2, 3): Չափագրման աշխատանքներն իրականացրեց Կլաուս Կերկովը: Մաքրման աշխատանքների ընթացքում պարզվեց, որ տվյալ հատ-





Նկ. 3

վածում կան ժամանակագրական ու շինարարական դիֆիսիոն իրողություններ: Պեղումներից պարզվեց, որ միջնաբերդի պարիսպների կառուցվածքում առկա են փոփոխություններ: Նախ՝ ուրարտական պարսպապատերն ավելի ուշ ձևափոխվել են: Նախնական դիտարկումներից կարելի է ենթադրել, որ փոփոխությունները կատարվել են Ք. ա 6-4 դդ.: Պարսպապատի առաջին շարքի մնացորդները հավանաբար ավելի ուշ փուլում են կառուցվել, քանի որ դրանք հենված են ավելի վաղ ժամանակաշրջանի շինության վրա:

Շերտագործեն հաջորդող պատը հավանաբար կառուցվել է ուրարտական ժամակաշրջանում: Շինարարական առանձնահատկություններից գատ, այստեղ հայտնաբերվեց երկաթե ուրարտական

նետասլաք: Երկու պատի միջև հեռավորությունը մոտ երկու մետր է: Կարևոր է մինչուրարտական մշակութային շերտերի գոյությունը: Պեղումները և դիտարկումները ցույց տվեցին, որ միջնաբերդի այս հատվածում առկա մինչուրարտական շերտում հայտնաբերվել է վաղ բրոնզի դարի նախազարդ խեցեղեն:

Միջնաբերդում շերտագրական դիտարկումներն ավելի հստակ էին, և առկա է կապը պարսպապատերի կառուցողական տարբեր ժամանակների հնագիտական շերտերի միջև: Այսպես, միջնաբերդի արևելյան ծայրում պեղվեց մի շինության արևմտյան պատը, սրան կից՝ ուրարտական կարաս՝ մոխրաշերտով պատված, հացահատիկի և ոսկորների մնուշներ: Շինության արևմտյան կողմում բացվեց հում աղյուսից մի պատ, ուրարտական սափորի կանթ՝ հիերոգլիֆ նշանագրով: Շինության հարավային անկյունում, պատի վրա, բացվեց մի կնոջ թաղում: Թաղումն ուներ 33ս-Ար-33վ-Արմ կողմնորոշում, գլուխը գտնվում էր 33ս-Արմ-ում, դեմքով ուղղված էր դեպի արևելք, ձեռքերը հաված մարմնին: Ըստ մարդաբան, դոկտոր Գանտների՝ մահվան բռնի հետքեր կմախքի վրա չեն հայտնաբերվել, սակայն ողերի մասում կային հիվանդության հետևանքով որոշակի փոփոխություններ:

Թաղման ներքո բացված պատը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է ուրարտական ժամանակաշրջանին: Այն օրգանական կապ չունի առաջին պարսպաշարի հետ և, կարծում ենք, ժամանակակից է երկրորդ պարսպապատին, որը գտնվում է ավելի հյուսիս: Պեղումները բացահայտեցին, որ նշված հատվածում գոյություն ունի նախաուրարտական ժամանակաշրջանի մշակութային շերտ, որի

պեղումները կշարունակվեն հետագայում:

Ի մի բերելով նշված պեղումների արդյունքները՝ կարելի է առանձնացնել մինչուրարտական, ուրարտական և հետուրարտական շերտերը: Հետագա ուսումնասիրություններն ավելի ամբողջական պատկեր կարծանագրեն Արամուսի ամրոցի վերաբերյալ:

Պեղումների ընթացքում հավաքվեց շուրջ 800 հնագիտական գտածո: Դրանց ճնշող մեծամասնությունը Վանի թագավորության ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներ են: Առանձնանում են տարբեր չափերի և ձևերի խեցանոթները, որոնք նախատեսված էին երկրագործական և անասնապահական մթերքների մշակման և պահպանման համար: Գտնվել են նաև կենցաղային և ծիսական սպասքի օրինակներ: Ըստ իրենց պատրաստման և հարդարման՝ խեցանոթները ստորաբաժանվում են երկու խմբի. ա) կարմիր և սև փայլեցրած, բարձրորակ, անգորբապատ, դուրգով պատրաստված և բ) կոպիտ, սև փայլատ մակերեսով: Քննարկվող խեցեղենը՝ կարասներ, սափորներ, թասեր, կճուճներ և այլն, հիմնականում թվագրվում են Ք. ա. 8-6-րդ դդ.: Կուր-արաքսյան և հետուրարտական ժամանակաշրջանի խեցեղենի մնուշները սակավաթիվ են:

Պեղումների ժամանակ գտնվել են նաև փոքրաքանակ բրոնզե և երկաթե առարկաներ՝ զենքեր, զարդեր: Հատկապես հետաքրքիր են բրոնզե շքասեղները: Դրանք կազմված են կենտրոնում ուռուցիկ, կլորավուն ձողից, որի գլխամասում քանդակված է վիշապի պատկեր՝ ընդգծված աչքերով, լայն բացված երախով, գծանախշ վզով: Գազանի երախից դուրս է ցցված շքասեղի ձողը: Շքասեղները պատրաստված են բարձրորակ բրոնզից՝ կաղապա-

րով, և իրենց ոճական առանձնահատկություններով բնորոշ են ուրարտական կիրառական արվեստին, ինչի մասին վկայում են Կարմիր բլուրից հայտնաբերված համանման նյութերը: Հայտնաբերվել են նաև օղեր, ապարանջաններ, մատանիներ: Վերջիններս, հավանաբար, պատկանում են հելլենիստական ժամանակաշրջանին: Երկաթե իրերից կարևորվում է ուրարտական պոչուկավոր տերևածև նետասլաքը: Այն իր նմանակներն ունի Վանի թագավորության տարբեր հուշարձաններում:

Աշխատանքային գործիքները բաղկացած են բազալտե աղորիքների, սանդերի, տրորիչների, կոկիչների համալիրից:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կարմրավուն տուֆից, գնդաձև գլխիկով կշռաքարը, որի մակերեսին արված են քառակուսիներ, իսկ դրանց մեջ կան ոչ մեծ փորվածքներ: Գտածոն առայժմ եզակի է:

Արամուսի ամրոցը Վանի թագավորության պաշտպանական համակարգի բաղկացուցիչ և հանգուցային կետերից էր, և կոչված էր ապահովելու Արարատյան դաշտի անվտանգությունը հյուսիսից սպառնացող վտանգից (Չ. Ավետիսյան, 2001, էջ 5):

1. Չ. Ա. Ավետիսյան, Արամուսի բիայնական ամրոցի պեղումները, Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1989:
2. Չ. Ա. Ավետիսյան, Արամուսի ամրաշինական համալիրները, Բանբեր Երևանի համալսարանի, 1997, N 2:
3. Չ. Ա. Ավետիսյան, Արագածի ամրաշինությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1996, N 1:
4. Չ. Ա. Ավետիսյան, Արագած, Երևան, 2001:



## The Results of Archaeological Excavations in Aramus (2004)

### (Summary)

By common efforts of the Department of Archaeology of the Faculty of History (Yerevan State University) and Austrian Insbruck University, archaeological excavations have been conducted in Aramus fortress throughout September-October, 2004. The data and archaeological material obtained were submitted to preliminary classification and analysis. The classification must necessarily precede and form the groundwork for analysis. All the available data permit to say that we deal with a multi-stratum monument, where strata of pre-Urartu, Urartu and post-Urartu periods exist.

Since a great deal of information has been obtained from excavations and a great amount of archaeological material has been excavated, we have sufficient data to establish further research and analysis.



ԻԳԻԹ ՂԱՐԻՔՅԱՆ  
ՀԱՅԿ ՀԱԿՈՐՅԱՆ

## ԲԶՆԻ ՀՆԱՎԱՅԻԸ

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԿԵՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՐԿՐԱԿՆԵՐԸ)

**Բ** ջնի հնավայրը գտնվում է Կոտայքի մարզի համանուն գյուղին մերձակա երկու բարձր հրվանդանի վրա, Հրազդանի երկու ափին: Դեռևս 1929 թ. այստեղ հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի արշավախումբը՝ հայտնաբերելով բրոնզի դարի դամբարաններ, երվանդյան և անտիկ դարաշրջանի նյութական մշակույթի մնացորդներ:

Բջնին հայտնի է միջնադարյան գրավոր աղբյուրներից և առաջին անգամ հիշատակվում է Ղազար Փարպեցու «Պատմությունում»: X դ. Բջնի ամրոցը Պաշկալունիների նախարարական տան տիրույթն էր: XI դ. այստեղ գործել է հայ նշանավոր գիտնական ու քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսը, որն ամրոցը 1044-ին կտակեց Բյուզանդական կայսրությանը: 1201 թ. Բջնու պատմությունն ու մշակույթը

կապվում է Ջաքարյանների նշանավոր տոհմի հետ: XI-XIV դդ. Բջնիում էր նստում Արարատյան չորս գերագահ եպիսկոպոսներից մեկը: XV դ. Բջնին հիշատակվում է որպես անառիկ բերդ, իսկ XVII դ. Ամենայն Հայոց կաթողիկոսը վերանորոգում է բնակավայրի գլխավոր եկեղեցին (*Ս. Հասրաթյան, 1976, էջ 536-537; Ի. Ղարիբյան, 1978; Ի. Ղարիբյան, 1981, էջ 38-40; Մ. Գարսյան, 1981, с. 69-71; Հ. Սիմոնյան, 2001; Ի. Ղարիբյան, 2004, էջ 288-236*). Բջնու մասին տեղեկություններ է հաղորդում XVII դ. ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը: Այսպիսով՝ Բջնին Արևելյան Հայաստանի այն բնակավայրերից է, որը ներկայացնում է հնագույն փուլերից մինչև նորագույն ժամանակաշրջանները հասնող և գրեթե չընդհատվող մի մշակույթ:

1970-ականներին լայն տարածում էր ստացել Հրազդանի միջին հոսանքի՝ բրոնզի և



վաղ երկաթի ժամանակաշրջանների դամբարանների զանգվածային կողպուտը: Հնագիտական արժեքների պահպանության և գյուղի տարբեր հատվածներում հայտնաբերվող հուշարձանների ուսումնասիրության նպատակով՝ 1977-88 թթ., Երևանի պետական համալսարանի արշավախումբը (ղեկ. Ի. Գ. Ղարիբյան), ձեռնամուխ եղավ հնավայրի հետախուզմանն ու պեղումներին: Ուշադրության կիզակետը դարձավ անկանոն քառակույտ ուրվագծով հրվանդանը, որի վրա միջին դարերում կառուցվել էր նշանավոր Բջնի ամրոցը: Այն գտնվում է ժամանակակից գյուղի կենտրոնում, Հրազդան գետի աջ ափին: Այստեղ բացվեցին V-VI դդ. կրկնակի անգամ վերականգնված կենտրոնագմբեթ Կաթողիկե եկեղեցին, բնակելի և քաղաքացիական շենքեր, կամարածածկ, սրբատաշ քարերով ու կրաշաղախի լուծույթով կառուցված մի ջրամբար, գաղտնուղի (նկ. 1) և այլն: Հայտնաբերվեցին խեցեղենի (հասարակ, ջնարակած և հաղճապակյա) և մետաղյա իրերի բազմաթիվ նմուշներ: Հնագիտական նյութը շաղկապվեց գրավոր աղբյուրների և ճանապարհորդների ուղեգրական նոթերի տվյալներին:

2003 թ. ԵՊՀ-ի արշավախումբը\* նորից ձեռնամուխ եղավ ամրոցի վերգետնյա հատվածների մաքրման, ապա՝ բացված քաղաքացիական, պաշտամունքային ու տնտեսական կառույցների ամրակայման աշխատանքներին: Ավելի քան 20 տարի առաջ բացված միջնաբերդի կենտրոնագմբեթ եկեղեցու ներսը և շուրջը մաքրվեց կուտակված աղբից, իսկ տեղաշարժված կամ շեղված ճարտարապետական մանրամասները (օրինակ՝ կենտրոնական մույթերի խարիսխները, արևելյան արքայիցի հյուսիսից և հարավից կից ավանդատների պատերը) կրկին բեր-

վեցին պահանջված դիրքի:


Ամրոցի տարածքում երկու դարավանդի վրա (Ստորին և Վերին Բերդ) իրականացվեցին հնագիտական ուսումնասիրություններ: Առաջին տեղամասում՝ ամրոցի ստորին դարավանդի արևմտյան եզրին, պեղվեց հյուսիս-հարավ ձգվող չորս զույգ քառակուսի. առաջին քառակուսիների շարքը (A, B, C, D, յուրաքանչյուրը 5 x 5 մ մակերեսով) հարևանում էր պարսպին՝ զբաղեցնելով կենտրոնական կիսալոր աշտարակների միջև ձգվող գոտին: Երկրորդ շարքը (E, F, G, H) կից էր առաջինին արևելքից: Այս ութ քառակուսիները զբաղեցնում էին 1970-ականների ընդհանուր հանույթի 24-26 և կից Ե4-Ե6 վանդակները: Հողի մակերևույթից մոտ 0,7 սմ ցած սկսվում է մշակութային շերտը՝ պարզունակ կառույցներով: A-E հարևան քառակուսիներում բացվեց սենյակի եզր՝ ավելի քան 100 սմ բարձրությամբ պահպանված և 100-110 սմ լայնությամբ պատերով (նկ. 2): B և C քառակուսիներում, նշվածի հարևանությամբ, բացվեց մեկ այլ սենյակ, որի համար որպես արևմտյան պատ ծառայել էր պարիսպը: Այս՝ գրեթե քառակուսի սենյակը, թեթևությամբ կպած էր պարսպին և արևմուտքից ուներ 2 մ լայնքով մի միջանցք: Հյուսիսից նշված սենյակին հարևանում էր մի ընդարձակ շինություն՝ 5 մ լայնությամբ և ավելի քան 6 մ երկարությամբ: Դրա արևմտյան կանոնավոր պատի հիմքերը՝ ձգվելով պեղավայրի երկայնքով, այն բաժանում էին լայն միջանցքից կամ ներքին բակից: Պեղավայրի պարսպին կից կենտրոնական սենյակը պատկանում է Բջնու բերդի գոյության վերջին փուլին, երբ պարսկական զորքերը նվաճեցին ամրոցը և այն կորցրեց իր պաշտպանական նշանակությունը: Կյանքն այնուհետև ընթանալու էր միայն պարիսպ-

## ԲՋՆԻ ԱՄՐՑ

ՄԼԽՆՎՈՒՄ ՀԵՏԵԿՆՈՒԹ  
Մ- 1:500

### ՆԻՎԱՆՆՑՆԻԿ

- A. ԿԵՍՈՒԻԿԵ ԻԿԵԼԵՑԻ
- B. ՋՐԱՄԲԱՐ
- B. ԲՆՆԵՆՑԻՆԵԿԵՆ ՇԵՆԷ
- Գ. ԲՆԿԵԼԻ ՇԵՆԷ
- Դ. ԵԵԽԵԿԵՆ ՊԵՐԻՈՊ
- E. ՀԵՏԵՆԵ ՊԵՐԻՈՊ
- Ջ. ԿԻՐԱՆԵ
- 3. ԵՆՏՄՈՒԹ




Նկ. 1. Բջնի ամրոցի գլխավոր հատակագիծը





ԲՏԻՒ. ԱՄՈՏԻ ԼՍԻՄԻ ՀԱՐՁԱԿ


2003 թ. ՊԵՐՏԵՐ



Նկ. 2. Բջին անոթի ստորին հարթակի հատակագիծն ըստ 2003 թ. տվյալների




ԲՏԻՒ. ՄԻՏԱԿԻԿ



Նկ. 3. Բջին անոթի վերին հարթակի հատակագիծն ըստ 2003 թ. տվյալների






ԲՁՆԻ ԱՐՄՈՑ

ԽՈՒՄԻ ԱՐԽՈՒԻ ԿԻՑ ԱԲՆԱԿԱԹՅՈՒՆ


Պետերյան, 2004 թ.



Նկ. 4. Ստորին հարթակի պեղված տարածքի հատակագիծը ըստ 2004 թ. տվյալների



M 1:50



ԲՁՆԻ ԱՐՄՈՑ

ԽՈՒՄԻ ԱՐԽՈՒԻ ԿԻՑ ԱԲՆԱԿԱԹՅՈՒՆ

Պետերյան, 2004 թ.

Նկ. 5. Վերին հարթակի պեղված տարածքի հատակագիծը ըստ 2004 թ. տվյալների



ներից դուրս՝ բնակավայրի սահմաններում:

Առաջին սենյակն իր մանրամասներով համաժամանակյա էր երրորդին, սակայն այս երկուսը՝ ավելի ուշ ենթարկվելով վերակառուցումների, ընդգրկվել էին ամենավերին շինարարական հորիզոնի շինությունների կազմում: Ուստի, ըստ ճարտարապետական մանրամասների, պեղվալարում ունենք երկու շինարարական հորիզոն:

2003-ին ստորին հրվանդանի վրա նույնպես բացվեց երկու շինարարական հորիզոն: Նշված շինություններից և կից բակից վեր հանած նյութը գերազանցապես խեցեղեն է՝ թվագրվող XV-XVII դդ.: Ամրոցի «կյանքի» այս վերջին շրջանը լուսաբանող հնագիտական նյութը հարստացվեց ոչ միայն ջնարակած խեցեղենի, կավե մեծ ու փոքր տարաների հավաքածուներով, այլև մետաղյա իրերով և ճարտարապետական մանրամասներով: B քառակուսում, պաքսպի ներսի երեսը մաքրելիս, բացվեց թշնամուն հեռահար գեմքով հարվածելու կրակակետ (бойница): Դա ցույց է տալիս, որ պարսպի ներսում շինություններն առնվազն երկհարկանի էին, և մոտ 3.5-4 մ ներքև պետք է լինի պարսպին հարող սենյակների ստորին հարկը՝ ներքևի կրակակետով: Պարիսպը պեղված մակերևույթից բարձր է մոտ 1 մ, կազմված 2-3 շարք կանոնավոր քարերից: D քառակուսում կրկին բացվեց ամրոցի գոյության վերջին տարիներին վերաբերող հետաքրքիր մի մանրամասն՝ ձեռքի պարզունակ հրանոթի փոքրիկ գնդակարկեր, որոնցով գնդակոծվել էր Բջնին ուշ միջնադարում (նկ. 5):

H քառակուսում բացված ավելի քան 250 սմ խորությամբ և 1 մ տրամագծով, հետզհետե դեպի ներքև լայնացող տնտեսական մի հոր, որտեղ գտն-


վեց խեցու ընդամենը մի քանի անարտահայտիչ բեկոր:

Բջնու միջնաբերդի վերին հարթակի արևմտյան եզրի չորս քառակուսիները (հյուսիսից հարավ՝ համապատասխանաբար համարակալված A, B, C, D), ներկայացնում էին մի առանցքի վրա շարված փոքր սենյակներ (նկ. 3), պահեստներ և արտադրական կառույցներ, որոնց արևմտյան եզրով ձգվում էր ընդհանուր պատնեշը: Պեղվալարի մի թևում (C քառ.) բացվեց թոնիր, դրա մեջ իջեցված կարաս, միջանցիկ անցքով սալքար (D քառ.), հավանաբար հեղուկ թորելու համար, իսկ հակառակ թևում՝ թոնիրով մի սենյակ (A քառ.): Նյութը նախապես թվագրվեց XV-XVII դդ.: Այստեղ էլ, ստորին հարթակի նման, կարելի էր նկատել երկու շինարարական հորիզոն, որոնք հատկապես լավ են երևում C քառակուսում, ուր իրար հաջորդող արհեստական երեք դարավանդները բարձրանում են հյուսիսից հարավ: Ստորին հարթակի պեղումների շնորհիվ բացվեց վաղ միջնադարյան մոնումենտալ շենքի քանդակազարդ քիվի բեկոր (նկ. 6):

2004 թ. աշխատանքները շարունակվեցին գերազանցապես նախորդ տարվա պեղումների շրջանակում: Այստեղ՝ ստորին հարթակի ութ քառակուսում բացվեց հաջորդ՝ XIII-XIV դդ. հորիզոնը (նկ. 4): Պարսպին կից երկու քառակուսում (B, C) տարածվում էր կավե տոփանված մի հատակ՝ ծածկված կրաշաղախով և եզերված քարերով: Մեր կարծիքով սա թերևս հնձան է: Այստեղից գտնվեցին երկաթե պայտ, մատնոց, ապակե ուլունքի բեկոր: Ինչպես երևում է, ստորին հարթակը զարգացած միջնադարի վերջում ունեցել էր վառ արտահայտված տնտեսական բնույթ:




Նկ. 5. Ձեռաշեն փոքրածավալ թնդանոթի գնդակ-արկեր



Նկ. 6. Վաղ միջնադարյան քանդակազարդ քիվի հատված ստորին հարթակից

Այս արտադրական կառույցի հյուսիսային կողմի կից սենյակում բացվեց 0,5-0,55 մ խորությամբ հինգ թոնիր (նկ. 7): Հատակին թափված շինարարական մնացորդների և այրված գերանի միջավայրում գտնվեցին մշակված տուֆե խորանարդ, 17 x 17 x 3 սմ չափի թրծած աղյուսներ, թոնրի խուփ, երկաթե կեռիկ և հավերժության երկթև նշանով ավարտվող շքագամ:

Պարսպին կից, դեպի ամրոցի հարավային հատվածը, ձգվում էր սալահատակված մի միջանցք՝ քարե ցածր շենով, որը պայմանականորեն վերագրում ենք «միջին» շինարարական հորիզոնին կամ



Նկ. 7. Հնձանին հյուսիսից հարևանող թոնիրներով սենյակը

XIII-XIV դդ.: Պեղվալարի հարավային կեսում, դրանից մոտ 30-35 սմ ներքև՝ վերևից հաշված երրորդ շինարարական հորիզոնի տիրույթում, բացվեց «ստորին» հատակը, որի մի հատվածում սալերով խնամքով ծածկված էր ջրահեռացման կավածեփ առվակուսը: Այն ձգվում էր դեպի պարիսպի մեջ կառուցված կրակակետը (նկ. 8), որն այս հորիզոնում այլևս չէր ծառայում իր հիմնական նպատակին: Հատակի մակերևույթին, երկու թոնիրների միջակայքում, ջնարակած բեկորները համեմատաբար քիչ են՝ զիջելով դաջազարդ և կետազարդ մոնումենտներին: Ամրոցի շերտագրությունը պարզելու համար կրա-






Նկ. 8. Բջնու պարսպի մի հատված՝ կրակակետերով



Նկ. 9. Նաչքարի ստորին հատված՝ խաթարված դամբանարևրի գագաթից

կակետի առջև փորվեց 1 բ. մ մակերեսով շուրֆ, որն իջեցվեց 2 մ: Այստեղից վեր հանվեցին հասարակ ու ջնարակած խեցեղեն, կանթավոր, սպիտակ սափորի բեկոր, մեխ, քարե ուլունքներ: Պարիսպն այստեղ ներսից սվաղված էր կրաշաղախով:


Ամրոցի ստորին հարթակից դեպի վեր ձգվող պանդուսն ավարտվում էր գլխավոր դարպասով: Դրանից ներս տարածվում էր վերին հարթակը: Սրա արևմտյան եզրին շարունակվեց դեպի հարավ ձգվող հատվածի ուսումնասիրությունը՝ մի գծի վրա շարված չորս քառակուսուն (A, B, C, D): Այստեղ պարիսպը կառուցված էր փոխուղղահայաց շարված




Նկ. 10. Կիկլոսյան ամրոցից մի հատված՝ մենհիրով

միջնորմներով, որոնց միջև գոյացած վանդակները լցվել էին մեծ քարերով ու ամրացվել կավի շաղախով: Այս զանգվածի մեջ, ջնարակած անոթների բեկորների հետ գտնվեց փայլեցված մակերեսով, անտիկ խեցեղենի երկու բեկոր: Հաշվետու ժամանակում Բջնու ամրոցում բացված շինարարական երեք հորիզոնը վերաբերում են XI-XII, XIII-XIV և XV-XVII դդ.:

Պեղումները համատեղվում էին նյութի նախնական մշակումով և հետախուզական բնույթի շրջազայությամբ՝ ներկայիս գյուղի բնակելի թաղամասերում ու արվարձաններում:



Նկ. 11. Նաչքարը ձևավորող որմնափակի հատված




Նկ. 12. Որմնափակ կորոզը վերևից ծածկող բարավորը



Նկ. 13. Որմնափակ խաչքարի պահպանված բեկորները




Նկ. 14 Մահմեդական սրբատեղիի քարի ցանկապատի մեջ ագուցված կորոզ



Նկ. 15. Որմնափակ խաչքարի եռաստիճան հիմքի ավերակները





Նկ. 16. Որմնափակ խաչակրթողի վերակազմությունը (ճարտ. Լ. Կիրակոսյան)


Բջնուց հարավ հրվանդան է, որը դեպի հարավ-արևելք վերածվում է ընդարձակ, տեղ-տեղ բլրակներով ծածկված դաշտի: Ահա այս հրվանդանի տարածքում էր, որ երեք տասնամյակ առաջ ուժգնացել էր գանձագողությունը: Այստեղ-այնտեղ սփռված են ցածր դամբարանաբլուրներ՝ կենտրոնում ծագարածև փոսեր: Կիկլոպյան ամրոցի ժայրին՝ Բջնու գործող գերեզմանոցից մոտ 60 մ հեռու, թալանված վաղ երկաթեդարյան դամբարաններից մեկի վրա, հայտնաբերվոց կարմիր տուֆից խաչքարի մի բեկոր՝ աստիճանավոր ռելիեֆ հիմքով (Նկ. 9): Ինչպես խաչքարը, այնպես էլ երկու մետր հեռավորության վրա գտնված վաղ միջնադարյան քառակող և հավասարաթև խաչով կոթողները, հավանաբար, կանգնեցված են եղել դամբարանաթմբի գագաթին: Կիկլոպյան ամրոցից դեպի հյուսիս՝ ամենուր մշմարվում են պարսպի հիմքեր, կառույցների պատեր ու միջնորմներ: Դատելով որոշ մանրամասներից ամրոցն իր գործառության առավել ակտիվ ժամանակաշրջանում ուշ բրոնզի-վաղ երկաթի դարաշրջանում, ունեցել է առնվազն երկու դարպաս՝ արևմտյան և հյուսիսային: Դրանցից առաջինը նեղ միջանցքով կամ «թակարդով» բարձրանում էր դեպի ամրոցի կենտրոնական հատվածը: Մի այլ դամբարանաթմբի վրա գտնվեց վանակատից պատրաստված փոսիկավոր հիմքով տերևածև մի նետասլաք:

Կիկլոպյան ամրոցի երկարածիզ բլրին հյուսիս-արևելքից հարում է մի լեռնազանգված, որը հարավից ու հյուսիսից պաշտպանված է խոր ծորակներով: Արևելյան կողմից այս հավելումը հանդիպակաց է ծորի մյուս կողմում՝ էլ ավելի բարձր բլրի գագաթն գբաղեցնող VII դ. Սբ. Սարգիս եկեղեցուն: Եկեղեցուց մինչև կիկլոպյան ամրոցը տարածվող

բնական այս ժայռի վրա ևս նկատվում են դամբարանաբլուրների մնացորդներ, և երկու, գրեթե անմշակ քարաբեկոր, որոնք թերևս մենհիրներ են (Նկ.10):

Բջնուց դեպի Ալափարս տանող ճանապարհին՝ մշակովի դաշտերի մեջ իշխող դիրք ունեցող բլուրը տեղացիները կոչում են Խաչի Դոշ: Բլրի վրա, գետնի մակերեսին ամենուր սփռված էին խաչքարի մեծ ու փոքր հատվածներ, տուֆի արծանագիր կամարագարո խորաններ, որոնք, հավանաբար, XX դ. սկզբին կործանված որմնափակ խաչքարի մասերն էին\*: Բլրի լանջերից և հարակից դաշտից հուշարձանի պահպանված բեկորները հավաքեցինք և կանոնավոր գոտիներով շարեցինք բլրի գագաթին՝ համադրության և հետագա վերակազմման համար: Միջնադարյան այս հուշարձանը բաղկացած էր XII-XIII դդ. մեկ խաչքարից, որը պատենավորված էր քանդակագարո շրջանակով ու կանգնեցված մոտ 3,4 x 2 մ մակերեսով և 0,9 մ բարձրությամբ եռաստիճան պատվանդանի վրա (Նկ. 11, 15): Կոթողի պատվանդանի հյուսիսային կեսը պահպանված է, որը թույլ է տալիս ավելի վստահ մոտենալ վերականգնման խնդրին: Աստիճանավոր պատվանդանի ստորին հատվածը գետնի մակերևույթից բարձր է 30-32 սմ: Այն արևելքից արևմուտք ունի 201 սմ լայնք: Սրբատաշ դարչնագույն տուֆի քարերը ամրացված են կրաշաղախի զանգվածով, որի մեջ արված խռոչներում էլ հազցված էր վարդագույն խաչքարը: Որմնափակ խաչքարը հանգչում էր, կարելի է ենթադրել, կամարավոր մանրամասներով գոտու վրա: Արծանագիր «խորաններով» քարերը կազմված էին հինգ գրեթե ամբողջացող և մեկ ավելի փոքր հատվածներից, որոնք պետք է որ ներառվեին յոթ խորանից ստեղծված հորինվածքի մեջ: Խորանավոր քարերի





Նկ. 17. Տեսարան Ար. Մինաս («Սուննաթ») սրբավայրի բազիլիկ կառույցի արևելյան հատվածից:

բարձրությունը 68 սմ է, հաստությունը՝ 25-26 սմ: Գոտու պահպանված երկարությունը 233 սմ է: Մոխրագույն՝ տուֆից պատրաստված եզրային շրջանակից պահպանվել է մի քար՝ 55 սմ լայնքով, 38 սմ հաստությամբ և 174 սմ բարձրությամբ, որի վրա 150 սմ բարձրությամբ արված է փորվածք՝ հավանաբար հորիզոնական դիրքով քիվ-բարավորի համար: Մեանդրներ հիշեցնող եզրային դեկորով այս վեմին, հավանաբար, պատվանդանի մյուս կողմից համաչափ զուգակցում էր մյուսը, որից պահպանվել են 65 և 40 սմ երկարությամբ, 24-26 սմ հաստությամբ երկու մոխրագույն քարաբեկոր: Ուելիեֆ շրջաններով վար-

դագույն շրջանակը հավանաբար պսակում էր խաչքարը: Վերջապես, մի մեծ բաց վարդագույն բարավորի քար՝ թեքությամբ վեր բարձացող ճակատով, զարդարված է ստալակտիտների հորիզոնական գոտիներով (նկ. 12): Վեմի շարունակություն կազմող հատվածները տեղում չեն հայտնաբերվել: Հիմքի ողջ մակերևույթին, կամարների մեջ, քանդակված է արձանագրություն, որի մեջ ակնարկվում է Քուրդ անձնանունը: Տեքստը մասամբ թերի է:

1. ԹՎ[ԻՆ] ՈԿ (1211) Ի ԺՂԱՂԱՆԱԿՍ ԱԾ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԴԶԱԻՐ

2. ԱՇԽԱՐԴՂԱԿԱՂԼԱՑ ՄԵՐՈՑ  
ՂԱՄԻՐՄԱՍԱԼՂԱՐ ԶԱՔՂԱՐԵԱ ՇԱՂՆՇԱԳԻ
3. ԵՒՂ ԻՐԻ ԵՐԲԱՐԻՆ ԻԻԱՆԷԻ ՈՐ  
ԲԱԶՂՈՒՄ ՔՂԱՅՈՒԹՂԵԱՂՄԲ...Թ ՅԱՂԹԵՑԻՆ  
ՊԱՐՄԻՑ ԵՒ...
4. ...ԵՍ ՄԵՂՈՒՂՏԵԱԼ ԾԱՂՈԱՅ ՔՈՒՐԴ... ԲԴԻ  
ԵԻԱՆԻՆ (?) ԿԱՂՆԿԵՑԻՂ ԽԱԶՍ ՅԱՆՈՒՆ  
ՄԲ ԵՂԻԱԻ ՎՄ Փ
5. ԲՂ ԿՈՒԹ ԼԻՂ ԳՈՅ ԻՄՂ ՂԵՐԿԱՐՂ  
ԿԵՆԴԱՂՆՈՒԹԵ ԻՄ ՊՄՈՒ... Ի: ՈՐՔ ԿԱՐԴԱՔ  
ԲՅԻՇԵՍՂ ԶԻՔ
6. ...Խ... ԱԾ... ԵԱՔ...ԻՐԻ ԾՆՂՂԱՑՂ ... Յ  
ԱՂԱՈՒՐ... \*\*\*:

Բջնուց հյուսիս, սարի վրա Ար. Մինաս կոչվող պարզունակ սրբավայրն է իր կիսագետնափոր սրահով, որի պատերը շարված են կիսամշակ բազալտե միջին չափի քարերով:

Ար. Մինաս է կոչվում նաև նշվածից արևմուտք՝ անտառակի մեջի կառույցը, որը թուրքալեզու բնակչությունից ժառանգել է «Սուննաթ»-ի ավերակներ անունը: Սա սպիտակ կրաքարից կառուցված, բազմիցս վերանորոգված վաղ միջնադարյան մատուռ է՝ լավ պահպանված հիմքերով: Մուտքը երկու կողմից և երկայնական պատերը, որոնցից հյուսիսայինը՝ թաղված թեք լանջի մեջ, զարդարված է որմնասյուներով: Ներսում՝ կիսակլոր բեմի վրա, դրված են քառակող կոթողներ, ատամնավոր խոյակ ու X-XII դդ. խաչքարեր (նկ. 17):

Գյուղի կենտրոնում մահմեդական սրբավայրի ավերակներ են, շրջափակված քարե ցանկապա-

տով, որի մեջ ագուցված են արձանագիր երկու կոթող: Արաբատառ արձանագրություններով կոթողների վրա քանդակված են առյուծներ և Թուխ Մանուկին հիշեցնող ռելիեֆներ, որոնք թեևս ավելի վաղ ծագում ունեն քան արձանագրությունը (նկ. 14):

1. Մ. Դարաբյան, Բջնի, Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1976:
  2. Ի. Ղարիբյան, Պեղումներ Բջնի ամրոցում, Սովետական Հայաստան, 1978, № 3:
  3. Ի. Ղարիբյան, Բջնի ամրոցի 1978-1980 թթ. պեղումները, Հայկական ՍՍԴ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտաժողովի թեզիսներ, Երևան, 1981:
  4. И. Гарибян, Раскопки крепости Бджин, Тезисы докладов симпозиума, посвященного V археологическому съезду Российской Археологической комиссии, Тбилиси, 1981.
  5. Ի. Ղարիբյան, Բջնի միջնադարյան ամրոցի պեղումները, Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2004:
  6. Գ. Սիմոնյան, Բջնի, Երևան, 2001:
- \* 2003 թ. պեղումներն իրականացրել են պրոֆ. Ի. Գ. Ղարիբյանը (ղեկ.) և դոց. Գ. Պ. Հակոբյանը (տեղակալ), Ճարտարապետներ Կ. Կ. Ղաֆադարյանի և Լ. Վ. Կիրակոսյանի, ԵՊԳ-ի պատմության ֆակուլտետի ասպիրանտների և ուսանողների մասնակցությամբ:
- \*\* Հայտնաբերել է արշավախմբի անդամ Տատյանա Վարդանեսովան:
- \*\*\* Վիճագրի վերծանմանը մասնակցել են ԳԳ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Գագիկ Սարգսյանը և Դուսիկ Մելքոնյանը, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:



**Igit Gharibyan,  
Haik Hakobyan**

## PRELIMINARY RESULTS OF BJNI 2003-2004 EXCAVATION

### (Summary)

The archaeological activities at Bjni go back to 1929, when artifacts of the Achaemenid and Hellenistic ages were unearthed there. The fortified settlement was attested earlier, by historian Lazar Parbetsi. Since the X and for the several following centuries Bjni had been in the possession of Armenian Pahlavuni princes. Grigor Magistros was the governor of Bjni in the XI century. Until the XV century, during the reign of the Zakarids, Bjni was a mighty fortress.

Excavation at Bjni began in 1970, but the systematic activities were only carried out here beginning from 2003 by the initiative of the archaeological team of Yerevan State University; archaeologists and students of the History Department.

Two areas, one on the lower terrace and the other on top of the hill, were chosen. On the lower terrace, within eight quarters (5x5m) three horizons dated from the XV-XVII, XII-XIV and XI-XII centuries AD were opened. Workshops, residential rooms, vine-press factory were excavated. On top of the fortress the structure of the fortifications were tested. The next zone was a hillock Khachi Dos with ruins of a monumental cross-stone of the XII-XIII AD on a three-step pedestal. On the slope of the mountain, north of Bjni an old chapel of "Sunnat" with interesting early medieval layout and a cross-stele were checked.



## Раскопки Драсханакерта

(предварительные результаты)


**ФЕЛИКС ТЕР-МАТИРОСЯН**

**В**есной 1989 г. экспедиция Института археологии и этнографии НАН Армении и Краеведческого музея Ширака провела совместную исследовательскую работу на территории села Бениамин Ширакского марза, в 10 км к югу от города Гюмри. Здесь были обнаружены древнее поселение и некрополь общей площадью более 80 га\*. Исследование подъемного материала и результаты раскопок с 1989 по 2004 гг. показали, что жизнь в данной части памятника длилась с V в. до н. э. по IV в. н. э. Поселение на расстоянии около 1,5 км окружено памятниками более раннего и более позднего перио-

да. На севере и северо-востоке это мегалитические поля с тремя, а иногда и более рядами камней высотой от 50 до 120 см. К ним примыкают курганные погребения, вероятно эпохи средней бронзы, часть из которых была разграблена в древности. На востоке, на большом холме, до подножья которого доходят мегалитические поля, расположена циклопическая крепость эпохи раннего железа. Ниже по склону и на другой стороне небольшого оврага расположены поселения эпохи железа и эллинистического периода\*\*. Здесь же, на холме, примыкающем к селению Бениамин, и на



BENIAMIN. Draskhanakert  
Plan général toutes périodes confondues



полях имеются поселения эпохи средневековья, вплоть до XII в. На юге, наряду с древними памятниками, расположены средневековые сооружения села Гусанагюх. В кольце этих памятников расположено большое поле с рядом скалистых холмов, пересекаемое автомобильной трассой Ереван-Гюмри. В западной части от трассы располагается большая часть строений античной эпохи. Западная граница памятника теряется в полях около птицефермы - в 2 км от большого холма. Восточная граница - река Каркачан, протекающая по территории села Бенямин. От реки до автомагистрали, в поле, в вырытых траншеях для водопровода и в 12-ти заложённых археологических шурфах были обнаружены развалины строений II-IV в. и синхронные им грунтовые захоронения. Южной границей античного памятника служат холмы, окаймляющие поле. Северная граница из-за обилия грунтовых вод в поле не установлена.

На памятнике заложены три раскопа. Первый, восточный, располагается на небольшом поле у автотрассы. Второй - на вершине большого холма. Третий же, в поле, в 500 м западнее второго. Во всех частях древние культурные слои сильно пострадали от хозяйственной деятельности во второй половине XX в. Несмотря на это, в ходе археологических раскопок удалось проследить интересную и последовательную картину развития жизни древнего поселения.

В исследуемой части памятника жизнь началась в V в. до н. э. Культурные слои этого

периода обнаружены во 2 и 3 раскопах. Наиболее интересным сооружением этого периода является раскопанное во 2 раскопе, на большом холме монументальное здание, которое сильно пострадало от поздних перекопов почвы. Зарегистрировано пять строительных периодов, совпадающее с периодами исторических и культурных изменений.


*Первый этап.* Размеры здания 25 м x 30 м. Здание имеет прямоугольную планировку. Основания стен каменные с двухпанцирной кладкой из больших плит с выровненной внешней поверхностью. Верхняя поверхность стены нивелирована для укладки на ней сырцовых кирпичей. Средняя часть основания имеет забутовку из мелких камней, речной гальки и глины. Толщина стен 120-100 см. По строительной технике и толщине основания стен аналогичны основаниям частных домов урартского города Аргиштихинили (А. А. Мартиросян, 1974, с. 65, рис. 41). Такую же толщину имеют стены внутренних помещений на армавирском холме-восточной части Аргиштихинили (Г. А. Тирацян, 1988, с. 83, рис. 17). Южная часть здания сохранилась на высоту одного камня в 10-15 см. В центральной части здания культурный слой сохранился на высоту в 160 см.

В южной части здания основания стен сильно разрушены. В двух наиболее крупных помещениях здания с внутренней стороны, вдоль плит основания стен, открыты линии из камней речной гальки, уложенных в один ряд, вплотную к большим камням. Снаружи стены



имели пилястры шириной в 180 см и выступавшие от стен на 25 см. Их фундаменты были выложены из мелких камней. Кроме двух пилястров в северо-западной части здания все остальные не имели связи с кладкой камней фундамента. Это указывает на их декоративное назначение. На выровненную поверхность основания каменных стен укладывалась тонкая прослойка из черной глины толщиной в 5-10 см для нивелировки. На эту каменную подушку укладывались сырцовые кирпичи, разрушенные при перестройках. Их наличие удалось зафиксировать только в трех местах. Толщина стен в 120 см предполагает высоту здания чуть более 4 метров.

В плане здание прямоугольное, разделенное глухой стеной на две равные части. В центре здания, примыкая с востока и запада к разделяющей стене, симметрично расположены два больших квадратных помещения, площадью по 125 кв. м. Центральные помещения-залы, окруженные одним рядом смежных с ними узких комнат. Большие помещения-с северной стороны. Входы в западные и восточные части здания устроены с южной стороны. Оба входа удалось проследить лишь на участках внутренних стен, так как наружные стены почти полностью разрушены поздними перекопами. Во внутренней, центральной части здания, напротив входа располагается невысокая платформа, выложенная из больших плоских каменных плит из черного туфа, хорошо подогнаны одна к другой. Платформа вытянута с юга на север с



1. Urartu  
2. Posturartu  
3. 1-achemenid  
4. 2-achemenid

шириной 2 м. и длиной 10 м. Восточнее платформы располагалась небольшая приступка из глины шириной в 90 см, примыкавшая к восточней стене центральной залы. С западной стороны платформы узенькая канавка из мелких каменных плит, окаймленная плитками, поставленных ребром на каменное основание. Ширина канавки 15 см, глубина 20 см. Канавка очень тщательно изготовлена. Верхний край канавки располагается несколько ниже платформы, образуя для нее сток. На одной плите платформы имеется сквозное отверстие для укрепления небольшого столбика. На другой плите имеется углубление в 10 см и шириной в 25 см. Судя по конструкции можно предположить, что здесь находился хлев для крупного рогатого скота. Причем ясли с восточной стороны. Западная канавка предназначалась для очистки хлева.


Большой интерес представляет материал из культурного раннего слоя. Это небольшой керамический кувшинчик красного ангоба с ойнохоевидным горлышком и отходящей от

него на плечи сосуда дугообразной ручкой, овальной в сечении. С виду он близок к стандартным урартским ойнохоевидным сосудам, отличаясь только более приземистой формой при большом диаметре горлышка, более плавными очертаниями венчика сосуда и формой ручки. Он как бы представляет дальнейшее развитие древней урартской формы сосуда. Особый интерес представляет находка керамической красного ангоба протомы головы крупного рогатого животного. Такие протомы, как головки быков, встречались как украшения сосудов больших размеров эпох поздней бронзы, раннего железа и Урарту (Б. Пиотровский, 1959, с. 175-179, рис. 38,39; А. Мартиросян, 1964, с. 175, рис. 72). Однако данная протома, хотя по своему облику и подражает древним образцам, несомненно, относится к более позднему периоду. Заслуживает внимания наличие на ее лбу вдавления в виде треугольника, указывающее на то, что это животное женского вида. Серьезный интерес представляют, обнаруженные в хлеву фрагменты двух больших курильниц прямоугольной формы. Одна из них имеет темнокоричневую, сильно лощеную поверхность и толстые стенки. В верхней части с внутренней стороны имеется выступ для установки крышки. Другая курильница отличается более тонкими стенками красного ангоба. По своей форме они напоминают курильницы эпохи поздней бронзы (А. Мартиросян, 1964, с. 172, рис. 69), но отличаются от них цветом и характером лощения поверхности.

Судя по характеру находок из центральной восточной залы, можно заключить, что это не просто хлев, а хлев-святилище женского божества одной из ипостасей, которой выступало животное с отметиной на лбу. По свидетельству Плутарха, в святилище богини Анаит содержались нетели с отметкой на лбу в виде светильника (*Plut., Lucul., XXIV; 4. Ὑβίη-Φωστύλις*, 1968, т. 89-102). Наиболее вероятно, что это святилище также было связано с культом богини Анаит, где содержалось священное животное, представлявшая зоолотрическую ипостась богини. Северное помещение, рядом со святилищем, было древним дарохранилищем. В этом помещении, в раннем культурном слое был обнаружен музыкальный инструмент типа свирели Пана. Он изготовлен из тонкой плитки плотного известняка трапециевидной формы. Размеры 80 x 75 мм. С обеих сторон украшен выгравированными рядами треугольников. Широкая верхняя часть имеет четыре трубчатых отверстия одинакового диаметра по длине инструмента. К сожалению, две крайние были отбиты еще в древности. Две средние трубки хорошо сохранились и звучат, имея тональную разницу в секунду. Исследование инструмента помогает уточнить и определить тональности и лад древнеармянской мелодики (Ф. Тер-Мартirosов, 1995, рис. 27; Ф. Тер-Мартirosов, 2001, с. 118-126).

Интересное открытие в центральной зале западной половины. Там обнаружена база от колонны персепольского типа. Она из черного





местного туфа высотой 45 см, верхним диаметром 70 см и нижним 78 см. При поздних раскопках сильно повреждены нижняя и верхняя части ее. База имеет колоколовидную или, как принято в науке, лотосовидную форму, с плавно расширяющейся нижней частью. Верх же подчеркнут выгравированной неглубокой канавкой. Сохранилось плавное сужение и след округлого невысокого тора с плоской поверхностью, на которую устанавливалась колонна. Туловище базы покрыто тщательно высеченными канелюрами, каждая из которых имела закругленную верхнюю часть. Таким образом, база как бы представляла букет из узких листьев. Ребра между канелюрами подчеркнуты и украшены узкими вертикальными канавками. Нижняя

часть базы завершалась заостренными окончаниями канелюр, между которыми располагались ромбовидные выступы. Эта база аналогична лотосовидным базам, обнаруженным в дворцовых строениях Ксеркса в Персеполе и Сузе и датируется серединой V в. до н. э. (*E. Schmidt, 1957, p. 67, fig. 28; он же, 1978, p. 41, fig. 209*).

Следует отметить, что данная база, является наиболее древней по форме среди ахеменидских баз Закавказья. Найденная в Сарытепе имеет квадратный плинт (*И. Нариманов, 1960*), что свидетельствует о более позднем ее изготовлении. Также, несомненно более поздними репликами баз персепольского типа являются найденные в Кахетии (IV в. до н. э.) (*A. Furwangler, 1995*) и еще более поздней, небольшая нарядная база из Дедоплис-Мигдори (II-I вв. до н. э.) (*Ю. Гагошидзе, 1977*). Судя по камню, она изготовлена на месте. Исходя из ее расположения, можно посчитать, что в древности, несомненно, здесь находилась еще минимум одна база. Следует отметить, что при раскопках всего здания здесь были обнаружены еще три хорошо сохранившиеся торовидные базы, а также две половинки двух баз, и фрагменты одной базы. Таким образом, несомненно, что в древности здесь было 8 или 10 баз. Однако, все они были переставлены со своих мест еще во второй и третий строительные периоды (эти базы будут представлены ниже). Рассмотренная выше база, хотя и была сдвинута со своего первоначального места, однако, оставалась в центре за-

падной залы в 1,2 и 3-ий строительные периоды. По рассказам местных крестьян ими отсюда была вывезена в деревню еще одна база, которая была позже расколота. Остатки ее не сохранились. Колонны были из дерева и вероятно имели оштукатуренную поверхность, что не только защищало дерево от огня, но и придавало парадный вид помещениям. Расположенные по соседству с центральной залой помещения практически не содержали фрагментов керамики. Судя по архитектуре здания и характеру организации помещений можно предполагать, что разделение здания на две равные части связано с их символическим и функциональным назначением. Восточная часть здания являлась святилищем, западная же часть представляла комплекс дворцовых парадных помещений.

Как отмечалось выше, как в западной, так и в восточной залах стояли базы с деревянными колоннами. Хотя, обнаруженное в восточной зале расположение баз отражает ситуацию, характерную для 2 и 3 периодов перестройки святилища, однако исходя из расположения баз от колон и вымостки в святилище Ширакавана (две базы в центральной части на расстоянии около 3 м друг от друга, впритык к платформе из каменных плит) можно предположить аналогичное расположение колонн в восточной зале для первого периода бытования святилища. Хотя святилище Ширакавана датируется более поздним, эллинистическим периодом, оно сохранило очень много архаичных черт (*Ф. Тер-Мартirosов, 1982; Ф. Тер-*

*Мартirosов, Г. Караханян, 1998, с. 17-30*).

В западной части поселения (3-ий раскоп) были возведены большие хозяйственные и жилые комплексы, обслуживающие дворцово-культовый комплекс на холме. Хотя раскопки здесь не завершены, однако уже сейчас видно, что комплекс включал в себя большие строения. Открыты три больших помещения. Центр комплекса занимает большая зала, имеющая два дверных проема: в южную и северную комнаты. Обнаружены две, врытые в землю, большие цилиндрические базы, на которых были установлены деревянные столбы, поддерживавшие перекрытие. В северо-восточном углу открыта большая каменная скамья. Около нее открыта узкая вымостка из каменных плит. Восточнее нее был сооружен примыкавший к стене большой очаг полукруглой формы. Северное помещение еще не открыто. Южное помещение имеет два дверных проема один в южной стене и другой в северной. На первом этапе южное помещение представляло длинную залу. Вдоль ее длины были установлены две каменные цилиндрические базы для деревянных колонн. На втором этапе зала была перестроена в большой хлев с вымосткой из каменных плит, и яслями. Интересен факт разделения яслей на две половины. Одна имела приподнятую кормушку для скота, у другой кормушка из камня и глины отсутствовала. В центре ясель стоял вертикально большой камень с двумя углублениями с обеих сторон: с одной стороны было круглое, а с другой-квадратное углубление, куда укреплялась



кормушка из дерева. Такое же устройство ясель этнографически засвидетельствовано в современных крестьянских хлевах. В них одна половина предназначается для крупного, а вторая для мелкого рогатого скота. Большой интерес представляет обнаруженный в нижнем слое археологический материал. Это керамический материал в виде фрагментов сосудов, продолжающих традиции эпохи развитого железа. Они украшены волнистым резным орнаментом на черном или плохо лощеном сером черепке. Здесь также обнаружена керамика, сохранившая формы сосудов урартского периода, но отличающаяся от него коричневатым цветом, еле заметным лощением.

Судя по расположению дворцового и культового комплекса на холме, а также обслуживающих их хозяйственных и жилых комплексов под холмом, поселение в этот период, вероятно, представляло дастакерт правителя Ширака и, возможно, являлось административным центром региона. Рассматривая дворец-святилище, мы видим, что данный комплекс значительно отличается по своей планировке от святилищ и дворцов до урартского и урартского периодов. Здесь налицо общность с сооружениями ахеменидского Ирана в формах и орнаментациях баз колонн, в планировке здания, в характере расположения центральных зал и в окружении их коридорообразных помещений. Такая планировка, характерна не только для дворцов, но и для святилищ ахеменидского периода. Показано, что корни такой планировки

находятся в древних дворцовых комплексах Месопотамии, с преобразованием центрального двора в колонный зал (*J.-C. Margueron, 1984, p. 30-36*). Следует указать на аналогичную с минойскими дворцами-святилищами. Факт этот не случаен, а наоборот важен. Во 2-м тыс. до н. э. в Месопотамии и на Переднем Востоке царь выступал как священная особа и его дворец являлся одновременно святилищем. Как известно, ахеменидские цари при создании имперской культуры сливали в ней элементы культур подчиненных народов. При этом особая роль придавалась архитектуре дворцов и святилищ. Близость их планировки показывает, что ахеменидские цари, как и древневосточные владыки, выступали в качестве священных особ. Этот момент также четко вырисовывается и в планировке дворца-святилища Драсханакерта. Как уже указывалось, конструкция хлева и находки в нем протом и курильниц неоспоримо свидетельствуют о культовом назначении восточной части здания. Об этом же свидетельствуют и находки в дарохранилище культовых предметов. Характерно в то же время, что помещения светской части и культовой части разделены стеной без прохода на две части. Это свидетельствует о четком разделении функции правителя и жреца. Однако совмещение в одном здании культовой и светской функций и близость планировки восточной и западной части здания указывают на их равную значимость в Армении в этот период. Несомненно, что здесь мы видим феномен местного характера

развития культуры не типичный для ахеменидской державы. Об этом, прежде всего, свидетельствует облик святилища, в котором богиня Анаит предстает в облике нетеля (*Ф. Тер-Мартirosов, 1993, с. 61*), что не характерно для облика одноименной богини в Иране. В известных храмах Ирана, ахеменидского и постахеменидского периодов, помещение с алтарем располагалось в глубине здания, после приемной залы. В Драсханакерте святилище состоит из трех частей: прихожей, центральной залы святилища, где находился главный объект культа, и дарохранилища, расположенного за залой. Характер святилища Драсханакерта подтверждает мнение о самобытном развитии армянского пантеона богов в этот период и переосмысление армянской культурой элементов культов, других культур (*Ф. Тер-Мартirosов, 1996, с. 32*). Таким образом, рассмотрение планировки здания дворца-святилища Драсханакерта позволяет получить интересные данные по культуре Армении в ахеменидский период.

Следующий период памятника приходится на IV в. до н.э. В это время дворцовое и культовые сооружения подвергаются перестройке.

В дворцовой части прослежена перестройка входа в центральную залу из западного коридора с перенесением его из угла в более центральную часть. Это позволило усилить конструкцию дверного узла. Изменение прослеживаются и в дверном проеме святилища. Он сужается в размерах, что связано с измене-

нием характера культа. Более сильные перестройки наблюдаются в святилище. Практически они продолжают за все время существования здания. Но, особо выделяются два периода больших строительных работ, когда меняется облик святилища. Первоначально на втором этапе меняется форма святилища и, судя по характеру найденного здесь археологического материала, меняется и форма культа божества. Новый глинобитный пол перекрывает каменный настил. Святилище перемещается на восток. Сносится перегородочная стена, и к нему присоединяется восточный коридор. С запада сооружается новая стена. В соответствии с новой планировкой на юг к входу в святилище переносятся и две базы с тором, обрамляющие вход в помещение. При перестройке сокращается площадь святилища и связанных с ним помещений, почти неизменной остается западная часть дворцового строения и расширяется ее центральная зала. Засыпка древнего туфового настила пола свидетельствует об изменении формы культа и ритуала почитания древнего божества. Интересны найденные в этом слое фрагменты курильниц с протомами птиц и большая крышка курильницы красного ангоба с головкой голубя. Это позволяет понять, что изменилась ипостась древнего божества, священными животными которого теперь являются голуби. Поэтому старый широкий дверной проем, который ранее был необходим для прохода через него священных нетелей, был частично заложен, и сделан более узким.



Следует отметить, что археологический материал этого периода, найденный в дворцовой части памятника, крайне скуден, но в тоже время весьма характерен. Это две бронзовые статуэтки изображения орла, высотой в 3,5 см. Птицы в сидячей позе со сложенными крыльями. Одна из статуэток имеет в нижней части втулку и, несомненно, являлась головкой посоха. Вторая статуэтка имеет обломанную нижнюю часть с изображением лапок птицы. По-видимому, она крепилась над каким-то предметом, скорее всего кресла или трона. Как известно изображение орла являлось символом царской власти у ахеменидов (*Г. Тирация, 1998, с. 53*). Несомненно, восточная часть являлась культовым помещением, а западная-резиденцией правителя, представителя царской власти. Судя по находкам в дворцовой части здания и характеру перестройки святилища можно говорить, что здание в этот период переходит во владение царской власти.

Последовавшие за этим перестройки связаны с землетрясениями. Они прослежены в здании дворца святилища. В дворцово-культурном комплексе продольные стены, идущие с запада на восток, были утолщены в ряде мест. Особенно ярко следы сейсмического удара прослеживаются на строениях в третьем раскопе. В большой зале видны следы ремонта в центральной части северной стены, продавленной наружу. Дверной проем в южной стене был разрушен. Перемычка двери с северной стороны упала. После чего проем был вынужденно заложен.

Кроме того, в центральной части комнаты рухнула крыша. Это неоспоримо свидетельствует о сильном землетрясении, имевшем направление удара на север. Вероятно, оно произошло в IV в. до н. э. Однако несколько позже, в III в. до н. э. произошло еще одно землетрясение, имевшее более губительные последствия для дворца-святилища. В результате с восточной стороны внутренние стены строения рухнули в западном направлении. Остатки упавшей стены были раскрыты в северо-западном помещении. Они сохранились под настилом пола следующего периода. Стена была сооружена из прессованной глины с решетчатым деревянным каркасом. Часть столбов сохранилась внутри упавшей стены. Снаружи стена была покрыта рельефно выступавшими шишками. Наиболее вероятно, что в древности эти шишки и вся стена были расписаны. То обстоятельство, что в данном месте произошло оседание пола, указывает на то, что сейсмический удар с восточной стороны сопровождался и вертикальным толчком. Сильные разрушения внутри здания и опасность его полного разрушения вынудили древних обитателей прибегнуть к радикальным мерам. Были поспешно сооружены новые стены, укреплены и расширены старые для опоры перекрытия здания. При этом люди действовали в большой спешке. Об этом свидетельствует тот факт, что как минимум две базы от колонн были разбиты на части и их фрагменты были помещены в новые возведенные колонны. Фрагменты баз были также, вложены и в старые,

расширенные при их реконструкции, стены. Около входа в святилище, на небольшом расстоянии от него была сооружена новая стена. Очень интересно изменение керамического материала, обнаруженного в комплексе жилого и хозяйственного помещений в третьем раскопе.

Следы землетрясения ясно прослеживаются в большом помещении третьего раскопа. Здесь в 2004 г. раскрыта упавшая на запад каменная стена. В этот период преобладает керамика, периода железа с преобладанием лощеных сосудов с черной или серой поверхностью, украшенной вдавленным и резным орнаментом в виде прямых и волнистых линий. На первый взгляд сохранены формы сосудов, хотя этот вопрос требует дальнейшего исследования, так как большинство находок это только фрагменты керамики. Большой интерес представляет фрагментарно сохранившаяся фиала, имеющая тонкие стенки и черный, почти полированный, черепок. На плечах фиалы, вместо привычного для эллинистических сосудов одного ребра, имеются три тонко прочерченных выступа, разделенные узкими бороздками. Фиала, несомненно, аналогична металлическим формам ахеменидского времени V-IV вв. до н. э. К этому периоду следует отнести также тонкостенный кувшинчик серого черепка с туловом, с четко прочерченными ромбовидными выступами. При раскопках соблюдалась четкая стратиграфическая фиксация датированных материалов, что позволило точно датировать керамический материал слоев V-III вв. до н. э.

В период IV-III вв. до н. э. строения были разрушены, и территория на какой-то период заброшена. Об этом свидетельствует погребение в центральной части дворца, на глубину до баз от колонн. Погребение грунтовое, ориентированное головой на восток, без сопровождающего материала. Такая же картина наблюдается и на третьем раскопе, где захоронения произведены на территории здания. Здесь открыты 4 погребения. Два из них в каменном ящике без крышки и сопровождающего материала, ориентированы головой на север. Одно погребение, плохо сохранилось, но судя по слабым следам костного материала, тоже было ориентировано головой на север. Здесь найден фрагмент большой бусины из коричневой смальты, на которой, по-видимому, был орнамент из белого смальта в виде креста и четырех точек. Четвертое, более интересное погребение с сопутствующим материалом было обнаружено позднее. Погребение представляет овальный каменный ящик, сложенный из мелких камней без крышки, а в нем, в скорченном положении головой на запад-скелет молодой женщины и два керамических сосуда черного черепка. Один чернощенная фиала с лепестковыми выступами по дну и умбоном. Второй небольшой кувшин без ручки с вдавленным на плечах сосуда волнистым орнаментом, под которым между двумя горизонтальными полосами идут косые вдавленные линии. Тут же была найдена пирамидальная подвеска зеленого цвета.

Во II в. до н.э. происходит радикальная



перестройка дворцового строения. Новый дворец, размерами приблизительно 20 x 25 м, возводится на территории старого строения. Характерно, что при этом базы из-под колонн прежних строений остались в глубине глиняной платформы и новые стены в трех последующих строениях были возведены поверх них. Таким образом, новые стены лишь в отдельных частях опираются на останки древних строений. Новый дворец был сокращен в размерах в южной и западных частях и как бы слегка перенесен на север и восток. Стены, судя по сохранившимся в двух местах останкам кладки, были сооружены из сырцового кирпича. Останки двух каменных пилонов говорят о том, что вход во дворец был с центральной части восточной стены. При этом южный пилон как бы облицовывал внутреннюю стену, очевидно во внутренней планировке дворца была использована проходящая с востока на запад и примыкавшая с севера к святилищу стена. Само святилище сохранилось в крайне уменьшенных размерах. Интересна и важна находка фрагментарно сохранившейся статуэтки сидящей на квадратном основании женщины с поднятыми на уровне плеч вверх руками, несомненно, что это изображение богини, которая первоначально почиталась в святилище в виде нетеля, потом на голубки и в более поздний период в антропоморфном облике. Статуэтка изготовлена из хорошо отмученной, обожженной и лощенной светло-коричневой глины. На поверхности статуэтки видны следы росписи красной и черной

красками. Найдены фрагменты затылка, части плеч и рук, груди, нижней части фигуры. Находка эта свидетельствует о продолжении бытования святилища.

Время возведения нового дворца определяется по одной чрезвычайно важной археологической находке. Западнее святилища была первоначально найдена плита из известняка в форме неправильного четырехугольника. Размеры ее 43 x 41 см, толщина 15 см. В центре плиты имеется отверстие размером 17 x 13 см, в котором находился обломок вставленного каменного шипа. Под плитой, на месте отверстия, была небольшая ямочка с останками костей небольшой птицы, возможно голубя. Первоначально эту плиту мы трактовали как место закладного жертвоприношения при строительстве нового дворца. Однако, впоследствии был найден обломок нижней части стелы трапециевидной формы, высотой в 39 см. Она была отбита в верхней части и внизу в средней части. При соединении данного обломка с каменным шипом, стало ясно, что в древности они представляли собой цельный монумент стелы, стоявшей на квадратном основании. Хотя верхняя часть стелы не сохранилась, однако трапециевидная, расширяющаяся кверху форма позволяет уверенно относить ее к стелам царя Арташеса, имевшим трехзубчатое завершение верхней части. Поверхность хорошо отесана, что характерно для стел с надписью. Однако, судя по обломкам, надписи не было. Это уже третья находка стелы царя Арташеса на территориях

античных поселений в Шираке. Первые две стелы, с трехзубчатым завершением верхней части, сохранившиеся также фрагментарно, были найдены при раскопках памятника античной эпохи Ширакавана, в слое I в. до н. э., где они были вторично использованы в качестве строительного материала. Наиболее хорошо сохранившаяся стела из Ширакавана также не имела надписи. Очевидно, что стелы без надписи ставились царем Арташесом в поселениях, вошедших в царское владение (Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, 1998). В качестве доказательства данного предположения послужила находка в Шираке еще одного, четвертого по счету, фрагмента с трехзубчатым завершением большой стелы из известняка. Фрагмент был найден при расчистке территории восточной части памятника, у холмистой гряды. Как известно, стелы царя Арташеса, которые были найдены в основном в поле, по надписям о разделе земель, трактуются как межевые камни. Вероятно, что при установке стел на территории поселения, для указания принадлежности его царю, было достаточно трехзубчатой формы без надписи. Находка сразу двух стел в различных частях памятника, свидетельствует о том, что данный дастакерт во II в. до н. э. перешел во владение царя Арташеса. Впервые найденный комплекс стелы с основанием окончательно подтвердил верность описания М. Хоренаци межевых камней: «Межевые же знаки он приказал установить так: вытесать в виде четырехугольников камни, выдолбить посередине чашеобразные

углубления, зарыть их в землю и водрузить на них четырехгранные башенки, немного возвышавшиеся над землей» (Мовсес Хоренаци, кн. II, гл. 56). В то же время, впервые удается проследить факт закладки жертвоприношений при установке стел, не указанным М. Хоренаци.

Археологический слой этого времени и планировка здания, из-за последующих перестроек и перекопов прослеживается плохо. Интересны обнаруженные в слое расписной керамики и фрагментов сосуда для благовоний из алебаstra.

Данный период жизни памятника был кратковременным. В скором времени дворец периода царя Арташеса был полностью разрушен, а на его месте было сооружено новое строение. Территория древнего дворца была нивелирована. Стела царя Арташеса была разбита, и ее тулово было перенесено севернее от ее основания. Образовавшаяся площадка была засыпана мелкими камнями. По периметру площадки, с двух сторон основания стен, были вертикально поставлены огромные глыбы базальта, напоминающие ортостаты. На них были возведены глинобитные стены. Следует подчеркнуть, что ряд отрезков основания стены имеют искривленную линию, образуя нечеткий прямоугольник. Внутри нового строения сохранились лишь несколько фрагментов стен позднего периода. Эта фрагментарность не дает возможности судить о внутренней планировке здания, однако можно понять строительную тех-



нику возведения стен-глинобитные, обложенные с обеих сторон мелкими камнями, создающие впечатление каменной кладки. Материал этого времени крайне скуден. Здесь найден фрагмент импортной керамики коричневатого черепка с лепным орнаментом в виде завитков. Аналогичная картина разрушения строений и возведения на их руинах глинобитных стен, обложенных камнем, была и в храмовом поселении античного Ширакавана в синхронном культурном слое (Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, 1998). Судя по характеру строений и обнаруженным материалам, следует предположить, что в это время в Армению проникали кочевые племена из Средней Азии или Северного Кавказа. Очевидно, это были племена савков, пришедшие сюда в составе парфянских войск в тяжелый для Армении период конца II в. до н. э. Завоевав эти территории, они попытались обосноваться здесь. В поселении у подножья холма была соружена оборонительная стена. Новый дворец являлся одновременно и маленькой цитаделью, просуществовавшей до начала I в. н. э. Судя по найденным здесь 4 серебряным монетам, отчеканенным в период правления римского императора Августа, дворец был разрушен на рубеже новой эры. С восстановлением правления царя Тиграна II, приходит конец парфянской гегемонии, и памятники Армении переживают новый расцвет жизни. Картина этого ярко прослеживается на всех памятниках Армении и в Бениамине.

В I в. до н. э. центр памятника переносится с большого холма на восточную часть территории, что обуславливается изменением русел реки Каркачан и пересыханием ручьев стекавших с холмов, окаймляющих поле с южной стороны. У западного подножья холмистой гряды было сооружено новое большое здание (Ф. Тер-Мартirosов, 1993; Գ. Խաչատրյան, 1999, էջ. 47-59). По своим размерам и характеру внешних и внутренних планировок очевидно, что оно являлось административно-культурным центром. Здание было сооружено из камня и сравнительно хорошо сохранилось. Характер кладки стен аналогичен кладке сооружений раскопа 3, но отличается большей тщательностью строительной техники, четкой прямоугольной планировкой помещений и хорошо выложенными проемами входов. Хотя по своей планировке данное строение отличается от дворца-святилища на холме, однако здесь также выявлено функциональное деление строения на две части-западную и восточную. Это различие подчеркнуто планировкой строения. Вход в здание был с южной стороны, где не прослежены какие-либо строения. Таким образом, оно было отделено от других жилых комплексов, открытых севернее и западнее. Здание пережило три этапа, которые прослеживаются на всех участках I раскопа. На первом этапе западная часть строения состояло из большого двора с специально оформленным входом в виде небольшого квадратного помещения с сырцовым полом, и дома из четырех помещений. Вход в здание был в углу. За ним коридор, уводящий в

противоположный от входа угол. Коридор соединял последовательно 3 комнаты. Такое расположение входа смягчало воздействие ветра при открывании двери. Все комнаты, равные по длине, различались по ширине. Первая, большая комната, имела квадратную форму. За ней располагались в северном направлении небольшие, почти в два раза более узкие, чем первая комната, однотипные помещения с мощным полом, лежанкой, очагом в углу и ямой для пепла. Материал из помещений очень скуден. Большой интерес представляет находящийся в восточной части здания большой 12-ти колонный зал. Имея общую с западной частью здания стену, колонный зал имел отдельный вход, который был расположен в центральной части южной стены шириной в один метр. Интересно устройство сводчатого перекрытия входа. В большом завале базальтовых грубо обработанных камней найдены два боковых Г-образных камня кронштейна, служивших основанием свода. Колонный зал имел размеры 19,5 x 9,5 м, в котором располагались 12 колонн. От деревянных колонн остались небольшие торовидные базы на невысоком двухступенчатом плинте. Интересно, что верхний плинт имеет зауженные острые углы. Сам тор невысокий, почти плоский. По своей форме данные базы представляют собой прототип раннесредневековых баз, имеющих треугольные выступы от тора базы. Колонны поставлены в длину залы в два ряда на равном удалении от стен. Находящиеся в центральной части четыре базы имеют боль-

ший пролет, чем у других баз, что предполагает возведение здесь куполовидного перекрытия — глхатуна, при плоском перекрытии боковых частей залы. В юго-западной части имеется небольшая вымощенная плитами площадка, простирающаяся вдоль приступки скамьи у западной стены. Восточная сторона залы практически уничтожена проведенными здесь строительными работами при укладке труб водопровода. Остатки стены прослеживаются лишь на ее северном и южном окончаниях. Более четко выявляется наличие у основания разрушенной стены двух небольших выступающих пилонов, а между ними трех настилов из каменных плит. Сами пилоны сложены из небольших камней и сохранились в высоту 45 см. Кладка пилонов резко отличается от кладки стен. Судя по характеру кладки, пилоны не имели конструктивного значения для крепления стен или перекрытия, но выделяли центральную часть стены. Не исключено, что эти пилоны являлись остатками алтарей, установленных у восточной стены. Однако, никаких находок, связанных с ритуальными обрядами, здесь не обнаружено. Можно также предположить, что между пилонами имелись места для восседания высокопоставленных лиц. Колонная зала является важным фактом для истории архитектуры Армении эпохи классической античности и понимания ее дальнейшего развития. По своей планировке и конструкции она наиболее древний прототип трехнефных центрально-купальных залов, широко распространенных в архитектуре средневеко-

132



вой Армении, хотя и отличается по строительной технике.

Судя по обнаруженному археологическому материалу, памятник являлся большим производственным центром керамических, костяных и железных изделий, а также значительным торговым центром Ширака. Об этом свидетельствуют парфянская монета и буллы - оттиски печатей свидетельствующие о качестве товара, адресе отправителя, а также о системе налогообложения. Найденные в Бениамине буллы были на овальном комке глины, висевшем на шнуре. На внутренней стороне комка в разломе сохранились следы от шнура. На внешней стороне нанесено семь отпечатков овальной формы. Из них на шести имеются изображения. На одном отчетливо виден олень с двумя птицами. Буллы эпохи классической античности ранее были обнаружены только в Армавире и Арташате. Поэтому обнаруженные здесь буллы свидетельствуют о высоком статусе среди других поселений Ширака в эллинистическое время. Сюжет и характер изображения булл, типичен для местной печати, что позволяет говорить о факте экспорта Армении с другими странами. О широких торговых связях свидетельствуют находки фляг, служивших транспортно-торговой тарой древних обществ (*Ф. Тер-Мартirosов, 1979*). Интересна находка буллы вместе с флягой. Фляга имеет традиционный орнамент в виде кольцевидных полос и креста или звезды в центре, как символ солнца, а также фрагмент фляги с изображением на од-

ной стороне кольцевого орнамента, а на другой-шестивия оленей, с птицами на спинах и под туловом. Рисунок выполнен красной и черной краской и представляет прекрасный образец древнеармянской живописи эпохи эллинизма. Общность изображения на булле и флягах не случайна. Сокол и олень (самка оленя) в древней Армении выступали зооморфными ипостасями древнейших божеств Солнца и Луны, имевших неразрывную связь между собой (*Б. Аракелян, 1976*). Солнце традиционно считалось покровителем торговли (*Ф. Тер-Мартirosов, 1979, с. 49*), а в данном случае вместе с ним в качестве покровителя выступало и парное с ним божество. Изображение оленя с соколом имеет аналогии в мелкой пластике Армении (*Б. Аракелян, 1976, табл. ХСIV, ХСV*). Крайне интересны и фрагменты других керамических изделий, отличающихся высоким мастерством изготовления и многоцветной росписью. Первая - это фрагмент керамического, декоративного щита - 40 см в диаметре. С внешней, выпуклой стороны щита, красной краской, изображение солнца с лучами, нарисованными в священном угле помещения для почитания культа Солнца. С внутренней, вогнутой стороны он имел ручку для подвешивания на стене.

Вторая находка-керамическая маска бога Вакха, украшавшая внутреннюю сторону горла кувшина с ойнохоевидным венчиком. Бог Вакх изображен молодым улыбающимся юношей с вьющимися волосами. Маска завершала ручку сосуда. Сосуд из коричневого тон-

кого черепка, явно привозной. Эта находка обогащает коллекцию изображений, обнаруженных в Армении, в виде чаши царя Пакора, со сценами вакхического цикла, маски Диониса, терракоты из Арташата (*Б. Аракелян, 1976, табл. ХСIX, С-СIX, ХС*) и позволяет говорить, что культ Диониса-Вакха имел широкое распространение среди знати Армении в первые века н. э.

Большой интерес представляет открытие здесь остатков маленького храма с двумя торовидными базами в центре помещения (*Г. Ишханян, 2000, т. 28-36*).

На втором этапе жизни поселения на этой территории происходят радикальные перестройки. Происходит разрушение колонного зала. Из обломков были извлечены две базы. В дальнейшем территория залы была перекрыта утрамбованной глиной и, вероятно, она служила двором. Перестройки были сделаны и в западной части. Небольшое помещение на севере было замуровано специально возведенной стеной. О ритуальном характере действий свидетельствует обнаруженное под стеной жертвоприношение-два конских черепа. В то же время была разрушена западная стена двора западной части комплекса, и с этой стороны к зданию был пристроен большой хлев и небольшие хозяйственные строения. То есть происходит разрушение административной части комплекса, и превращение его в большое жилое и хозяйственное строение. В это же время рядом с данным комплексом сооружаются новые большие

жилые и хозяйственные строения. Поселение продолжало оставаться большим ремесленным и торговым центром региона. Среди находок этого времени образцы привозной краснолаковой римской керамики. Но, особый интерес представляют керамические изделия местного производства. В целом, при единстве форм и орнаментов, прослеживается ряд особенностей в деталях, таких как появление у кубков ручек и носиков. Среди других находок гемма желтого стекла с резным изображением Пегаса, бронзовый перстень с вращающимся щитком, множество бус, орудий и изделий из кости, каменных лоцил и другого материала.

Во II в. н. э. жизнь в этой части памятника замирает. Новые жилые комплексы более мелких размеров возникают восточнее автомагистрали. Судя по обнаруженной здесь керамике ширакаванского типа, черного черепка с тонко процарапанным гребенчатым или сетчатым орнаментом жизнь здесь продолжает бытовать до IV в. н. э. Исследование территории путем шурфов показало новое изменение русла реки в восточном направлении. Заброшенные строения I-II вв. превращаются в место некрополя. Еще ранее здесь, на территории поселения и на ее восточной окраине, были обнаружены погребения под полом помещений, погребения в карасах, грунтовые захоронения и захоронения в ямах, датируемые I в. до н. э.-II в. н. э. глинобитным полом помещений, а также захоронения в хозяйственных ямах, прослеженные Л. Г. Еганян (*Л. Եգանյան, 2002*). Это скрю-



ченные скелеты, уложенные головой на запад. Сопровождающего материала в них нет. Погребения под полом обнаружены и в других поселениях древней Армении, и большей частью это детские захоронения. Погребения в хозяйственных ямах, обнаруженные в Бениамине, это скелеты взрослых людей, предположительно домашних рабов. Рабы, как и дети, не прошедшие инициации и не ставшие полноправными членами общины, хоронились не на общинном кладбище, а на территории дома (Ф. Тер-Мартirosов, 1975). Сравнительно небольшое число таких захоронений не может подтвердить предположения о рабовладельческом укладе в экономике страны.

Захоронения II-IV вв. совершались большей частью в каменных ящиках. Погребенный лежал в слегка скорченном положении на правом или левом боку, головой на запад. Для поздних захоронений характерно положение покойника на спине. Изредка встречаются грунтовые захоронения или погребение в карасе. Большой интерес представляет захоронение II в. (Л. Ёгшбшш, 2002, էջ 7). Захоронение находилось в большой комнате западной части административно-культового комплекса. Здесь был сооружен кромлех диаметром около трех метров, сложенный из крупных камней, под которыми находились кости собак и лошади. Возможно, столь необычное погребение было предусмотрено для одного из владельцев этого дома. Это погребение было ограблено в IV в., судя по найденным здесь фрагментам керамики

ширакаванского типа. Захоронения в карасах и каменных ящиках сопровождались разнообразным погребальным инвентарем, среди них бронзовые гривни с утолщенными концами, имеющими ровный срез. Интересны находки браслетов с прогибом, что свидетельствует о более длительном, вплоть до II в. н. э., периоде их употребления. В погребениях найдены образцы керамики, большое разнообразие бус, перстни из бронзы, сердолика и других материалов. Результаты краеологических исследований показывают наличие на черепахах из погребений II-IV вв. искусственной кольцевой деформации (А. Худавердян, 2000, с. 10). Ранее такая же искусственная деформация была прослежена и на синхронном материале могильника поселения античного Ширакавана. Это интересное явление, как представляется, связано с появлением здесь рода Камсараканов (Ф. Тер-Мартirosов, 1982). Рассказывая о них, историк Мовсес Хоренаци писал: «Этого Камсара, еще при его отце, совершившего в сражениях подвиги необычайной храбрости, однажды, когда он ринулся вперед, кто-то ударил по голове и снес ему часть черепной кости. Поправившись с помощью лекарств, он по причине нарушения шарообразности макушки был прозван Камсаром» (Мовсес Хоренаци, кн. II, гл. 87). Несомненно, данный рассказ являлся мифологическим преданием об эпониме рода Камсараканов и народной этимологией, призванной объяснить удлиненную форму головы у членов рода. На самом же деле, как видно по антропологиче-

скому материалу, изменение формы черепа было вызвано обрядом его искусственной деформации.

В конце IV в. жизнь на исследуемом участке поселения замирает. Вероятно, поселение было перенесено на восток. Здесь на территории современного села встречаются средневековые погребения и следы построек этого же периода.

В археологических раскопках и в исследованиях участвовали директор краеведческого музея Ширака А. Хачатрян, изучающий эллинистический период жизни памятника, главный хранитель фондов музея Л. Еганян, которая исследовала некрополь. Антропологический материал некрополя изучен сотрудницей ин-та археологии и этнографии А. Худавердян. Руководитель раскопок Ф. И. Тер-Мартirosов, ведущий научный сотрудник института археологии и этнографии НАН Армении\*\*\*.

1. А. А. Мартirosян. *Аргистихинили*, Ереван, 1974.

2. Г. А. Тирация. *Культура Древней Армении*, Ереван, 1988.

3. В. В. Пиотровский. *Ванское царство*. М. 1959.

4. А. А. Мартirosян. *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964.

5. Plut., *Lucul.*, XXIV.

6. Կ. Վ. Մկրտ-Փաշայան. *Անտիկ դիցուհու պաշտամունքը*, Երևան, 1968:

7. F. Ter-Martirosov. *The ancient Pan's stone pipe from Armenia*. Armenian council for Traditional Music. 1-st Joint Symposium in Yerevan. Yerevan, 1995, p.27.

8. Ф. И. Тер-Мартirosов. *Каменная свирель Панá 5-в. до н. э. из Драсханакерта*. *Вестник общественных наук*, №1, Ереван, 2001, с.118-126.

9. E. Chmidt. *Persepolis I*. Chicago, 1957.

10. E. Chmidt. *Art et Histoire de l'Iran avant l'Islam*. Paris, 1978.

11. И. Г. Нариманов. *Находки баз колонн VI-V вв. до н. э. в Азербайджане*. *Советская Археология*, Москва, 1960, №4;

12. A. E. Furtwangler. *Gumbati, Archeologische Expedition in Kachetien 1944*. *Eurasia Antiqua. Zeitschrift fur Archeologie Eurasiens*. Deutsches Archeologisches Institut. Eurasien-Abteilung. Band I, Berlin, 1995.

13. Ю. М. Гагошидзе. *Раскопки храма 1 в. до н. э. в Дедоппис Миндори*, КСИА., №151, Москва., 1977.

14. Ф. И. Тер-Мартirosов. *Античный Ширакаван*. V-ая республиканская конференция по вопросам культуры и искусства Армении. Ереван, 1982.

15. Ф. И. Тер-Мартirosов, Г. О. Караханян. *Раскопки поселения и некрополя античного Ширакавана*, Շիրակի հայագիտական հետազոտ. կենտրոնի գիտական աշխատություններ, 1 Գյումրի, 1998, էջ 17-30:

16. J.-C. Margueron, *Prolegomenes a une Etude Portant sur l'Organisation de l'Espace Sacre en Orient. Temples et Sanctuaires*. Gis- Maison de l'Orient, 1984.

17. Ф. И. Тер-Мартirosов. *Памятник классической античности Армении*, *Вестник Ереванского Университета*, 1993, № 3, с 59-72.

18. Ф. И. Тер-Мартirosов. *Медвежонок и другие персонажи армянской мифологии*. Ереван, 1996.

19. Мовсес Хоренаци. *История Армении*, Ереван.

20. Հ. Խաչատրյան. *Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը*. Շիրակի հայագիտական հետազոտական կենտրոնի գիտական աշխատություններ, 2, Գյումրի, 1999, էջ 47-59:



21. **Ф. И. Тер-Мартirosов.** Фляги как торговая тара. Проблемы античной истории и культуры Эйрене, т. 2, Ереван, 1979.

22. **Б. Н. Аракелян,** Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976.

23. **Դ. Խաչատրյան.,** Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը., Շիրակի իսլամական հետազոտական կենտրոնի գիտական աշխատություններ, 3, Գյումրի, 2000, էջ 28-36:

24. **Եգանյան Լարիսա,** Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, բեկնածուական ատենախոսության սեղմագիրը, Երևան, 2002:

25. **Ф. И. Тер-Мартirosов.** Античные печи из Арташата. Вестник общественных наук АН. Арм. ССР, Ереван, 1975, №7.

26. **С. Т. Еремян.** О рабстве и рабовладении в древней Армении. ВДИ №1, Москва, 1959.

27. **А. Худавердян.** Население Армянского Нагорья в античную эпоху (по антропологическим данным Бениаминского могильника.). Автореферат...кандидатской диссертации.

Ереван., 2000.

\* Статья была сдана в печать в середине 90-х годов XX в., но материалы и вопросы представленные в ней не потеряли актуальности.

В данной сноске приводятся работы опубликованные на момент сдачи статьи в печать: **Ф. И. Тер-Мартirosов.** Памятник классической античности Армении. Вестник Ереванского Университета. Общественные науки. Ереван, 1993, № 3, с. 59-72;

С тех пор список опубликованной литературы сильно увеличился. Большая часть данных об исследовании памятника помещена в отчетах института археологии и этнографии НАН РА, а также в трудах Ширакского арменоведческого центра. Кроме того материалы раскопок некрополя легли в основу кандидатских диссертации археолога **Л. Еганян** и антрополога **А. Худавердяна.**

\*\* Исследования **А. Хачатряна.**

\*\*\* С 1998 г и в настоящий момент исследование памятника проводятся совместной армяно-французской экспедицией.

**Felix Ter-Martirosyan**

## Excavations in Draskhanakert

### (Summary)

Excavations near the village of Benyamin (Shirak marz) began in 1989. The monument was a dastakert, which was the dwelling of the ruler and the worship- place of goddess Anahit. Here a complex of a palace-sanctuary, which existed from the V century to the II century BC, was discovered. Very interesting are the rooms with columns having big persepole-type stone basis. The residential and economic complexes were also found

(unearth). At the end of the IV century the palace was in the possession of the royal dynasty. In all the layers very interesting and various findings have been discovered. Of great interest are: a stone flute, fragments of censers, the statuette of a goddess. The palace- sanctuary and the residential complex have been reconstructed many times. Traces of the IV and the III cc. BC earthquakes have been detected. During the reign of king Artashes a new palace was built here. The pedestal and the fragments of two steles of king Artashes have been found, too. At the end of the II c. BC the settlement was conquered. In place of the palace of king Artashes a smaller fortress was built. At the beginning of the I c. AD it was destroyed by the Romans; which is proved by the coins of Emperor Augustus found here. In the I c. AD west to the old center, a new center of settlement was founded. Many buildings are discovered here, among which the administrative and residential complexes stand out. The latter was also used as a sanctuary. The discovered archaeological material proves the great development of different crafts and wide trade links. The clay bullas and fragments of flasks also prove this. The ruins of a small temple have been unearthed. In the II – III cc. AD the life in the settlements of this part faded away. The river flowing in this part moved its bed Easter and the dwelling and economic complexes followed suit. The territory of the monument became a necropolis. The burials found in the monument are very valuable. We have discovered burials in stone boxes, carcasses and burials in earth. Also the burials of the household slaves are of great interest. Rich material of great variety has been found in the graves. All this gives us the opportunity to restore the customs and rituals of the ancient times. The research of the Craniological material allows us to follow the settlement of the representatives of the Kamsarakan house in this place.





# ԱՆՑՔԻ ՀԱՆԻՏԱԿԱՆ ԱԴԵՐՆԵՐԸ

/1974-75 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՊՅՈՒՄՆԵՐԸ/

Աղք գյուղը Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտն գավառի բնակավայրերից է, որը հայտնի է դարձել 4-րդ դարի 60-ական թվականներից, երբ այստեղ թաղվել են հայ Արշակունի թագավորների ոսկորները: Արքայական ոսկորներն ամփոփելու նպատակով նույն ժամանակամիջոցում կառուցվում է մի երկհարկ շինություն, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Աղքի Արշակունյաց դամբարան» անունով (Բ. Առաքելյան, 1949; Կ. Կարսկան, 1961, շ. 73; Թ. Թորամանյան, 1942, էջ 40; Ա. Սահինյան, 1946; Մ. Հասրաթյան, 1975, էջ 51; Ս. Մնացականյան, 1982, էջ 64; Գ. Սիմոնյան, 1999): Այս իրադարձությունների մասին վկայություններ պահպանվել են Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերում: Ըստ Փավստոս Բուզանդի, պարսիկները գրավելով Դարանաջիբ գավառի Անի ամրոցը՝ կողոպտել են այնտեղ եղած արքունական գանձերը. «Եւ բանա-

լին զգերեզմանս զարաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունոյ, և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն» (Փավստոս Բուզանդ, էջ 222): Հայկական գորքերը Վասակ Մամիկոնյան սպարապետի գլխավորությամբ հետամուտ են լինում, և հասնելով, գիշերային անակնկալ հարձակումով ջախջախում են տուն դարձող պարսից բանակը. «Եւ առ հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, և թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրանց զոր պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: Չի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց աշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտքն և քաջութիւն աշխարհիս աստի զնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն: Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխար-

հին և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գելդն՝ որ Աղծքն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խինծս, ի գոգս, և ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծիդ, որ Արագածն կոչեն» (Փավստոս Բուզանդ, էջ 224):

Նույնը փոքր-ինչ այլ կերպ հաղորդում է Խորենացին. «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս՝ ի ծեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի, և գերէ զամենայն զանծս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն, ոչ գիտեմ, թէ վասն նախատինս առնելոյ Արշակայ, եթէ վասն հմալից ինչ հեթանոսականաց: Չոր ապա մաղթեալ նախարարացն՝ թափեալ թաղեցին յաւանին յԱղջս, որ յուտին Արագած կոչեցեալ լերինն: Քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերողացն, յաղագս պնր, ոչ արժանի համարեցան ի դիրս սրբոց թաղել ի Վաղարշապատ քաղաքի» (Մովսէս Խորենացի, էջ 288-289):

Աղքի Արշակունյաց դամբարանը Հայաստանի քրիստոնեական շրջանի հստակ թվագրված վաղագույն հուշարձաններից է: Դամբարանի և սրա պատկերաքանդակների վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցում բերված են գեոմեթրիկ շինության կառուցողական մանրամասները և քանդակների արվեստագիտական վերլուծությունը (Բ. Առաքելյան, 1949; Ս. Մնացականյան, 1982; Գ. Սիմոնյան, 1999): Հնագիտական հետաքրքիր նյութեր հայտնաբերվեցին 1974-75 թթ. ՀՍՍՀ Պետլիկի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության հուշարձանների վերականգնման հատուկ գիտաարտադրական արվեստանոցի կատարած պեղումների ժամանակ (ղեկ. Գ. Սիմո-







նյան): Աղքը, որպես բնակավայր, գոյություն է ունեցել վաղ ժամանակներից: Գյուղի տարածքից հայտնի են նյութեր, որոնք թվագրվում են Բ. ա. 1-ին հազարամյակով: Արշակունիների դամբարանի հյուսիսային մասում է եռանավ մի բազիլիկ եկեղեցի, որի հատակագիծը, պայտածև խորանը, որմնախարիսխների մշակումը բնորոշ են 4-րդ դարին: Դամբարանից հարավ երևում են սրբատաշ քարերով շարված մի մեծ շինության հիմնապատերը, որոնք բավական մեծ տարածք են գրավում: Հավանական է, որ վերջինս եղել է պալատական կառույց և, Դվինի, Ավանի ու վաղ միջնադարյան այլ պալատների նախատիպ է: Պեղումների արդյունքում գետնափոր դամբարանի և պալատի միջև բացվեցին աստիճանածև հիմքով մեկ այլ դամբարան և բազմաթիվ միջնադարյան գերեզմաններ:

Պատահական չպետք է համարել թագավորների ոսկորների թաղումը Աղքում: Ըստ երևույթի բնակավայրը հայտնի էր հեթանոսական շրջանից՝ իր պաշտամունքային ավանդույթներով, որոնք շարունակվել են նաև վաղ քրիստոնեության ընթացքում:

Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի և արհեստագործական արտադրանքի մնացորդները ենթադրում են, որ դամբարանի անմիջական հարևանությամբ եղել են նաև բնակելի, հասարակական և տնտեսական շինություններ:

Հուշարձանի տարածքից գտնված նյութերը ժամանակագրորեն բաժանվում են երեք մեծ խմբի՝ վաղ (4-8-րդ դդ.), զարգացած (9-14-րդ դդ.) և ուշ (15-18-րդ դդ.) միջնադար:





Աղյուսակ 1

Բավականին հարուստ և բազմազան են 9-14-րդ դարերի նյութերը, սակայն առավել հետաքրքրական են վաղ միջնադարի գտածոները: Ինքնատիպ է ստորին շերտերում գտնված մեծ սափորի բեկորը: Այն պատրաստված է ձեռքով, ունի սև, փայլեցրած մակերես և խաղողի որդատունկի ու ողկույզի վերադիր զարդ (նկ. 11): Անոթների նման հարդարումը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարյան խեցեգործությանը (Այգեվան, Օշական, Դվին և այլն): Անոթների արտաքին մակերեսները վերադիր զարդերով պատելը բնորոշ է վաղ միջնադարին: Գրեթե նույնատիպ զարդերով և արտաքին մշակումով անոթներ հայտնի են Դվինի պեղումներից, որոնք թվագրվում են 5-7-րդ դդ.: լավ թվագրված ու սահմանազատված շերտում (Ե. Շեևկովիչ, 1952, թ. 25, Կ. Ղաֆադարյան, 1952, էջ 47; Ա. Քալանթարյան, 1975, աղ. III/ 1-3): Խաղողի որթատունկը, որպես վերադիր զարդ, հայտնի է նաև Հացավան ամրոցի վերին շերտերում հայտնաբերված խեցանոթների վրա (4-6-րդ դդ.) (Գ. Տիրացյան, 1963, էջ 109):

Աղցքի դամբարանի տարածքից գտնված վաղ միջնադարյան խեցեղենն ունի այն բոլոր առանձնահատկությունները, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի խեցեղենի ձևերին, զարդանախշին և արտաքին մշակմանը: Այսպես, երեքնուկաձև պսակով սափորի բեկորը (աղ. I 5), որի իրանի վրա արված են ուղղահայաց փորագիր զարդեր, զուգահեռներ ունի Օշականի և Այգեվանի վաղ միջնադարյան նյութերում, իսկ Դվինի նույնատիպ նյութերը թվագրվում են 7-9-րդ դդ.:









Կճուճները մրապատ են, քիչ սրածայր պսակով և հորիզոնական կեղծ ունկերով (աղ. I, 3, II, 1):

Սրանք թվագրվում են 8-9-րդ դդ. (Ա. Քալանթարյան, 1975, էջ 243-244): Կճուճների մի մասն ունի կարծվիզ և հարթ կլոր կանթ, որը վերին մասում միանում է սրածայր պսակին: Պսակի ձևավորումով վաղ միջնադարյան խեցեղենի բնորոշ հատկանիշներից է կարմիր ներկած, երկկանթ, լայն վզով և ուռուցիկ իրանով փոքր կարասը: Պսակն ակոսավոր է՝ քիչ դուրս փռված: Ակոսավոր պսակով կճուճները, որպես կանոն, պատկանում են վաղ միջնադարյան նյութական մշակույթին և չեն հանդիպում հետագա ժամանակաշրջաններում: Դրանց ցայտուն օրինակները հայտնաբերվել են Օշականում և Այգեվանում, Դվինի կենտրոնական թաղամասի 5-6-րդ դդ. սյունագարդ դահլիճի շերտերում:

Հուշարձանի տարածքում գտնվել են նաև քրեղանատիպ ծորակավոր անոթների բեկորներ, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են կաթնաման անունով: Նման անոթները լայն տարածում ունեն Հարավային Կովկասի հուշարձանների 6-8-րդ դդ. շերտերում (Ա. Քալանթարյան, 1970, աղ. 36/5-7): Աղցքում գտնված ծորակավոր անոթների նմուշները մրապատ են, հատկապես այդ նկատելի է ծորակների տակ: Հավանաբար դրանք օգտագործվել են նաև որպես ճրագ:

Աղցքը վաղ միջնադարում, հավանաբար, եղել է բարվոք բնակավայր և ունեցել է իր ջրամատակարարման ցանցը: Այդ են վկայում փողոկները, որոնք պատահական գյուտեր են, սակայն, դատելով դրանց վրա պահպանված կրաշաղախի հետքերից, կարելի է ենթադրել, որ պատկանել են ինչ-որ ջրատարի: Փողոկները կարմրավուն և դեղնավուն կավից են, մի մասը՝ խոշորահատիկ և վատ թրծված, ունեն օղակաձև բարձր գոտի (երկ. 45 սմ, տրամ. նեղ





Աղյուսակ 2

մասում՝ 10 սմ, լայն մասում՝ 16-17 սմ): Իրենց արտաքին նմանությամբ Աղցքի փողրակներն աղերսվում են Դվինի կենտրոնական թաղամասի 5-6-րդ դդ. ջրատարի փողրակներին: Նույնատիպ խողրակներ հայտնի են նաև եղվարդի վաղ միջնադարյան փոքր բազիլիկայի շրջապատից (գտնվել են 1976 թ.): Հնարավոր է, որ խմելու ջուրը բնակավայր է բերվել գյուղի հյուսիսային կողմից, մեզ համար դեռևս անհայտ ինչ-որ ակունքից: Եկեղեցու բեմի պեղումների ժամանակ, հատակի տակ բացվեց մի ամբողջական փողրակ՝ դրված պատի մեջ, որի մի ծայրը թաղված էր բեմի հիմքում, մյուս ծայրը դուրս էր ելնում եկեղեցու արևելյան ճակատից:

Վաղ միջնադարյան մեզ հայտնի, բոլոր նշանավոր կառույցները կրել են կղմինդրե ծածկ: Դրանց դասական օրինակները հայտնի են Դվինից, Ջվարթնոցից և Աշտարակի Սբ. Կարմրավոր եկեղեցուց: Վերջինիս ծածկը հասել է մինչև մեր օրերը: Հայաստանում կղմինդրները կիրառվել են դեռևս անտիկ դարաշրջանից (Արտաշատ, Գառնի): 4-5-րդ դդ. այդ ավանդույթը շարունակվել է և մեծ մասամբ օգտագործվել պաշտամունքային շինությունների ծածկերի համար: Վաղ կղմինդրներն իրենց ձևերով նմանվում են անտիկներին, սակայն ունեն ավելի պարզ ձևեր: Դրանք հայտնի են Դվինի, Այգեվանի և Օշականի 4-6-րդ դդ. շերտերում, թամահատի եկեղեցական համալիրում, որոնք արտաքին մշակմամբ և հարդարանքով տարբերվում են 7-րդ դարի կղմինդրներից: Աղցքի պեղումներից հայտնաբերված են զգալի քանակությամբ կղմինդրներ, որոնք պատկանել են եկեղեցու և, գուցե, դամբարանի ծածկին: Դրանք երկու տիպի են՝ հարթ և կիսաբոլոր: Պատրաստված են խոշորահատիկ կարմրավուն կավից,




ունեն ցածր եզրեր, իսկ մի մասն ակոսներով է՝ ջրահոսքի համար, անգործած: Կիսաբոլոր կղմինդրները վերին մասում ունեն ուռուցիկ թմբիկ, նեղացող լեզվակ և նույնպես անգործապատ են:

Փողրակների և կղմինդրների արտաքին զննումներից ենթադրում ենք, որ դրանք պատրաստվել են միևնույն հումքից, հավանաբար տեղում և պատկանում են նույն ժամանակաշրջանին: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ պեղումների ժամանակ հայտնաբերվել է փողրակների և կղմինդրների խտտան:


Հայաստանի վաղ միջնադարյան արվեստի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն Աղցքի պեղումներից հայտնաբերված պատկերազարդ աղյուսները: Դրանք պատրաստված են խոշորահատիկ կարմիր կավից և կրում են կրաշաղախի թույլ հետքեր: Չափերն են. հաստությունը՝ 4,5 սմ, լայնությունը՝ 23 սմ, երկարությունը չի վերականգնվում: Բեկորների առատությունը և միևնույն պատկերների կրկնությունը տարբեր աղյուսների վրա թույլ է տալիս ենթադրել, որ դրանք պատրաստվել են կաղապարներով և ունեցել են տիպորինակ չափսեր: Աղյուսները հավանաբար օգտագործվել են սենյակների ներքին հարդարանքի համար և կազմել են պատկերազարդ ծոփորներ: Թերևս այս աղյուսներով հարդարված է եղել Արշակունյաց դամբարանի հարավային մասում կառուցված պալատական շինության հանդիսասենյակներից մեկը: Աղյուսներն իրենց վրա կրում են տարբեր կենդանիների ու թռչունների հարթաքանդակներ, բուսական զարդեր:

Քննենք այդ պատկերներն առանձին-առանձին.





Աղյուսակ 3



Աղյուսակ 4. Արծվաքանդակի վերակազմություն տարբեր բեկորներից (հեղ.՝ Ա. Քալանթարյան)

ա) Արծիվ՝ աջ դիրքով, մի թևը բարձրացրած: Կտուցը սրածայր է, աչքն՝ արտահայտիչ, ցայտուն ընդգծված են հզոր ոտքերի մագիլները: Թևերը տարածված են հորիզոնական և ուղղահայաց՝ լայն գծերով: Գլխի վրա նկատվում է եռատամ զարդ (փետուրներ): Վզին ծածանվում է երկճյուղ լայն ժապավեն: Արծվի առջև պատկերված է հաստ բնով, սրածայր, լայն տերևներով ծառ, որի արմատները տրված են ալիքաձև հորիզոնական հաստ գծերով (աղ. III, 3, աղ. IV):

Նման պատկերով աղյուսների բեկորները յոթն են, որոնց վրա պահպանվել են նույն թեմայի առանձին մանրամասները:

բ) Խոյ՝ աջ դիրքով, վարգի պահին: Ռեալիստական ոճով պատկերված են պարարտ իրանը, հաստ վիզը: Ցայտուն են աչքը և եղջյուրները, ոտքերը կարճ են, կճղակները՝ շեշտված: Ետևի մասում երևում է մի գիշատիչ (արջ կամ առյուծ) կենդանու գլուխը և մագիլավոր թաթը: Հավանաբար հետապնդման տեսարան է: Մանրամասները նկատելի են երեք բեկորի վրա (աղ. III, 4):

գ) Արջ՝ աջ դիրքով: Պահպանվել են իրանի ետնամասը, կարճ պոչը և հետևի ոտքերը՝ մագիլներով: Մանրամասները նկատելի են երկու բեկորի վրա (աղ. III, 6):

դ) Երկսապատ ուղտ՝ վարգի պահին: Պահ-



պանվել են իրանի հետևի մասը, զույգ ոտքի ազդրերը և վեր ցցված պոչը: Մանրամասները երկու բեկորի վրա են (աղ. III, 2):

ե) Եղնիկ՝ աջ դիրքով: Պահպանվել է եղնիկի գլուխը՝ փոքր ականջով, արտահայտիչ աչքով և առջևի ոտքը: Եղնիկից ծախս պատկերված է փոքրիկ թուփ: Մանրամասները զույգ բեկորի վրա (աղ. III, 1):

զ) Եղջերու՝ աջ դիրքով, ճյուղավորված հըսկա եղջյուրներով: Աղյուսի ծախս եզրին պատկերվել են կենդանու գլուխը և մարմնի առջևի մասը (աղ. III, 5): Հայտնաբերվել է երկու բեկոր:

է) Կատվազգի գիշատիչ (հովազ)՝ շարժման պահին: Պահպանվել են իրանը, հետևի ոտքերը՝ սուր մագիլներով և պոչը, մեկ բեկոր:

ը) Վազող կճղակավոր կենդանի: Պահպանվել են առջևի մեկ և հետևի զույգ ոտքերն աղյուսի աջ՝ ստորին մասում:

թ) Քարայծի եղջյուրների պատկերներ՝ երեք բեկորի վրա:

ժ) Կճղակավոր կենդանիների ոտքերի պատկերներ՝ երեք բեկորի վրա:

Հայտնաբերված պատկերազարդ աղյուսների բեկորների ընդհանուր քանակը 29-ն է:

Այդպիսի պատկերազարդ աղյուսներ միջնադարյան Հայաստանի հուշարձանների պեղումների ժամանակ առաջին անգամ են հանդիպում: Նախորդ տարիներից հայտնի են պատկերազարդ սալիկներ Փաշա-գեղից և Կողբ գյուղի 7-րդ դ. եկեղեցուց (նյութերը կորած են): Պատկերազարդությամբ և պատրաստման եղանակով դրանք տարբերվում են միմյանցից: Աղցքի պատկերներն ավելի իրական են, մի երևույթ, որը բնորոշ է նաև վաղ սասանյան քանդակին: Հարկ է նշել, որ պատկերազարդ ա-

ղյուսներ հայտնի են նաև սասանյան Իրանի տարածքից: Նույն ժամանակաշրջանով թվագրվող և նման մոտիվներով աղյուսներ, թվով երկու տասնյակ, գտնվել են Տիզբոնում, որոնք ցուցադրվում էին Բաղդադի թանգարանի վաղ սասանյան նյութերի դահլիճում: Ըստ երևույթին, Աղցքի պատկերազարդ աշխատանքները հայ-իրանական մշակույթների փոխազդեցությամբ ձևավորված արվեստի դրսևորման տիպիկ օրինակներից են:

9-13-րդ դդ. Աղցքը, հավանաբար, Պահլավունիների, ապա Ջաքարյանների տիրույթների մեջ մտնող բնակավայրերից է եղել: Գյուղի տարածքում գտնված նյութերը (խաչքարեր, արձանագրության բեկորներ՝ եկեղեցու շրջակայքում, 13-րդ դ. վրացական դրամ, բազմաթիվ կարասներ և այլն) հնարավորություն են ընձեռում որոշակի գաղափար կազմել 9-13-րդ դդ. Աղցքի մասին: Այդ ժամանակ ձեռնարկված պաշտպանական մեծ միջոցառումների մասին են խոսում Ամբերդի ձորում և գյուղի հյուսիսային կողմում սփռված բազմաթիվ քարայր-բնակավայրերը՝ երբեմն երկհարկանի, բազալտե փոքրիկ դռներով, տնտեսական կառույցներով: Դեռևս 1971 թ. հետախուզական պեղումների ժամանակ քարայրներից մեկում հայտնաբերվեց 9-րդ դ. ջնարակած մի խեցու բեկորներ: Ակներևաբար այս քարայրների շրջան Արագածոտն գավառում ստեղծվել է 9-րդ դ. վերջում՝ արաբական խժոժություններից պաշտպանվելու համար, և հավանաբար, շարունակվել է կիրառվել 11-րդ դ. սելջուկների արշավանքների ժամանակ:

Աղցքի բազիլիկ եկեղեցու և Արշակունյաց թագավորների դամբարանի բարեկարգման աշխատանքների ժամանակ կատարված պեղումները բա-

վականին նյութեր տվեցին 9-13-րդ դդ. արհեստագործական արտադրանքի, առաջին հերթին՝ խեցեղենի վերաբերյալ: Այդ նյութերն իրենց ձևով և պատրաստման եղանակով բազմազան են:

Հայտնաբերվել են փորագիր կարասների շրթնամասեր, որոնց մեջ առանձնանում են Հարավային Կովկասի հուշարձաններում լայն տարածում ունեցող գոտեզարդ կարասների բեկորները՝ սեպածև և նշածև փորագիր զարդերով (աղ. II, 6): Նման կարասներ Հայաստանում հանդիպում են սկսած 11-րդ դ. ընդհուպ 14-15-րդ դդ.: Նույնատիպ կարասներ դրված են եղել Եղվարդի Սբ. Աստվածածին եկեղեցու (1321 թ.) գմբեթի շաղախի մեջ: Աղցքի խեցեղեն արտադրանքն ընդհանրապես շատ ընդհանուր գծեր ունի Ամբերդի նյութերի հետ (Ս. Վ. Պարությունյան, 1978, էջ 96-103):

Կճուճները պատրաստված են բաց կարմրավուն կավից, գերազանցապես մրապատ են, ունեն տափակ, քիչ դուրս հակված պսակ և կտրվածքում ձվածև ներձկված ակոսով կանթեր: Այդպիսի կանթերով կճուճներ մեծ քանակությամբ հանդիպում են Պայաստանի 12-13-րդ դդ. բնակավայրերում: Ջարդանախշը զանազան է: Առավել տարածված են հորիզոնական, սանրածև, փորագիր հատիկներով գոտիները (աղ. I/1, 2):

Սափորների բեկորները փոքրաքանակ են: Դրանք հիմնականում դեղնավուն և կարմրավուն, մանրահատիկ կավից, լավ թրծած վզիկների բեկորներ են՝ կանթերի հետքերով և ակոսավոր զարդերով: Սափորների մի մասի պսակը ներս է ճկված, որն ինչ-որ չափով հիշեցնում է Դվինի «թրծման հնոցների» շրջակայքից գտնված խոտանված իրերը (աղ. I, 4):

Թասերն ունեն օղակածև նստուկ, կլոր, փոքր-ինչ դուրս հակված պսակ: Պսակը և ներսի ողջ տարածությունը կարմիր փայլեցրած է, որը հիշեցնում է Գառնիի զարգացած միջնադարի շերտերից գտնված հանրահայտ թասերը: Հանդիպում են նաև ձեռածեփ պարզունակ քրեղանների բեկորներ (աղ. I, 6, 7, II, 4, 5, 7):

Գտնված նյութերում մեծ թիվ են կազմում խփերը (աղ. II, 2, 3, 8): Դրանք իրենց ձևով և կիրառմամբ տարբեր են՝ թոնիրների մեծ, խոշորահատիկ, վատ թրծած խփեր, խոհանոցային անոթների մատնեքազարդ խփեր՝ նուրբ, ճոխ հարդարապնքով: Բռնակները նույնպես տարբեր են՝ սրածայր և ներձկված, հորիզոնական՝ կիսակլոր և ունկածև: Սկավառակածև խփերի պսակը կամ ետ է ծավված, կամ ուղիղ է: Դա կախված է, իհարկե, անոթների բերանի ձևից: Սրածայր, զարդարուն բռնակով սկավառակածև խփերի մի մասը կենտրոնում ունի կոնածև թմբիկ, որի վրա ամրացված է բռնակը: Խփերից մեկի թմբիկների վրա արված են անցքեր, որոնք, ըստ երևույթին, թողնված են գոլորշու համար:

Աղցքի բռնակները տարածված են Հայաստանի 10-13-րդ դդ. հուշարձաններում:

Ջնարակած խեցեղենը ներկայացված է միագույն (կանաչ կամ դեղնավուն) և բազմագույն թասերի ու պնակների բեկորներով՝ փորագիր երկրաչափական և բուսական զարդերով, ցածր, օղակածև նստուկով: Հանդիպում են նաև փոքր աղամանների և ձիթաճրագների բեկորներ: Ջնարակած խեցեղենը մոտիկ աղերս ունի Ամբերդի նույնատիպ խեցեղենի հետ և թվագրվում է 10-13 դդ.:

Հայտնաբերվել են նաև մանրահատիկ, կարմրավուն կավից կերտված ծխամորճներ, որոնք



բնորոշ են Հայաստանի 13-14-րդ դդ. մշակույթին (Ի. Ղարիբյան, 1999, էջ 88-108):

Արշակունյաց դամբարանի հարավային մասում բացվել են թաղումներ՝ տապանաքարերով: Դրանք վերաբերում են 12-13-րդ դդ.: Թաղումներից գտնված նյութերը հիմնականում զարդեր են՝ տարբեր տեսակի և բազմերանգ ապակե ուլունքներ, ապարանջաններ: Բավականին շատ են մանկական թաղումից հայտնաբերված ուլունքները: Գտնվել են նաև երկու ապարանջան, գնդաձև ծայրով պղնձե և արծաթե ականջօղեր:

17-18-րդ դդ. Աղցքի դամբարանի շրջապատը լքված է եղել: Տեղում հավաստվել են 19-րդ դ. արտադրական ինչ-որ շինության հետքեր, որը, հավանաբար, դարբնոց է եղել: Գտնված նյութերը հիմնականում հասարակ խեցեղենի առանձին բեկորներ են: Այս ժամանակաշրջանի ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում կապտավուն մոնուշներով:

1. Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV - VIII դդ., Երևան, 1949:

2. Н. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961.

3. Թ. Թորանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942,

Ա. Ասիինյան, Հայաստանի ճարտարապետությունը վաղ ֆեոդալիզմի շրջանում, 1946:

5. Ա. Հասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը, Լրագրեր հասարակական գիտությունների, 1975, N 5:

6. Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձաններ, Երևան, 1982:

7. Գ. Սիմոնյան, Աղցք, Երևան, 1999:

8. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:

9. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիանյանի, Երեվան, 1991, էջ 288-289:

10. Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок города Двина. Труды Государственного музея Армении. т. IV, Ереван, 1952.

11. Կ. Գ. Դաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:

12. Ա. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի 1971-73 թթ. պեղումները, Լրագրեր, 1975, N 7:

13. Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, Տեղեկագիր հաս. գիտ., 1963, N 12:

14. Ա. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի հասարակ խեցեղենը, ՊԲՀ, 1975, N 1:

15. Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը 4-8-րդ դդ., Երևան, 1970:

16. Отчеты Императорской археологической комиссии за 1892 г., Санкт-Петербург, 1894, стр. 86, рис. 49, նյութերը էջմիածնում են:

17. Ս. Վ. Հարությունյան, Ամբերդ, Երևան, 1978:

18. А. А. Калантарян К вопросу о способах изготовления керамики в средневековой Армении, Археологические памятники Грузии, 2, Тбилиси, 1974.

19. Ի. Ղարիբյան, Հայաստանում հայտնաբերված կավե ծխամորճերի բվագրման հարցի շուրջ, Բամբեր Երևանի համալսարանի, 1999, N 2:

\* Աղցքի հուշարձանում պեղումներ կատարվել են նաև 2000թ., սակայն նկատի ունենալով այդ պեղումների արդյունքների ստվարածավալ բնույթը, այն առանձին հողվածով կներկայացվի «Հուշարձան» Դ տարբերում:

\*\* Այդ մասին մեզ հայտնել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Ս. Չարդարյանը:

**Hakob Simonyan**  
**Aram Kalantaryan**

## Archaeological Value of Aghtsek (Result of the 1974-1975 excavations)

### (Summary)

The Middle-age royal cemetery of the Armenian Arshakuni kings in Aghtsek is one of those unique monuments, whose date of construction is well known to us; it was built in the mid IVc AD.

According to the Armenian annalists, Moses Khorenatsi and Ghazar Parpetsi, the mausoleum of the Armenain Arshakuni kings was built in 364, as a result of the invasion of one of the mightiest Persian kings Shapur II into Armenia. The Persians proceeded to dig out the bones of the Armenian kings and intended to move them from the fortress Ani-Kamakh in the Highlands of Armenia to Persia. The head of the Armenian army Vassak Mamikonyan siezing back the royal relics, had the mausoleum built in the settlement of Aghtsek for the regal remains to be buried in it. A whole complex of religious and civic buildings formed around the gravetomb. It had a three-naved basilica, royal buildings, industrial complexes and a cemetery. Part of the half-ground mausoleum has remained up to now.

In 1974-1975 in order to conserve the church and royal bulgings the reseach center under the Ministry of State Construction, Preservation and Restoration of the Historical- Cultural Heritage, headed by H. Simonyan made excavations on the territory of the monument. Thanks to the excavations, dwelling and economical buildings were unearthed, as well as mausoleums surrounded by stylobates, cross-stones (khachkars), grave stones, wall stones with inscriptions, medieaval graves. Fragments of plain and painted pottery of the IV-VIIIcc, IX-XIVcc, XV-XVIIcc, smoking pipes, pieces of building ceramics - water pipes, tiles; multi-coloured glass beads, bracelets, silver and copper ear-rings, iron items and coins of the advanced Middle Ages were found. Among all the findings, very eminent artifacts are the relief images of lions, eagles, bears, deer, rams, snow leopards and camels on dozens burnt bricks, which are unique examples of the Armenian Medieaval Art.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 1990-2004 թթ. ՊԵՆԱԼՏ  
 ՀԱՆԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՂՁԱՆՆԵՐԻ ՑԱԿ

**ՊԱԿԵՏՆԵՐ, ԽԵՒԼԹ, ԷՄԵԼԹ**

1. Մուշավան-1, Երևան, Ջրվեժ, Օլորուվայ, 2003 թ., *Բ. Երիցյան*
2. Լուսակերտի քարայր, Կոտայքի մարզ, 1990-ական թթ., *Բ. Երիցյան*
3. Ծիծեռնակաբերդ-2 քարայր, Երևան, Հրազդանի կիրճ, 1990-ական թթ., *Բ. Գասպարյան*
4. Հատիս, Կոտայքի մարզ, 1990 թ., մուստիե, *Հր. Ղազարյան*
5. Քուչակ, կայան, Ապարանի ենթաշրջան, աշել, 1990 թ., *Գ. Արեշյան*
6. Մուլքի-4, Արագածոտնի մարզ, Քասախ գետի աջ ափին, ստորին պալեոլիթ, մուստիե, վերին պալեոլիթ, 2003 թ., *Բ. Գասպարյան, Բ. Շատենյեն*
7. Բմլո-2 քարայր-կացարան, Արագածոտնի մարզ, Քասախի կիրճ, մեզոլիթ-նեոլիթ, 2003 թ., *Բ. Գասպարյան, Բ. Շատենյեն*

8. Գեղամավան-1 քարայր, Արագածոտնի մարզ, Քասախի կիրճ, 2002-2004 թթ.
9. Որոտանի քարայրեր, Սյունիքի մարզ, 2002-2003 թթ. *Բ. Գասպարյան, Բ. Շատենյեն*
10. Ներքին Գողեծոր բնակավայր, Սյունիքի մարզ, Անգեղակոթ, էնեոլիթից կուր-արաքսյան մշակութիւն անցման շրջան, 2003-2004 թթ., *Պ. Ավետիսյան*
11. Մեծավան-1-3, Պաղաղբյուր-1, քարայր-կացարան Կրուզլայա Շիշկա, Տաշիրի մարզ, 2003 թ., *Բ. Գասպարյան*
12. Առատաշենի բնակավայր, Արմավիրի մարզ, Քասախ գետի աջ ափին, նեոլիթ, էնեոլիթ, 1999-2004 թթ., *Ռ. Բաղայան*

**ԲՈՂՈՒ ԵՎ ՎԱՆ ԵՐԱԹԻ ԿԱՆՈՒՅԱՆ**

13. Ջրահովիտ, Մասիսի ենթաշրջան, Բ. ա. IV հազարամյակից մինչև Բ. հ. XVII դ., 1990 թ., *Է. Խանգա-*

դյան

14. Շենգավիթ, Երևան, վաղբրոնզի դար, 2000-2004 թթ., *Հ. Սիմոնյան*
15. Մեծամոր, Արմավիրի մարզ, նեոլիթ-էնեոլիթից մինչև Բ. հ. XVII դ., 1990-ական թթ., *Է. Խանգադյան*
16. Ապարան-III, Արագածոտնի մարզ, Ապարանի ջրամբարի արևմտյան ափ, Բ. ա. IV հազարամյակի վերջ, 2000 թ. *Ռ. Բաղայան*
17. Ագարակ, Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղեր, Բ. ա. III հազարամյակից մինչև Բ. հ. XVII-XVIII դդ., *Պ. Ավետիսյան*
18. Գոռոմ, Շիրակի մարզ, Բ. ա. IV հազարամյակի կեսերից մինչև Բ. հ. I հազարամյակի կեսեր, 1990-1997 թթ., *Ռ. Բաղայան, Ֆ. Կոլ*
19. Աղբամիթ, Աշտարակի ենթաշրջանի Ոսկեվազ գյուղ, Բ. ա VI հազարամյակից մինչև ուշ միջնադար, 1992-1995 թթ., *Հ. Սիմոնյան, Հ. Գաշ*
20. Արագած լեռան հյուսիսային լանջ, Արագածոտնի մարզ, հետախուզություն և մասնակի պեղումներ, 1998, 2000 թթ., *Ա. Սմիթ, Ռ. Բաղայան*
21. Ծաղկահովտի և Գեղարտոտի բնակավայրեր, Արագածոտնի մարզ, վաղ և ուշ բրոնզի դար, 2000-2003 թթ., *Ա. Սմիթ, Ռ. Բաղայան*
22. Ֆիլոլետովո, Լոռու մարզ, վաղ բրոնզի դար, 1999 թ. *Ա. Գևորգյան, Ա. Պալմիերի*
23. Լոռի Բերդի դամբարանադաշտ, Լոռու մարզ, Բ. ա. XXI-VI դդ., 1990-1993 և 1996-1997 թթ., *Ա. Դևրյան*
24. Վերին Նավեր դամբարանադաշտ, Աշտարակ, Արագածոտնի մարզ, միջին և ուշ բրոնզի դար, 1989-1990 թթ., *Հ. Սիմոնյան*
25. Ներքին Նավեր, Աշտարակ, Արագածոտնի մարզ,

- Բ. ա. XXIII-XX դդ., 2002-2004 թթ., *Հ. Սիմոնյան*
26. Քասախ գետի ձախ ափի դամբարանադաշտ, Օշական, Արագածոտնի մարզ, Բ. ա. III հազարամյակի վերջին քառորդ, 2001-2002 թթ., *Պ. Ավետիսյան*
27. Սիսիան, դամբարաններ, Սյունիքի մարզ, վաղ և միջին բրոնզի դար, 1998 թ., *Պ. Ավետիսյան*
28. Թալին, դամբարաններ, Արագածոտնի մարզ, վաղ և ուշ բրոնզի դար, վաղ երկաթի դար, 1998-1991 թթ., *Պ. Ավետիսյան, Ֆ. Մուրադյան*
29. Շամիրամի դամբարանադաշտ, Արագածոտնի մարզ, միջին և ուշ բրոնզի դար, 1990-1991 թթ., 2003 թ., *Գ. Արեշյան, Գ. Թումանյան*
30. Լճաշեն-2 դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, միջին և ուշ բրոնզի դար, 1988-1990 թթ., *Լ. Պետրոսյան*
31. Չկալովկա, դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, վաղ բրոնզի դար, 1998 թ., *Լ. Պետրոսյան*
32. Նորատուսի դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, Բ. ա. XX-XVI դդ., 1990-ական թթ., *Ա. Փիլիպոսյան*
33. «Մոթբի ծոր», դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, ուշ բրոնզի դար, 1990-ական թթ., *Ա. Փիլիպոսյան*
34. Ներքին Գետաշենի դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, ուշ բրոնզի դար, վաղ երկաթի դար, 1990-ական թթ., *Ա. Փիլիպոսյան*
35. Հացառատի դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, ուշ բրոնզի և վաղ երկաթի դար, 1990-ական թթ., *Ա. Փիլիպոսյան*
36. Քանազեղի դամբարանադաշտ, Գեղարքունիքի մարզ, Բ. ա. XV-XIV դդ., 1999-2002 թթ., *Ա. Փիլիպոսյան*



37. *Օշականի և Այգեշատի դամբարանադաշտ*, Քասախ գետի ձախ ափ, Արագածոտնի մարզ, Ք. ա. XII-VIII դդ., 1990 թ., *Լ. Բիլագով, Գ. Ավետիսյան*
38. *Լանջիկ*, Շիրակի մարզ, կիկլոպյան ամրոց և դամբարանադաշտ, վաղ բրոնզի դար, 1992 թ., *Լ. Պետրոսյան*
39. *Աղավնատուն*, Արմավիրի մարզ, դամբարանադաշտ, Ք. ա. XVIII-IX դդ., *Լ. Պետրոսյան*
40. *Նոր Խաչակապ*, Լոռու մարզ, բնակատեղի, դամբարաններ, Ք. ա. IV հազ. - I դ., 2004 թ., *Ն. Ենգիբաբյան*

**ՎԱՆԻ ԹԱՆԱՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

41. *Սևանի ավազանի հուշարձանների քարտեզագրում, հետախուզական պեղումներ Ամբերդ, Մթնածոր, Քոս ամրոցներում*, բրոնզի և վաղ երկաթի դար, ուրարտական, անտիկ, 1994-2004 թթ., *Ս. Գնայակյան, Ռ. Բիշին*
42. *Օշական*, Արագածոտնի մարզ, ամրոց և դամբարանադաշտ, միջին բրոնզի և վաղ երկաթի դար, ուրարտական և անտիկ ժամանակաշրջան, վաղ միջնադար, 2002 թ., *Ա. Քալանթարյան*
43. *Էրեբունի քաղաք*, Երևան, Վարդաշեն թաղամաս, ուրարտական և աքեմենյան դարաշրջան, 1998, 1999-2004 թթ., *Ֆ. Տեր-Մարտիրոսյան*
44. *Դովրի ամրոց*, Եղվարդի ենթաշրջան, վաղ բրոնզի դար, ուրարտական և անտիկ ժամանակաշրջան, 1990-1991 թթ., *Ս. Գնայակյան*
45. *Արամուսի ամրոց*, Կոտայքի մարզ, ուրարտական ժամանակաշրջան, 2004 թ., *Գ. Ավետիսյան*

**ԱՆԻ Կ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

46. *Արմավիր մայրաքաղաք*, Արմավիրի մարզ, ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջան, 1990-1992, 1996-1997, 1999 և 2002 թթ., *Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան*
47. *Արտաշատ մայրաքաղաք*, Արարատի մարզ, հելլենիստական, 1990-ական թթ., 2001-2004 թ., *ժ. Խաչատրյան*
48. *Գառնի ամրոց*, Կոտայքի մարզ, անտիկ, 2001-2004 թթ., *ժ. Խաչատրյան*
49. *Հողմիկ բնակավայր*, Ամասիա, Շիրակի մարզ, Ք. ա. II - Ք. ա. III դդ., 1987-1992 թթ., *Գ. Գևորգյան*
50. *Բենիամինի բնակավայր*, Շիրակի մարզ, Ք. ա. VI - Ք. ա. IV դդ., 1989-2004 թթ., *Ֆ. Տեր-Մարտիրոսյան*
51. *Կարծաղբյուր*, Գեղարքունիքի մարզ, հելլենիստական, 1990 թ., *Ի. Կարապետյան*
52. *Կարմրաքարի դամբարանադաշտ*, Շիրակի մարզ, ուշ անտիկ, 1992 թ., *Գ. Գևորգյան*
53. *Վարդաղի դամբարանադաշտ*, Գյումրի, անտիկ, 1990 թ., *Ս. Տեր-Մարգարյան*

**ՄՁԱՄ**

54. *Դվին մայրաքաղաք*, Արտաշատի մարզ, Ք. ա. III հազ.- Ք. ա. XIII դ., 1990-1993 թթ., *Ա. Քալանթարյան*
55. *Ծիծեռնակաբերդ*, Երևան, վաղ երկաթի դար, միջնադար, 1998 թ., *Ա. Փիլիպոսյան, Գ. Գևորգյան*
56. *Ուշիի Սբ. Սարգիս վանք*, Արագածոտնի մարզ, միջնադար, 1999-2001 թթ., *Ֆ. Բաբայան*
57. *Սբ. Կարապետ վանք*, Արարատի մարզ, միջնա-

- դար, 1995 թ., *Գ. Մելքոնյան, Ս. Շահինյան*
58. *Եղեգիս*, Վայոց ձորի մարզ, միջնադար, 1995 թ., *Գ. Մելքոնյան, Ս. Ստուռ*
59. *Հայկածոր*, Շիրակի մարզ, միջնադար, 2003 թ., *Լ. Եգանյան, Գ. Խաչատրյան*
60. *Աշոցք*, Շիրակի մարզ, միջնադար, 1991-1992 թթ., *Գ. Կարախանյան*
61. *Աբրոի*, Լոռու մարզ, միջնադար, 1992 թ., *Գ. Պետրոսյան*
62. *Աղիտու*, Սյունիքի մարզ, միջնադար, 1990 թ., *Գ. Պետրոսյան*
63. *Հառիճի վանք*, Շիրակի մարզ, միջնադար, 1990 թ., *Ֆ. Բաբայան*
64. *Դաշտադեմի ամրոց*, Թալին, Արագածոտնի մարզ, միջնադար, 1990 թ., *Ե. Ասատրյան*
65. *Թալինի դամբարան*, Արագածոտնի մարզ, միջնադար, 2002 թ., *Գ. Սարգսյան, Գ. Մելքոնյան*
66. *Բջնի ամրոց*, Կոտայքի մարզ, միջնադար, 2003-

- 2004 թթ., *Ի. Ղարիբյան, Գ. Գևորգյան*
67. *ԼՂԴ-ի և Արցախի ազատագրված տարածքների հուշարձանների ուսումնասիրում և քարտեզագրում*, 1990-2004 թթ., *Գ. Սիմոնյան*
68. *Ծիծեռնավանք*, ԼՂԴ Քաշարաղի շրջան, III-XIX դդ., 1997-2001 թթ., *Գ. Սիմոնյան*
69. *Աղցքի Արշակունյաց արքաների դամբարանի համալիր*, Արագածոտնի մարզ, IV-XVII դդ., 2000 թ., *Գ. Սիմոնյան*
70. *Վարդաբլուր*, Գեղարքունիքի մարզ, Մարտունու ենթաշրջան, զարգացած և ուշ միջնադար, 2000 թ., *Գ. Մելքոնյան*
71. *Վանքասար*, ԼՂԴ I-XIII դդ., 1994-1995 թթ., *Գ. Սիմոնյան\**

\* Պեղված հուշարձանների ցանկը տրամադրել է Արամ Քալանթարյանը, որը ներկայացվում է որոշ ճշգրտումներով և լրացումներով:

**LIST OF THE EXCAVATED ARCHAEOLOGICAL MONUMENTS IN REPUBLIC OF ARMENIA (1990 - 2004)**

**Paleolithic, Neolithic, Calcolithic periods**

1. Mushavan-1, Jrvezh, Olduvay, 2003, B. Yeritsyan
2. Lusakert Cave, 1990s, B. Yeritsyan
3. Hrazdan gorge, cave Tsitsernakaberd-2, 1990s, B. Gasparyan
4. Hatis, 1990, mustiye, Hr. Ghazaryan
5. Kuchak, Aparan region, Station, ashel, 1990, G. Areshyan
6. Mulki-4, Paleolithic site on the bank of the river Kassakh, Low Paleolith, mustiye, Upper Paleolith, 2003, B. Gasparyan, C. Shateyne
7. Kmlo-2 cave-dwelling, Kassakh gorge, Mezolith-Neolith, 2003, B. Gasparyan, C. Shateyne



8. Gueghamavan-1, cave, Kassakh gorge, 2002-2004
9. Caves on the river Vorotan, Syunik marz, 2002-2003, B. Gasparyan, C. Shateyne
10. Lower Godedzor, Syunik marz, Angeghakot settlement, from Chalcolithic to Kur-Araks cultural period, 2003-2004, P. Avetissyan
11. Metsavan-1-3, Paghaghbyur-1, cave dwelling Kruglaya Pechka, Tashir, 2003, B. Gasparyan
12. Aratashen settlement, on the right bank of the river Kassakh, Neolithic, Calcolithic periods, 1999-2004, R. Badalyan

### Bronze and Iron Ages

13. Jrahovit, Masis subregion, from IV millenium BC to XVII century AD, 1990, E. Khanzadyan
14. Shengavit, Yerevan, Early Bronze, 2000-2004, H. Simonyan
15. Metsamor, from Neolith-Calcolith to XVIII century AD, 1990s, E. Khanzadyan
16. Aparan-III, Aragatsotn marz, the Western bank of the Aparan reservoir, the end of the III millenium BC, 2000 R. Badalyan
17. Agarak, the villages of Agarak and Voskehat in Aragatsotn marz, from the III millenium BC to the XVII-XVIII cc AD, P. Avetissyan
18. Horom, Shirak, from mid IV millenium BC to mid I millenium AD, 1990-1997, R. Badalyan, F. Kohl
19. Aghtamir, village Voskevaz in Ashtarak subregion, from the IV millenium BC to Late Middle Ages, 1994-1996, H. Simonyan, H. Ghash
20. The North side of mount Aragats, exploration and partial excavations, Adam Smith, R. Badalyan
21. Settlements in Tsakhkavovit and Gegharot, Early Bronze age, A. Smith, R. Badalyan
22. Fioletovo, Lori marz, Early Bronze age, 1999, A. Gevorgyan, A. Palmieri
23. Cemetery in Lori Berd, II millenium, VII-VI cc BC, 1990-1993 and 1996-1997, S. Devejyan
24. Verin Naver cemetery in Ashtarak, Aragatsotn marz, Middle and Late Bronze ages, 1989-1990, H. Simonyan
25. Nerquin Naver, Ashtarak, XXII-XXcc BC, 2004, H. Simonyan
26. Cemetery in Oshakan on the left bank of the river Kassakh, Aragatsotn marz, the last quarter of the III millenium, 2001-2002, P. Avetissyan
27. Graves of Early and Middle Bronze ages near the city of Sissian, 1998, P. Avetissyan
28. Talin, Graves of Early and Bronze Ages, Early Iron Age, 1998-1991, P. Avetissyan, F. Mouradyan
29. Cemetery in Shamiram, Aragatsotn marz, Middle and Late Bronze Ages, 1990-1991, 2003, G. Areshyan, G. Tumanyan

30. Lchashen-2 cemetery, Middle and Bronze ages, 1988-1990, L. Petrossyan
31. Chkalovka, cemetery, Sevan bassin, Early Bronze age, 1998, L. Petrossyan
32. Cemetery in Noraduz, Sevan bassin, XX-XIcc BC, 1990, A. Pilipossyan
33. Kamo (now Gavar), cemetery "Mirtbi Dzor", Late Bronze Age, 1990s, A. Pilipossyan
34. Cemetery in Nerkin Getashen, Sevan Bassin, Late Bronze, Early Iron Ages, 1990s A. Pilipossyan
35. Cemetery in Hatsarat, Sevan Bassin, Late Bronze, Early Iron Ages, 1990s A. Pilipossyan
36. Cemetery in Kanadegh, Sevan Bassin, XV-XIVcc BC, 1999-2002, A. Pilipossyan
37. Cemetery in Oshakan and Aygeshat, on the left bank of the river Kassakh, XII-VIIIcc, BC, 1990, L. Hiyagov, H. Avetissyan
38. Lanjik, Shirak marz, Cyclopic Fortress and cemetery, Early Bronze age, 1992, L. Petrossyan
39. Aghavnatun, Armavir marz, cemetery, XVIII-IXcc BC, L. Petrossyan
40. Nor Khachakap, Lori marz, settlement, cemetery, IV-I milleniums BC, 2004, N. Yenguibaryan

### The Period of Van Kingdom

41. Sevan Bassin, mapping of the monuments, research excavations in the fortress of Albert, Mtnadzor, Kra, Bronze, Iron, Urartian, Antique, 1994-2004, S. Hmayakyan, R. Bishione
42. Dovri, fortress, Yeghvard region, Urartian and ancient periods, 1990s, S. Hmayakyan
43. Fortress Aramus, Kotayk marz, Urartian period, 1990s, 2004, M. Yessayan, H. Avetissyan
44. City of Erebuni, Vardashen Block in Yerevan, Urartian, Akkemenid periods, 1998, 1999-2004, F. Ter-Martirosyan
45. Oshakan, Fortress and Cemetery, Middle Bronze and Early Iron ages, Urartian, Ancient, Early Middle ages, 2002, A. Kalantaryan

### The Antient Period

46. Capital city of Armavir, Armavir marz, Urartian and early Armenian periods, 1990-1992, 1996-1997, 1999 and 2002, G. Tiratsyan, I. Karapetyan
47. Capital city of Artashat, Ararat marz, Hellenistic period, 1990s, 2001-2004, Zh. Khachatryan
48. Garni Fortress, Kotayk marz, Antique period, 2001-2004, Zh. Khachatryan
49. Settlement Hoghmik, Amassia, IIc BC – IIIc AD, 1987-1992, H. Hakobyan
50. Settlement Benyamin, Shirak marz, VIc BC – VIc AD, 1989-2004, F. Ter-Martirosyan
51. Khachaghbyur, Gegharkunik marz, Hellenistic period, 1990, I. Karapetyan



- 52. Semetary in Karmrakar, Shirak marz, Late Antic period, 1992, H. Hakobyan
- 53. Semetary in Vardabagh, Gyumri, Antic period, 1990, S. Ter-Margaryan

**The Middle Ages**

- 54. Capital city of Dvin, Artashat region, III millenium BC – XIIIc AD, 1990-1993, A. Kalantaryan
- 55. Tsitsernakaberd, Yerevan, Early Iron and Middle ages, 1998, A. Piliposyan
- 56. Surb (St.)Vank in Ushi, Aragatsotn marz, Middle ages, 1999-2001, F. Babayan
- 57. Karapet Vank, Ararat marz, Middle ages, 1995, H. Melikyan, S. Shahinyan
- 58. Yeghegis, Vayots Dzor marz, Middle ages, 1995, H. Melkonyan, M. Stone
- 59. Haykadzor, Shirak marz, Middle ages, 2003, L. Yeganyan, H. Khachatryan
- 60. Ashotsk, Shirak marz, Middle ages, 1991-1992, G. Karakhanyan
- 61. Akori, Lori marz, Middle ages, 1992, H. Petrossyan
- 62. Aghitu, Sissian region, Middle ages, 1990, H. Petrossyan
- 63. Harich Vank, Shirak marz, Middle ages, 1990, F. Babayan
- 64. Fortress Dashtadem, Talin, Aragatsotn marz, Middle ages, 1990, Ye. Assatryan
- 65. Cemetery in Tallin, Tallin Vank, Aragatsotn marz, Middle ages, 2002, G. Sargissyan, H. Melkonyan
- 66. Arshakuni Royal-Family memorial complex, Ashotsk, Aghtsek, Aragatsotn marz, Early Middle ages, 2000, H. Simonyan
- 67. Study and Mapping of the liberated territories in NKR and Atsakh region, 1990-2004, H. Simonyan
- 68. Tsitsernavank, NKR, Kashatagh region, Middle ages, 1997-2001, H. Simonyan
- 69. Dadivank, NKR, Karvadjar region, Advanced Middle ages, 1996, H. Simonyan
- 70. Vankasar, Artsakh, Aghdam region, I-XIIIcc, 1994-1995, H. Simonyan
- 71. Vardablour, Gegharkunik marz, Martuni subregion, Advanced and Late Middle ages, 2000, H. Simonyan

**ՆՈՐԱՅԱՅՑ ԱՐԺԵՔՆԵՐ**

**ՀԱԿՈՐ ՍԻՍՈՆՅԱՆ  
ՀՈՎԿԱՆՆԵՍ ՍԱՆԱՍՅԱՆ**

**ՎԱՆԲԱՍԱՐԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ**

Պատմամշակութային ժառանգության ԳՀ կենտրոնի (նախկինում՝ Հայկական հուշարձանների համահավաքի խմբագրության) արշավախումբը (ղեկ.՝ Հակոբ Սիմոնյան) 1994 թ. ամառային և 1995 թ. ծմբռային արշավների ժամանակ շարունակեց ուսումնասիրել Մեծ Հայքի Արցախ աշխարհի ազատագրված տարածքների պատմամշակութային արժեքները: Հետազոտվեցին Միլ-Ղարաբաղյան հարթավայրի վաղ երկրագործական շրջանի մի շարք բլուր-բնակավայրեր (Գեոյ թեփեն, Կասում թեփեն, Շեքերջիկ թեփեն և այլն), բրոնզի և վաղ երկաթի դարի դամբանաբլուրներ, անտրոպոմորֆ քարակերտ արձաններ, խաչքարեր և այլն:

Հետազոտված հուշարձաններից բացառիկ է Վանքասարի հուշարձանախումբը, որը խմբավորված է համանուն լեռան վրա և նրա ստորոտում: Հուշահամալիրը բաղկացած է Վանքասարի արևելյան ստորոտում, Արքայի աղբյուրի (Շահ բուլաղ) շրջակայքում տարածվող հելլենիստական քաղաքատեղիից և քարահողային դամբանաբլուրներից, աղբյուրի հյուսիսարևելյան մասում գտնվող միջնադարյան ամրոցից (նկ. 1) և աղբյուր-հուշարձանից (նկ. 2), Վանքասար լեռան հինգ գագաթներից ամենաբարձրի վրա Վաչագան Բարեպաշտի կառուցած եկեղեցուց (V-VI դդ.), հյուսիսային կողմի ուղղաձիգ կտրված ժայռի մեջ կերտած վաղնջական քրիստոնեա-





Նկ. 1. Միջնադարյան ամրոցը




Նկ. 2. Աղբյուր հուշարձանը

կան պաշտամունքային համալիրից և ժայռի ստորոտի ուշ հելլենիստական-վաղ միջնադարյան բնակավայրից:

Հայտնի է, որ հայոց աշխարհակալ Տիգրան Բ արքան (թ. ա. 95-55 թթ.) իր անվամբ կառուցել է չորս քաղաք՝ Աղձնիքում, Արցախում, Գողթն գավառում և Ուտիքում: Հայկական մատենագիր աղբյուրներում հիշատակված Արցախի Տիգրանակերտն, ամենայն հավանականությամբ, կառուցվել է թ.ա. 90-ական թվականներին (Շ. Մկրտչյան, 1975, էջ 151; Ս. Մկրտչյան, 1988, շ. 64): VII դ. հայ պատմագիր Սեբեոսն իր երկում մանրամասն նկարագրում է Թրիստոսի խաչավայտի ազատագրման համար Բյուզանդիայի Հերակլ կայսեր արշավանքը դեպի Տիգրան: Ըստ նրա՝ Հայաստանով անցնող բյուզանդական բանակը, Փայտակարան չհասած, Արքայի աղբյուրի մերձակայքում մարտի է բռնվում պարսիկների հետ: Այստեղ պատմիչը հիշատակում է Տիգրանակերտ անվամբ երկու քաղաքատիպ ավան (Սեբեոս, 1912, էջ 148, 288): XIX դ. տարածքն ուսումնասիրած Զալալյանցը Գյավուր դալա-Տիգրանակերտը հիշատակում է որպես մեծ քաղաքատեղի, ուր պահպանվել էին տների, շուկաների, բաղնիքների և այլ շինությունների ավերակներ: Ըստ նրա հաղորդման՝ մերձակայքում ապրող հայերն այս տարածքն անվանել են Թգրանակերտ, իսկ թաթար-ազերիները՝ Թառնակերտ (Ս. Զալալյանց, 1858, էջ 344-345): Այս Տիգրա-

նքը դեպի Տիգրան: Ըստ նրա՝ Հայաստանով անցնող բյուզանդական բանակը, Փայտակարան չհասած, Արքայի աղբյուրի մերձակայքում մարտի է բռնվում պարսիկների հետ: Այստեղ պատմիչը հիշատակում է Տիգրանակերտ անվամբ երկու քաղաքատիպ ավան (Սեբեոս, 1912, էջ 148, 288): XIX դ. տարածքն ուսումնասիրած Զալալյանցը Գյավուր դալա-Տիգրանակերտը հիշատակում է որպես մեծ քաղաքատեղի, ուր պահպանվել էին տների, շուկաների, բաղնիքների և այլ շինությունների ավերակներ: Ըստ նրա հաղորդման՝ մերձակայքում ապրող հայերն այս տարածքն անվանել են Թգրանակերտ, իսկ թաթար-ազերիները՝ Թառնակերտ (Ս. Զալալյանց, 1858, էջ 344-345): Այս Տիգրա-



ՎԱՆՔԱՍԱՐԻ ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ  
1. ԵԿԵՂԵՑԻ, 2. ԶԱՐԴՉԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ  
(ՀԱՏԱԿԱԳԻՑ)




նակերտի ավերակների մասին հիշատակում է նաև Մ. Բարխուտարյանը (*Մ. Բարխուտարյանը, 1895, էջ 28*): Մեր ուսումնասիրությունների ժամանակ քաղաքատեղիի տարածքը, որն, ըստ նախնական դիտարկումների, զբաղեցնում է մի քանի տասնյակ հա, ամբողջովին ավերված է հողաշինական աշխատանքների հետևանքով և կառույցների վերգետնյա նշաններ այժմ չեն նշմարվում: Սակայն լեռան արևելյան լանջերին և դրանց դիմացի հարթավայրում հաստատագրել ենք հելլենիստական (այդ թվում՝ գունազարդ) և միջնադարյան խեցեղենի բեկորներ:

Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ VIII դ., Պարտավ քաղաքում ամենայն հայոց կաթողիկոս Եղիայի գումարած եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Պետրոստը՝ Տկրակերտի վանքի քահանան (*Մ. Կաղանկատուացի, էջ 151*): Սոֆուլու գյուղում հայտնաբերված արձանագիր մի տապանաքար վկայում է, որ Գարդմանի Սևադա իշխանը մասնակցել է Տիգրանակերտի ճակատամարտին (*Մ. Մկրտչյան, 1988, շ. 64*): X դարում Տիգրանակերտն այլևս ավերված էր (*Հ. Խաչատրյան, 1965, Մ. Մկրտչյան, 1988, շ. 64*): Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ այստեղի Արևելյան Տիգրանակերտն IX դ. եղել է Աղվանից աշխաի տիրակալ Համամ Արևելցու իշխանանիստ կենտրոնը (*Մ. Բարխուդարյան, 1964, էջ 64*): Շահեն Մկրտչյանը, վկայակոչելով դարաբաղցիների՝ տարածքը Տկրակերտ կոչելու փաստը, այստեղ է տեղադրում Արևելյան Տիգրանակերտը, որը համարում է Արցախի հնագույն քաղաքը: Նրա

կարծիքով՝ Ռյուլերն և Խաչիկ վարդապետ Դադյանը Տիգրանակերտի շրջակայքում պեղել են զարգացած բրոնզի դարի դամբարաններ: Այստեղ են հայտնաբերվել այժմ Ստեփանակերտի թանգարանում պահվող Տիգրան Մեծի արձաթյա դրամը, երկաթե նետասլաքներ և հելլենիստական կավանոթներ (*Շ. Մկրտչյան, 1972, էջ 36; Մ. Մկրտչյան, 1988, շ. 64*):

Բաբկեն Հարությունյանի կարծիքով Երվանդունիների հարստության արքաները, որպես իրենց ձմեռանոց, ընտրել են այս ջրառատ վայրը, որն, ի պատիվ արքայի, կոչվել է Արքայակն: «Մեր կարծիքով՝ Տիգրան Երվանդյանը հենց այս ձմեռանոց վայրում է կառուցել իր անունը կրող ավանը, որտեղ և բնակեցրել է իր քրոջը» (*Բ. Հարությունյան, 1998, էջ 11*): Այս դիտարկումով Բաբկեն Հարությունյանն Արևելյան Տիգրանակերտի կառուցման թվականը ետ է տանում առնվազն V դար, և, փաստորեն, վերագրում է ոչ թե Տիգրան Մեծին, այլ մարտի հզոր արքա Աժդահակին հաղթող Տիգրան Երվանդյանին: Մենք նույապես կիսում ենք Արևելյան Տիգրանակերտն այս մասում գտնվելու կարծիքը և դա հիմնավորելու համար բերում հետևյալ փաստարկները.

1. Արքայի աղբյուրի մերձակայքում կա հելլենիստական շրջանի քաղաքատեղի, որն իր զբաղեցրած տարածքով այս տարածաշրջանի ամենամեծ բնակավայրերից մեկն է եղել:
2. Բնակավայրի հարավ-արևմտյան մասում տարածվում են մեծ չափսերի քարահողային դամբարանաբլուրներ, որոնք իրենց կառուցվածքով կտրուկ տարբերվում են ավելի վաղ



շրջանի հսկա դամբարանաբլուրներից և, թերևս, պատկանել են հելլենիստական քաղաքի բնակչության վերնախավին:

3. Արքայի աղբյուր (Շահ բուլաղ) կոչվող, շրջակայքը կենդանացնող հորդ և սառնորակ աղբյուրի առկայությունը, որն իր անունն ամենայն հավանականությամբ ստացել է թագակիր մեկի գործունեության հետևանքով: Այս աղբյուրի ջուրն այնքան հորդառատ է, որ բավարարում էր Աղդամ քաղաքի պահանջները, հետևաբար՝ կարող էր բավարարել նաև հելլենիստական արքայանիստ քաղաքի կարիքները:

4. Մոտակայքում ապրող դարաբաղցիներն այս վայրը թգրանակերտ են կոչում, որն,

ամենայն հավանականությամբ, Տիգրանակերտ անվան փոքր-ինչ հնչյունափոխված տարբերակն է, որը սերնդե սերունդ բերանացի փոխանցվելով հասել է մեզ:

Վերջին երկու փաստարկները վկայակոչել են մեզնից առաջ տարածքը հետազոտած գրեթե բոլոր ուսումնասիրողները:

ԱՄՐՈՑ-ՄԻՋՆԱԲԵՐԴԸ գտնվում է Արքայի աղբյուրից փոքր-ինչ հարավ-արևելք: Գրավոր աղբյուրները վկայում են, որ 18-րդ դ. երկրորդ կեսին Փանահ խանը վերականգնում է հին ամրոցը և այն դարձնում իր իշխանանիստ կենտրոնը: Սակայն կարճ ժամանակ անց նա տեղափոխվում է Շուշի: Տիգրանակերտի ամրոցը լքվում է և հետզհետե ավերվում



(Մ. Мкртчян, 1988, с. 63): 1980-ականներին ամրոցը վերականգնում են ազերիները:

ԱՂԲՅՈՒՐ ՀՈՒՇԱՐՉԱՆԸ գտնվում է նախկին Շահբուլաղ գյուղի հարավային մասում, Աղդամ-Մարտակերտ մայրուղուց մոտ 100 մ արևմուտք: Կառուցված է տեղական դեղնավուն կրաքարից և ամրացված է կրաշաղախով: Դրա հյուսիս-արևելյան ճակատից մոտ 10 մ հյուսիս-արևելք կա ջրահավաքման ավազան: Հիմնական` հարավ-արևելյան ճակատը շարված է սրբատաշ, իսկ մնացած մակերեսները` ձեղքված քարերով, որոնց բացվածքները և անկյունները եզերվում են կիսասրբատաշ քարերի խառը շարվածքով: Հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ձգվող աղբյուրն ունի ուղղանկյուն հորինվածք և բաղկացած է երկու մասից. արտաքին` կամարակապ սրահ և ներքին` քառանկյուն սենյակ, որի մեջ էլ, հավա-

նաբար, բխել է ջուրը: Աղբյուրը ետևի պատով հենված է ժայռին, որի առանձին ելքերը սենյակի հատակից բարձրանում են մոտ 50 սմ: Ուղղանկյուն հատակագծով արտաքին սրահի հարավ-արևելյան ճակատն ունի երեք կամարածև բացվածք, որոնց միջև կանգնեցված են պարզ խարիսխներով և խոյակներով հարդարված երկու սյուն: Սրահը ծածկված է գլանաձև, բարձր թաղով, որի վրա երկթեք տանիք է: Ծածկի ներքին մակերեսը ծածկված է կիսաբուլոր, միմյանց խաչվող բարձր թաղերով, որոնց կենտրոնում քառակուսի երդիկ է: Ժամանակին պատերը և թաղը պատված են եղել կրասվաղով: Ճակատի վրա եղել են հայատառ արձանագրություններ, որոնք միտումնավոր տաշվել- եղծվել են աղբեջանցիների տիրապետության օրոք:

Աղբյուրի կառուցման ժամանակը դժվար է ճշտել: Այն հավանաբար հիմնվել է միջ-

նադարում, ապա բազմիցս վերանորոգվել: 1980-ական թվականներին ազերիները հիմնովին վերակառուցել են և նոր քարերով շարել պատերի վերին շարքերը, քիվերը և ծածկասալերը: Արևմտյան ճակատի հյուսիսային կամարակապ բացվածքի առջև տեղադրվել են աստիճաններ, որոնք անհամատեղելի են և ամենևին չեն ներդաշնակում շինությանը: Կառույցն իր ծավալատարածական լուծումներով և արտաքին կամարակապ սրահով խիստ նման է հայկական միջնադարյան աղբյուրներին:

Ըստ Շահեն Մկրտչյանի` աղբյուրից հյուսիս-արևելք, Կանքասարի լանջին, գտնվել է հայկական միջնադարյան գերեզմանոց, որն ամբողջովին ավերված է ազերիների ձեռքով: Ամենայն հավանականությամբ, Գյավուր դալա-նի գրանակերտից է նաև Բագրատունյաց տոհ-


մից սերած «Համամ մեծ իշխան արևելից» արքայի եղբայրներից մեկի` հայերեն քառատող արձանագրությամբ տապանաքարը, որը ժամանակին տարվել է Բաքու` Աղրբեջանի պատմության պետական թանգարան (Ս. Բարխուդարյան, 1964, էջ 61-64):

ՎԱՆՔԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ վաղ միջնադարին բնորոշ կառույց է, որը գրականության մեջ վերագրվում է Կաչազան Բարեպաշտին (Յ. Վ. Янпольский, 1960, с. 246-250): Կառուցված է տեղական սպիտակավուն կրաքարի սրբատաշ մեծ սալերով և կրաշաղախով: Խաչաձև հատակագծով կենտրոնագըմբեթ եռախորան եկեղեցի է, որի հյուսիսային, հարավային և արևելյան խաչաթևերը հատակագծում ներսից ավարտվում են կիսաշրջան, իսկ արևմտյանը` ուղղանկյուն խորաններով: Վերջինս պսակված է գլանաձև թաղով, իսկ մյուս-

ՎԱՆՔԱՍԱՐԻ ԺԱՅՈՒԹՈՐ ՀԱՄԱԼԻՐ. ՀԱՆԳՍԱՐԱՆ



ՀԱՏԱԿԱԳԻԾ




ԿՏՐՎԱԾԸ ԴԵՊԻ ՀԱՐԱԿ

ՎԱՆՔԱՍԱՐԻ ԺԱՅՈՒԹՈՐ ՀԱՄԱԼԻՐ



ՔԱՐՈՇՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ. ԿՏՐՎԱԾԸ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏԸ




ՀԱՆԳՍԱՐԱՆ. ԿՏՐՎԱԾԸ ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼԸ



ները՝ գմբեթարդներով: Խաչաթևերի միացման չորս անկյունը ձևավորված են որպես որմնասյուներ, որոնք ավարտվում են V-VII դարերին բնորոշ պարզ զարդաքանդակ խոյակներով, որոնց վրա հանգում են գմբեթակիր կամարները: Գմբեթատակի քառակուսուց անցումը դեպի գմբեթը, հավանաբար, իրականացվել է տրոնպային համակարգով: Եկեղեցին արտաքինից խաչաձև է: Նրա ուղղանկյուն խաչաթևերն ավարտվում են երկթեք տանիքով, իսկ կենտրոնում վեր է խոյանում ութանիստ թմբուկն՝ իր վեղարով: Եկեղեցին ունի երեք մուտք՝ հյուսիսային, հարավային և արևմտյան խաչաթևերում, որոնց ուղղանկյուն բացվածքները ծածկված են կամարածեք բարավորի քարերով: Ամենայն հավանականությամբ արևմտյան կողմում եղել է շքամուտք՝ բնորոշ V-VII դդ. եկեղեցիներին, ինչի մասին վկայում են պատի վրա պահպանված շքամուտքի կցման հետքերը: Այս մուտքի բարավորի վրա եղած հայատառ արձանագրությունը միտումնավոր ոչնչացված է: Պահպանվել են թույլ ուրվագծվող սոսկ մի քանի տառ: Մեկ այլ, խիստ հողմնահարված արձանագրություն փորագրված է արևմտյան մուտքի աջ կողմում:

Եկեղեցու պատերի հին շարի գրեթե բոլոր քարերի վրա պահպանվել են վարպետների նշաններ՝ հայկական տառածևերի կամ երկրաչափական նշանների տեսքով: Յուրաքանչյուր խաչաթևում մեկ լուսամուտ կա: Ընդունված տեսակետի համաձայն եկեղեցին կառուցել է իր շինարարական գործունեությանը հռչակված, 480-ականների վերջից Ար-



Նկ. 3. Վանքասարի եկեղեցին

ցախի և Ուտիքի արքա (մահացել է մոտ 510թ.) Վաչագան Բարեպաշտը (Յ. Ս. Янпольский, ՀՍՀ, 1985, ժ. 283): Եկեղեցու կառուցման մասին պատմական տեղեկությունները, ոճական և շինարարական առանձնահատկությունները, վարպետների նշանները և այլ մանրամասներ հիմք են տալիս եկեղեցին թվագրելու V դ. վերջով-VI դ. առաջին քառորդով (նկ. 3):

1980-ական թվականներին ագերիները, որպես աղվանական մշակույթի գլուխգործոց, վերականգնել են կիսաքանդ եկեղեցին: Վերակառուցումն իրականացրել են լուրջ սխալներով, որոնք աղճատում են եկեղեցու նախնական ծավալատարածական հորինվածքը և արտաքին տեսքը. 1) բարձրացվել և սալահա-

տակվել է եկեղեցու շրջակա տարածքը, որի հետևանքով գետնախարսխից պահպանվել է լույս մեկ աստիճան, 2) ձևափոխվել են պատուհանների բացվածքները, 3) թմբուկատակ քառակուսու դեպի թմբուկ անցումը փորձել են իրականացնել առագաստներով, սակայն չիմաստով առագաստի կառուցման տեխնիկան՝ խեղաթյուրել են այն, 4) վատ են իրականացրել վերականգնված մասերը, մասնավորապես՝ գմբեթարդներն ու գմբեթը, 5) չտիրապետելով երեք բնաչափ (շաբլոն) գմբեթարդի և գմբեթի քարերի տաշման ու շարման հնարքին՝ դրել են հարթ քարեր՝ խաթարելով տվյալ դրրվագի նախնական տեսքը, 6) կղմինդրե ծածկը փոխարինել են սալաքարե ծածկով, 7) ճակատների վրա չեն տեղադրել քիվի քարերը, 8) եկեղեցու բակի հայերեն արձանագրությամբ խաչքարը տեղափոխել են Աղդամ քաղաքի բացօթյա թանգարան՝ նախօրոք եղծելով վրայի հայատառ արձանագրությունը. «Ես Աշոտի որդի Շահնշահս, կանգրեցրի այս խաչս իմ հոգով...» (Ս. Մկրտչյան, 1988, ժ. 64): Ներկայումս այս խաչքարը տեղափոխել են Ասկերան և կանգնեցրել նորակառույց եկեղեցու մոտ (նկ. 4):

Ըստ Շահեն Մկրտչյանի՝ «На противоположном склоне Ванкаса, среди разнообразных памятников, выделяются средневековые хачкары и надгробия с уникальными рельефами и хорошо сохранившимися надписями. Каждый, кто хоть раз побывал здесь, несомненно запомнит их надолго. Число их превышает сто» (Ս. Մկրտչյան, 1988, ժ. 64). 1994 թ. այս խաչքարերն ու տապանաքարերն այլևս

չկային: Ցավոք, հրատարակված չեն դրանց վավերագրերը և լուսանկարները:


Ըստ Շահեն Մկրտչյանի Մարտակերտ-Ստեփանակերտ ճանապարհին, նախկին Բահմանլու գյուղի տարածքում կա 15 դամբանաբլուր, որոնցից ութն իրար կողքի են, մեկ շարքով: Դրանցից ոչ հեռու, Արքայի աղբյուրի մոտակայքում, ճանապարհի երկարությամբ ձգվում են դամբանաբլուրների փոքր խմբեր, որոնք եզրափակվում են վիթխարի դամբանաբլուրներով (Ս. Մկրտչյան, 1988, ժ. 64):

ԺԱՅՈՒՓՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ հելլենիստական քաղաքատեղիի ավերակ-




Նկ. 4. Վանքասարի եկեղեցու խաչքարը





Նկ. 5, 6. Ժայռափոր եկեղեցին



Նկ. 7. Ժայռափոր մուտքը



Նկ. 8. Ժայռաքանդակ խաչքար

ներից մոտ 3.5 կմ հյուսիս-արևելք է, Աղդամ-Մարտակերտ մայրուղուց մոտ 200 մ արևմուտք, Մարաղա (նախկին Կիզիլ-Կենգերի) գյուղի դիմաց, Խաչենագետի աջ ափին, ուղղաձիգ կտրվածքով կրաքարե ժայռի միջնամասում, գետի մակարդակից 60-70 մ բարձրությամբ (նկ. 5, 6): Աղդամ քաղաքի մարզադաշտի բացօթյա ցուցադրությունում եղել են հելլե-

նիստական շրջանի սյան երեք խարիսխ, որոնք այստեղ են բերվել ժայռափոր համալիրին մերձակա Սոֆյու և Փափրավենդ գյուղերի միջև գտնվող տարածքից: Այստեղի հելլենիստական, ապա և միջնադարյան բնակավայրի մասին են վկայում նաև մեր հայտանբերած խեցանոթների բեկորներն՝ ինչպես ժայռափոր համալիրի ստորոտի մշակութային շերտից,



Նկ. 9. Ժայռաքանդակ խաչքար



Նկ. 10. Եկեղեցու խտանը, ձախ եզրին գաղտնարանի մուտքը



Նկ. 11. Կամարածև խորշ եկեղեցում




Նկ. 12. Հունարեն արձանագրությամբ խաչապատկեր

ցանոթների բեկորներն՝ ինչպես ժայռափոր համալիրի ստորոտի մշակութային շերտից, այնպես էլ Մաքսուդլու գյուղի տարածքից: Չի բացառվում, որ սա Սեբեոսի հիշատակած երկու Տիգրանակերտից մեկի մնացորդներն են:

Քրիստոնեական ժայռափոր այս համալիրը բաղկացած է. ա) ժայռափոր եկեղեցուց, բ) բարոզման հրապարակից, գ) հանգստի և պաշ-

տամունքի հարթակներից, դ) հանգստարանից՝ ժայռափոր գերեզմաններից, ե) ժայռափոր աստիճաններից, որոնք սկիզբ առնելով լեռան ստորոտից՝ բեկվելով ձգվում են մինչև ժայռափոր եկեղեցին (նկ. 5, 6): Ճանապարհի մեջուղում ժայռափոր մուտքն է (նկ. 7): Եկեղեցու արևելյան պատին, ճամփեզրի ժայռերի վրա, բարոզման հրապարակը և հանգստարանը ե-





Նկ. 13. Չիթածրագ գաղտնարանից



Նկ. 16. Հայատառ գրություն



Նկ. 14. Քարոզման հրապարակի հարթակը



Նկ. 15. Կենաց ծառ շրջանի մեջ ներգծած հավասարաթև խաչով



Նկ. 17. Հանգստարանը

խորհրդանշաններ՝ ժայռապատկերներ, խաչապատկերներ, հունարեն և հայերեն արձանագրություններ (նկ. 8, 9):

ԺԱՅՈՒՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ: Ունի ձգված, անկանոն հորինվածք: Եկեղեցու (չափերը 550x350 սմ) հարավային կողմում ձևավորված է մի պարզ խորան, իսկ սրա ետևում՝ գաղտնարան (նկ. 10): Արևելյան պատի կենտրոնական մասում փորված է կանոնավոր կամարածև մի խորշ (նկ. 11), իսկ պատի հյուսիսային հատվածը ծածկված է մի քանի տասնյակ խաչապատկերներով, որոնցից մի քանիսն ունեն հունարեն արձանագրություններ (նկ. 12):

Եկեղեցին իր հորինվածքով համահունչ է երկխորան (երկկոնիս) եկեղեցիներին, որոնք, ըստ հույն ճարտարապետ Գեորգիոս Դիմիտրոկալիսի, կառուցվել են քրիստոնեական նշանավոր գործիչների և մարտիրոսների գերեզմանների հարևանությամբ: Նրա կարծիքով դրանց նախատիպը քրիստոնեական երկկոնիս դամբարաններն էին, որոնք սկզբնավորվում էին հեթանոսական ավանդներից (Գեորգիոս Դիմիտրոկալիս, գրախոս Հ. Բարտիկյանի): Այս տեսակետը հիմնավորվում է Վանքասարի ժայռափոր համալիրում, որտեղ եկեղեցին իր հորինվածքով երկկոնիս է, իսկ նրա հարևանությամբ գտնվում են քրիստոնեական առաջին քարոզիչների սարկոֆագները:

Եկեղեցու հատակի փոշենման հողաչերտի պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին խեցանոթների և ապակե նուրբ սրվակների բեկորներ: Ուշագրավ է գաղտնարանում հայտնաբերված ինքնատիպ ծիթածրագը (նկ.13):

ՔԱՐՈԶՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ նեղ և երկարուկ մի հարթակ է՝ եկեղեցուց արևմուտք (նկ. 14): Դրա արևմտյան մասում ժայռակերտ մի «գահ» կա, որի վրա, մեր կարծիքով, բազմած առաքյալը, կամ նրա հետևորդները, քարոզել են Քրիստոսի ուսմունքը: «Գահի» թիկնակ-խորշում փորագրված են խաչապատկերներ, երեք զույգ ճյուղերով կենաց ծառ՝ պսակված շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչով, հայերեն և հունարեն արձանագրություններ, որոնք այժմ եղծված են (նկ. 15): Հայատառ արձանագրությունից վերականգնվում է «Մարիամ» անունը (նկ. 16): Հրապարակն արևելքից եզերող ժայռի կտրվածքում կա խիստ հողմնահարված կենաց ծառի մեկ այլ պատկեր, որի ճյուղերից կախված են խաչեր: Հատակի ժայռի մակերեսին փորված են ավազաններ և դրանցից ձգվող առվակներ: Սակայն ամենից ուշագրավը հատակի կենտրոնում, «գահի» դիմացի պատկերաքանդակն է՝ բաղկացած միմյանց մեջ ներգծված քառանկյուն և եռանկյուն գծապատկերներից: Հավանական է, որ այն տիեզերքի կառուցվածքի (մանդալա) խորհրդանշական պատկերումն է: Հարթակի կիրճահայաց եզրի խորացումները վկայում են, որ այստեղ ժամանակին եղել է փայտաշեն բազրիք, որն ապահովել է քարոզներ լսելու համար այստեղ հավաքված մարդկանց անվտանգությունը: Քարոզման հրապարակի հատակի ժայռը, ի տարբերություն եկեղեցու, հանգստարանի և մյուս հարթակների հատակների, շատ ողորկ է, գրեթե փայլուն, ինչը, մեր կարծիքով, հետևանք է քարոզը լսելու համար այստեղ





Նկ. 18. Ղերեզման-սարկոֆագ



Նկ. 19. Սյունածև հիմքի և փառքի պսակի վրա պատկերված խաչը

հավաքված մարդկանց մեծաքանակության և տարածքի շարունակական ու երկարատև օգտագործման:

Քարոզման այս հրապարակից փոքրինչ ցած և արևմուտք, դրանից ժայռե ելուստով անջատված, գտնվում է մեկ այլ երկարուկ հարթակ՝ հանգստարանը (նկ. 17): Այստեղ ժայռի մեջ փորված են հինգ կամ վեց ուղղանկյուն զերեզման-սարկոֆագ (նկ. 18), որոնք ժամանակին, ըստ հելլենիստական սովորույթի, ծածկված են եղել թծակավե կափարիչներով (կափարիչի մի բեկոր հայտնաբերվել է սարկոֆագներից մեկում, մեր պեղումների ժամանակ): Սարկոֆագները կո-

ղոպտված էին, կամ, թերևս, 1960-ականների վերջին դրանք «պեղել» են ազերի հնագետները (Ք. Գեյոսև, Կ. Գյաև, 1971, ժ. 18-19): Հանգստարանի արևելյան, կիրճահայաց լանջի, պեղումների շնորհիվ հայտնաբերեցինք մարդկային ոսկորներ և խեցանոթների բեկորներ, որոնք սարկոֆագների կողոպտիչները դուրս էին նետել զերեզմաններից: Սարկոֆագներում ևս պահպանվել էին մարդկային ոսկորների բեկորներ, որոնք, որպես մասունքներ, հանձնվեցին Արցախի թեմի առաջնորդ, գերաշնորհ Պարզև սրբազանին:

Հանգստարանն արևելքից եզերող ժայռի մակերեսին փորագրված է սյունածև խա-

րիսխ, որը կրում է փառքի պսակի վրա հանգչող խաչ: Նրա վերին թևի աջ և ձախ կողմերում հունատառ հապավումով գրված է IC XC՝ Հիսուս Քրիստոս: Դեպի այս քանդակն են տանում ժայռակերտ աստիճանները (նկ. 19): Այս խաչաքանդակը շատ վաղնջական է և կարծես մարմնավորում է Գրիգոր Լուսավորչի հայտնի երազ-տեսիլը. «736. Եվ տեսանէի ի մեջ քաղաքիս, մօտ յապարանսն արքունի, խարսխածն ճախարակածն խարիսխ ոսկի, մեծությամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վրա նորա թակաղաղ մի ամպեայ, և խաչն լուսոյ ի վերայ նորա» (Ազաթանգեղոս, 1983, էջ 416): Հանգստարանը հարավից եզերող ժայռի մակերեսին, սարկոֆագների հարևանությամբ, փորագրված են տասնյակ խիստ արխայիկ խաչապատկերներ (նկ. 20, 21, 22, 23, 24):

Ըստ նախնական դիտարկումների՝ այս հուշարձանախումբը Հայաստանում մեզ հայտնի հնագույն քրիստոնեական համալիրն է, որտեղ, հելլենիստական մեծ քաղաքի հարևանությամբ, սակայն դրանից զգուշավոր հեռավորությամբ ծվարած սուրբ. այրերը, նախքան Գրիգոր Լուսավորիչը, քարոզել են Քրիստոսի ուսմունքը և մահվանից հետո թաղվել տեղում, հատուկ ձևավորված ժայռակերտ սարկոֆագներում: Ուշագրավ է, որ ըստ ավանդության, մահվանից հետո և՛ Պետրոս առաքյալը, և՛ Թադևոս առաքյալը լույս են դարձել ու մտել ժայռի մեջ:

Ազերի հնագետներ Գեուշևը և Գուլինս իրենց հրատարակած թեզիսներից մեկում հպանցիկ անդրադարձել են Վանքասարի ժայ-

ռափոր համալիրին: Նրանք այս եկեղեցին վերագրել են ալբաններին (աղվաններին), թվագրել 4-10-րդ դդ. և հիշատակել մի ավանդություն, ըստ որի Քյոր-օղլին իր ծին պահել է այս եկեղեցու քարանձավում (Ք. Գեյոսև, Կ. Գյաև, 1971, ժ. 18-19):

Մեր կարծիքով՝ ժայռափոր եկեղեցական համալիրը հիմնադրվել է 1-3-րդ դդ. և գործել մինչև զարգացած միջնադար, որպես հռչակված ուխտավայր: Նման վաղ թվագրման համար հիմք են ծառայում հետևյալ կրկանները.

1. *Խաչապատկերները շատ արխայիկ են, վաղագույն ձևերի: Դրանց նմանակները, սակայն փոքր-ինչ զարգացած պատկերազրույթամբ, հաստատագրված են լոկ 3-4 դդ. եկեղեցիների պատերի վրա՝ Ծիծեռնավանք, Երերույք, Տեղ գյուղի Սբ. Գևորգ և այլն:*

2. *Սարկոֆագների կառուցումը և սուրբ այրերի թաղման ծեսը բնորոշ չեն քրիստոնեական ծեսի կանոնակարգված նորմերին: Ըստ հեթանոսական ավանդական ծեսի՝ զերեզմաններում դրվել են կերակրով և ջրով լի կավանոթներ (Ք. Գեյոսև, Կ. Գյաև, 1971, ժ. 18-19), արարողություն, որը մերժում է քրիստոնեական կանոնակարգված ուսմունքը:*

3. *1-3-րդ դարերին բնորոշ խեցեղենի առկայությունը, որը թվագրման համար վճռական նշանակություն ունի, քանի որ եկեղեցին և հանգստարանն այնպիսի մեկուսացված վայրում են, որտեղ դրանց գոյությունից ավելի վաղ նյութեր չէին կարող լինել, քանզի բացառված է շերտերի խառնվելը կամ այլ վայրերից*





Նկ. 20, 21. Արխայիկ խաչապատկերներ

հին խեցեղենի բեկորների այստեղ հայտնվելը:

4. Քրիստոնեությունն ընդունողների բացահայտ զգուշավորությունը: Ակնհայտ է, որ այս վայրը պատահական չի ընտրվել, քանի որ այն խիստ նպաստավոր է հնարավոր հալածանքներից և հետապնդումներից խուսափելու համար: Մոտ լինելով հոծ բնակչությամբ Տիգրանակերտ քաղաքին, որի ընչազուրկ խավի համար առավել ընկալելի էր Քրիստոսի վարդապետությունը, քարոզիչները միևնույն

ժամանակ իրենց գործունեության վայրն ընտրել էին զինվորներով և պետական ծառայողներով լի քաղաքից զգուշավոր հեռավորության վրա: Դեպի ուղղաձիգ ժայռի կենտրոնում կերտած եկեղեցին տանող ժայռափոր նեղ ճանապարհը փակելու դեպքում՝ հավատացյալները հեշտությամբ կարող էին ազատվել հետապնդումից: Նշանակում է՝ այստեղ հավաքված քրիստոնյաները վախեցել են հնարավոր հալածանքներից, հետևաբար գրի



Նկ. 22. Խաչաքանդակ

ծել են նախքան 301 թ.՝ մինչ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելը:

5. Եկեղեցին կողմնորոշված է հյուսիսից-հարավ, ինչն աներկբա վկայում է քրիստոնեական կանոնակարգված ծեսի հաստատումից առաջ նրա գործունեությունը: Եկեղեցին չունի բեմ, ինչը բնորոշ է լուկ վաղնջական եկեղեցիներին: Եկեղեցու վաղնջական լինելու մասին է վկայում նաև նրա երկխորան հորին-



Նկ. 23. Սարկոֆագ



Նկ. 24. Խորշ՝ խաչապատկերներով

վածքը, որն, ըստ Չեորգիոս Դիմիտրոկալլիսի, սկզբնավորվել է հեթանոսական ժամանակաշրջանից:

6. Խաչապատկերների թևերի մոտ կան հունական գրություններ, որոնք, անկասկած, նախորդում են 405 թ. Մեսրոպ Մաշտոցի հայտնագործած հայոց գրերին:

7. Հայերենի տառերը նման են Երուսաղեմի խճանկարների՝ V դարի թվակիր արձանագրության տառերին: Հունարեն գրություն-



ների առկայությունն, ապա և հնագույն հայատառ գրությունները վկայում են, որ պաշտամունքային այս կենտրոնը գործել է 404 թ. առաջ, և այնտեղ նախ գրառել են հունարեն, իսկ հայոց այբուբենի գյուտից անմիջապես հետո՝ նաև հայերեն վիճագրություններ:

Անփոփելիով, կարող ենք առաջ քաշել մի տեսակետ, ըստ որի հայկական գրավոր աղբյուրների վկայություններն այն մասին, թե Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներն եկել և քարոզել են Հայաստանում, և իրենցից հետո թողել բավականին կենսունակ քրիստոնեական համայնքներ, առարկայորեն հիմնավորվում են այս հուշահամալիրով: Սա նաև փաստ է, որ Հայաստանում, մինչև 301 թ., եղել են բավականին հզոր քրիստոնեական համայնքներ:

Վանքասարի ժայռափոր համալիրը մի բացառիկ երևույթ է, որի հետագա ուսումնասիրությունները կարող են սրբագրել Հայաստանում Քրիստոնեության տարածման և եկեղեցաշինության մասին եղած պատկերացումները: Սա բավականին համարձակ մի հարցադրում է, որը կարիք ունի քննարկումների և հետագա հիմնավորումների:

1. Շ. Մկրտչյան, Լեոնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանները, Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի, հ. VI, Երևան, 1975:

2. Ш. Мкртчян. Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988.

3. Սերետու, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912:

4. Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հ. Բ, Տիֆլիս, 1858:

5 Ս. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895:

6 Սովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղղուանից աշխարհի, Երևան, 1983:

7. Գ. Խաչատրյան. Ղարաբաղում գտնված մի հին դրամի մասին, «Սովետական Ղարաբաղ», 28 մարտի, 1965, N 73:

8. Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, Տեղեկագիր ՀԽՍՀԳԱ հասարակական գիտությունների, 1964, N1:

9. Շ. Մկրտչյան. Լեոնային Ղարաբաղի պատմա-երկրագիտական թանգարանը, Կուլտուր-լուսավորչական աշխատանքներ, Երևան, 1972, N 4:

10. Բ. Գարությունյան, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաքավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ /մ.թ.ա. VII-VI դդ./, Երևան, 1998:

11. 3. И Янпольский., Памятнику Кавказской Албании на горе Бешидаг, СА, 1960, N 2, с. 246-250.

12. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ.11, Երևան, 1985:

13. Р. Геюшев, Н. Гулиев. О пещерном храме Кавказской Албании. Материалы к сессии посвященной итогам археологических исследований 1970 года в Азербайджане, Баку, 1971, с. 18-19.

14. Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:

15. Գեորգիոս Ղեմիտրոկալիս, Քրիստոնեական երկկոնիս տաճարները, Աթենք, 1976, 557 մեծադիր էջ, 635 պատկեր: Թարգ. Գ. Բարթիկյան:

Hakob Simonyan

Hovhannes Sanamyan

## An Armenian Early Christian Cult Complex in the Region of Aldam

### (Summary)

In June-August 1994 an expedition of the Department for the Preservation of Armenian monuments surveyed the Republic of Nagorno-Karabakh and the neighbouring territories (notably the regions of Aghdam, Kelbajar and Fizuli) to support the Corpus of Armenian Monuments.

The expedition succeeded in the discovery of some hundreds of sites, including such monuments as fountains, chapels, churches and church complexes, bridges, fortresses, sepulchral areas, khachkars and burial stelae all with Armenian inscriptions as well as petroglyphs and frescoes. The finds cover a chronological list from the Neolithic to late Middle Ages.

However, the largest amount of findings refer to the Developed Christian period, which is evidence of the Armenian presence in these areas during the whole Christian era.

In our opinion the most important and meaningful surveyed monument is a rock-cut Christian complex in the region of Aghdam. The site is located 0,6 km east of the village of Maragha (Kizil-Kengerji), on the right bank of the river Khachen. The monument lies on the east edge of the so called "Monastery Mount" (Vankasar) or "Shepherd's Mount" (Hov(i)vasar). The complex is located in the middle of a straight-cut limestone crest, at about 60-70m high above the level of the river

The Christian cult complex consists of:

- a rock-cut church,
- a platform, possibly used for preaching,
- a rock-cut cemetery
- a gate with a narrow staircase, which reaches the complex from the foot of the hill.

The complex and its surroundings are wholly studded with about a hundred khachkars carved in the rock, notable pictures and reliefs (which are not completely identified until now), and inscriptions both in Greek and Armenian.

The general plan of the church is a rectangle of about 550x350cm. On the East there is a simple altar with a hollow on the backside. A regular arch is carved in the centre of the North wall. This wall is mostly covered with graffiti and carved crosses. By some of the crosses there are inscriptions in Armenian and Greek,



which will be presented in the forthcoming article. South of the church there is a place identified as a preacher's platform. The floor is covered with small carved canals outcoming from the basin. The floor of the platform is smooth, flat and reveals long use. On the external side, on the edge of the platform overlooking the gorge of the river, there are hollows which can be interpreted as locations for security parapets.

South of this platform there is a rock barrier and then another platform, with a cemetery. We found six sarcophaguses with NS orientation. The burials were possibly thatched (roofed) by clay covers (a fragment was found around). Close to the tombs we also found pots for food and water, which no doubt attest the preservation of pagan burial traditions. The cemetery was evidently desecrated by the robbers. As we sifted the earth near the cemetery, we found fragments of human bones and clay vessels. Some of the graffiti and reliefs are remarkable. On the floor there is a geometrical figure, formed by triangular and rectangular forms, which could have a sort of cosmological meaning. Two crosses are particularly interesting: a circled Greek cross on a pole, with the inscription IC XC (Jesus Christ), and another cross mounted on a pole with a basis. The style of the shape of the crosses is actually very old, and in the annals of the Armenian historian Agatangueghos the cross on the pedestal is mentioned as the Vision of St Gregory.

The archaeological evidence, the location of the site and the presence of Greek inscriptions as well as the early iconography of the most of the ancient crosses, gives us the opportunity to date the complex to a very early period, possibly to the I-III centuries, in any case not later than the beginning of the IV century AD. This early Christian complex proves the reality about the spread of the Christianity in this part of the Caucasus, which we know from ancient literature.



## ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

### ԱՐԹԻԿԻ ՓՈՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ

Վարտարապետության զարգացման գաղափարական և գեղարվեստական վերելքի շրջադարձային փուլերում մեծ դեր են խաղում այն հուշարձանները, որոնք հաղիսանում են կառուցվածքային մեկ կամ մի շարք ձևերի ելակետային նախատիպ-մոդելները: Այդպիսի հանգուցային կառույցները նշանավորում են ստեղծագործական մտքի բեղմնավոր ուղին ու, միևնույն ժամանակ, լայն հնարավորություններ ընծեռում տվյալ հորինվածքի հետագա զարգացման համար:

Այդպիսի ուշագրավ մի հուշարձան է Արթիկի Սբ. Աստվածածին փոքր եկեղեցին: Վաղ միջնադարյան կարևորագույն շրջանի՝ 5-6-րդ դդ. ընթացքում երկայնական ծավալատարածական հորինվածքների կետրոնացման ու գլխաբավորման սկզբնական փորձերի ճիշտ գնահատման և համեմատական վերլուծության

համար անգնահատելի է Արթիկի փոքր եկեղեցու նշանակությունը: Կարծում ենք, որ այս հուշարձանը հնարավորություն ունի որոշակիորեն լույս սփռելու միջնադարյան կառուցվածքային մի շարք տիպերի առաջացման հարցերի վրա, նրա ուսումնասիրությամբ բացահայտելու հայ ազգային քրիստոնեական ճարտարապետության կազմավորման հիմնական ուղիները:

Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է Արթիկի գլխավոր հրապարակից մոտ 300 մ արևելք, ուր մաստարայատիպ Սբ. Գևորգ մեծ եկեղեցու հետ կազմում է վաղ միջնադարյան մի ուշագրավ հուշարձանախումբ:

Փոքր եկեղեցու մասին պատմական կամ մատենագրական տեղեկություններ չեն պահվել, բայց ենթադրվում է, որ այն կառուցել են Կամսարական իշխանները: Հուշարձանի




նկարագրությանը և մասնակի վերլուծությանն անդրադարձել են Ա. Ջալալյանցը, Ղ. Ալիշանը, Յ. Էփրիկյանը, Յ. Ստրժիգովսկին, Թ. Թորամանյանը, Ն. Տոկարսկին, Ա. Մանուչարյանը (Ա. Ջալալյան, 1842, էջ 217-218; Ղ. Ալիշան, 1881, էջ 164; Յ. Էփրիկյան, 1905, էջ 293; J. Striikowski, 1918, t. 499, 500; Թ. Թորամանյան, 1942, էջ 87, 132; Թ. Թորամանյան, 1948, էջ 120, 206; H. M. Токарский, 1961, с. 113; Ա. Ա. Մանուչարյան, 1977, էջ 24-27): Կառույցն առաջին անգամ չափագրել է Գ. Աղաբաբյանը, 1943 թ., սակայն փլատակներից մաքրվել ու պեղվել է 1969 թ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժնի ուսանողների ուժերով, Ա. Երեմյանի և Ա. Ստեփանյանի ղեկավարությամբ: 1982-ից մինչև 1983 թվականը Արթիկի եկեղեցիների վերականգման նախագծերը կազմելիս հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցները՝ Ա. Երեմյանի ձեռնարկմամբ, տեղում կատարել են հետախուզական պեղումներ, մաքրման ու չափագրման աշխատանքներ:

Արթիկի Սբ. Աստվածածին եկեղեցին աչքի է ընկնում հատակագծային և ծավալատարածական խիստ ինքնատիպ հորինվածքով: Հուշարձանի հատակագիծը եռանաս է (տախ. 1, գծ. 15): Միջին մասում կառույցն ունի արևելքից արևմուտք ձգված միանավ դահլիճ, որի հարավային ու հյուսիսային կողմերից դուրս ելնող մասերը հատակագծին տալիս են լատինական խաչի ձև: Այս խաչի հատման հատվածի 5 մ կողմերով քառակուսին հնարավորություն է տվել այն պսակել գմբեթով: Գմբեթավորման յուրօրինակ այս եղանակն արմատապես տարբերվում է միանավ դահլիճների գմբեթավորման այն եղանակից, երբ եկեղեցու գմբեթը նստում է երկայնա-

կան պատերից ներս դրված չորս որմնամույթի վրա (Չովունիի գմբեթավոր դահլիճ, տախ. 1, գծ. 6): Հարկ է նշել, որ հյուսիսային և հարավային խաչաքները հատակագծում (և միայն հատակագծում) կարող են ընկալվել որպես եռանավ բազիլիկայի կողային նավերի հատվածներ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ պետք է զանազանել նաև եռանավ բազիլիկաների առանձին կանգնած չորս մույթի միջոցով գմբեթավորման եղանակը սրանից (Տեկոր):

Արթիկի եկեղեցու հատակագծային լուծումը, խաչաձև բնութագրումից բացի, անվանում են նաև եռախորան հորիվածք, քանի որ միջին երկար ու լայն նավը, ինչպես և դուրս ընկած երկու կարճ ու նեղ թևն արևելյան կողմում ավարտվում են խորաններով: Սակայն, ի տարբերություն 5-6-րդ դդ. արևելահայաց եռախորան տաճարների (Եղվարդի և Քալաթ-Սեմանի եռանավ, Խոջա-Քալեսիի գմբեթավոր բազիլիկաներ), ուսումնասիրվող հուշարձանը ներկայանում է որպես ծավալատարածական համակարգի բոլորովին այլ ձև, որն առհասարակ բնորոշվում է որպես խաչաձև հատակագծային հորիվածք: Ընդհանրապես, վաղ միջադարից սկսած մինչև ուշ միջնադար, քրիստոնեական աշխարհում, հատկապես հունադավանք երկրներում (Բյուզանդիա, Հունաստան, Սերբիա, Բուլղարիա, Ռուսաստան, Վրաստան) լայն տարածում են ստանում ներգծված խաչի տիպի քառամույթ գմբեթավոր տաճարները, որոնց արևելքից հարում են երեք խորան՝ արտաքինից դուրս շեշտված ծավալով, կենտրոնականն ավելի մեծ, քան կողայինները (Սամշվիլդե, 8-րդ դ.):

Ի տարբերություն վաղ միջադարյան Հայաստանում տարածված պարզ խաչաձև եկեղեցիների, Արթիկի հուշարձանի չափերը զգալի մեծ են. ներ-



ՏԱԽՏԱԿ 1. Հատակագծային հորինվածքի ձևատարածական փուլերը



սում երկարությունը 14 մ է, լայնությունը՝ 11 մ: Միանավ սրահավոր կառույցների սրբարանների ջլատման օրինակով՝ միջին նավի արևմտյան, երկարացված հատվածը, 4,1 մ թռիչքով եռակենտրոն պայտաձև թաղակիր կամարով բաժանվում է երկու դաշտի: Այս կամարը կրող ուղղանկյուն երկու որմնասյան ձևով ու չափերով (0.66 x 0.40 մ) պատից դուրս են բերված նաև նույն թռիչքով 4 զմբեթակիր կամարի ութը որմնասյուն: Գմբեթի անկյունային հենարանների նման արխաիկ ձևը, ինչպես նաև կամարների, թաղերի, խորանների կորերի պայտաձևությունն այս եկեղեցին խիստ տարբերում են 7-րդ դ. խաչաձև կենտրոնագմբեթ այլ հուշարձաններից և մոտեցնում են 5-6-րդ դդ. միանավ սրահաձև կառույցներին (*տախ. 1, գծ. 1-14*):


Հուշարձանի կողմային խաչաթևերի արևմտյան ճակատին պահպանվել են կիսաշրջանաձև հատակագծով խորշեր, հյուսիսայինը՝ ամբողջությամբ, իսկ հարավայինը՝ մասամբ: Այս խորշերով են ավարտվել երբևիցե գոյություն ունեցող հյուսիսային և հարավային արտաքին սրահները, որոնցից պահվել է միայն արևմտյան խաչաթևի հյուսիսային պատը ջլատող քիվի վրա հենվող գլանաձև թաղի եկեղեցահայաց ստորին հատվածը (*տախ. 2, գծ. 1, 2, լուս. 1, 2, 4*): Արևմտյան խաչաթևի հյուսիսային, արևմտյան և հարավային ճակատները մեջտեղից ջլատող այդ քիվից վեր պատի բարձրությունը ավելի բարակ է, քան քիվից ներքև: Թ. Թորամանյանը նկատել է, որ նման երևույթը, և, ընդհանրապես, եկեղեցու ճակատը մեջտեղից քիվով մասնատելու նման օրիակները պահպանվել են միայն վաղ շրջանի այնպիսի հանրահայտ հուշարձաններում, ինչպիսիք են Տեկորը և Մայր տաճարը (Թ. Թորամանյան, 1942, էջ




Նկ. 1. Հուշարձանի տեսքը հյուսիս - արևմուտքից



Նկ. 2. Հուշարձանի տեսքը հյուսիսից



Նկ. 3. Հուշարձանի տեսքը հյուսիս - արևելքից




ՏԱԽԱՏԱԿ 2. Ճակատներ և կորվածքներ





Նկ. 4. Հուշարձանի հյուսիսային արտաքին սրահը



Նկ. 5. Հուշարձանի արևելյան խաչաքելի լուսամուտը



Նկ. 6. Հուշարձանի արևմտյան խաչաքելը ներսից

ժամանակագրական ու համեմատական վերլուծությունը ենթադրել է տալիս, որ այդ սրահները վերացվել են թերևս 6-րդ դ. վերջում (Լմբատավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու արևմտյան խաչաքելի հարավային պատը ջլատված է արտաքին սրահի այժմ բացակայող թաղը կրող քիվով), իսկ արտաքին խորանները՝ 7-րդ դ. սկզբում (Թալինի Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային խաչաքելն՝ արևմտյան կողմից ունի բաց խորան):

Քանի որ Թալինի Սբ. Աստվածածինը մեզ է հասել հիմնականում ծածկերի ու տանիքների գրեթե

+ Զ Լ Վ Կ Լ Կ Ա ①

+ Լ Լ Կ Կ ②



ՏՄԽՏԱԿ 3

Վարպետանշանները և արևմտյան մուտքի վիմագիր արձանագրությունը



բոլոր կառուցվածքային տարրերից զրկված վիճակում (չեն պահպանվել գմբեթի ողջ համակարգը, թաղերն, ավագ խորանի գմբեթարդը), ուստի, առաջին հերթին, անհրաժեշտ է պարզաբանել ամբողջ կառույցի ծավալատարածական համակարգի ընդհանուր հորինվածքը: Արևմտյան խաչաթևի պահպանված թաղակիր կամարը և թաղի ստորին հատվածները, ինչպես նաև հյուսիսային խաչաթևի թաղի առաջին շարքի երկու քարն ապացուցում են, որ եկեղեցու երեք թևերը թաղածածկ էին, իսկ արևելյան թևը զբաղեցնող ավագ խորանը ծածկված է եղել գմբեթարդով: Ընդ որում՝ արևմտյան խաչաթևի թաղն ուղղահայաց է հյուսիսային ու հարավային խաչաթևերի նկատմամբ (*տախ. 2, գծ. 4, 5, 6, լուս. 6, 7, 8*): Խաչածև հատակագծից բխող այս լուծումը պայմանավորված է կենտրոնագմբեթ համակարգի արդեն 5-6-րդ դդ. ընթացքում մշակված գաղափարով: Դրանով իսկ այս հուշարձանի ծավալատարածական հորինվածքն արմատապես տարբերվում է միանավ սրահած կառույցներից, որոնց հյուսիսային և հարավային ճակատներին կցված սենյակների ծածկի թաղերը զուգահեռ են հիմնական սրահի թաղին (*տախ. 1, գծ. 7-14*), ինչպես նաև եռանավ բազիլիկաներից, որոնց կողային նավերի թաղերը նույնպես զուգահեռ են կենտրոնական նավի թաղին: Բայց քանի որ Արթիկի եկեղեցուն հյուսիսային ու հարավային խաչաթևերն առաջացել են տրանսեպտի (ընդլայնական նավի) ձևով, այստեղ գմբեթատակ քառակուսին դեռևս ընդհուպ հարում է ավագ խորանին: Այս երևույթը կարելի է բացատրել բազիլիկաներում սրբազան խորանին կցված ծիսակատարության միջուկի տեղաբաշխման նախնական սովորության պահպանմամբ:

Հաշվի առնելով հորինվածքային հնամենի ձևերի նշված առանձնահատկությունները՝ կարելի է ենթադրել, որ այստեղ գործ ունենք խաչածև հատակագծով կենտրոնագմբեթ համակարգի առաջի օրինակներից մեկի հետ: Հայ առաքելական եկեղեցու գմբեթավորման հիմնական ուղիները վերլուծելիս, Ն. Տոկարսկին նշում է.

«Развитие купольных церковных сооружений в Армении пошло по двум самостоятельным направлениям. С одной стороны, зодчие венчают базиличные здания, с другой - разрабатывают различные типы центрально-купольных церквей, основой которых является квадратное помещение, завершенное куполом. Первыми базиличными и зальными сооружениями, на которых появился купол, пока можно считать перестроенный собор в Текоре и малую церковь в Артике...» (*Н. Токарский, 1961, с. 91*).


Թեև եկեղեցու գմբեթի ու գմբեթային փոխացման համակարգի մասին ոչ մի տեղեկություն ու փաստացի նյութեր չեն պահպանվել, սակայն վերը ներկայացված ներքին ծավալատարածական հորինվածքը, ինչպես նաև արևմտյան ու հյուսիսային խաչաթևերի ճակտոնների առկայությունը (*տախ. 2, գծ. 1, 2, լուս. 1, 2, 3*) ապացուցում են, որ կառույցն եղել է գմբեթածածկ և չորս խաչաթևն ունեցել են երկլանջ, իսկ թաղածածկ արտաքին սրահները՝ միալանջ ծածկեր:

Ընդհանուր ինքնատիպ հորինվածքից բացի, Արթիկի փոքր եկեղեցին աչքի է ընկնում նաև ճարտարապետական առանձին տարրերի կառուցվածքային մի շարք առանձնահատկություններով:



Նկ. 7. Հուշարձանի ավագ խորանը և հարավային խաչաթևի խորանը

Նշենք, որ հուշարձանը կառուցված է կրաշաղախով կապակցված տեղական կարմրագույն մեծածավալ սրբատաշ տուֆաքարերով, որոնք դրսից ու ներսից ունեն 45°-ի տակ տաշված 0,7 սմ լայնությամբ հորիզոնական եզրակոսներ և երկրաչափական վարպետանշաններ (*տախ. 3, գծ. 1*): Ճարտարապետագեղարվեստական մեծ նշանակություն ունեցող վաղ միջնադարյան շինարարական արվեստին բնորոշ եկեղեցու եռաստիճան պատվանդանը կատարում է նախ և առաջ շենքի բաց հիմքերի կոնստրուկտիվ դեր: Առաջին աստիճանի վերևի հարթությունը համապատասխանում է հիմնական սրահի հատակի միջին: Ավագ խորանի բեմի բարձրությունն այդ միջից կազմում է ընդամենը 25-30 սմ, իսկ հյուսիսային ու հարավային խաչաթևերի հատակներինը՝ 10-15 սմ: Առանձնապես ուշադրության է արժանանում կառույցի շինարարական տեխնիկան. հանդիպադիր պատերի որմնաքարերի հորիզոնական կարերը չեն համապատասխանում իրար, սակայն դա բոլորովին չի խանգարել որմնադիր վարպետին, և նա այդ հանգույցի քարերը հմտորեն հյուսել է միմյանց: Պատե-



Նկ. 8. Հուշարձանի հյուսիսային խաչաթևի խորանը ներսից

րի թանձրությունը տատանվում է 1-ից մինչև 1,2մ: Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան և հյուսիսային ճակատներին (*տախ. 2, գծ. 1, 2, 4, 5, լուս. 1, 2, 6, 8*): Դրանց ուղղանկյուն բացվածքները ծածկված են բարավորի մեծ քարերով, որոնց վրա հենվում են այդ հատվածներում պատի ուղղաձիգ ճշումները չեզոքացնող կոնցետի մեկական կամարը: Արևմտյան գլխավոր մուտքի բարավորի և կամարամահիկի (յուրեղի) վրա փորագրված է ընդարձակ արձանագրություն (*տախ. 3, գծ. 3, լուս. 1*): Մուտքերի պարզ լուծումը պայմանավորված է շքամուտքի ֆուկցիոնալ, գաղափարական ու ճարտարապետագեղարվեստական դեր կատարող արտաքին կամարասրահի առկայությամբ: Արևի ճառագայթների տակ ընթեռնելի դարձնելու պայմանից ելնելով՝ ենթադրում էինք, որ մուտքի արձանագրությունը փորագրված կարող էր լինել արտաքին սրահը վերացնելուց հետո միայն: Եվ, իրոք, մեր խնդրանքով այդ արձանագրությունը վերծանելուց հետո, ելնելով տեքստի բովանդակությունից, լեզվական ու ոճական առանձնահատկություններից, ինչ-



պես նաև տառատեսակների փոքրածքի ձևից, Պարույր Մուրադյանն այն թվագրում է 10-11-րդ դդ.: Կամարամահիկի վրայի արձանագրության բովանդակությունը Աբ.Աստվածածին եկեղեցուն մատուցած նվիրատվության, իսկ բարավորի վրայի նույն տեքստի շարունակությունը՝ պատարագների պատվերի մասին է.

ԵՍ ՄԿ/ՐՏԻՉ ՄԱՅԱՆ ԱՍՈՒՄՆՈ ԻՄՈ ԴԵՂՈՒՆԻՆ ՓՈԽԵԼՆ Ի ԶՍ ՏՂԱՅԻԻ

/ԵՏՈՒ/ Ի ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԵԻ Ի ՍԲ Գ/ՐԻԳՈ/Ր ԶԻՄ ՅԱՅՐԵՆԻ ՏՈՒ/ՆՆ/ ԵԻ ԶԿԱԼՆ ԵԻ ԶՄԱՐԱԳ, ԶԱՂԱՅ, ԶԱՂԲՈ-

ԻՆՔՆ, ԶՁՈՐԵ ԵԻ Ց ՏԱՆԻՔ ՅՈՂՈԹՎՆ

ԱԶԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ

ՅԱՐԿԱՅ

ՅԻՇԱՍԱԿ ՄԵՁ ԵԻ ԾՆՈՂԱՅ ՄԵՐՈՑ.../անունները չեն ընթերցվում/ ՈՐՔ

ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԿԱՍԱՐԵՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՍԻ Բ ՍԲ ՊԱՏԱՐ ԱԳ ԶՅԱՅՏՆՈՒԹԵՆ ՄՈՒԵԼՈՅՆ Ա, Բ-ն ԻՆՁ ԱՐՆԵՆ ԵԻ ԶԱՏ ԿԻՆ ՄԵՈՒԵԼՈՅՆ ԻՄ ԴԵՂՈՒՆԻՆ ԱՈՒՆԵ /ստորև քարը կտորած է/

.....  
.....  
.....

Արևմտյան ճակատի առանցքի վրա, մուտքից վերև, բացված է նաև նույնքան պարզ լուծված մի լուսամուտ, որի համաչափությունները, դիրքը, կողային պատերի թեքությունները, մի կտոր քարից դրսից կոր, ներսից՝ ուղիղ հորիզոնական պարակալի վրա արտաքինից փորագրված կամարապսակի ու զույգ խաչի հարթ գծային մշակումը նույնպես բնորոշ են 5-6-րդ դդ. հուշարձաններին (*տախ. 2, գծ. 1, 4, լուս. 1, 6*): Այս պատուհանի ստորին նիշն ար-

տաքինից գտնվում է ճակատը մասնատող քիվից ընդամենը մի քանի շարք վերև: Եթե լուսամուտի նիշը հետագայում չի իջեցվել, ապա վերը նշված համագամանքը, իհարկե, թույլ չի տալիս ենթադրել, որ եկեղեցին արևմուտքից էլ շրջափակված է եղել թաղածածկ սրահով, քանի որ վերջինիս թաղը կծածկեր այդ լուսամուտի զգալի մասը: Բայց դա էլ, իր հերթին, կասկած է առաջացնում, որ սրահի նախնական ծածկը եղել է փայտաշեն, ինչպես վաղագույն սրահածև ու բազիլիկ տաճարներից շատերում, ուր հետագայում կատարված վերակառուցումների ընթացքում անցել են բացառապես քարի կոնստրուկցիաների (Երեբունյք, Օծուն):

Արթիկի եկեղեցին ունի արևելյան ճակատից բացված ևս երկու լուսամուտ՝ դեպի ավազ և հյուսիսային խորանը (*տախ. 2, գծ. 3, 6, լուս. 3, 5, 7, 8*): Թերևս հյուսիսային խորանի պատուհանը հետագայում է բացվել՝ ճեղքելով պատի թածրության մեջ փոքր ուղղանկյուն բացվածք: Ավազ խորանի պատուհանը նույնպես ունի ուղղանկյուն եզրագիծ, սակայն արտաքինից այն պսակված է շրջանագծի մեջ հավասարաթև խաչի վաղագույն քրիստոնեական խորհրդանշանով՝ փորագրված նեղ ու երկար բարավորի քարին: Չաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին քրիստոնեակա տաճարների լուսամուտների կողերը դեպի ներս չեն լայնացվել (Լեռնակերտ, Քասաղ, Երեբունյք), իսկ որոշ սրբարաններ ավազ խորանի կողմից ընդհարապես լուսամուտ չեն ունեցել (Թանահատ, Լեռնակերտ, Ջարջարիս), կարելի է ենթադրել, որ Արթիկի եկեղեցու ավազ խորանի լուսամուտը՝ դեպի դուրս նեղացող կողերով առաջին լուսամուտներից է, կամ բացվել է հետագայում:

Դարերի ընթացքում հուշարձանն ենթարկ-

վել է շինարարական միջամտությունների: Ճակտոնների շարքերի կարերից ցայտուն երևում է, որ ծածկի լանջերի թեքությունները հետագայում բարձրացվել են (*լուս. 1, 2*): Միգուցե դա կապված է եղել նախնական կղմինդրե ծածկը քարե սալերով վերափոխման հետ: Հավանաբար այդ ժամանակ էլ փոխվել են հուշարձանի նախնական քիվերն ավելի ուշ՝ թերևս 11-13-րդ դդ., շինարարական արվեստին բնորոշ տրամատի մեղմ քիվերով (*տախ. 2, գծ. 1, լուս. 1*):

Տեղում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հյուսիսային արտաքին սրահի երկարածիգ պատից մնացած առաջին շարքն, ըստ քարերի եզրակոսների ու վարպետանշանների (*տախ. 3, գծ. 2*), վաղագույն շինարարական միջամտության արդյունք է: Այդ պատի արևմտյան եզրն երեք կողմից սրբատաշ է (*տախ. 1, գծ. 15*), հետևաբար, դա կարող էր լինել սրահ տանող կամարի հյուսիսային հենապատի ստորին հատվածը: Իսկ սրահն արևմուտքից փակող պատի քարերը չունեն ոչ եզրակոսներ, ոչ էլ վարպետանշաններ և, ընդհանրապես, իրենց մշակումով դրանք խիստ տարբերվում են կառույցի հիմնական քարերի մշակումից: Շինարարական այս միջամտումը վերագրում ենք ճակտոնների ու ծածկերի վերակառուցման շրջանին, երբ եկեղեցու գործունեության լրացուցիչ կարիքներից ելնելով՝ հյուսիսային արտաքին պատը շարել և վերածել են ավանդատան, և մուտք է բացվել դեպի աղոթասրահ: Այժմ այդ բացվածքը շարված է անշակ քարերով (*տախ. 2, գծ. 2, 5*):

Նույնպիսի քարերով են լրացված նաև հարավային պատի փլուզված հատվածները: Հուշարձանի հյուսիսային խորանի գմբեթարդի վրա պահպանվել են բազմամարմին որմնանկարի հետքեր:

Ըստ Յ. Ստրժիգովսկու՝ այստեղ երբևիցե պատկերված է եղել Քրիստոսի ողբի տեսարանը (*Յ. Strzиковski, 1918, էջ 500*):

Համեմատելով վաղ միջնադարյան նմանատիպ և այլատիպ հուշարձանների հետ, փորձենք բացատրել ուսումնասիրվող եկեղեցու հորինվածքային առանձնահատկությունները: Վաղ միջնադարյան պաշտամունքային շենքերի համար բավականին երկար ժամանակ ավանդական ճարտարապետական ձև են հանդիսացել միանավ դահլիճ-եկեղեցու տիպի կառույցները: Այդ եկեղեցիները մեծամասամբ ունեն արտաքին սրահներ: Տիպաբանական առումով այդ հուշարձանները կարելի է բաժանել հետևյալ երեք խմբի (*տախ. 1, Ա, Բ, Գ*)՝ եկեղեցիներ որոնք.

- ա. (գծ. 1-5) չունեն ավանդատուն (Արագյուղ, Ավան, Եղվարդ, Լեռնակերտ, Շենիկ),
- բ. (գծ. 7-12) ավազ խորանի մի կողմից կցված ավանդատնով (Կարնութ, Թանահատ, Կուրթան, Գյուլագարակ, Ջգրաշեն, Յոբարձի),
- գ. (գծ. 13, 14) ավազ խորանի երկու կողմին կցված ավանդատներով (Սվերդլով, Կողբ):

Ելնելով քրիստոնեական ծիսակատարգի զարգացման ժամանակագրական և ճարտարապետական վերլուծությունից գիտնականների զգալի մասը, այդ թվում Թ. Թորամանյանը և Ա. Մանուչարյանը, հակված են այդ երեք տիպը դիտել որպես Դժև հատակագծով հորինվածքի ձևավորման երեք հաջորդական փուլ: Մեր ուսումնասիրության համար առանձնապես կարևոր են երկկողմ ավանդատներով, բաց խորաններով արտաքին սրահներ ունեցող դահլիճ-եկեղեցիները, որոնք իրենցից ներկայացնելով այդ տիպի զարգացման վերջին աստիճա-



նը (փակուղին), միևնույն ժամանակ հիմք հանդիսացան խաչածն հատակագծային համակարգերի մշակման համար: Հնագույն հատակագծային ձևերը վերլուծելիս Թ. Թորամանյանը նշում է. «... քրիստոնեության ամենամեծ խորհրդանշանը խաչն էր, սակայն երբեք չէր կարող 4-րդ դարու առաջին քրիստոնեական եկեղեցվո հատակագիծը խաչի ձևով դրվի, ոչ մեկ ճարտարապետ կամ եկեղեցական չէր կարող մտածել այդ մասին քրիստոնեության սկզբին անմիջապես: Այդ ձևն իր մեջ ոչ միայն զարգացում, այլև ճոխություն իսկ կապարուկակե, որ աստիճանաբար զարգացումով միայն կարելի է հասնել այդ վիճակին» (Թ. Թորամանյան, 1942, էջ 119): Ձևաստեղծման այս գործընթացում Թորամանյանը նկատում է նաև, որ «...երկու կողմին վրա եղած փոքր սենյակներուն պատճառով խաչաթևի մոտեցող հատկությունն իբրև նախագաղափար պիտի ծառայեր ապագա քրիստոնեական եկեղեցիներու խաչածն հատակագծերուն» (Թ. Թորամանյան, 1942, էջ 22):

Տաճարաշինության մեջ 5-րդ դ. երկրորդ կեսից մկատվող զգալի փոփոխությունները պայմանավորվեցին եկեղեցական արարողությանը ներկայացվող արդեն ձևավորված պահանջներով թելադրված գմբեթի կիրառմամբ: Նախնական քրիստոնեական երկարածիգ եկեղեցու ճարտարապետության հետագա զարգացումը փոխեց նրա ծավալատարածական համակարգի ամբողջ տեղաբաշխումը. ամեն ինչ ուղղվեց դեպի նրա գեղարվեստական, խորհրդանշական, հուզական ուղղածիգ առանցքը: Աշխարհընկալման նոր սկզբունքներով օծված ծիսակատարության ամբողջ գործողության կենտրոնը տեղափոխվեց գմբեթի տակ: Այդ պատճառով բազիլիկաների կողային նավերն սկսեցին կողմնորոշվել

ոչ թե շենքի երկայնքով դեպի սուրբ խորանը, այլ ուղղվել դեպի գմբեթատակ տարածությունը՝ տաճարի գաղափարական և ճարտարապետական կենտրոնը: Ինքնին դա քրիստոնեության հիմնական խորհրդանշանի՝ խաչի, կիրառումն էր հատակագծային կառուցվածքում, որը նշանավորեց խաչածն կենտրոնագմբեթ բազմազան համակարգերի զարգացման բեղմնավոր ուղղու ճարտարապետա-գեղարվեստական ու հիմնականից նախապայմանը: Սակայն ավելի վաղ շրջանի նախնական գմբեթավոր տաճարներում, հանձինս Արթիկի փոքր եկեղեցու, գմբեթատակ քառակուսին ընդհուպ հարում է ավագ խորանին: Այս առումով տվյալ հուշարձանն իր եռախորան հորինվածքով հանդիսանում է վերը նշված ճարտարապետական արմատական փոփոխությունների միջանկյալ փուլերից մեկը:

Իհարկե, տարբեր ծավալատարածական համակարգերի զուգահեռ զարգացման պայմաններում ճարտարապետական իքնատիպությունն որոշ չափով փափկեցվում է փոխազդեցություններով: Դրա կոնկրետ օրինակն երկարածիգ ու կետրոնածիգ հորինվածքների համադրման և, որպես արդյունք, նոր ձևերի դրսևորման փաստն է: Այսպիսի երևույթ նկատվում է Արթիկի Սբ. Աստվածածին եկեղեցում, որտեղ հմտորեն խաչածնավել են բազիլիկ ու կենտրոնագմբեթ համակարգերի հիմնական հատկանիշները: Մի կողմից՝ նա պահպանում է բազիլիկների հետևյալ առանձնահատկությունները.

*ա/ եռախորան հորինվածքի արևելադրությունը,*

*բ/ ծիսակատարության միջուկի, հետևաբար և գմբեթատակ քառակուսու տեղադրությունն անմիջապես ավագ խորանին կից,*

*գ/ և, որպես հետևանք, տրանսեպտի առաջացում, որը նույնպես կարելի է դիտել որպես բազիլիկայի տարր, սակայն այստեղ այն, ի տարբերություն բազիլիկ տաճարներում իր T-ձև տեղադրումն, առաջացրել է խաչածն հատակագիծ:*

Մյուս կողմից այս հուշարձանում արդեն դրսևորվում են խաչածն հատակագծով կենտրոնագմբեթ համակարգի ծավալատարածական հիմնական հատկանիշները, այսինքն՝

*ա/ գմբեթակիր չորս մույթով կազմած քառակուսու կողմերի ճիշտ հավասարությունը,*

*բ/ հյուսիսային ու հարավային խաչաթևերի գլանաձև թաղերի ուղղահայացությունը հիմնական նավի թաղին,*

*գ/ բոլոր չորս խաչաթևերի ճակտոններով պսակումը և տանիքներում ազատ խաչի արտահայտումը:*

Երկարածիգ ծավալատարածական հորինվածքը տրանսեպտով հատելու երևույթը Յ. Ստրիկովսկին հավանական է համարում կապել Հայաստանի սահմանամերձ Փոքր Ասիական հյուսիսարևելյան շրջանների ավանդական ընդլայնական թաղածածկ կառույցների հետ (Յ. Տրիկովսկի, 1918, էջ 495-496): Այդ կառույցների ծագումնաբանական վերլուծության ուսումնասիրումը տանում է դեպի ստորգետնյա ու քարանձավային դամբարանները, միջազեռքյան պալատական թաղածածկ դահլիճերը (Խորսաբաղի Սարգոնի պալատը) և վաղագույն ժողովրդական բնակելի տները, որոնք Բյուզանդիայի արևելյան տարածքում առաջին քրիստոնեական եկեղեցիների համար հանդիսացան որպես հորինվածքային նախատիպ (Սալահի եկեղեցին) (Յ. Տրիկովսկի, 1918, էջ 495-496): Այստեղ ամենաբնու-

րոշ տարրը կետրոնական մասում գմբեթով պսակված ընդլայնական ուղղությամբ ձգված գլանաձև թաղածածկ սրբարանն է, որին, սովորաբար, արևելյան երկար կողմից կցվում է ավագ խորանը (հաճախ երկու ավանդատով), իսկ արևմտյան կողմին նախամուտքի սրահը: Հետագայում կողային գլանաձև թաղերը փոխարինվում են անկյունային տրոնպների միջոցով իրականացվող գմբեթարդներով (Քահեյի եկեղեցին) (Յ. Տրիկովսկի, 1918, էջ 495-496), ապա այդ կողային թևերը վերածվում են կիսաշրջանաձև խորշերի, որոնք նույնպես ծածկվում են գմբեթարդներով, բայց արդեն առանց որևէ փոխանցման տարրի:

Կառուցվածքային այս տիպի զարգացման ընթացքը համընկնում է Արթիկի փոքր եկեղեցու հորինվածքով պայմանավորված ճարտարապետական համակարգի ձևափոխումների ուղղու հետ: Այսպես, Հայաստանում կողային խաչաթևերի գլանաձև թաղերի փոխարեն ակյունային տրոնպներով գմբեթարդների կիրառման վառ օրինակ է Արթիկի մերձակա Լմբատավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցին, որը կարող ենք բնութագրել որպես խաչածն միախորան, բայց եռակոնք կենտրոնագմբեթ հուշարձան: Գարտարապետական մտքի զարգացման տվյալ ուղին սովորաբար ավարտվում է խաչածն եռախորան կենտրոնագմբեթ հորինվածքի համատարած դրսևորմամբ (Թալինի Սբ. Աստվածածին, Ալամանի Սբ. Անանիա, Դորբանտավանքի Սբ. Աստվածածին, Հնեվանքի ու Պեմզաշենի եռախորան եկեղեցիներ):

Այսպիսով, եռախորան համակարգի ձևաստեղծման հիմնական տարրն ընդլայնական տրանսեպտն է, իսկ գմբեթավորման անհրաժեշտ պայմանը՝ երկայնական ու լայնական նավերի հատման



քառակուսին: Խաչաձև կենտրոնագմբեթ կառույցների բոլոր տիպերը (միախորան, եռախորան և քառախորան), որոնք 7-րդ դ. լայն տարածում ու բազմազանություն ստացան, հիմնված են բազիլիկաներին հակադիր հորինվածքային սկզբունքի վրա: Եթե բազիլիկան ամեն կերպ ընդգծում է ընդերկայնական խորքայի առանցքը, ապա խաչաձև հատակագծով կառուցվածքային համակարգը բացահայտում է նաև ընդլայնական առանցքը: Իսկ կենտրոնագմբեթ կառույցի հիմքում էլ դրված է ուղղաձիգ տարածական կոորդինատը:

Գրեթե բոլոր ուսումասիրողները միաձայն ընդունում են Արթիկի փոքր եկեղեցու թ. Թորամանյանի թվագրումը՝ 6-րդ դ. ոչ ուշ (թ. Թորամանյան, 1942, էջ 87): Այս թվագրման հիմնական փաստերն են.

- արևելահայաց եռախորան հորիվածքը,
- արտաքին սրահների և բաց խորանների առկայությունը,
- գմբեթատակ քառակուսու դիրքը,
- ավանդատների բացակայությունը,
- թաղակիր ու գմբեթակիր կամարների պարզ իմպոստներով որմնամույթերի պատից դուրս ընկած, հատակագծում ուղղանկյուն, ձևը,
- խորանների, կամարների, թաղերի, գմբեթարդների կորերի պայտածնությունը,
- ավագ խորանի բեմի փոքր բարձրությունը,
- պատերի զգալի թանձրությունը,
- քարերի երկրաչափական վարպետանշանների և հորիզոնական եզրակոսների առկայությունը,
- մուտքերի ու լուսամուտների հնամենի ձևերը,
- արևմտյան լուսամուտի միակտոր պարակալի քա-

րի հարթ գծային մշակումը,  
- հնագույն հավասարաթև խաչի կիրառումն արևելյան ճակատի լուսամուտի բարավորի վրա:

Արթիկի Աբ. Աստվածածին եկեղեցին բացառիկ նշանակություն ունի հայկական միջնադարյան ճարտարապետության համար: Այն 5-6-րդ դդ. բնորոշ, արտաքին սրահով դահլիճ-եկեղեցու ծավալատարածական հորինվածքը գմբեթավոր, իսկ հատակագիծը՝ խաչաձև, դարձնելու ինքնատիպ նախափորձ է: Փաստորեն, այն նոր էջ բացեց վաղ միջնադարյան բազմատիպ պաշտամունքային շենքերի զարգացման բնագավառում: Նրանում յուրովի դրսևորվեցին խաչով պայմանավորված քառակուսի տարածության գմբեթավորման 5-րդ դ. գաղափարները:

Աբ. Աստվածածին եկեղեցին աչքի է ընկնում ոչ միայն հորինվածքային ինքնատիպությամբ, այլև խիստ դասական պարզությամբ: Նրա գեղարվեստական արտահայտչականությունը բխում է ներսից, թափանցում ծայրեծայր՝ արտահայտելով իր ներքին էությանը բնորոշ ազնվագույն պարզություն և զսպվածություն, այսինքն՝ բարձր մշակույթի գլխավոր հատկանիշները:

Արթիկի փոքր եկեղեցու բազմաթիվ արժանիքների մասին Թորամանյանը գրում է. «...քեև տարածությամբ փոքր, այնուամենայնիվ այդ շենքի մեջ ավելի ակնբախ են նոր մի վերածնության նախօրյակի ճիգերը և այս փոքրիկ շենքի մեջ կատարելապես երևում են 5-րդ և 6-րդ դարերի թե՛ շինելակերպը և թե՛ գեղարվեստական ոճերը խտացած՝ խիստ պլուրալ և վայելուչ ձևերով» (թ. Թորամանյան, 1942, էջ 87):

1. Ա. Ջալալեանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, Տփղիս, 1842, մասն Ա.:
2. Ղ. Ալիշյան, Շիրակ, Վենետիկ, 1881:
3. Գ. Էփրիկյան, Բնաշխարհիկ քառարան, Վենետիկ, 1903-1905, հ. Ա.:
4. J. Strzikowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, B. II.

5. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան: 1942:
6. Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948.
7. H. M. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961.
8. Ա. Ա. Սանուչարյան, Բնություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977:

**Grigor Nalbandyan**

## Compositional Peculiarities of the Small Church in Artik

### (Summary)

In the compositional construction of the church in Artik, one can trace attempts to centralize the Early Christian lengthwise-planned architectural forms in the process of developing the center-domed system, in which the dome rests on the cross-shaped plan. In its middle part, the monument resembles mediaeval single-nave churches, having outer galleries. However, here, from the Northern and Southern sides of the nave, there side wings extend which intermit these galleries. The remains of the frontons and inter-perpendicular vaults of the Western and Northern wings of the cross, prove that the building was crowned with a dome, which hasn't been preserved today. And it's here that we state the compositional peculiarity of the named church, which distinguishes itself from single-nave churches, in which the adjoined vaults of the southern and northern sides of the eastern churches are parallel to the vaults of the principal naves. The original compositional solution of Artik church radically differs from the known method of doming the three-nave basilica (based on four columns) and single-nave halls (resting on four pilasters that strongly extend from lengthwise walls).

As the Northern and Southern wings of the small church in Artik appeared in the form of a transept, the under-dome square is firmly adjoined to the main apsidal. Considering this kind of archaic forms and details of the monument, one can conclude, that in this case we come in touch with one of the first examples of a centered under-cupola system on the cross-shaped composition.



ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ԴԼԻՆՎԱՐ ՊՈՒՍՏԵՅԻ ԿԱԶՄՆԱԿՈՐՄԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

**Յ**ուրաքանչյուր քաղաքի պատմությունը և մշակույթը նրա հոգևոր ու նյութական հարստությունն է: Ակնհայտ է, որ առանց անցյալի չկա ապագա, և ազգի մշակութային ժառանգությունը՝ նրա պատմության նյութական, քարե վկայությունը, բնակավայրերի գեղագիտական կերպարի անհրաժեշտ և սրբազույն մասն է կազմում: Քաղաքները մարդկության մեծագույն ստեղծագործությունն են համարվում՝ ժամանակի ու տարածության մեջ: Այստեղ մարդը կերտում է իր պատմությունը, կերպավորում իրեն յուրահատուկ ճարտարապետական ընկալումները: Մարդու ստեղծածի հարատևության արդյունք չեն, արդյո՞ք, իրեղեն այն փաստերը, որ հա-

Общая видъ Эривани.  
Vue totale d'Erivan.



Երևանի Նոր Թաղը. Բեիրութովի (Փավստոս Բուզանդի) փողոցի կառուցապատումը XX դարի սկզբում: Արմենպրեսի լուսանկար

ճախ քաղաքները շարունակում են գոյատևել, ապրել նույնիսկ այն ժամանակ, երբ դրանք կերտող պետությունները կործանվում են: Համաշխարհային պատմությունում այդպիսի օրինակները բազմաթիվ են:



Բնակելի տուն Բեիրութովի փողոցում

Հատկապես քաղաքներում է մարդն ամբողջովին դրսևորում իրեն: Իրական քաղաքացին, ապրելով պատմականորեն ձևավորված բազմաշերտ միջավայրում, շատ արագ է ներթափանցում, միահիսվում իր քաղաքի հոգևոր կյանքի մեջ, և խոր անհանգստության զգացումով է հետևում նրա գոյատևման, պահպանման հարցերին: Եվ «վիրաբուժական» յուրաքանչյուր խաթարում քաղաքի «մարմնում»՝ հոգեկան տառապանք է պատճառում նրա բնակիչներին: Քաղաքացիները յուրաքանչյուր անհարկի փոփոխություն ընդունում են դյուրագրգիռ ոչ միայն այն պատճառով, որ դա խախտում է իրենց



Մ. Ենգիբարյանի տունը, Փավստոս Բուզանդի փ., 4, 1907 թ. ճարտ. Բ. Մեիրաբյան

հարմարավետությունը, իրենց ապրած միջավայրի սնվածանգությունը, այլև՝ մտահոգվում են ողջ տարածքի համար, ուր ապրել, գործել, արարել են իրենց նախնիները և ուր պետք է ապրեն ապագա սերունդները: Որպիսզի ինքն իրեն ճանաչի, մարդը չի կարող հրաժարվել իր պատմության մեջ ներթափանցելուց: Սա է քաղաքակիրթ եվրոպացու աշխարհայացքը (Մյուլլեր-Մենկենց Դ., 1981):

Քաղաքի պատմամշակութային ժառանգության նկատմամբ այլ մտածելակերպ է տիրում Հայաստանում: Դրա ամենացայտուն վկայությունն է քաղաքամայր Երևանում ստեղծված իրավիճակը: Այո, երկրի սիրտը օրեցօր կորցնում է իր պատմական դեմքը:

Քաղաքի վերակառուցման վերջին 80 տարիների ընթացքում փոփոխություններն իրականացվել են պատմության և մշակույթի հուշարձանների անտեսման պայմաններում, գլխավոր հատակագծերը մշակվել են առանց հաշվի առնելու հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության խնդիրները: Արդյունքում՝ զգալի վնաս է պատճառ-



վել քաղաքի պատմական դիմագծին: Աբովյան, Նալբանդյան, Յանրապետության, Ամիրյան, Արամի, Փավստոս Բուզանդի, Պուշկինի, Թումանյան, Մովսես Խորենացու, Տիգրան Մեծի, Կոնդ քաղամասի փողոցների պատմական և ճարտարապետագեղարվեստական միջավայրը վերածվել է հատ ու կենտ պահպանված առանձին շենքերով ու համալիրներով փոքրիկ հատվածների\*:

Ներկայումս ամբողջական հասկացությամբ պահպանված պատմական պատկեր գոյություն ունի սուկ Գլխավոր պողոտայի Աբովյան և Եզնիկ Կողբացու փողոցների միջև ընկած հատվածում, ներառյալ Փավստոս Բուզանդի և Արամի փողոցների որոշակի մասը: Այս հանգամանքը հուշում է, որ անհրաժեշտ է այստեղ կենտրոնացնել քաղաքային այն միջոցառումները, որոնք կապված են պատմական - ճարտարապետական միջավայրի պահպանման հետ: Եվ դա կլինի 21-րդ դ. սկզբի Երևանում իրականացվող քաղաքաշինական կերպարի պահպանության կարևոր խնդիրներից մեկը:

Տվյալ խնդրում առաջնային է փողոցների վերակառուցման նախագծին նախորդող պատմա-ճարտարապետական հիմնավորումը: Պատմական կառուցապատման առանձնահատկությունների, շենքերի բնութագրման, պահպանվածության վիճակի, նորովի օգտագործման հնարավորությունների ուսումնասիրությունն անհրաժեշտ պայմանն է վերակառուցման նախագծի բանական լուծման համար:

Այս հոդվածով կփորձեն վերլուծել Գլխավոր պողոտայի մի հատվածի պատմական և ճարտարապետական հիմնական առանձնահատկություններն ու նկարագիրը՝ Փավստոս Բուզանդի փողոցի կա-

ռուցապատումը, որը կազմում է Աբովյան և Եզնիկ Կողբացու փողոցների միջև ընկած N 2-42 շենքերի շարքը\*\*:

Փավստոս Բուզանդի (նախկին՝ Բեհբուքովի) փողոցն անցնում է Երևանի պատմական միջուկի կենտրոնական մասով՝ նախկին Շահար-շրջանով՝ Կոնդի բարձունքի ստորոտից հարավ-արևելյան ուղղությամբ, և ըստ 1906 - 1911 թթ. Երևանի հանույթի դրությամբ հասնում է մինչև Նալբանդյան փողոցի հետ հատման մասը (երկարությունը՝ մոտ 1,08 կմ, լայնությունը՝ 11,4 մ, նկ.1): Փողոցը բացվել է 19 դ. սկզբում՝ Կոնդից հարավ-արևելք ընկած տարածքում, որտեղ սփռված էին Խանի այգիները՝ Խանբաղը: Նիկոլայ I 1837 թ. հրամանագրով Յակական մարզի արքունական բոլոր այգիների (բացի՝ Սարդարի) հողերը հատկացվեցին բնակելի տների կառուցման համար: 19 դ. առաջին կեսին այստեղ ստեղծվեց Նոր շրջան, Նոր թաղ, որը բնակեցվեց առավելապես Պարսկաստանից հայրենադարձված հայերով և նրանց հողամասեր տրվեցին բնակելի տներ կառուցելու նպատակով: Կառուցապատումն իրականացվել է կանոնավոր հատակագծման սկզբունքով՝ 1837 թ. հատակագծի համաձայն, փողոցի հյուսիս-արևմտյան ծայրամասից մինչև ներկայիս Աբովյան փողոցի սահմանագիծը, իսկ հետագայում շարունակվել է քաղաքի 1856 թ. գլխավոր հատակագծով:

Փողոցն անվանակոչվել է գեներալ-մայոր, իշխան Վասիլի Բեհբուքովի (1791-1858 թթ.) անունով, որը 1830-1838 թթ. եղել է Յակական մարզի կառավարիչը, 1920-ին փողոցը վերանվանվել է Ս. Չավարյանի, 1921-ին՝ Ռուբենի, 1920-ական թթ. վերջին՝ Սվերդլովի և 1991-ից՝ Փավստոս Բուզանդի:



9. Անտոնյանի տունը, Փավստոս Բուզանդի փ., 17. 1890-ական թթ.: Փողոցի և բակի ճակատները

Փողոցի գեղարվեստական կերպարը որոշում է բնակելի տների ճարտարապետությունը (նկ. 2): Պարագծային կառուցապատման մեջ միավորված են մեկ-երկու՝ խարսխային բարձր հարկերով շենքեր՝ կազմավորած մի համատարած ճակատով: Սակայն, ի տարբերություն կենտրոնական գլխավոր պողոտաների, այստեղ ավելի հաճախ հանդիպում են իրարից զատորոշված շենքեր և տարածքների բարե ցանկապատեր՝ իրենց շքամուտքերով: Տների ճակատներին բնորոշ են հարթ լուծումները՝ աշխուժացված ավանդական բարձակային փայտե պատշգամբներով, դեպի բակ տանող միջանցիկ երթանցների և դարպասների շքամուտքերով (նկ.4):

20 դ. սկզբին ձևավորված փողոցի կառուցապատման մեջ ընդգծվում էին գրեթե մեկ դարի զար-



գացման փուլերը՝ սկսած 19-րդ դ. առաջին կեսից և մինչև 1910-ականների ոճերը: Դրանք հատակագծային լուծումների, ճակատային կատարումների, կայսերական և տեղական ոճական հայեցակետերի, շինարարական նյութերի (աղյուս, տուֆ) առանձնահատկություններն էին, արտահայտված ավանդական և մոդեռն ձևերի մեջ:

1970-ական թթ. Գլխավոր պողոտայի կառուցման հետ սկսվեց տարածքի վերակառուցումը՝ կանաչ գոտու կազմավորումը Սարյան փողոցից մինչև Խանջյան փողոց: Քանդվեցին Արամի և Փավստոս Բուզանդ փողոցների միջև գտնվող թաղամասերը, որով անուղղելի վնաս հասցվեց պատմական արժեքների պահպանմանը: Ոչնչացվեցին ճարտարապետական և գեղարվեստական արժեք








ունեցող բազմաթիվ կառույցներ, իսկ պահպանված մասը՝ Սարյան և Եզնիկ Կողբացի փողոցների միջև, պարզապես կորցրեց իր ծավալային հատկանիշները՝ Գլխավոր պողոտայի ազատ տարածության ֆոնի վրա: Ներկա վիճակում փողոցը զուրկ է ճարտարապետական-քաղաքաշինական ամբողջականությունից և կորցրել է պատմական դեմքը:

Այժմ Փավստոս Բուզանդի փողոցում կա պատմական և ճարտարապետական արժեք ներկայացնող 15 հուշարձան (N 2, 4, 8, 9, 11, 17, 25, 26, 28, 30, 32, 38, 39, 107 և Եզնիկ Կողբացի, 22): Քաղաքաշինության տեսակետից պահպանվել է համեմատաբար բավարար տեսքով Աբովյան և Եզնիկ Կողբացու միջև ընկած հատվածը՝ 13 պատմական շենքով, որոնցից միայն 9 (առանց N 11, 28, 32 և 38 -ի) գրանցված է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: Այնուհետև նկարագրված 9 հուշարձան կենտրոնացված է Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Արամի և Աբովյան փողոցներով սահմանազատված տարածքում:

1. *Հովհաննես Գրիգորյանի* տունը, 20-րդ դ. սկիզբ, Փավստոս Բուզանդի փ., 2, Աբովյան փողոցի հատման անկյունում, ճարտ.՝ Բ. Մեհրաբյան: 1914 թ. առաջին հարկում բացվել է գինեգործ Հակոբ Բաբախանյանի խմիչքի պահեստի բաժանմունքը, որտեղ վաճառվել են Արտաշատում գտնվող Բաբախանյանների գործարանում արտադրված կոնյակը, օղին և տարբեր տեսակի գինիներ: 1921 թ. հարկը տնօրինել են «խորհրդային Հայաստան» և «Մաճկալ» թերթերի խմբագրությունները: 1929-1935 թթ. երկրորդ հարկի սենյակներից մի քանիսը տրամադրվել է «Գիպրոգոր» ինստիտուտի արվեստանոցին,

որտեղ աշխատել են ճարտարապետներ Կ. Հալաբյանը (առաջին տնօրեն), Գ. Քոչարը, Մ. Մազմանյանը և ուրիշներ: Երկհարկանի է, նկուղով, L-ձև հատակագծով: Առաջին հարկում խանութներ են, որոնցից երեքն ուղղված են Փավստոս Բուզանդի, իսկ երկուսը՝ Աբովյան փողոցի կողմը: Երկրորդ հարկում՝ շենքի պարագծով, տեղաբաշխվել է յոթ սենյակ, որոնցից ամենամեծը՝ դահլիճը (30 ք. մ), նայում է Աբովյան փողոցին: Դրանց մուտքերը բակի պատշգամբասրահներից են, ինչպես նաև Փավստոս Բուզանդի փողոցի վրա բացվող շքամուտքից: Այս կողմում կա դեպի բակ տանող երթանց: Կրող պատերը շարված են տուֆով, միդիս եղանակով: Միջհարկային ծածկերը փայտից են: Տանիքը թեք է, թիթեղապատ: (Փողոց ուղղված երկու ճակատների գեղարվեստական կերպարը բխել է գործաթական առանձնահատկություններից): Առաջին հարկը կազմված է ցուցափեղկերի՝ հովհարածև ռուստով հարդարված աղեղնածև բացվածքներով, երկրորդ հարկը՝ երեսակալներով շրջանակված ուղղանկյուն լուսամուտների հերթագայվող շարքով: Երկրորդ հարկի ճակատը պսակված է ատամնաշար պարզ քիվով: Որպես դեկորատիվ մշակման տարր կիրառված է ժապավենային ռուստը: Բարձակային պատշգամբները ժամանակի ընթացքում վերացել են: Առաջին հարկի ճակատը ծեփապատվել է, սակայն պահպանվել են ռուստի հորիզոնական շարքերը: Շենքը վերանորոգված է, նախկին բակի տարածքում տեղադրված է բարձր ապակեպատ ծավալ, որը հորինվածքային անջատվածություն ունի հին մասից:

2. *Մկրտիչ Ենգիբարյանի* տունը, 1907 թ., ճարտ.՝ Բ. Մեհրաբյան, Փավստոս Բուզանդի փ., 4 (նկ. 3): Պատկանում էր քաղաքային խորհրդի պատ-



Բաբախանյանների եկամտաբեր տունը, Փավստոս Բուզանդի փ., 26

գամավոր, վաճառական Մկրտիչ Ենգիբարյանին, որը 1894 թ.-ից զբաղվում էր Պարսկաստանից և Թուրքիայից նավթի արտահանմամբ: 1920-ական թթ. այստեղ է տեղավորվել Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչությունը: Շենքը միահարկ է, նկուղով: Չուգաչափ հատակագծային հորինվածքում գերիշխում է ուղղանկյունին՝ երկայնակի հիմնապատով բաժանված երկշարք սենյակների (ճակատի երկարությունը 34,6 մ, սենյակների չափերը՝ 25,16 ք. մ և այլն): Կառույցի կենտրոնական առանցքում դեպի բակը տանող միջանցիկ մուտքն է, իսկ եզրերին՝ երկու շքամուտք: Տարածքի խորքն են ձգվում երկու կարճ թև, որոնք հատակագծին տալիս

են Ս տառի տեսք: Բակի ճակատի երկարությամբ բաց սրահներ են (2,7 մ խորությամբ): Պատերը տուֆակերտ են, միդիս շարվածքով: Հատակագծային կազմության համանմանությամբ փողոցի կողմից, հարավ - արևմտյան ճակատի կառուցվածքը զուգաչափ է և ունի երեք առանցք: Կենտրոնական առանցքը ելուստներով է և մուտքի կամարային կիսաշրջանաձև ճակատամասով, որն ամրացած է կիսասյուններով: Կողային շքամուտքերը ձևավորված են համանման: Դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ են փայտե բարձրաքանդակ դռները: ճակատի երկարության և բարձրության հարաբերակցությունը շեշտում է շենքի հորիզոնական ձգվածությունը, որն ընդգծված է երկայնակի կառուցամասերի օգտագործմամբ:

3. *Ստ. Սողոմոնյանի* տունը, 1890-ական թթ., Փավստոս Բուզանդի փ., 6-8: 1920-ական թթ. այստեղ ապրել է երգահան Ռ. Մելիքյանը: Մեկ հարկանի, նկուղով, ուղղանկյուն հատակագծով շինություն է: Երկայնակի կրող պատը ներքին տարածությունը բաժանում է երկու մասի: Սենյակները (30,6, 30,2 ք.մ) խմբված են երկու նախասրահի շուրջը: Բնակարանների մուտքը բակահայաց ճակատի երկայնքով ձգվող փայտե բաց պատշգամբասրահից է: Տնտեսական սենյակները տեղավորված են թաղածածկ նախահարկում և լուսավորվում են փողոցին հարող պատուհաններով: Փողոցի կողմից կա դեպի բակ տանող երկու անցում, որոնք ծածկված են կամարների վրա հանգչող գլանաձև թաղերով: Պատերը քարից են, շարված միդիս եղանակով, հարկային ծածկերը՝ փայտից: Երևանյան սրբատաշ տուֆով երեսապատված փողոցահայաց ճակատը ջլատված է ռուստավորված որմնասյուններով և հարկաբաժան





Մնացականյանների տունը, Եզնիկ Կողբացու փ., 22. 1898 թ.

գոտիով: Աղեղնաձև կտրվածքով լուսամուտները ձևավորված են առաջ մղված ուղղանկյուն երեսակալներով: Նկուղի և անցումների բացվածքներն ընդգծված են ձևավոր փականաքարերով: Ճակատն ավարտվում է քիվով և եզրապատով: Ներկայումս բակի կողմից շենքին կցված է մի կառույց, ներսում կատարվել են նոր միջնորմների հավելումներ:

**4. Բարախանյանների** եկամտաբեր տունը, 19-20 դդ. սահմանագիծ, Փավստոս Բուզանդի փ. 26 (նկ. 5): Երկհարկանի, նկուղով, Ս-աձև հատակագծով երեք բնակարանոց տուն է: Գլխավոր մասնաշենքն ուղղանկյուն է, որտեղ հատակագիծը երկու շարքի է բաժանում երկայնական պատը (սենյակների չափերն են՝ 33 և 21,9 ք. մ, առաջին հարկի առաստաղի բարձրությունը 3,9, երկրորդինը՝ 4,5 մ): Շենքի կենտրոնական առանցքի ուղղությամբ տեղադրված են նախասրահը և սանդղավանդակը: Կողային մասերում կան երկու զուգաչափ բարձակային պատշգամբներ, ծախից՝ բակ տանող թաղակապ անցում: Դեպի տարածքի խորքն են ձգվում միա-

շարք դասավորված սենյակներով կողային երկու թևերը՝ բակ ուղղված պատշգամբասրահներով (մասնաշենքի լայնությունը՝ պատշգամբասրահի հետ միասին, 6,5 մ է): Բաց աստիճանները սենյակները կապում են բակին: Փողոց նայող հարավ-արևմտյան ճակատը զուգաչափ է: Կենտրոնական առանցքում գլխավոր մուտքն է, որի վրա դրված է երկաթե նախազարդ կալունակներին հենված երկթեք ծածկը: Եռանկյուն տիմպանում միջան-

ցիկ նկար է՝ կենտրոնում քնար: Պատը պսակում է սեգմենտավոր ճակտոնը, որի քանդակազարդ մասում «Բ» տառի հետ միահյուսված քարե ծածկագիր է: Չախ կողմում տեղադրված երթանցը շեշտում է կամարը: Բացվածքի դիրքն աններդաշնակություն է հաղորդում ընդհանուր հորինվածքի կանոնավոր լուծմանը: Մնացած խորշերն ուղղանկյուն են: Ստորին պատուհանների ձևավորման համար կոպտատաշ (ռուստավոր) եզրաշերտ է օգտագործվել, երկրորդ հարկում՝ շրջանակալներ և ատամնաշարով զարդաքիվեր: Որոշ վերակառուցումները և ներքին փոփոխությունները աղավաղել են տան սկզբնական հատակագիծը:

**5. Գ. Կուրբանյանի** տունը, 19-րդ դ. կես, Փավստոս Բուզանդի փ., 28: Միհարկ, նկուղով, փոքր ծավալի շինություն է, փողոց ուղղված կարճ ճակատով: Մուտքը բակից է: Պատերը շարված են աղյուսից: Փողոց նայող հարավ-արևմտյան ճակատի գեղարվեստական կերպարը բնորոշվում է երեք լուսամուտներով: Դրանք կիսակոր կամարներով ա-

վարտվող, շրջանակալներով և ատամնաշար զարդաքիվերով ուղղանկյուն բացվածքներ են:

**6. Ե. Սանահյանի** տունը, 1894 թ., Փավստոս Բուզանդի փ., 30: Միհարկ, նկուղով կառույց է, բաղկացած գլխավոր մասնաշենքից և բակի առանձնատներից: Գլխավոր մասնաշենքում սենյակները (29 ք.մ և այլ) դասավորված են երկշարք կարգով, բակում՝ միաշարք: Բնակարանի մուտքը բակից է, որ փողոցից տանում է երթանց: Վերջինիս մեջ է թաղակապ նկուղի դուռը: Փայտյա բաց պատշգամբը ձգվում է բակահայաց ճակատով և բոլոր սենյակները կապում միմյանց: Սև տուֆով շարված գլխավոր ճակատը ճարտարապետական զուսպ լուծում ունի: Լուսամուտները երեսակալներով և աղեղնաձև բարավորներով են: Դրանցից վերև քանդակված են քառատերև վարդակներ: Ճակատի աջ կողմում աչքի են ընկնում երթանցի մուտքն ու մեծ լուսամուտը: Այս մասում նկուղն ունի փոքր, ուղղանկյուն, հիմնաշարի մեջ բացված լուսամուտ: Ճակատն ավարտվում է պարզ քիվով:



**7. Գ. Գովսեփյանի** տունը, 19-րդ դ. վերջ, Փավստոս Բուզանդի փ., 32: 1920-ականներին այստեղ բնակվել է բժիշկ, պրոֆեսոր Վահան Արծրունին: Երկհարկանի է՝ հատակագծում ուղղանկյուն գծագրությամբ: Ունի կիսանկուղային հարկ, ուր տեղավորված են տնտեսական և օժանդակ սենյակները: Փողոցակողմի մասը, որն ունի գլանաձև թաղային ծածկ և լուսամուտներ, հատկացված էր մառանին: Բնակելի հարկում հինգ սենյակներ են, որ խմբավորված են նախասենյակի շուրջը: Ընդհանուր սենյակը (30,3 ք. մ) և կողային սենյակները նայում են փողոց՝ հարավ-արևմուտք, իսկ երկուսը՝ դեպի բակ, հյուսիս-արևելք: Տան մուտքը՝ թե՛ բնակելի և

թե՛ տնտեսական մասի, բաց պատշգամբասրահից է, որը գրավում է բակահայաց ողջ ճակատը: Կողաձակատին կից քարե լայն աստիճանները տանում են պատշգամբասրահ: Շինված է տուֆ քարից և աղյուսից: Ծածկը փայտից է: Ժամանակին ունեցել է հողե հարթ տանիք: Այժմ փոխարինված է երկթեք, շիֆերապատ տանիքով, ճակատի ստորին մասը սվաղված է կրաշաղախով: Գլխավոր ճակատն ունի համաչափ լուծում՝ եռանաս, ուղղահայաց բաժանումներով: Առանձնապես արտահայտիչ են բնակելի հարկի ուղղանկյուն լուսամուտները, որ շրջանակված են երեսակալներով, վերևում ունեն եռանկյուն զարդաքիվեր: Պարզ գծակերպ քիվը և ձգագոտին լրացնում են ճակատի դեկորատիվ հարդարանքը: Նկուղային հարկը օգտագործվում է որպես բնակելի տարածություն:

**8. Լ. Արրահամյանի** տունը, 19 դ., Փավստոս Բուզանդի փ., 38: Մեկհարկ է, կիսանկուղով: Դատակագիծն ուղղանկյուն է, սենյակների միաշար դասավորությամբ: Տան մուտքը պատշգամբասրահից է, որը ձգվում է բակի կողմի ողջ ճակատով, և ուր տանում է քարե թաղով ծածկած երթանցը: Տուֆով երեսապատված գլխավոր ճակատը համաչափ է, հարդարված հարթությունը բաժանող ձգագոտիներով և որմնասյուներով, որոնք շարված են ռուստով շքահարկի բարձրության չափով: Կողային մուտքի մասը շեշտված է աղեղնաձև բարավորով ավարտվող լայն բացվածքով: Գեղարվեստական տարրերը պարզ են լուսամուտագոգերի տակ բաշխված կվադրեր, որոնք կրկնում են տանիքի եզրապատի վրայի սկավառակներով զուգակցված ծոփորը ձևավորող եղևնագիծ զարդաքանդակը:



**9. Մնացականյանների** տունը, 1898 թ., Եզ-





նիկ Կողբացու փ., 22 (նկ. 6): Գտնվում է Փավստոս Բուզանդի և Եզնիկ Կողբացու փողոցների անկյունում: Միահարկ է, նկուղով: Շենքի երկու ծավալը (երկարությունը՝ Եզնիկ Կողբացու փ. ուղղությամբ 32,3 մ) տեղավորված են ուղղանկյուն բակի շուրջը: Հիմնական շինության հատակագիծն ունի L-ի ձև, դեպի Փավստոս Բուզանդի փ. նայող երկայնական ճակատով (սենյակների չափերն են՝ 26,4, 21,1 ք.մ, առաստաղների բարձրությունը՝ 4,25 մ): Երկու փողոցներից ունի երկու մուտք և թաղակապ երթանց: Գլխավոր մասնաշենքին հարում է նեղ թևաշենք, որը ձգվում է դեպի խորքը: Երկրորդ ծավալն ունի ուղղանկյուն հատակագիծ, գտնվում է առաջինի կողքին՝ Եզնիկ Կողբացու փողոցի վրա: Բնակարանի մուտքը մասնաշենքի միջին մասում է: Նախասենյակի շուրջը կենտրոնացած են բոլոր սենյակները, իսկ դիմացի դռները տանում են պատշգամբ (սենյակներ-

րի չափերն են՝ 27,2 և 13,6 ք.մ): Գեղարվեստական միջոցներով ընդգծվել են հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան ճակատները, որոնց միավորում է միանման ճարտարապետական մշակումը: Հյուսիս-արևմտյան ճակատը զուգաչափ է՝ կենտրոնական մուտքով և երկու զույգ լուսամուտներով: Ուղղանկյուն փոքրիկ պատուհաններով հարթ գետնախորիսը միանում է երկրորդ հարկի լուսամուտատակի քիվագոտուն: Պատի հիմնական մասն ունի թեթևակի կոպտատաշ երիզ, որի կողապատերը հարդարված են ուղղահայաց ելուստներում: Պատուհաններն ուղղանկյուն են, վերևից զարդարված սեպերով և բարձակներ ունեցող քիվերով: Համանման ձևավորում ունեն գլխավոր մուտքերը, բացի անցման մուտքից, որն ավարտվում է աղեղնակամարով: Ծոփորը բաղկացած է վահանի և կլոր հարթաքանդակի տեսք ունեցող ուռուցիկ մանրամասների



Փավստոս Բուզանդի փ., 2, 4, 8, 26, 30, 32, 38 և Եզնիկ Կողբացու փ., 22 շենքերի ճակատների փովածրը և հատակագծերը 2005 թ. դրությամբ:

րով: Ոչ բարձր, բարդ քիվն ընդգծում է հարթ խոյակներով առամիկների շերտը: Գլխավոր ճակատի դռան կիսաշրջանաձև կամարի վրա փորագրված է 1898 տարեթիվը: Մյուս արձանագրությունը գտնվում է Փավստոս Բուզանդի փողոցի կողմի դռան վերևում և նշում է տանտերերի անունը:

Այսպիսով, Փավստոս Բուզանդի փողոցի նշված հատվածի կառուցապատումն իրականացվել է ըստ 1837 և 1856 թթ. գլխավոր հատակագծերի: Այն բացառապես բնակելի տների կառուցապատում է: Դրանք առանձնատներ են, նեղքին բակում պարփակված կառուցվածքով և դեպի փողոց ուղղված գլխավոր մասնաշենքով: Վերջիններս տեղադրված են կարմիր գծի սահմանի վրա՝ կազմելով իրար միացած երկու-երեք շենքերի խմբեր: Տների միջև ընկած տարածություններն ավելի ուշ զբաղեցրել են այլ տիպի շինություններ: Այդ պատճառով ճարտար-

րապետական-գեղարվեստական արժեք ներկայացնող պատմական շենքերի միջև ստեղծվել է աններդաշնակ կառույցների մի շերտ:

Ավելի վաղ ժամանակաշրջանի տները՝ կառուցված 19-րդ դ. կեսին, ժամանակին ունեցել են հողե հարթ կտուրներ, որոնք հետագայում փոխվել են երկթեք տանիքներով: Տների մուտքը հիմնականում բակի կողմի պատշգամբասրահից է: Վերջինս, հատկապես այս տիպի տներում, յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, սակայն դրանց մեծ մասը լուրջ վերանորոգման կարիք ունի: Վերանորոգումը հիմնականում կապված է տեխնիկական խնդիրների հետ, քանի որ ճարտարապետական տեսակետից կառուցվածքին և կերպարին բնորոշ բոլոր տարրերը պահպանված են: Ամրակայացման կարիք ունի շենքերի կոնստրուկտիվ ողջ համակարգը:

Այս ուսումնասիրությունը հիմնավորում է



այն կարծիքը, որ ճարտարապետական և գեղագիտական միջավայր ստեղծելու համար, առաջնային խնդիրներ են. ա) պատմական, ճարտարապետական արժեք չունեցող շերտերի մաքրում, բ) ազատված տեղերի լրացում՝ նկատի առնելով իրարից անջատ շենքերի գեղարվեստական-քաղաքաշինական կապը, գ) կանաչ գոտու վերականգնումը:

Նախագծային աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է հիմք ընդունել կարևորագույն նպատակը՝ պատմական միջավայրի պահպանումը (նկ. 7):

Lilit Vardanyan

## The Historical Basing of the Main Avenue of Yerevan

(Summary)

During the reconstruction of Yerevan in the last 80 years the greater part of the historical-cultural monuments of the XIX-XXcc were destroyed. Nowadays the only preserved block in the capital is the Main Avenue.

This article is an attempt, on the basis of documental facts, to analyse and introduce the historical and architectural peculiarities of the buildings on Pavstos Buzand street, which stretches from Abovyan st. to Yeznik Koghbatsi st. In the sphere of reconstruction of the street, 9 historical and cultural monuments - 8 on Pavstos Buzand St. (NN 2, 4, 8, 26, 28, 30, 32, 38) and 1 on Yeznik Koghbatsi st. (N 22) have been described in details. It's the first time that the general plan and the evaluation from the street has been published by the author.



1. Мюллер-Менкенс Г. Новая жизнь старых зданий. М., 1981.

\* 2004 թ. դեկտեմբերի 14-ի No 2120 գիտնական-ճարտարապետների ԴԴ վարչապետին և Կ-1285՝ Երևանի քաղաքապետին ուղղված նամակներից:

\*\* Հոդվածում օգտագործվել է Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի նյութերը:

## ԺԱՆՇԱԿԻ

Ժան Շարդենը ծնվել է 1643 թ. նոյեմբերի 26-ին՝ Փարիզում: Նա մայրաքաղաքի հարուստ ոսկերչիներից մեկի որդին էր: Հայրը դավանում էր բողոքական կրոնը, որը մեծ ազդեցություն է ունենում ապագա ճանապարհորդի ճակատագրի վրա:

Հազիվ 22 տարին լրացած, 1664 թ., նա մասնակցում է հոր առևտրական գործարքներին, կատարում իր առաջին ճանապարհորդությունը դեպի Արևելյան Հնդկաստան: Սյուրատում նա երկար չի մնում և հաջորդ տարի վերադառնում է Պարսկաստան, որտեղ ապրում է 6 տարի: Այդ ընթացքում նա առևտրական գործարքների հետ միաժամանակ կատարում է խոր և օգտակար ուսումնասիրություններ, հետազոտություններ: Վեց ամիս անց ստանում է Պարսկաստանի շահի առևտրականի տիտղոս, որը հնարավորություն է ստեղծում կապեր հաստատել արքունիքի կարևոր անձանց հետ, ազատելք ու մուտք ունենալ նրանց մոտ, հետաքրքիր տեղեկություններ կուտակել:





Հարաբերությունների դյուրինացման նպատակով նա սովորում է պարսկերեն:

Ահաբեկված խռովահույզ իրավիճակից, որ վաղուց ի վեր մոլեզմուն էր Ֆրանսիայում, և որի պատճառով բողոքական դավանանքի ֆրանսիացիներից շատերը կնքեցին իրենց մահկանացուն, Շարդենն ընդմիջտ հրաժեշտ է տալիս իր հայրենիքին և 1681 թ. ապրիլի 14-ին՝ ապաստան է գտնում Լոնդոնում: Մայրաքաղաք ժամանելուց 10 օր անց՝ Կառլոս 2-րդ թագավորը նրան շնորհում է ասպետի տիտղոս: Արքան պատվոնշանը նրան հանձնում է իր ձեռքով: Նույն օրը նա ամուսնանում է ռուանցի մի օրիորդի հետ, որը նույնպես փախել էր Ֆրանսիայից՝ ազատվելով տեղի քահանաների ու վարդապետների եռանդուն հետապնդումներից:

Շարդենը շուտով ստանում է մեկ այլ, ավելի պատվավոր պաշտոն: Կառլոս 2-րդը նրան նշանակում է Անգլիայի լիազոր ներկայացուցիչ Յոլանդիայում: Արևելյան Յոլանդիայի անգլիական ընկերությունը նրան ընտրում է իր գործակալը Յոլանդիայում: Օգտվելով առիթից, նա այստեղ 1711-ին հրատարակում է իր «ճանապարհորդությունները»՝ ավելի ծավալուն տեսքով, քան առաջինն էր, որը 1686 թ. հրատարակվել էր Լոնդոնում:

Հայտնի չէ, թե Շարդենը երբ է վերադառնում Անգլիա: Ամենայն հավանականությամբ դա տեղի է ունեցել աշխատության հրատարակումից հետո, քանի որ 1713 թ. հունվարի 26-ին ճանապարհորդը մահանում է Լոնդոնի մոտ, 69 տարեկան հասակում՝ հարուցելով իր որդեգիր հայրենակիցների հար-

գանքն ու ափսոսանքը: Ողջ եվրոպայում նա ուներ մեծ հեղինակություն: Նրա աշխատությունը ժամանակի ընթացքում ոչ միայն չի կորցնում իր հնչեղությունը, այլ ավելի է տարածվում ու արժեվորվում հետագա մեծ ճանապարհորդների շնորհիվ, ովքեր անցնում են նրա նկարագրած գավառներով: Այդ հեղինակությունն առավել լայն ճանաչում է ստանում 18-րդ դարի մեծ փիլիսոփաների, հրատարակիչների և խորագիտակների շնորհիվ, ովքեր նրա աշխատության մասին խոսում էին մեծ հիացմունքով:

Շարդենի «ճանապարհորդությունները» հաճախ են վերահրատարակվել Ֆրանսիայում և այլ երկրներում: Հիմնականում երեքն են: Առաջինը՝ 1686 թ. Լոնդոնում, հեղինակի մասնակցությամբ՝ մեկ հատորով, որն ընդգրկում է միայն Փարիզից Սպահան ճանապարհորդությունը: Հայտնի չէ, թե ինչն է խանգարել ավարտելու այդ գեղեցիկ հրատարակությունը, որից լույս է տեսնում միայն առաջին հատորը: Բնագիրը ճանապարհորդը տպագրում է 25 տարի անց, 1711 թ., Ամստերդամում, երկու հրատարակությամբ. մեկը՝ 3 հատորով, իսկ մյուսը՝ 10 հատորով:

1735 թ. հոլանդացի գրավաճառները, ձեռք բերելով Շարդենի ձեռագրերը, շարվածքատախտակները, «ճանապարհորդությունները» հրատարակում են 4 հատորով: Այստեղ նրանք վերականգնում են 1711 թ. հրատարակությունում բաց թողած հատվածները:

Ֆրանսիայում «ճանապարհորդությունները» հրատարակվել են միայն մեկ անգամ՝ 1811 թ.:

Շարդենի աշխատության մոտավորապես 200 էջը վերաբերվում է Հայաստանին: Նա անցել է Դիլիջանով, Երևանով, Էջմիածնով, Արտաշատով, Նախիջևանով, այնուհետև արևմտյան Հայաստանով, նկարագրել է Ջուղան:


Այսօր էլ Շարդենի աշխատությունը չի կորցրել իր նշանակությունը և հայագիտական կարևորա-

գույն սկզբնաղբյուրներից է: Այն նաև ներկայացնում է, թե ժամանակին եվրոպացիները ինչ պատկերացումներ ունեին հայերի և Հայաստանի մասին: Նկատի ունենալով այս հանգամանքը, հայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնում ենք նրա աշխատության Հայաստանին վերաբերող գլուխներից հատվածներ:



## ԺԱՆ ՇԱՐԻՆ

ՃԱՆԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԵՐ ՊԱՐԿԱՅՍՆ ԵՎ ԱՌԿԵԼԻ ԱՅԼ ԵՐԿԵՐ  
 ԸՍՏ ԼՆԱԿԻ, 1811 թ., (Փարզ, ՎՍՏԻՐ 2, ԷՑ 161-170) ՎՐԵՍԿԱՎՈՒԹՅԱՆ




## ԵՐԵՎԱՆ

Իրիվանը՝ մեծ քաղաք է, սակայն անհրապույր է ու կեղտոտ: Այստեղ շատ են այգիներն ու վարչական կենտրոնները: Այն տեղադրված է բոլոր կողմերից լեռներով շրջապատված հարթավայրում: Կողքով անցնում են երկու գետ՝ Չանգուն՝ հս-ամ-ում, և Կըրխ-Բուլաղը՝ հվ-ամ-ում: Կըրխ-Բուլաղ նշանակում է 40 աղբյուր: Սրա ընթացքը

երկար չէ: Քաղաքի դիրքի մասին կսահմանափակվենք այսքանով, չենք խոսի նաև նրա տեսքի մասին՝ հատակագիծը բավական է նրա մասին գաղափար կազմելու համար:

Ամրոցը կարելի է իբրև փոքր քաղաք ընդունել: Այն ձվաձև է, ունի 4000 քայլ շրջագիծ և մոտ 800 տուն: Այնտեղ բնակվում են միայն

պարսիկներ: Հայերն այնտեղ խանութներ ունեն, որտեղ աշխատում և առևտուր են անում ամբողջ օրվա ընթացքում: Երեկոյան նրանք փակում են խանութները և իրենց տները վերադառնում: Այս ամրոցն ունի երեք հողաշեն կամ հուճ աղյուսից շարված որմնանցքներով պարիսպներ, որոնք եզերված են աշտարակներով և ամրացված են շատ նեղ պատնեշներով՝ ըստ պարսպապատման հին արևելյան ձևի, ուստի՝ առանց կանոնների պահպանման: Ցանկության դեպքում էլ դժվար կլինեն կանոնավոր գործ անել, քանի որ ամրոցը հս-ամ-ում տարածվում էր մի լայն ու քարքարոտ, ավելի քան 100 ծողաչափ խորության զարհուրելի դարավանդի եզրին, որի խորքով հոսում է գետը: Այս անառիկ ու անմատչելի վայրը չունի այլ ամրություններ, բացի հրետանիով ամրացված դարատափից: Այն ունի հավասար քանակության դռներ ու պատեր, որոնք բոլորը երկաթապատ են, ամրացված երկաթագամերով, պատնեշներով և ունեն պահակատներ: Ամրոցը պահպանում է 2000 մարդ: Նահանգի կառավարչի պալատն ամրոցում է, դարավանդի եզրին, որի մասին խոսվեց վերևում: Այն գեղեցիկ է, շատ մեծ և չքնաղ է ամռանը: Ամրոցին մոտ, ընդամենը 1000 քայլի վրա, հյուսիսային կողմում կա մի բլրակ, որը վերևից նայում է քաղաքին: Նրա վերևի մասն ամրացրել են հրետանիով և կրկնակի պատով: Այնտեղ կարելի է բնակեցնել 200 մարդ: Այս փոքր ամրոցը կոչվում է Keutchy qal'ah (թուրքերեն՝ փոքր ամրոց): Քաղաքն ամրոցից այնքան էլ հեռու չէ: Ամրոցի և քաղաքի միջի տարածությունը լի է տներով ու շուկաներով: Բայց դրանք




Հին աշտարակը

այնքան թույլ են իրենց կառուցվածքով, որ մեկ օրում կարելի է բոլորը վերացնել: Քաղաքում կան բազմաթիվ եկեղեցիներ: Գլխավորներն են՝ առաջնորդարանը, որը կոչվում է Իրկու-Երես (երկու երես), և Կաթողիկեն: Այս երկու եկեղեցին կառուցվել են հայոց վերջին թագավորների օրոք, մյուսներն ավելի հին են: Նրանք փոքր են, հողի մեջ խրված և նման են գետնափոր դամբարանների: Եպիսկոպոսարանի մոտ կա մի հին, սրբատաշ քարերով կառուցված աշտարակ, որի նկարը տեղադրել են այստեղ: Ես չկարողացա իմանալ ո՞չ նրա կառուցման ժամանակը, ո՞չ

1. Կարդացեք Երիվան, որն արդեն ուղղել են ավելի վերևում, նույն տեքստում և նայեցեք նկարը, ուր ներկայացված է քաղաքի տեսքը, որի առիթով կներկայացնենք պրն. Բարթեռ դը Բուկաթի դիտողությունը. «Լեռը, որտեղ կանգ է առել Նոյան տապանը, տեղադրված լինելով Երիվանից 12 մղոն դեպի Արևելք, ինչպես այդ ասում է Շարդենն 88 էջում, ըստ հեռանկարչության օրենքների՝ չպետք է լինի այս տեսարանում, որը վերցված է արևելյան կողմից: Հայերենում երիվան բառը նշանակում է ակներև, տեսանելի, քանի որ այն առաջին երկիրն է, որ Նոյը հայտնաբերում է, որը նրան երևում է, երբ դուրս է գալիս տապանից: Տես՝ Վիյոթթ, «Հայերեն բառարան», էջ 273:

2. Կըրխ-Բուլաղ. այս բառն իսկապես Շարդենի նշած իմաստն ունի:





Տեաքան քաղաքից

կառուցողին և ո՛չ էլ՝ թե ինչ նպատակի է ծառայել: Դրսից կան արձանագրություններ, որոնք տեսքով նման են հայերերենին, բայց հայերը չեն կարողանում դրանք կարդալ: Այս աշտարակը հնամենի աշխատանք է և եզակի է իր ճարտարապետությամբ: Այն ունի արտաքին պատեր և ներքին տարածություն:

Դրսում և շրջակայքում կան բազմաթիվ ավերակներ, որոնց տեղադրությունից կարելի է ենթադրել, որ այնտեղ եղել է վանք և սրահ կենտրոնում այդ աշտարակն է վեր բարձրացել:

Առջևում մի մեծ շուկա է, ամմիջապես նրա հարևանությամբ՝ աղյուսաշեն մի հին մզկիթ, որն այժմ ավերակ վիճակում է: Այն կոչվում է հիմնադրի անունով՝ Դյոֆ սուլթանի մզկիթ: 300 քայլ այն կողմ մեծ Մեյդանն է: Ասիայում մեյդան են կոչվում բոլոր մեծ հրապարակները: Երևանի մեյդանը քառակուսի

է, ունի 400 քայլ պարագիծ և շրջապատված է ծառերով: Այն ձիախաղերի, արշավների, գոտեմարտերի, կրկեսի և բոլոր տեսակի, քիչ թե շատ դժվարին, ուղքով կամ ձիով կատարվող վարժությունների վայր է:


Քաղաքում և ամրոցում կան բազմաթիվ բաղնիքներ ու քարվանսարաններ: Ամենագեղեցիկը դոյակից 500 քայլ այն կողմ է: Հայաստանի կառավարիչը (այն ժամանակ կոչվում էր Սեֆի Կուլի խան և որին հանդիպում ենք ստորև) վերջերս էր այն կառուցել: Շքանուտքն ունի 80 ոտնաչափ խորություն և իրենից ներկայացնում է գեղեցիկ մի անցում: Այն լի է խանութներով, որտեղ վաճառվում են ամեն տեսակի պաստառեղեն: Շինությունը քառակուսի է, իր մեջ ընդգրկում է 3 մեծ և 60 փոքր բնակարաններ, մեծ ձիանոցներ և շատ ճոխ խանութներ: Առջևը խանութներով շրջապատված շուկան է, որտեղ վաճառվում է ամեն տեսակի ուտելիքներ, կողբին՝ մի գեղեցիկ մզկիթ և դայֆեի երկու կաբարե:

Քարտեզի վրա Երիվանը գտնվում է  $45^{\circ}15'$  լայնության և  $78^{\circ}10'$  երկարության վրա: Օդը բարվոք է, սակայն մի փոքր թանձրամած և շատ սառը:

Չմեռն այնտեղ երկար է տևում: Երբեմն ծյուն է գալիս նույնիսկ ապրիլ ամսին, որը գյուղացիներին ստիպում է խաղողի այգիները հողի մեջ թաղել ձմռան սկզբին և հանել միայն գարնանը: Երկիրը քավականին հաճելի է ու շատ արգասաբեր: Միրզն այնտեղ առատ է, հատկապես՝ խաղողը, որը շատ համեղ է ու շատ էժան: Հայերն, ըստ ավանդության, համարում են, որ Նոյը որթատունկ է տնկել Երիվանին շատ մոտիկ: Ոմանք նույնիսկ ցույց են տալիս այդ տեղը: Հողը տալիս է ամեն տեսակի սննդամթերք, որն այնտեղ վաճառվում է չնչին գներով: Կողքով անցնող երկու գետը և լիճը, որի մասին դեռ կխո-

սենք, մատակարարում են շատ համեղ ձկներ՝ իշխան, ծածան, որոնք մեծ համբավ ունեն ողջ արևելքում: Ես տեսա այդ ձկները: Դրանք երեք ոտնաչափ մեծություն ունեին: Երիվանում շատ են ուտում նաև կաքավներ: Երիվանի լիճը գտնվում է հս-ամ-ում, այնտեղ գնալն երեք օրվա ճանապարհ է: Պարսիկներն այն անվանում են Դերիաշիրին, այսինքն՝ քաղցր լիճ՝, իսկ հայերն այն անվանում են Կիազարկունի-սու, որը նույն իմաստն է արտահայտում: Այս լիճն այսպես են անվանել իր քաղցրահամ ջրի պատճառով: Այն ունի 25 մղոն շրջագիծ և շատ խորն է: Այնտեղից բռնում են 9 տեսակի համեղ ձուկ: Համեղ իշխանն ու ծածանը, որ ուտում են Երևանում, բերում են այս լճից:

Լճի մեջ կա մի փոքր կղզի, որտեղ 600 տարի առաջ հիմնադրված մի փոքրիկ վանք է երևում: Վանահայրն արքեպիսկոպոս է, որն իր վրա է վերցրել պատրիարքի տիտղոսը՝ այսպիսով հրաժարվելով ճանաչել հայոց մեծ պատրիարքին: Մեր քարտեզներում ամենևին չի նշվում այս լիճը, և շատ զարմանալի է, որ պարսիկ ճանապարհորդները նրա մասին ոչինչ չեն հիշատակում: Այս վրիպումը ենթադրել է տալիս, որ հեղինակները խորությամբ չեն ուսումնասիրել այն երկրների յուրահատկությունները, որտեղով նրանք անցել են: Ջանգու գետը, որի մասին խոսեցինք, սկիզբ է առնում այս լճից: Նա



Էջմիածնի եկեղեցին. հատակագիծը և կտրվածքը:

անցնում է Հայաստանի մի մասով, միանում Արաքսին՝ Կասպից ծովի մոտ, որտեղ և լցվում են այս երկու գետը:

4. Բառացիորեն նշանակում է քաղցր ծով: Տավեռնիեն իր ճանապարհորդություններում այս լիճը տեղադրում է Երիվանից 10 մղոն այն կողմ /հ. 1, էջ 29/ և 25 մղոն՝ նույն հատորի 50-րդ էջում: Բայց Մոնիեն համամիտ է Շարդենի հետ, ասելով, որ այն գտնվում է քաղաքից դեպի հս. և 2,5 օրվա ճանապարհ փետք է կտրել՝ այնտեղ հասնելու համար: Նա այս լիճը նշում է Աղթամար անունով՝ օգտվելով թուրք աշխարհագրագետի ուղղագրությունից, որը խոսում է այդ անունով կոչվող և այս լճի կղզիներից մեկում գտնվող մի ամրոցի մասին, որը կոչվում է նաև Արճեշ, Վանա լիճ (Լանգլես):

5. Սակայն Տավեռնիեն մեր ճանապարհորդից առաջ խոսել է այս լճի մասին (հ. 1, էջ 29, 1681 թ. հրատարակված իր ճանապարհորդությունների 4-րդ աշխատությունում) (L.):

6. Մոնիեն Ջանգուն ոչ թե գետ է համարում, այլ հորձանք, և ասում է, որ Երիվանից 3 մղոն հեռավորության վրա այն թափվում է Արաքսի մեջ, որին արևելագետներն անվանում են Արազ /Տեղեկատու նամակներ, հ. 3, էջ 25/ (L.):

7. Այստեղ մեր ճանապարհորդը սխալվում է, որովհետև, ըստ Բարբիե դը Բուկաժի, Ջանգուն լցվում է Արաքս գետն Երիվանից 3 մղոն դեպի հարավ, ինչպես ասում են նաև Տավեռնիեն ու Մոնիեն: Այս գետախառնուքն, այսպիսով, շատ հեռու է Կասպից ծովից (L.):

3. Պ. Ռեշարը Պարսկաստանի՝ իր քարտեզում այս քաղաքը տեղադրում է  $40^{\circ}5'$  լայնության և  $62^{\circ}55'$  երկարության վրա: Պ. Սուատրը, որը ուսումնասիրել է այս քաղաքը 1692 և 1693 թթ., այն տեղադրում է  $40^{\circ}5'14''$  վրա: Ըստ երևույթին, Ռեշարը համաձայն է այս զննության հետ:



Հայաստանի այս մասում, ինչպես նաև Մա-  
րաստանում, որն ամենամոտն է Հայաստանին, կան  
բազմաթիվ այլ լճեր, որոնց մասին ոչինչ չի հիշա-  
տակվում քարտեզներում: Այս լճերն այնքան մեծ չեն  
և հարուստ չեն ձկներով, կան նույնիսկ լճեր, որտեղ  
բոլորովին ձուկ չկա:

Ըստ հայերի՝ Իրիվանն աշխարհի ամենահին  
բնակավայրն է, քանի որ Նոյն իր ողջ ընտանիքով  
այնտեղ է բնակվել և՛ ջրհեղեղից առաջ, և՛ հետո, երբ  
նա իջել է այն լեռից, որտեղ կանգ էր առել տապանը:  
Հայերը նույնիսկ ասում են, որ այստեղ երկրային  
դրախտն է եղել: Այս բոլորը բավական վատ է հիմ-  
նավորված, և դա առաջ են քաշել տգետ ու անբար-  
տավան մարդիկ: Կան հեղինակներ, որոնք ասում  
են, թե Իրիվանը այն քաղաքն է, որը Պտղոմեոսն ան-  
վանում է Terza<sup>8</sup> և ասում, որ դա Հայաստանի մայ-  
րաքաղաքն է: Մյուսները հավաստում են, որ այն  
Artaxate<sup>9</sup>-ի արքունիքն է:

Թուրքերի պատմությունում այն անվանվում  
է Էրից (Էրիցեհ), մինչդեռ հայոց երեք եկեղեցիների  
հռչակավոր ցանկի պատմության մեջ ասվում է, որ

այս քաղաքը նախկինում կոչվել է Վաղարշապատ,  
որտեղ եղել է թագավորների արքունիքը, որ այն կա-  
ռուցել է երկրի երևելի իշխաններից մեկը՝ Վաղարշը,  
և որտեղից գալիս է նրա անունը՝ Վաղար-շապատ,  
այսինքն, բառացիորեն՝ Վաղարշի քաղաք<sup>10</sup>: Այս հին  
հիշատակությունները կասկածելի են այն պատճա-  
ռով, որ դրանք՝ տալով իրիվան բառի ստուգաբանու-  
թյունը, այն բխեցնում են հայերեն մի բայից, որը  
նշանակում է՝ տեսնել, և ասում են, թե այս քաղաքն  
այդպես անվանեցին այն պատճառով, որ նրա տա-  
րածքն այն առաջին վայրն էր, որը Նոյը հայտնաբե-  
րեց՝ իջնելով Արարատ լեռից<sup>11</sup>: Սակայն յուրաքան-  
չյուրը գիտե, որ հայոց լեզուն ժամանակակից լեզու  
է, և որ 700 տարի առաջ այն հայտնի չէր:

Պարսկաստանի պատմության մեջ Իրիվանի  
ստեղծման մասին ոչինչ չի նշվում: Չեն կարծում, որ  
այն կառուցված լինի արաբների՝ Հայաստան կա-  
տարած արշավանքներից առաջ: Ինձ այս կարծիքին  
է հանգեցնում այն, որ ոչ քաղաքում և ոչ էլ նրա մեր-  
ձակայքում հնության ոչ մի հետք չի երևում: Թուրքե-

րը նրան տիրացել են 1552 թ.-ին<sup>12</sup> և կառուցել այն  
ամրոցը, որ երևում է: Պարսիկներն այն վերցրել են  
1604 թ.<sup>13</sup> և ամրացրել, որպեսզի պահպանեն իշխա-  
նությունը: 1615 թ.<sup>14</sup> քաղաքը 4 ամիս պաշարման  
մեջ է ընկնում: Ամրոցի պաշտպանները, չնայած պա-  
րիսպի հողաշեն լինելուն, այնուամենայնիվ դիմադ-

րում են թուրքերին, որոնք ստիպված են լինում ետ  
քաշվել: Նրանք այնտեղ վերադարձան Աբաս Մեծի  
մահից հետո և վերցրեցին դիրքերը, բայց այն երկար  
չպահեցին: Սեֆին այն ետ վերցրեց 1635 թ. և այդ  
ժամանակից ի վեր այն այլևս պաշարման մեջ չի ըն-  
կել<sup>15</sup>:

## ՆԱԽԶԵՎԱՆ

Ա սմսի 12-ին մենք հասանք Նախիջևան՝\* հինգ  
մղոն անցնելով բավականին հարթ ու բերրի  
դաշտավայրով:

Նախիջևանը մի մեծ, քարուքանդ քա-  
ղաք է, կամ ավելի շուտ՝ մեծ ու հրաշալի ավե-  
րակների կույտ, որն աստիճանաբար վերակա-  
ռուցում և վերաբնակեցնում են: Քաղաքի կենտ-  
րոնը ներկայումս վերակառուցված ու բնակեց-  
ված է: Կան մեծ վաճառատեղիներ, ինչպես ասել  
ենք, դրանք երկար նրբանցքներ կամ փողոցներ  
են՝ երկու կողմում խանութներով լի, որտեղ վա-  
ճառում են ամեն տեսակի ապրանքներ և ուտե-  
լիքներ: Կան հինգ քարվանսարայներ, բաղնիք-

ներ, շուկաներ, դաջֆեի ու ծխախոտի մեծ կաթա-  
րեններ և մոտ 2000 տուն: Պարսկական գոյությունե-  
րը հավաստում են, որ նախկինում եղել է 40000  
տուն: Այդ գոյությունը ասվում է նաև՝ որ մինչ  
արաբների՝ այս երկրին տիրելը, այստեղ եղել է  
հինգ քաղաք, որոնք կառուցել էր Բեհրոն-Չուբի-  
նը\*\* պարսիկների թագավորը: Քաղաքից դուրս  
երևում են մի մեծ ամրոցի և բազմաթիվ ամրու-  
թյունների ավերակները, որ փլատակել է Աբաս  
Մեծն անցյալ դարի վերջին՝ չունենալով այնքան  
ուժ, որ կարողանար դրանք պահպանել: Նա  
դրանք կործանում է Նախիջևանը թուրքերից  
վերցնելուց, այն ավերակների վերածելուց և ան-

8. Պտղոմեոսն ամենևին չի ասում, որ Թերվան կամ Ժերվան ըստ որոշ ձեռագրերի Հայաստանի մայրաքաղաքն է եղել, ընդհա-  
կառակը, նա այս քաղաքն այնպես է տեղադրում, որ բոլորովին չի համընկնում Երևանի դիրքի հետ, քանի որ այն Արաքսից դեպի շատ  
հարավ է գտնվում: Տեղեկությունն ըստ պրն. Բարբիե դյու Բոկաժի:

9. Շարդենն ինքն անձամբ, ավելի ներքև՝ էջ 178-ում, ասում է, որ Artaxate- ի (Արտաշատի) ավերակները երևում են Արաքսի ա-  
փին, Երևանից որոշ հեռավորության վրա: (L.U.)

10. Ամենուրեք կարդացեք Վաղարշապատ՝ ըստ Մ. Խորենացու ուղղագրության և ըստ նրա «Հայոց պատմությանը» կցված Մեծ  
Հայքի քարտեզի: Այս քարտեզի վրա Երիվանն ու Վաղարշապատը նույն քաղաքն են մատնանշում: Այս քաղաքը կառուցել է Տիգրանի  
որդի, հայոց թագավոր Վաղարշակը մ. թ. ա. 2-րդ դարի վերջին տարիներին: Արքան այս վայրն ընտրում է, որովհետև, երբ մայրն անց-  
նում էր այդտեղով՝ ծնեռն Արարատ լեռան մոտ անցկացնելու համար, ծննդաբերության ցավեր է ունենում և նրան է աշխարհ բերում Բա-  
սենի նահանգում՝ Mursus-ի և Erases-ի գետախառնուրդում: Նա այս մոր քաղաքն անվանում է իր անունով՝ Վաղարշապատ կամ Վա-  
ղարշավան (Velarsapan կամ Velarsavan): Նույն արքան պարսպապատում է Khasai գետի վրա՝ տեղադրված Varges քաղաքը, որը նշա-  
նավոր վաճառատեղի էր: Այն նույնպես անվանում է Velarsapata: Սա կոչում են նաև մոր քաղաք: Նույն հեղինակը Վաղարշապատը տե-  
ղադրում է Արարատյան նահանգում և այն նշում է որպես կարևոր և արքայանիստ քաղաք, որն իր մեջ է ընդգրկում մայր եկեղեցին (Տես,  
Խորենացու Պատմություն... էջ՝ 183 և Աշխարհագր. 361) (L.U.):

11. Erivan, apparens, quia regio ista prima apparuit. Noe cum descenderet ex monta Ararat. Willote, Dictionar, Armen, էջ՝ 273.  
Նման գիտնականի կարծիքը կարևոր է:

12. Մուրադի օրոք ժողովրդի խոսակցական լեզվով քաղաքը կոչվում էր Ամյուրատ (L.U.)

13. Պարսկաստանի թագավոր Շահ Աբասի օրոք (L.U.)

14. Օսմանյան կայսր Մուրադ կամ Ամյուրատ 4-րդի օրոք պարսիկները խորտակեցին 22000 մարդուց կազմված կայազորը:  
Քաղաքն այն ժամանակ 800 կամ 900 քայլ այն կողմ էր գտնվում ներկայումս զբաղեցրած իր տարածքից: Պարսիկները կարծել են, որ  
այս մոր դիրքն, ավելի ապահով է և ավելի հարմար: «Lettres edificantes», հատոր 3, էջ 24, 25 (L.U.)

15. Պետք է հիշել, որ անձամբ Շարդենը «Ճանապարհորդության» վերջին հրատարակումը կատարել է 1711 թ., որ այս ճանա-  
պարհորդը մահացել է 1713 թ.: 1735 թ. հրատարակումը ձեռնարկողներն այնտեղ չավելացնելով ոչ մի ծանոթություն, ամենևին չեն նշել,  
որ Երիվանը թուրքերը նորից վերցրել էին դեռևս 1721 թ.՝ այն խոռվությունների ժամանակ, որոնց հետևեց Սեֆինների, ավելի ստույգ՝  
Սոֆինների դինաստիայի կործանումը: Բայց հռչակավոր Նադիր Շահը, որը հայտնի էր Թահմազ Կուլի խան անունով, քաղաքը նրանից  
ետ է վերցնում 1734 թ. սեպտեմբերի 22-ին: Հերակլիոս թագավորն օգտվում է Թահմազի մահից հետո Պարսկաստանում կատարված  
մասնատումից և տիրում Երիվանին, սակայն 1795 թ. նա կորցնում է այդ քաղաքն ու իր թագավորությունը: Այժմ այն պատկանում է ռուս-  
ներին (L.U.):



մարդաբնակ դարձնելուց հետո: Նա ամենուրեք այդպես էր անում, որպեսզի թույլ չտա թուրքերին որևէ տեղ ամրանալ և սննդամթերք գտնել: Եվ, իրոք, այս քաղաքը խղճալի վիճակի մեջ է ընկնում, որում գտնվում է մինչև այժմ: Պարսկական գրույցները հավաստում են, որ այն եղել է Հայաստանի ամենամեծ ու ամենագեղեցիկ քաղաքներից մեկը: Երեք եկեղեցիներից բաղկացած հռչակավոր վանքում պահվող պատմությունը տեղեկացնում է, որ այս քաղաքը նախկին Արտաշատն է՝ Artaxata\*\*\* անվանումով: Հայ

հեղինակները գտնում են, որ Նախիջևանն ավելի հին է, և ասում են, որ Նոյն է այն կառուցել և այնտեղ բնակություն հաստատել ջրհեղեղից հետո: Նրանք այս անվանման ծագումը վերագրում են քաղաքի անվան ստուգաբանությանը, քանի որ ըստ նրանց՝ Նախիջևան բառը հին հայերենում նշանակում է առաջին բնակավայր կամ հյուրատուն: Պտղոմեոսն այդ վայրում հիշատակում է մի քաղաք, որը նա անվանում է Naxuana: Դա, ըստ երևույթին, Նախիջևանն է:



Երբ հասա Նախիջևան, քաղաքի կառավարիչն այնտեղ չէր: Որդուն, որը փոխարինում էր նրան, իսկույն տեղեկացրեցին իմ ժամանման մասին: Նա ինձ հրավիրեց ճաշի և խնդրեց ցույց տալ ժամացույցներ ու մի քանի զարդեր: Ես շատ դժգոհ մնացի նրա՝ իմ նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից, որովհետև նրա բավականին սիրալիկ վերաբերմունքից ու ինձ ճաշի հրավիրելուց հետո, նա ինձ թողեց իր պաշտոնյաների հետ, որոնք ինձ ստիպեցին 50 պիստոլ վճարել, այն դեպքում, երբ ինձնից 60 պիստոլ էին պահանջել Իրիվանում և ես մերժել էի: Անշուշտ, նրանք ինձ հետ ավելի անազնիվ կվերաբերվեին, եթե չուեննայի պետական գրություն և թագավորի կողմից տրված անցաթղթեր: Նմանատիպ վայրերում օտարերկրացիներին կողոպտում են, քանի որ նրանք հարուստի համարում

ունեն: Անցնելու համար պետք է միշտ վճարել: Ամսի 13-ին դուրս եկանք Նախիջևանից և անցանք 7 մղոն: Առաջին մղոնի վրա շատ մեծ կամրջով անցանք մի գետ, որին տեղի բնակիչներն անվանում են Նախիջևան գետ: Տարածքը, որտեղով անցանք, չոր էր ու անբերրի: Այնտեղ երևում էին միայն քարաքարոտ բլրակներ: Մենք պառկեցինք Արաքս գետի ափին, որն Արևելքում անվանում են Արազ և Արեգ: Այնտեղով անցնում են Էսկիջուլֆա\*\*\*\* կամ Հին Ջուղա, որն ավերակների վերածված քաղաք է և որոշ հեղինակներ կարծում են, որ դա այն քաղաքն է, որը նախնիները անվանում էին Arriamene: Այն անվանում են Հին՝ տարբերելու համար Ջուղա քաղաքից, որը գտնվում է Սպահանի դիմաց: Եվ նրանք իրավացի են, որ այն անվանում են հին, քանի որ սա ամբողջովին ավերակ է ու կործան-

ված: Այնտեղ ոչինչ հնարավոր չէ տեսնել, բացի այն, որ ժամանակին եղել է մեծ: Այն տեղակայված է եղել մի լեռան լանջին, գետի երկայնքով ու ափերին: Փողոցները, որոնք բնականաբար դժվարանցանելի են ու մեծ, պահպանվում են բազմաթիվ ամրություններով: Քաղաքն ունեցել է 4000 տուն՝ ըստ հայերի, սակայն դատելով նրա ավերակներից կարելի է ասել, որ ունեցել է 4000-ի կեսից էլ պակաս տուն: Դրանց մեծ մասը լեռներում բացված խորշեր են ու քարանձավներ, որոնք ավելի հարմար են անասնահոտեր պահելու, քան մարդկանց բնակության համար: Կարծում են, որ աշխարհում մեկ այլ անբերրի ու ավելի անհրապույր տարածք չկա, քան Հին Ջուղան է: Այնտեղ չկա ո՛չ ծառ, ո՛չ կանաչ: Ծիշտ է, սրա հարևանությամբ կան ավելի բարենպաստ ու ավելի բերրի վայրեր: Իսկապես, հնարավոր չէ պատկերացնել մի քաղաք, որը տեղակայված լինի այդքան չոր ու քարաքարոտ վայրում: Դրան հակառակ նրա տեսքը գեղեցիկ էր, որ նմանվում էր երկար ամֆիթատրոնի: Ներկայումս այնտեղ ապրում է միայն 30 ընտանիք, բոլորն էլ հայեր:

Ջուղա քաղաքը, ինչպես նաև այն ամենը, ինչը վարպետորեն նպաստել էր նրա ամրացմանը, ավերել էր Շահ Աբասը: Նա դա կատարել էր նույն այն պատճառով, ինչի համար ավերել էր Նախիջևանն ու Հայաստանի նույն գծի վրա գտնվող այլ վայրերը, որպեսզի թուրքական բանակին զրկի սննդամթերքից: Այս նուրբ (խորամանկ, սրամիտ) քաղաքագետն ու մեծ զորավարը, տեսնելով, որ իր և թշնամու ուժերն անհավասար են և մտածելով նրանց ամեն տարի Պարսկաստան գալն ու այնտեղ զավթումներ կատարելը խանգարելու միջոցներ, որոշում է ավերակների վերածել էրզրումի ու Թավրիզի (~Tauris) միջև ընկած տարածքները Իրիվանի ու Նախիջևանի ուղղությամբ, որն այն ճանապարհն էր, որով սովորաբար գնում էին թուրքերը և որտեղ

նրանք ամրանում էին, քանի որ այնտեղ իրենց բանակի գոյությունը պահպանելու համար սննդամթերք էին գտնում: Շահ Աբասն այնտեղից տեղափոխում էր բնակիչներին ու անասուններին: Նա ավերակների է վերածում ամեն տեսակի շինություններ, հրդեհի է մատնում բոլոր գյուղերն ու ծառերը: Ըստ պատմիչի՝ նա անգամ թունավորում է բազմաթիվ աղբյուրներ և այդ բոլորը նա կատարում է ամենայն «բարեխղճությամբ»:

*\* Այս քաղաքի անունը Հաջի Խալֆահը տարբեր ձևով է ներկայացնում: Նրա «Աշխարհի հայելին» տիեզերագրության մեջ երբեմն կարդում ենք Nakhdjevan, երբեմն՝ Naqdjevan, Nachewy և Naqch Djehan: Նա այս քաղաքը տեղադրում է Arran-ում: Ինձ թվում է, որ այս անունները Պտղոմեոսի Nacqava բառի աղավաղումներն են: Ըստ այս աշխարհագրագետի՝ սա մի քաղաք է Փոքր Հայքում և կասկած չկա, որ այստեղ խոսքը դրան է վերաբերում: Այս տարբեր անվանումներն արդյո՞ք հայերեն Նախիջևան (վայրէջքի առաջին վայր) բառի աղավաղումները չեն, որովհետև այս քաղաքի մերձակայքում էր, որ Նոյը առաջին անգամ ոտք դրեց՝ դուրս գալով տապանից: Naxoua քաղաքը, ինչպես այն անվանում են հայերը, շատ հեռու չէ Արարատ լեռից, և այն նրանք համարում են աշխարհի ամենահին քաղաքը, քանի որ դա, ըստ նրանց, առաջին քաղաքն էր, որ կառուցվեց ջրհեղեղից հետո (Մ Խորենացի, «Հայոց պատմություն» էջ՝ 71 և 72, ծանոթագր. 31 (L.U):*

*\*\* Հատնի է, որ իրենց քաջությամբ հռչակված քրդերը վրանաբնակ ցեղ են և տեղից տեղ են տեղափոխում իրենց վրաններն ու կենդանիների հոտերը Պարսկաստանի տարբեր գավառներում: Փաթ Ալի Շահը՝ Պարսկաստանի ներկայիս միապետը, ծագումով քուրդ է:*

*Ցավում են, որ չենք կարող մանրամասնորեն նկարագրել Բեհրամ Չուբինին, որպես անձնավորություն, ինչպես նաև նրա քաջագործությունները: Նրան որոշ պատմիչներ դասում են Սասանյան դինաստիայի արքաների թվին, Hormoygh (Hormisdas) և Khosrou parveyz (cosroes), բայց Myrkhond-ը նրան*




# ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ՇՆԻՅԱՆ 95-ԱՐՅԱՎԻ ԱԹԻՎ

## ԼԿԱԿԵՄԻԿՈՍ ՎԱՐԱԳԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Լ**կադեմիկոս Վարագիտ Չարությունյանի մասին խոսելը և՛ հեշտ է, և՛ դժվար: Նրա կյանքի ուղին թափանցիկ է, բայց և բազմազան հետաքրքրություններով լի: Մանկան հետ՝ մանկտի, երիտասարդների հետ՝ ջահել սրտով, իմաստունի հետ՝ գիտնական: Իրոք, նրա վաստակը տարիներով չէ, որ պետք է չափել, այլ՝ գործերով: Այսու, չեն պատրաստվում ասքով, սուրահներով կամ խորաններով ներկայացնել նրա կյանքի ուղին, որքանով էլ նա արժանի է դրան, այլ ուղղակի, այս տարելիցի առթիվ, մի անգամ ևս կուզեի գլուխ խոնարհել նրա գործունեության գլխավոր նվաճումների առջև, մի անգամ էլ հայացք գցել նրա «Կյանքի քառուղիներին», վերհիշել «Անմոռաց



հետև Տակիտոսը ասում է, որ Արաքսն անցնում է քաղաքի մոտով, և մենք հիմա կտեսնենք, որ այն Նախիջևանից ընդամենը 7 մղոն հեռավորության վրա է: Պարսիկների աստղադիտակների վրա բևեռի բարձրությունը իր հորիզոնի վրա նշված է 38°40', իսկ երկարությունը՝ 31°34': Քաղաքի կառավարիչը խանն էր, և, ինչպես ասացինք, այն Չայաստանի մի մասի մայրաքաղաքն էր:

\*\*\*\* Eski Djoulfah, eski հին բուրբերեն բառ է և ոչ թե պարսկերեն: Այն կարելի է հանդիպել Oigours-ների լեզվում, որոնք հաստատ բուրբերի կամ ներկայիս օսմանների նախնիներն են:

Djulfah կամ Djoulfah-ի փոխարեն որոշ հեղինակներ գրում են Djoulpa, Youlaha կամ Tchoulhat:

Այս վերջին ուղղագրությունն ընդունել է աշխարհագրագետ Չաջի Խալֆահին, որին կոչում էին նաև Kateb Tcheleby, իր Djehan nama (աշխարհի հայելին) աշխատության մեջ, որը շատ հետաքրքիր տիեզերագրություն է, որի ֆրանսերեն ծեռագրի թարգմանությունը կա մեր գրադարանում (L. U.):

**Ֆրանսերենից թարգմանեց  
ՍՈՒԽԱՆՆԱ ԲՈՂՈՆՅԱՆԸ**

այդպես չի անվանում, և մեզ ներկայացնում է որպես մեծ գորավար, որն իր վեհապետի երախտամոռությունից զայրացած՝ հետամուտ եղավ զերագույն իշխանությանը և նույնիսկ որոշ ժամանակ տիրացավ դրան: Թուրանի թագավորը մտել էր Պարսկաստան՝ 300000 թաթարներից կազմված բանակով: Բեհրամ Չուբինը ստիպված էր նրանց ետ մղել: Եվ 300000 մարդուց կազմված բանակից, որ նրան տրամադրել էր Hormouz-ը, նա ընտրում է միայն 12000 մարդու, որը նրան իսկապես բավականացնում է՝ թշնամուն ետ մղելու համար: Բայց վարձահատույց չլինելով, ինչին նա սպասում էր, օգտվում է իր զինվորների բարեկամությունից և վճարում պարսիկների միապետին: Շուտով նրան լքում են նույն այդ զինվորները և անցնում Թուրքեստանի թագավորի կողմը: Նրա քաջագործություններն անհանգստացնում են նախկին վեհապետին, որը նրան սպանել է տալիս այն արքունիքում, որտեղ նա ապաստանել էր մ.թ.ա. 7-րդ դ. վերջին: Չուբին մականունն ածանցվում է tchoup (չոփ) բառից, որը նշանակում է փայտի կտոր, ձող և ցույց է տալիս նիհարություն, երկար հասակ և, հավանաբար, ուժ: Բեհրամը պարսիկ չէր, այլ քուրդ:

\*\*\* Ես կարծում եմ, որ դա հռչակավոր Artaxate-ն է կամ որ Artaxate-ը, որը տեղադրված է եղել բավականին մոտիկ, որով-





Վարազդատ Չարությունյանը և Մուրադ Չասրաթյանը երերույթում

հանդիպումները», դեգերել «Աշխարհի ճամփաներով» ու զմայլվել «Գեղեցիկի զարմանահրաշ ուրաններում» եղած հայկական և համաշխարհային կոթողներով:

Վարազդատ Չարությունյանը հայկական ճարտարապետության ուսումնասիրության ականավոր երախտավորներից է: Նրա կյանքի 95-ամյա ուղին բազմաբեղուն է, այն հիշեցնում է բազմաթիվ արահետների միացումից առաջացած պողոտայի, երփներանգ ծաղիկներից կազմված փնջի: Չնարավոր չէ առանց խանդավառանքի անդրադառնալ նրա կենսագրությանը: Ծնվել է Վանի Այգեստանում, 1909 թ.: 1915 թ. Մեծ Եղեռնի գաղթի ճամփով հանգրվանել է Թիֆլիսում: Ուրբանոցից հետո, 1919-1927 թթ. սովորել և ավարտել է տեղի հայկական միջնակարգ դպրոցը: Զրկանքներով լի մանկությունն ու պատանեկությունը հետագայում ձեռք բերած հա-

որոնումներ, հայրենի քարակերտ կոթողների վերականգնում:

Ճարտարապետության ֆակուլտետում պրոֆեսոր Չարությունյանի մանկավարժական գործունեության 65-ամյակը բոլորվեց 2003 թ.: Այդ տարեկիցի սահմաններից դուրս են մնում Լոռվա դպրոցներում անցած ուսուցչական պաշտոնավարության տարիները, որ սկսվում են 1927-ին և ավարտվում 1931 թ., երբ ընդունվեց Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը: 1937 թ. գերազանցությամբ ավարտելով ինստիտուտը՝ մանկավարժական աշխատանքի է անցել ճարտարապետության ամբիոնում: 1945 թ., նշանակվելով ամբիոնի վարիչ, անընդմեջ՝ մինչև 1990 թ., պաշտոնավարել և ուղղորդել է ազգային ավանդույթներով հարուստ ճարտարապետության ամբիոնը, որի ակնբախ յուրա-

րուստ փորձի գրավականն էին: Աննկուն կամքը, անխոնջ պայքարն ու լավատեսությունը ներդաշնակորեն միահյուսված են գիտնականի ողջ կյանքում: Աշխատասիրությամբ առլեցուն և հմտությամբ ու խորաթափանցությամբ հասունացած, արգասաբեր հունձքից կքած «Կենաց ծառն» է, որն իր վաստակով ծյուղավորվում է դեպի մանկավարժություն, բազմաբնույթ մասնագիտական ու հասարակական գործունեություն, բեղմնավոր գիտական

հատկություններից է ստեղծագործական ուրույն կարողությունների բացահայտումն ու դրանց ցուցումը ազգային նոր ճարտարապետության բնագավառում: Բովանդակալից են Չարությունյանի մասնագիտական դասընթացները, որոնք ամփոփված են նրա գրքերում՝ «Չին աշխարհի ճարտարապետություն», «Չայկական ճարտարապետության պատմություն» (առաջին դասագիրքը), «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը» և այլն: Տասնամյակներ շարունակ դրանք օժանդակել են ճարտարապետների բազմաթիվ սերունդների հայեցի դաստիարակության, հայրենիքի և սփյուռքի հայկական ճարտարապետության բարձրագույն կուրսերն անցած, թեկնածուական ու դոկտորական աստիճանների հասած շուրջ երեք տասնյակ մասնագետների վերելքին: Պրոֆեսորը նրանց համար ուսուցիչ է, ընկեր և հարազատ: Այդ են վկայում տարբեր կողմերից բազմաթիվ շրջանավարտների այցելությունները նրան, ճարտարապետների համար գրադարան դարձած Վ. Չարությունյանի աշխատասենյակի դարակներում եղած հարյուրավոր նամակները: Այդ նամականին ոչ միայն արտահայտում է ուսանողների և շրջանավարտների կապերը, այլև հայ և օտար անվանի գիտնականների փոխհաղորդակցությունները Վ. Չարությունյանի հետ: Չնարավոր չէ հիացմունք չարտահայտել այդ բազմակողմանի հարաբերությունների, առավել ևս՝ դրանց արխիվավորման ու ստեղծագործաբար օգտագործման առթիվ: Փաստորեն, ամեն մի հողված, ամեն մի երկտող, որ վերաբերում է հայկական ճարտարապետությանը՝ այստեղ նշանակություն ունի և պահվում է մեծ խնամքով:

Վ. Չարությունյանի գիտական վաստակը յու-

րօրինակ է: Ճարտարապետական կրթությունից հետո, 1939 թ. Պատմության ինստիտուտի ասպիրանտուրական տարիները՝ Դվինի հնագիտական պեղումներին մասնակցությունը, դառնում են նրա գիտական մկրտության շրջանը: Պատերազմից անմիջապես հետո՝ 1946 թ., «Դվինի 5-7-րդ դարերի պատմաճարտարապետական հուշարձանները» խորագրով աշխատությամբ՝ նա Սանկտ-Պետերբուրգում հայցում է թեկնածուի գիտական աստիճան և ստանում դոցենտի կոչում: 1964 թ., նույն քաղաքում պաշտպանելով «Չին և միջնադարյան Չայաստանի քաղաքաշինական մշակույթը» ատենախոսությունը, արժանանում է գիտությունների դոկտորի աստիճանի, ապա ստանում պրոֆեսորի կոչում: 1996 թ. նրան շնորհվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի կոչում:

Անկախության տարիները դարձան նրա գործունեության ամենաակտիվ շրջաններից մեկը: Այս տարիներին նրա աշխատությունների ցանկը հարստացավ 15 նոր գրքով: Վ. Չարությունյանի գիտական վաստակն, ընդհանուր առմամբ, պարփակում է չորս տասնյակ հրատարակած գիրք, շուրջ չորս հարյուր գիտական հոդված և հրապարակախոսական հրատարակություն, հարյուրավոր գիտական զեկուցումներ: Դրանց պարզ և հստակ շարադրանքում հանրամատչելի և դյուրընկալելի են նույնիսկ ճարտարապետության բարդագույն հասկացությունները: Վ. Չարությունյանի պատմական աշխատություններին բնորոշ է տեսական հագեցվածությունը: Նա ճարտարապետության զարգացումը պատկերում է սոցիալ-պատմական փոփոխությունների համատեքստում: Դրանով են պայմանավորված նրա բարձրացրած հայկական ճարտարապետության ժառանգորդական զարգացման տեսությունները:



Այդ թվում են՝ «Հայկական ճարտարապետության ձևերի ժառանգորդական զարգացման օրինաչափությունները», «Վաղ միջնադարյան Հայաստանի պալատական կառույցների համաչափական առանձնահատկությունները» և «Ձարգացած միջնադարի աշխարհիկ ճարտարապետության ժողովրդական աղերսներն ու նրանց կոնստրուկտիվ հնարքների ձևատեղծման ակունքները» և այլն: Այս բոլորը հստակորեն մեկնաբանված են նրա կոթողային աշխատությունում՝ «Հայկական ճարտարապետության պատմության» էջերում և վերջերս (2004 թ.) հրատարակված «Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնահարցեր» խորագիրը կրող գիտական հոդվածների ժողովածուում:

Վարազդատ Հարությունյանի գիտական ժառանգությունը կարելի է բաժանել երկու ժամանակի՝ խորհրդային և անկախության տարիների: Դրանցում հեղինակի գիտական հետաքրքրությունները կարելի է խմբավորել երեք հիմնական թեմաների՝ հայկական ճարտարապետության պատմատեսական հարցեր, հուշարձանների պահպանությունն ու վերականգնում և անկախության տարիներին՝ «Մեմուարներ»: Վերջինիս թվում են «Արվեստակից ժամանակակիցներս» աշխատությունում ամփոփված ստեղծագործական կենսագրությունները, որի ակնհայտ վարպետներից մեկն է գիտնականը: Փաստորեն, Վ. Հարությունյանը պատմատեսական ուսումնասիրություններում, շարունակելով Թ. Թորամանյանի հայկական ճարտարապետության ձևատեղծման ու ժառանգորդական զարգացման դրույթները, ստեղծագործաբար և կառուցողականորեն դրանցում ներմուծեց իր և տարբեր գիտնականների տեսակետները:

Նա հայոց ներկա և գալիք սերունդներին ժառանգեց ստեղծագործական մի ամբողջ աշխարհ, հայեցի դաստիարակության մի մեծ կաճառ: Ինչ վերաբերում է Հարությունյանի՝ հայկական պատմական հուշարձանների պահպանմանը նվիրված աշխատություններին, դրանք բնագավառի պատմական, տեսական և նախագծային աշխատանքների հանրագումարն են և կարևոր ներդրում են՝ ինչպես հայկական իրականությունում, այնպես էլ միջազգային գանձարանում: Անդրադառնալով գիտնականի հուշագրային աշխատություններին՝ հարկ է նշել, որ դրանք Վարազդատ Հարությունյանի շնորհիվ հայկական ճարտարապետության իրականությունում կիրառվում են առաջին անգամ:

Պրոֆեսոր Վ. Հարությունյանի մանկավարժական ու գիտահետազոտական կյանքի անքակտելի մասն է կազմում հասարակական, պետական և հրապարակախոսական գործունեությունը: Արդարև, նա հայ իրականության ակնավոր հասարակական գործիչներից է: Երիտասարդ տարիներից սկսած մինչև օրս վարել և վարում է զանազան պաշտոններ, այդ թվում՝ Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ղեկան՝ 1938-39 թթ., նույն ինստիտուտի ուսումնական մասի վարիչ՝ 1942-45 թթ., կառավարությանն առընթեր ճարտարապետական վարչության պետի տեղակալ՝ 1945-48 թթ., Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ՝ 1945-51 թթ., Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի պատմության սեկտորի վարիչ՝ 1951-1953 թթ.: Առավել ծանրակշիռ է Հարությունյանի գործունեությունը Հայաստանի ճարտարապետների միությունում՝ նախագահի տեղակալ՝ 1949-62 թթ., և նախագահ՝ 1962-74 թթ.: Ուշագ-

րավ և հիշարժան է նրա ակտիվ մասնակցությունը սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեում (1964-ից), «Գիտելիք» ընկերությունում և արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի ընկերությունում (1951-ից): Նա Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիրներից է: Եղել է միության նախագահը՝ 1981-90 թթ., և պատվավոր նախագահն է՝ 1990-ից:

Հայրենասնպաստ և բեղմնավոր է ակադեմիկոս Հարությունյանի գործունեությունը հայրենական պատմաճարտարապետական կոթողները վերստին կյանքի կոչելու ու նորերը հիմնադրելու գործում: Նա հասարակական հիմունքներով 1964-ից (նախագահի տեղակալ, ապա՝ նախագահ) ղեկավարում է հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը: Պատմաճարտարապետական հուշարձանների պահպանությանը նվիրված շուրջ 70 գիտահանրամատչելի բրոշյուրների և բուկլետների հրատարակումից զատ՝ նրա նախաձեռնությամբ վերականգվել են չորս տասնյակ եկեղեցի ու վանքային համալիր: Հրատարակվել են շուրջ 2 տասնյակ փաստագրական աշխատություն, որոնք այսօր ամփոփված են հեղինակի «Վասն Հարատևման» և «Ազգամեր ջանքերի հանրագումարը» հոդվածների ժողովածուներում:

Ծառայել «Հայաստանյաց եկեղեցու գահակալներին»՝ Վ. Հարությունյանի գործունեության ասպարեզներից է: Նա գործով և գրչով մասնակցել է Գևորգ Չորեքչյան, Վազգեն Ա, Գարեգին Ա և Գարե-

գին Բ կաթողիկոսների շինարարական ծրագրերի իրականացմանը: 1956 թ. ընդգրկվել է Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի կազմում և 1972-ից նախագահում է այն: «Քարը քարին դնելով», ինչպես ինքն է որակում, տասնամյակներ շարունակ մասնակցել է Հայաստանում նոր եկեղեցիների հառնմանն ու հների վերակենդանացմանը:

Բնական է՝ արդյունավետ գործունեությունը, գիտնականի տասնամյակները զարդարել են բազմաթիվ բարձրագույն պարգևներով և շքանշաններով: Ինչպես ինքն է հաճախ նշում՝ «երբեք չպետք է պարգևների ձգտել՝ աշխատանքն ինքն արժանի կհատուցի»: Գիտնականն ունի երկու տասնյակի հասնող բարձրագույն պարգև, որոնցից վերջինն իր նվիրական քաղաքի՝ Երևանի պատվավոր քաղաքացու կոչումն է:

Դեռևս երկար ճանապարհ ունի անցնելու հայ ճարտարապետության պատմության ռահվիրանը: Եվ շարունակում է գործել, ստեղծել: Ակադեմիկոս Վ. Հարությունյանի աշխատասեղանի վրա դրված են ընթացք ստացած աշխատությունները. «Հայկական քաղաքաշինության պատմություն», «Խորհրդահայ ճարտարապետության ժառանգությունը», «Կյանքիս քառուղիներում» գրքի երկրորդ հատորը և այլն, և այլն:

*ՂԱՎԻԹ ՔԵՐԹՍԵՆՋՅԱՆ*

*ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր*



Վ. Հարությունյանի գործերից կարևորագույններն են՝ «Դվինի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1950), «Հայկական ճարտարապետության հուշարձանները» (հեղինակակցությամբ՝ Ս. Ա. Սաֆարյանի, Մոսկվա, 1951, ռուսերեն), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (հեղինակակցությամբ Կ. Լ. Հովհաննիսյանի, Երևան, 1955, ռուսերեն), «Էջմիածին» (Մոսկվա, 1958, ռուսերեն), «Միջնադարյան Հայաստանի կարավանատներն ու կամուրջները» (Երևան, 1960), «Անի քաղաք» (Երևան, 1964, ռուսերեն), նույնը նաև հայերեն, «Երևան» (հեղինակակցությամբ՝ Ս. Մ. Մելիքյան, Մոսկվա, 1968, ռուսերեն), «Հայ ճարտարապետության պատմության մի քանի հարցերի մասին - պատասխան Հուբերնաշվիլու գրքին» (հեղինակակցությամբ՝ Բ. Ն. Առաքելյանի և Ստ. Մնացականյանի, Երևան, 1968, ռուսերեն), «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (հեղինակակցությամբ Ս. Մ. Հասրաթյանի և Ա. Ա. Մելիքյանի, Մոսկվա, 1972), «Հայկական ճարտարապետության հուշարձաններ» (Բեյրութ, 1975, հայերեն, ֆրանսերեն և անգլերեն), «Հին աշխարհի ճարտարապետությունը» (Երևան, 1978), «Հայրենի կոթողների նոր ճակատագիրը» (Երևան, 1982), «Թորոս Թորամանյան» (Երևան, 1984), «Հայկական ճարտարապետության քարակերտ տարեգրությունը» (Երևան, 1985, ռուսերեն), «Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունը» (Երևան, 1986), «Մակարավանք» (հայկական ճարտարապետության վավերագրերի 22-րդ պրակ, հեղինակակցից՝ Ֆ. ԳանդղլՖո,

Միլանո, 1994), «Նախնյաց ոտնահետքերով» (Սբ. Էջմիածին, 1995), «Բոսֆորի և Մարմարայի ափերով» (Երևան, 1996), «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները» (Սբ. Էջմիածին, 1996), «Երևանի եկեղեցիները» (Երևան, 1997), «Անմոռաց հանդիպումներ» (Երևան, 1998), «Կյանքիս քառուղիներում» (Երևան, 1999), «Աշխարհի ճամփաներով» եռահատորյակը (Երևան, 2000 և 2001), «Վասն հարատևման» (Էջմիածին, 2001), «Ազգային ջանքերի հանրագումարը» (Երևան, 2002), «Արվեստակից ժամանակակիցներս» (Երևան, 2002), «Ճարտարապետական հուշարձանների վերականգնում» (ռուսոմանական ձեռնարկ, Երևան, 2003), «Դարը մեր մեջ, մենք՝ դարի» (Երևան, 2003), «Հայկական քաղաքաշինության և ճարտարապետության տեսության ու պատմության հիմնախնդիրներ» (Երևան, 2004), «Ճարտարապետ Բաղդասար Արզումանյան» (Երևան, 2005) և այլն:

Եկեղեցական գործիչների շինարարական ծրագրերի իրականացմանն են նվիրված հետևյալ աշխատությունները. «Պատմություն Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության», «Էջմիածին», 1994, Ա, էջ 51-56, Բ, էջ 33-42, Գ, էջ 32-38, Ե, էջ 12-19, Զ, էջ 23-30, նույնը՝ «Արև» (Կահիրե), 1985, օգոստոսի 23-30-ի համարներում: Եկայք շինեսցուք,- պատմություն Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին, Էրեբունի հրատ., 1988., Մեր շինարար կաթողիկոսը. Վազգեն Ա-ի շինարարական իրագործումների մասին, «Յառաջ» (Փարիզ), սեպտեմբերի 17, 18-19-ի համարներում,

«Ծառայություն գահակալներին» (Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ Չորեքյանի գահակալության տարիներին, «Առեթեսում», 1994, Թ-10., «Ծառայություն գահակալներին» (Վազգեն Ա-ի օրոք), «Առեթեսում», 1994, Թ-11., նույնը տպագրվել է «Էջմիածնում» 1995, Թ., և «Մարմարայում» (Պոլիս), 1995, սեպտեմբեր, «Վազգեն Ա շինարար կաթողիկոս հայոց», «Հայաստան», 1995, օգոստոսի 25, «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները», Սբ. Էջմիածին, 1996, «Քառասնամյա ծառայություն Սբ. Էջմիածնի Մայր Աթոռին», «Էջմիածին», 1996:

ԱՐԺԱՆԻ ԳՆԱՐՏԱՆՔԸ

«Պատվո նշան» շքանշան (1953 թ.), «Արվեստի վաստակավոր գործիչ» կոչում (1961 թ.), երկրորդ «Պատվո նշան» շքանշան (1966 թ.), Թ. Թորամանյանի անվան ակադեմիական մրցանակ (1978 թ.), Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի կոնդակը (1978 թ.), «Աշխատանքային Կարմիր դրոշ»

շքանշան (1981 թ.), Սբ. Էջմիածնի Գանձատան կառուցման գործում մեծ ներդրում ունենալու կապակցությամբ՝ «Ալեք Մանուկյանի շնորհակալագիր» (1982 թ.), Վրաստանի ճարտարապետական ինստիտուտի «Պատվավոր պրոֆեսոր» (1996 թ.), ձեռամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի՝ «Սբ. Գրիգոր Լուսավորչի» շքանշան (1997 թ.), ԴԴ նախագահի հրամանագրով՝ Անանիա Շիրակացու անվան մեդալ (1999 թ.), ճարտարապետաշինարարական պետական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր (2001 թ.), Միջազգային ճարտարապետական ակադեմիայի՝ Ռուսաստանի մասնաճյուղի պատվավոր ակադեմիկոս (2002 թ.), Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի պատվավոր դոկտոր (2003 թ.), ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ «Մեսրոպ Մաշտոց-Սահակ Պարթև» շքանշան (2003 թ.), Երևանի պատվավոր քաղաքացի (2004 թ.):

ACADEMICIAN VARAZDAT HARUTUNYAN

(Summary)

V. Harutunyan is one of the meritorious faces in the field of Armenian Architecture. His activities and scientific tradition has cognitive indication for the Armenian culture of the last 60 years.

V. Harutunyan was born in 1909 in Van, a Harbor on Lake Van. He and his family deported in the years of the Great Armenian Genocide in 1915 and settled first in Tbilisi then transferred to Yerevan, where he studied and promoted his activity. In 1946 he conferred Ph.D. degree, then was honored Doctor of Science in Architecture and in 1964 History professor. In 1996 he befittingly was elected Academician of the National Academy of Sciences of RA. The tradition of the scientist sounded in the trends of pedagogy, research, and protection of the historical monuments. As a teacher V.Harutunyan worked and supervised the chair of Architecture



from 1945 until 1990, prepared many generations of Armenian architects both in Armenia and Armenian Diasporas throughout the world. He is the author of many text-books, of which the following are due to mention: the first text-book on the History of Armenian Architecture, The Antique World, and The Methodology of Restoration of Historical buildings. The scientist has in his record 40 books and over 800 articles published in different languages. V.Harutunyan established certain theories on the Armenian Architecture, the detailed and methodical, documental study of the historical monuments which implemented in conservation and restoration activities.

Actually, V.Harutunyan worked prosperously in many governmental and public positions for the protection and preservation of the historical heritage. He is the president of the Armenian society for the protection of the Historical monuments from 1970-ies until now; over 50 years participated and consulted the issues on Architecture at the Holy See of St Echmiadzin, etc. Of course such enthusiastic activity returned to him in high honor and worldwide recognition as well as more than 25 local and international awards and nominations.

We wish the renowned scientist and the Great teacher a long-long life and still greater successes for the benefit of the Armenian Archaeology and Culture.



## ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԴՎՀ - Դիվան հայ վիճագրության
- ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
- ԵՊՀ - Երևանի պետական թանգարան
- ԼԴՀ - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
- ՀՊԹ - Հայաստանի պատմության թանգարան
- ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
- ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
- ՀԱԱՆԳՆ - Հայաստանի Հանրապետության հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան
- ՀՍՀ - Հայկական Սովետական Հանրագիտարան
- ՄԺ - Մանր ժամանակագրություններ
- ՊՄԺ ԳՀԿ - Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն
- ՊՀՊՀԸ - Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերություն
- ՊԲՀ - Պատմա-թանաքապետական հանդես

- АО - Археологические открытия
- ВДИ - Вестник древней истории
- ВГУ - Вестник государственного университета
- ИФЖ - Историко-филологический журнал
- КСИА - Краткие сообщения Института археологии АН СССР
- НАН - Национальная академия наук
- СНПМР - Специальная научно-производственная мастерская по реставрации памятников культуры

NKR - Republik of Nagorno - Karabakh

RA - Republik of Armenia



# ՀՈՒՇԱՐԶԱՆ

## ՏԱԵԻԻՔ Դ

Համակարգչային ձևավորումը՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Անգլերեն տեքստի թարգմանությունը՝ ԱՐՄԵՆՈՒԴԻ ՍԻՍՈՒՅԱՆԻ

Սրբագրիչ՝ ՍԱՀԱԿ ԲԱՐՍԵԴՅԱՆ

Ուսերեն հոդվածների խմբագրումը՝ ԿԱՐԵՆ ԶՈՐՅԱՆԻ  
ՏԱՏՅԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ  
ԿԱՐԻՆԵ ՍԻՆԱՆՅԱՆԻ

Կազմի նկարները՝ ԱՆԻԻ մայր տաճարը  
(վերակազմ. ԱՐՏԱԿ ԴՈՒԼՅԱՆԻ, 1-ին էջ)  
Ծիծեռնականք (վերջին էջ)

Տպագրությունը՝ օֆսետ: Չափը՝ 84x108 1/16: Թուղթ՝ օֆսետ:  
Ծավալը՝ 24, 52 մամուլ: Տպաքանակը՝ 500:

«Հուշարձան» հրատարակչություն, 375010  
Երևան, Փ. Բյուզանդի 1/3, հեռ. 56-92-38

Publishing House "Hushardzan"  
1/3, P. Buzand st., Yerevan, 375010. Tel. 56-92-38

«ՍԻՍ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ»




ЦЕНА

7(47.925)

h-96+

h2



**«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ 2005**